1224-Kz

# ԳԻՐՔ ։
# ԿՈՉԵՑԵԱԼ ՀՈԳԵՒՈՐԱ-ԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Շարադրեցեալ ՚ի վերապատուելւոյ Հօրէ

## ԼՈՐԷՆՑԻՈՍԷ ՍԿՈՒՊՕԼԻ

Կղերիկոսէ կանոնաւորէ ։

Թարգմանեցեալ ՚ի յումեմնէ ջերմե-ռանդէ, ՚ի լեզուէ իտալիանականէ ՚ի հայկական բարբառ ։

Եւ ՚ի լոյս ածեցեալ հոգաբարձու-թբ, և սրբագրութբ նորին Թարգմանչի ։

Տպագրեցեալ արդեամբ, և գոյիւք Կոստանդնուպոլսեցւոյ Յօհաննիսի որդւոյ Տիրացու Պրն Գեւորգին ։

՚Ի Հայրապետութե, Տն Ածատրոյ ամենից Հայոց կաթուղիկոսի ։

Յամի Տն. 1723. Հոկտեմբերի 20.

## Ի ՎԷՆԷՏԻԿ.

՚Ի Տպարանի Անթօնի Պօռթօլի ։
Հրամանաւ մեծաւորաց, և փրիվի-լէճիով գերազանցութեանցն Ծերակուտին ։

241

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ԱՌ ԸՆԹԵՐՑՕՂՍ·

Գրքոյկս այս կոչեցեալ Հոգեւորական պատերազմ շարադրեցեալ ՚ի Տալիանականի լեզուով, և թարգմանեցեալ ՚ի բազում այլս լեզուս, վասն օգտակարութեան իւրոյ, վերջապէս թարգմանեցեալ եղև ՚ի նորաստութէ իմնէ ՚ի հայկական բարբառ ՚ի

փառս Տ՟ն մերոյ Յս՟ի Ք՟սի, և ՚ի
պատիւ ամենօրհնեալ կուսին Մա-
րիամու, և ՚ի յօգուտ նախելւոյ ազ-
գին իմոյ, զի նաև ազգն իմ ըղձայ-
ցէ զօգտակարութիւն սորա, և ուսցի
՚ի սմանէ զկերպն պատերազմելոյ,
զի յետ յաղթութեան պսակեսցի, քան-
զի ամենայն ոք որ կամի պսակիլ,
պարտի ուսանիլ զկերպն պատերազ-
մելոյ: Որպէս եթէ զինուորն կամի
յաղթահարել զթշնամիս, և առաքե-
րել զարմանալին յաղթութեան, զի
պսակեսցի, պարտի գիտել զարուեստն
պատերազմելոյ, երբեմն հեռանա-
լով ՚ի թշնամեաց, երբեմն վերավա-
զելով, և երբեմն ճակատ առ ճա-
կատ պատերազմելով ընդ նոսա.
այսպէս ով ոք որ կամի գահավիժել
զթշնամիս իւր, որք են ճշմարիտք
թշնամիք, պարտի գիտել զկերպն
արիաբար պատերազմելոյ ընդ թշնա-
մեաց, որք են մարմինն, աշխարհն,
և սատանայն յարաժամ պատրաստք;
զի ՚ի թուլանալն մեր ՚ի պատերազ-
մի, կլանիցեն զհոգիս մեր, և յաւի-
տենականապէս սպանանիցեն զնոսա:

Դուք

Դուք ուրեմն ով պատուելիք , որք
պարապիք հոգևորականի կենի , և
անսաք փրկութեան հոգւոց ձերոց
մինչ կամիք յաղթահարել զթշնամիս,
և առբերել զարմանենին յաղթու-
թն զի պսակիցիք , ոչ պսակօք ապա-
կանելեօք , և երկրաւորօք , այլ ա-
նապականելեօք , և երկնաւորօք ,
արարէք զայն , զոր պարտիք , այս-
ինքն , պատերազմեցէք ոչ զմին ա-
միս , ոչ զմին ամ , այլ 'ի բոլոր կե-
անս : Քանզի ասէ Տէրն : Որ յա-
րատևէ իսպառ նա կեցցէ : Փու-
թալով ճեպեցէք առ 'ի գտանել
զսա , և յետ գտանելոյն սիրով ըն-
թերցարուք . զի 'ի սմա գտանին
համայնք կանոնք բարեպէս պատե-
րազմելոյ , և ընթերցմամբ սորա ա-
մենայն ոք կանոնաւորել կարէ զինքն
'ի յարարողութիս իւրս , ոչ միայն 'ի
յայնս , որք յայտնապէս վատթարք
են , այլ նաև 'ի յայնս , որք հոգե-
որք կոչին , 'ի յորս բազմիցս սխալիմք
վասն անխոհեմութե մերոյ . քանզի
նենգաւոր ոսոխն մեր ջանայ մոլո-
րեցուցանել զմեզ ոչ նուաղ 'ի յիրս

հոգևորս , քան 'ի մարմնաւորս , գտ֊
լով դիւրագոյն պատրել զմեզ 'ի
յիրս հոգևորս , քան 'ի յիրս յայտ֊
նագունեղապէս մեղանչականս ․ Ու֊
րեմն զի մի յաղթիցիք 'ի թշնամեաց,
այլ զի բոլորովիմբ ոտնակոխս առնի֊
ցէք , և սպանանիցէք զնոսա յօժա֊
րութբ ընթերցարուք զսա ։ Եւ զի՛ս
անպիտանս 'ի միտ ածէք 'ի ժամ աղօ֊
թից ձերոց ։


·I·N·R·I

# ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Հօր Տեառն

## ԼՈՐԷՆՑԻՈՍԻ ՍԿՈՒՊՈԼԻ

*կղերիկոսի կանոնաւորի. Թարգմանեցեալ 'ի լեզուէ 'ի Տալիանականէ 'ի հայկական բարբառ 'ի յուսմնմնէ ջերմեռանդէ։*

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ։

Ոչ պսակի, եթէ ոչ ըստ օրինի մարտիցի։ 2. Տիմոթ. 2.

Թէ յորում կայանայ Քրիստոնէական կատարելութիւն, և թէ վ͞ս ստանալոյ զնա պիտոյ է պատերազմիլ, և յաղագս չորից իրաց հարկաւորաց առ այս մարտ:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ:

Ցանկալով դու ով սիրելագունեղ դուստր 'ի Ք͞ս հասանիլ բարձրութեն կատարելութեն, և մերձենալով Ա͞յ քո, եղանիլ մի և նոյն հոգի ընդ նմա, որ է մեծագոյն, և ազնուագոյն գործ, թէ կարիցէ առնել, կամ մտածել. նախ ճանաչել պարտիս 'ի յորում իրի կայանայ ճշմարիտ, և կատարեալ հոգևորական կեանն.

Քանզի բազումք թարց այլոյ մտածման եդին զնա 'ի խստութեան կենի, 'ի ճնշման մարմնոյ, 'ի քուրձս, 'ի հարուածս, 'ի հսկմունս երկարս,

'ի

'ի ծոմապահութիւն, և 'ի յայլս նմանս խստութիւնս, և մարմնաւորս աշխատանս:

Այլք, և մանաւանդ կանայք հաւատան հասեալք գոլ առ մեծ կատարելութիւն, երբ ասեն զբազում աղօթս ձայնաւորս, լսեն զբազում պատարագս, և զերկարս ժամակարգութիւնս, յաճախ գնան 'ի յեկեղեցիս, և առէպ մատչին առ սրբազան հաղորդութիւն:

Բազումք այլք ('ի մէջ որոց երբեմն գտանի ոմն, որ զգեցեալ զկրօնաւորական զգեստ, կեայ 'ի մէջ վանուց) համոզեցեալք են, թէ կատարելութիւնն ամենևին կախեցեալ կայ 'ի յաճախապէս գնալոյն 'ի դասն, 'ի լռութեան, 'ի միայնակեցութեան, և 'ի կարգաւորեցեալ կանոնադրութեան:

Եւ այսպէս ոմն 'ի յայսոսիկ, և ոմն 'ի յայլս համանմանս արարողութիւնս համարի հիմնեցեալ գոլ զկատարելութիւն:

Որ սակայն ոչ է այսպէս, քանզի որպէս ասացեալք արարողութիւնք

երբեմն են միջոցք առ 'ի ստանալ զհոգի, և երբեմն պտուղք հոգւոյ, այսպէս ոչ կարէ ասիլ, թէ միայն 'ի յայտնին կայանայ քրիստոնէական կատարելութիւնն, և ճշմարիտ հոգին:

Թարց երկբայութեն են կարողացուցանեղ միջոց առ 'ի ստանալ զհոգի այնոցիկ, որք բարեպէս, և խոհեմաբար վարին նոքօք առ 'ի ստանալ զուժգնութիւն, և զզօրութի ընդդէմ յանկլի չարութե, և տկարութեան, առ 'ի զինաւորիլ ընդդէմ վերյառմանց, և խաբեութեանց թշնամեաց մերոց հասարակաց, առ 'ի նախապատրաստել զայնպիսիս հոգեւորս օժնութիւնս, որք համայնից ծառայից այ, և մանաւանդ նորակերտից հարկաւորք են:

Յետ այնորիկ են պտուղ հոգւոյ 'ի յանձինս ճշմարտապէս հոգեւորս, որք պատժեն զմարմինն, զի փոսացոյց զատեղծօղն իւր, և վասն ենթարկելոյ, և խոնարհեցուցանելոյ զնա 'ի ծառայութե նորա. լուեն, և կեան միայնակեացք վասն փախչելոյ.

չելոյ նաև 'ի յիւրաքանչիւրոյ փոքրագունեղէ մշտացուցմանէ Տ՟ն , և վասն կենցաղավարելոյ 'ի յերկինս , անսան Ածպաշտութե՟ , և գործոց բարեպաշտութեան . աղօթեն , և մտածեն զկեանն , և զչարչարանս Տ՟ն մերոյ , ոչ վասն հետաքրքրութե՟ , և քաղցրութեանց զգալեաց , այլ վասն առաւել ճանաչելոյ զյատուկ չարութի՟ իւր , և զբարութի՟ , և զողորմածութի՟ այ՟ . վասն բորբոքելոյ զինքեանս միշտ առաւել յԱծայնում սիրոջ , և վասն առաւել առնելոյ զիւր ինքեանս , հեռեւելով որդւոյն այ՟ հանդերձ արհամարհմամբ իւրեանց , և հանդերձ խաչիւն 'ի թիկունս , յաճախապէս մատչին առ ամենասուրբ խորհուրդս 'ի փառս իւրոյ Ածայնոյ մեծվայելչութեան , առ 'ի յառաւել անձկաբար միաւորելոյ զինքեանս ընդ այ՟ , և առ 'ի յընդունելոյ զնոր զօրութի՟ ընդդէմ թշնամեաց ։

Բայց յետայնորիկ այլոց , որք զբոլոր հիմն իւրեանց դնեն 'ի մերոյ ասացեալս արտաքինս արարողութի՟ս,

կա-

կարեն երբեմն մատուցանել զառիթ կործանման , առաւել քան զմեղս յայտնիս , ոչ վասն պակասութեան իրաց 'ի յինքեանս ( որք բոլորք ամենասուրբք են ! ) այլ վասն պակասութեան այնորիկ որ նոքօք վարի • մինչ 'ի յայնոսիկ միայնս մտադիրք , թողուն զսիրտն 'ի բացաձգման 'ի ձեռին յօժարութեանց , և սատանայի գաղեցելոյ , որ տեսանելով , թէ այսոքիկ արդէն են արտաքոյ ուղղոյ շաւղի , թողու զնոսա ոչ միայն յարատևել 'ի վերոյ ասացեալս ներկրթութիս բերկրելաբար , այլ նաև զբօսնուլ , ըստ ունայնի մտածման իւրեանց բերկրութեանք դրախտի , ուր համոզին գոլ վերացեալք առ դասս Հրեշտակականս , և զգալ զանձններ ինքեանս , որք երբեմն գտանին ամենևին ներսուզեցեալք 'ի յոմանս խոկմունս որք լիք են բարձունք , հետախուզականօք , և բերկրականօք կետիւք , և իբրև մոռացեալք զաշխարհ , և զստեղծուածս երևին ինքեանց գոլ յափշտակեցեալս առ երրորդ երկին ։

Արդ 'ի յորքանս մոլորութիւնս գտանիցին պարուրեցեալք այսորիկ, և որքան իցեն հեռացեալք յայնմանէ կատարելութէ, զոր մեք ուսոնեմք, դիւրապէս կարէ իմանել 'ի կենաց, և 'ի վարուց նոցա։

Քանզի այսորիկ 'ի յամի իրի մեծի, և փոքու կամին նախադասել այլոց, և պերճազանցք երևել քան զնոսա, հետևին յառկաց կարծեաց, և են կամակորք 'ի համայնս կամս իւրեանց. և գոլով կոյրք 'ի յատուկս, են հոգաբարձք, և ուշադիրք պահօղք, և բամբասօղք բանից, և գործոց այլոց։

Որ եթէ դու մերձենաս նոցա նաև սակաւ մի 'ի միում իմիք ունայնի համբաւոյ նոցա, 'ի յորում ինքեանք համարին զինքեանս լինել, և համահաճին, զի իցեն համարեցեալք այնպիսիք 'ի յայլոց, և եթէ հեռացուցանես զնոսա յայնպիսեաց ջերմեռանդութեց, որովք վարին իբրև Տպագրեցելովք, բոլորապէս այլայլին, և սաստկապէս վրդովին։

Եւ եթէ Ած վասն վերածելոյ

զնո-

զնոսա առ ճշմարիտ ճանաչումն իւր
ինքեանց , և առ ճանապարհն կա-
տարելութեան , տայ նոցա զնեղու-
թիս , և զհիւանդութիս , կամ թոյլ
տայ զի հալածիցին ( որք ոչ երբեք
գան թարց կամաց նորա այսպէս կա-
մելով , կամ թոյլ տալով , և են տա-
կեփորձ վէմն հաւատարմութեան
ծառայից իւրոց ) յայնժամ յայտնեն
զսուտ հիմն իւրեանց , և զատորնա-
գոյն եղծեցեալ , և ապականեցեալ
'ի հպարտութէ , վասնզի 'ի յաժմ ապա-
տահման , թէ տրտմականի , թէ ու-
րախականի , ոչ կամին համակերպել
զինքեանս կամացն այ , և խոնարհե-
ցուցանել 'ի ներքոյ ձեռին Ածայ-
նոյ , միշտ հանդարտեցուցանելով
զինքեանս 'ի յարդարս դատաստանս
այ , թէպէտ ծածուկս , ոչ առ օրի-
նակ իւրոյ խոնարհեցելոյ , և չար-
չարեցելոյ որդւոյն ընթարկել զինք-
եանս համայնից ստեղծուածոց , հա-
մարելով զհալածիչս իբրև զսիրելիս
բարեկամս , որպէս զգործիս Ածայ-
նոյ բարութե , և գործակիցս մա-
[illegible]ցման , կատարելութե , և փրկու-
թեան

Թեան խորեանց ինքեանց։

Վասն որոյ ստոյգ իր է, թէ այսպիսիքն եղեալք են 'ի ծանու վտանգի, վասնզի ունելով խաւարեցեալ զներքին աչն, և այնու հայելով առ իւր ինքեանս, և առ արտաքինս ներգործութիւնս, որք բարիք են, առընձեռեն ինքեանց զբազում աստիճանս կատարելութե, և այսպէս հպարտացեալք դատեն զայլս, և վասն նորա ոչ է, որ զնոսա դարձուսցէ, բայց 'ի միոյ անսովորականէ օգնութե այ։

Վասն այսորիկ կարի առաւել դիւրապէս դարձուցանէ զինքն, և մերձէ առ բարին յայտնի մեղաւորն, քան թէ թաքուցեալն, և ծածկեցեալն զգեստիւք երևելեաց առաքինութեց։

Ուրեմն տեսանես դու դատաւոր իմ յայտնապէս, թէ 'ի վերոյ ասացեալս իրս, 'ի կերպի, զոր քեզ ծանուցի, ոչ կայանայ հոգևոր կեանն։

Պարտիս գիտել թէ հոգևորական կեանն ոչ կայանայ 'ի յայլում, եթէ ոչ 'ի ճանաչման ամենաբար[illegible],

Библиот

և ամենամեծութեն այ, և 'ի ճանաչման ոչընչութեան մերոյ, և յօժարութեան առ համայնս չարս. 'ի սիրոջ նորին, և 'ի յատեցման անձանց մերոց. 'ի յենթարկեցման ոչ միայն նմա, այլ վասն սիրոյ նորա ամենից արարածոց. 'ի յանյատկացուցման համայնից կամեցմանց մերոց. և 'ի բոլորականի համակերպեցման իւրոյ Ածայնոյ համահաճոյութեն, և բաց 'ի յայսցանէ, թէ այս ամենայն կամեցեալ, և արարեցեալ լինիցի 'ի մէնջ սոսկապէս վասն փառացն այ, և վասն իւրոյ միայնոյ համահաճեցման, և քանզի նա այսպէս կամի, և արժանաւոր է գոլ սիրեցեալ, և ծառայեցեալ:

Այս է օրէնն սիրոյ տպագրեցեալ 'ի ձեռանէ նոյնոյ Տն 'ի սիրտս հաւատարմաց ծառայից իւրոց:

Այս է ուրացումն անձանց մերոց, զոր խնդրէ 'ի մէնջ:

Այս է քաղցր լուծն, և փոքրոգի բեռն իւր:

Այս է հնազանդութիւն առ որ օրինակաւ, և ձայնիւ կոչէ զմեզ

փր

փրկիչն , և վարդապետն իմ ։

Եւ քանզի ցանկալով դու բարձրութեան այնքանոյ կատարելութեան , պարտիս առնել զհանապազորդական բռնութիւն քոյոյ ինքեան , վասն քաջապէս յաղթահարելոյ , և ոչընչացուցանելոյ զհամայնս կամեցմունս թէ մեծս , և թէ փոքրկունս, հարկաւոր է , զի համայնիւ յօժարութեամբ հոգւոյ պատրաստեսցես զքեզ առ այս պատերազմ , քանզի պսակն ոչ տրի . եթէ ոչ արիաբար պատերազմողաց ։

Որ պատերազմ որպէս է դժուարագոյն քան զայլս համայնս ( քանզի պատերազմելով ընդդէմ մեր , ՚ի միասին պատերազմեցեալք լինիմք ՚ի մէնջ ) այսպէս ընկալեալ յաղթութիւնն եղիցի փառաւորագոյն քան զայլս համայնս , և հաճոյագոյն այ ։

Վասն զի եթէ մտադիր լինիցիս առ ՚ի յընդոտել , և առ ՚ի սպանանել զհամայնս քոյս անկարգս ախորժմունս , ցանկութիւնս , և կամեցմունս , թէպէտ փոքրագունեղս , արասցես զմեծագոյն հաճոյութիւն ,

և

և ծառայութիւն այ՟, քան թէ կամաւորապէս պահելով զոմանս 'ի նոցանէ կենդանեաց, ձաղկեցէիր զքեզ մինչև 'ի հեղումն արեան, և ծոմապահեցէիր առաւել. քան զառաջինս ճգնաւորս, և միայնակեացս. կամ դարձուցանիցէիր առ բարին զբիւր հազար հոգիս ։

Թէ որքան և Տ՟րն ունիցի 'ի յինքեան հաճոյագոյն զդարձուցումն հոգեաց, քան զմահացուցումն միոյ փոքու կամեցման. սակայն դու ոչ պարտիս կամել, ոչ գործել զայլ իր մանաւանդագոյն, քան զայն, զոր ինքն Տէրն անտաբար 'ի քէն խնդրէ, և կամի ։

Եւ նաև թարց երկբայութեան համահաճի ինքեան. զի դու աշխատիցես, և ջանայցես մահացուցանել զախտս քոյս, քան թէ դու նաև զմինն ուշադրաբար, և կամաւորապէս 'ի բաց թողլով կենդանի 'ի քեզ ծառայիցէիր նմա 'ի յորում և իցէ իրի, նաև մեծի, և մեծագունի նկատեցման ։

Աղօթեա; ով դուստր իմ, զի

դու

դու տեսանիցես 'ի յորում կայանայ քրիստոնէական կատարելութիւն , և թէ վասն ստանալոյ զնա պարտիս բուռն հարկանել զմիոյ հանապազորդականէ , և խստագունեղէ մարտէ ընդդէմ քոյոյ ինքեան , պիտոյ է զի զգօրս իւր , որպէս զգործիս ապահովագունեղս , և՝ հարկաւորագունեղս նախահոգայցես քեզ վասն ստանալոյ զարմաւենին , և առ 'ի լինել յաղթօղ 'ի յայսմիկ հոգևորականի պատերազմի ։ Են այսոքիկ ։

Անապաւինութիւն 'ի մեզ ։
Ապաւինութիւն 'ի յԱծ ։
Ներկրթութիւն , և Աղօթն ։

Զորոց ամից օգնութբն այ , և դիւրաւ կարճառօտութբ ընձեռեսցուք ։

Յաղագս անապականութեան ՚ի մեզ։

# ԳԼՈՒԽ Բ։

ՈՎ դուստր անապականութիւնն ՚ի քեզ, այնպէս հարկաւոր է ՚ի յայսմիկ պատերազմի, թէ թարց սորա դու պարտիս համարիլ իբրև զիր ստոյգ, թէ ոչ միայն, ոչ կարիցէիր ստանալ զցանկացեալ յաղթութիւնն, այլ ոչ ևս բարեպէս յաղթել զմին փոքրիկ կիր քո։

Եւ այս բարեպէս ներգործեսցի ՚ի մտի քում. քանզի մեք կարի յոժդիւրինք, և հակեցեալք եմք ՚ի յեղծեցեալ բնութէ առ մին սուտ համարումն զմէնջ ինքեանց, զի ճշմարտապէս ոչ այլ ինչ գոլով, եթէ ոչ ոչինչ, համարիմք զմեզ գոլ իր ինչ, և թարց ուրուք հիման ունայնաբար հա-

համարձակաւորիմք 'ի վերայ յատկաց զօրութեանց ։

Այս է պակասութիւն կարի դժուարին առ 'ի ճանաչել , և յոյժ անհաճոյանայ աչացն այ , որ սիրէ, և կամի 'ի մեզ զմին ճշմարիտ ճանաչումն այսր ստուգագունեղի ճշմարտութեան , թէ ամենայն շնորհ , և առաքինութիւն ածանցի 'ի մեզ 'ի նմանէ միայնոյ , որ է աղբիւր ամ բարութեան , և թէ 'ի մէնջ ոչ ինչ իր» և ոչ մին բարի մտածումն կարէ յառաջգալ , որ նմա հաճոյանայցէ ։

Եւ ևս պարտիս գիտել , թէ այս այնքան հարկաւոր անապաւինութիւն լիցէ նաև գործ իւրոյ Ածայնոյ ձեռին , որ սովորէ տալ զնա սիրելեաց իւրոց , մերթ սրբովք ներշնչմամբք , մերթ խստիւք հարուածովք , և բռնաբարիւք , իբրև անյաղթելեօք փորձութեամբք , այլովք միջոցիւք 'ի մէնջ ոչ իմացելովք , արդարև նա այսպէս կամելով , զի 'ի միասին 'ի կողմանէ մերմէ առնիցէ այն , որ առ մեզ պատկանի ․ առաջադրեմ քեզ զչորս եղանակս , որովք

մանաւանդքապէս օգնեցեալ 'ի վերնագունեղէ շնորհատուութենէ , կարիցես դու առնուլ զայնպիսի անապաւինութիւն :

Առաջինն է , զի դու նկատիցես , և ճանաչիցես զանարգութիւն , և զոչընչութիւն քո , և թէ 'ի քէն ոչ կարես առնել զմին բարի , վ̃ո որոյ արգիւնաւորիցիս մտանել 'ի յարքայութիւնն երկնից :

Երկրորդն է , զի ջերմեռանդիւք , և խոնարհիւք աղաչանօք , խնդրիցես զնա առէպ 'ի նոյնոյ Տ̃ն է , քանզի է պարգև նորա : Եւ վասն ստանալոյ զառաջինն պարտիս նկատել զքեզ ոչ միայն մերկ յայնմանէ , այլ ամենևին անկար վասն ստանալոյ զնա 'ի քէն : Այսպէս բազմիցս մատուցանելով զքեզ առաջի Ա̃ծայնոյ մեծվայելչութեան , հանդերձ միով ստուգիւ հաւատով , զի վասն բարութեան իւրոյ շնորհելոց իցէ զնա քեզ , և հանդերձ յարատևութեամբ սպասելով նմա վասն այնր բոլորոյ ժամանակի , մինչև տրամադրեսցէ նախախնամութիւն նորա , թարց

երկ-

երկբայութեան ընկալցիս զայն:

Երրորդ եղանակն է, զի զքեզ սովորեցուցես երկնչիլ 'ի քէն ինքենէ, 'ի յատկէ դատաստանէ, 'ի հզօր հակեցմանէ առ մեղն, 'ի յանթիւ թշնամեաց, յորոց ոչ ես բաւական առ 'ի առնել զմին փոքրագունեղ ընդդիմութիւն, 'ի յերկար կիրառմանէ նոցա մենամարտելոյ, և 'ի խորամանկութէ, 'ի յայլակերպութեց նոցա 'ի հրեշտակ լուսոյ, և յանթիւ արուեստից, հնարից, և որոգայթից, զորս 'ի նոյնում ճանապարհի առաքինութե դաղտաբար լարեն մեզ:

Չորրորդ եղանակն է, թէ երբ պատահի քեզ անկանիլ 'ի յիմն պակասութի, յայնժամ դու առաւել թափանցեաց 'ի ներքս, և առաւել սաստկապէս 'ի նկատումն քոյոյ ծայրագունեղի տկարութեան, թէ առ այս վաղճան Այ թոյլ ետ զանկանումն քո, զի առաւազդեցեալ 'ի ներշնչմանէ պայծառագունիւ լուսով, քան յառաջ, բարեպէս ճանաչելով զքեզ, ուսանիցիս արհամարհել

զանձն քո, որպէս զիր ինչ կարի յոյժ անարգ ։ և նաև կամիցիս դու այնպիսի համարիլ 'ի յայլոց, և նմանապէս արհամարհիլ 'ի նոցանէ, թէ թարց այսոցիկ կամաց, ոչ կարէ լինիլ առաքինի անապաւինութի, որ ունի զիւր հիմն 'ի ճշմարտի խոնարհութեն, և 'ի յասացելոջ փորձառուեցելոջ ճանաչման ։

Վասն զի յայտնի իրէ, թէ իւրաքանչիւրոյ, որ կամի միաւորիլ ընդ վերնագունեղի լուսոյ, և ընդ անստեղծեցելոյ ճշմարտութեն, հարկաւոր է ճանաչումն իւրոյ ինքեան, զոր հպարտաց, և անբարտաւանից Ածային բարեգթութիւնն հասարակաբար տայ 'ի ձեռն ճանապարհի սահեցման, թողլով արդարապէս ներբարշաւել 'ի յլիմն սպականութիւն, յորմէ համայնին կարել պաշտպանել զինքեանս, քանզի այսպէս գալով առ 'ի ճանաչել զինքեանս, ըմբռնեն 'ի յամուլ անապաւինելին զիւրեանց ինքեանց ։

Բայց այսու միջոցիւ այսպէս ողորմելեաւ Տէրն ոչ է սովոր վարիլ,

եթէ

եթէ ոչ յորժամ այլք քաղցրագոյնք զորս 'ի վեր ասացաք, ոչ առբերեալք են զյօժանդակութիւն զայն, զոր գիտէր իւր Ածային բարութիւնն։

Որ այնքան թոյլ տայ, զի մարդն առաւել. կամ նուազ անկանիցի, որքան մեծագոյն, կամ փոքրագոյն է հպարտութիւն, եւ յատուկ համարումն իւր, այնպէս զի ուր ոչինչ համարձակաւորութիւն գտանիցի, որպէս եղեւ 'ի Մարիամ Կոյսն, նմանապէս ոչինչ անկանումն լինիցի անդ։

Այնպէս զի յորժամ դու անկանիս շուտով ընթանայցես մտածմամբ առ խոնարհ ճանաչումն քոյոյ ինքեան, եւ անդադար աղօթիւք խնդրիցես 'ի Տնէ, զի պարգեւիցէ քեզ զճշմարիտ լոյսն ճանաչելոյ զքեզ, եւ զբոլորական անապաւինութիւնն 'ի քեզ ինքեան, եթէ ոչ կամեսցիս դարձեալ նորապէս անկանիլ, եւ երբեմն 'ի յառաւել կործանումն։

## Յաղագս ապաւինութեան 'ի յԱծ :

## ԳԼՈՒԽ Գ.

Որով հետև անապաւինութիւնն 'ի մեզ, որ 'ի յայսմիկ մարտի որպէս տեսացաք, է այնքան հարկաւ-ւոր, սակայն եթէ ունիցիմք զնա միայն . կամ փախիցեաք , կամ պարտեցեալք , և յաղթեցեալք մնացեաք 'ի թշնամեաց . և վասն այսորիկ բաց 'ի յայսմանէ նաև պիտոյանայ քեզ բոլորական ապաւինութին 'ի յԱծ , յայնմանէ միայնոյ յուսալով, և 'ի նմանէ սպասելով զիւրաքանչիւր բարի , զօգնութիւն , և զյաղթութիւն :

Զի որպէս 'ի մէնջ , որք ոչ ինչ եմք , ոչ է օրէն խոստանալ մեզ զայլ իր , եթէ ոչ զսահեցմունս , ուստի պարտիմք բոլորովին անապաւինիլ 'ի

'ի մէնջ ինքեանց · այսպէս 'ի Տնէ
մերմէ ապաՀովապէս ստացուք զմեծ
մեծ յաղթութի , միայն թէ վասն
ընդունելոյ զօգնութին նորա, զինաւ֊
որիցեմք զսիրտ մեր միով կենդա֊
նեաւ ապաւինութբ 'ի նա ։

Եւ զայս նմանապէս չորիւք եղա֊
նակօք կարեմք ստանալ ։

Նախ խնդրելով զնա 'ի յայ ։

Երկրորդ նկատելով, և աչօք Հաւ֊
ատոյ տեսանելով զամենակարողու֊
թիւն , և զանՀուն իմաստութին այ ,
որում ոչինչ է անկարելի , կամ
դժուարին , և թէ բարութի նորա
գոլով անչափ , անձնաւելեաւ կամեց֊
մամբ յօժար , և պատրաստ է տալ
մեզ 'ի ժամէ 'ի ժամ, և 'ի րոպէէ 'ի
րոպէ , զայն ամենայն , որ մեզ պի֊
տոյանայ վասն Հոգևորականի կենի
և բոլորականի յաղթութե անձանց
մերոց, վերընթանալով առ բազուկս
իւր Հանդերձ յուսադրութբ ։

Եւ զիարդ լիցի կարելի , թէ ած֊
ային Հոգիքն մեր , որ զերեսուն և
զերիս ամս ընթացաւ զկնի կորու֊
սեալ ոչխարին , Հանդերձ աշխա֊

Ձայնիւք գոչմամբք, թէ կերկերեցաւ, և ճանապարհաւ այնքան դժուարաւ, և փշեղինաւ, թէ եհեղ զբովանդակ արիւն իւր, և մեռաւ, այժմ մինչ ինքն ոչխարն գնայ զկնի նորա, հանդերձ հնազանդութեամբ պատուիրանաց նորա, կամ թէ հանդերձ փափագաւ (թէպէտ երբեմն տկարաւ) հնազանդելոյ նմա, կոչելով, և աղաչելով զնա, թէ նա ոչ դարձուցանիցէ առ նա, զայնոսիկ կենսատուս զաչս իւրս, ոչ լռիցէ նմա, և ոչ դնիցէ զնա 'ի վերայ Ածայնոց ուսոց իւրոց, ուրախանալով համայնիւք դրացեօք, և հրեշտակօք երկնից։

Զի եթէ Տրն մեր հանդերձ մեծաւ յօժարութբ, և սիրով հանապազ խնդրէ, զի գտանիցէ 'ի դրամոջ Աւետարանին զկոյր, և զհամր մեղաւորն, զի՞արդ լիցի կարելի, զի 'ի բաց մերժիցէ զայն որ, որպէս կորուսեալ ոչխար աղաղակէ, և կոչէ զհովիւն իւր։

Եւ ո՞վ հաւատասցէ, թէ Ած, որ յարաժամ բախէ զսիրտ մարդոյ

փա-

փափաքանօք հանդերձ մտանելոյ առ-
նա, և անդ ընտրիս առնելոյ, հա-
զորդելով նմա զպարգևս իւրս, թէ
յետոյ բանալով նմա զսիրտ, և հրաւ-
իրելով զնա, նա ոչ լուիցէ նմա, և
ոչ կամիցի մտանել անդ։

Երրորդ եղանակն վասն ստանալոյ
զայս մի առաքինութիւնս, է մօտ-
վերընթանալ առ ճշմարտութիւն սր-
բազանի գրոյն, որ 'ի բազումս տե-
ղիս յայտնապէս ցուցանէ մեզ. թէ
ոչ երբէք ամաչեաց, որ յուսայ 'ի
յԱծ։

Չորրորդ եղանակն, որ ծառայ-
եսցէ առ 'ի ստանալոյ 'ի միասին զա-
նապաւինութիւնն զքէն ինքենէ,
և զապաւինութիւնն 'ի յԱծ, է այս։

Երբ հանդիպի քեզ առնել զիր-
իմն, և զբուռն հարկանել զիմեքէ
մարտէ, և յաղթել զանձն քո, նախ-
քան զառաջադրել քեզ, կամ բա-
ցորչել կամիլ առնել զայն, դարձո
զքեզ մտածմամբ առ տկարութիւն
քո, և ամենևին ոչ ապաւինելով 'ի
քեզ, յետոյ դարձո զքեզ առ ած-
ային կարողութիւն, իմաստութիւն, և
բա-

բարութիւն, և 'ի յայսմիկ ապաւինելով, բացորոշեա գործել, և քաջապէս մենամարտել, և այսոքիւք զինուք 'ի ձեռին, և աղօթիւք, որպէս 'ի տեղի իւրում ասացից, յետոյ մարտիր, և գործեա :

Եւ եթէ ոչ պահիցես զկարգս զայս, այնու զի երևիցի իւր.քեզ առնել զամենայն իր ապաւինութբ 'ի յանձ, բազմիցս գտցես զքեզ խաբեցեալ, որով հետև մարդոյ է այնքան յատուկ ինքնահաւանութիւնն, և այնքան նուրբ, թէ գաղտաբար դրէ, թէ յարաժամ կեայ 'ի յանապաւինութեն, զոր երևի մեզ ունիլ 'ի մեզ ինքեանս, և 'ի յուսադրութեն, զոր համարիմք ունիլ 'ի յանձ :

Զի դու փախիցիս որքան կարելի իցէ 'ի յինքնահաւանութէ, և գործիցես հանդերձ անապաւինութբ 'ի յանձն քո, և հանդերձ յուսադրութբ 'ի յԱՅ, պիտոյ է թէ նկատումն տկարութեն քո յառաջիցէ զնկատումն ամենակարողութեն այ, և այսոքիկ երկու զներգործութիւնս մեր :

Յա.

Զի՛ արդ կարիցէ ճանաչել, թէ մարդն գործէ յանապաւինութե 'ի յինքն և ապաւինութե 'ի յԱծ։

## ԳԼՈՒԽ Դ.

Երբեմն ինքնահաւան ծառային երևի ընկալեալ զանապաւինութիւնն 'ի յինքն, և զապաւինութին 'ի յԱծ։ Եւ ոչ եղիցի այսպէս։ Եւ զայս յայտնեացէ քեզ գործն, զոր արտադրեացէ 'ի քեզ սահեցումն։

Ուրեմն եթէ դու երբ սահիս, անհանգստանաս, տրտմիս, և զգաս զքեզ իբր յուսահատեալ, կարել յառաջանալ, և առնել զբարի, ստոյգ նշան է, թէ դու ապաւինէիր 'ի քեզ, և ոչ 'ի յԱծ։

Եւ եթէ տրտմութիւնն, և յուսահատութին լիցէ սաստիկ, կարի յոյժ ապաւինէիր 'ի քեզ, և սակաւ 'ի

՚ի ՅՔ։ Գոլով սոյդ, թէ նա որ ՚ի մեծի մասին անապաւինեալ զիւրենէ ինքենէ ., եւ յուսադրեալ ՚ի ՅՔ, երբ անկանի ոչ զարմանայ, ոչ տըրմի, եւ ոչ տառնանայ, ճանաչելով թէ այս իւրն ընդ առաջ հանդիպելեան տկարութեան իւրոյ, եւ վասն սակաւ յուսադրութեն ՚ի ՅՔ, այլ եւս անապաւինեալ յինքենէ կարիռաւել խոնարհաբար յուսադրի ՚ի ՅՔ, եւ ՚ի վեր քան զամենայն իր առնելով զպակասութի, եւ անկարդացխտս, որք են պատճառ սահեցման, հանդերձ ցաւով մեծաւ, հանդարտաւ, եւ խաղաղարարաւ զղջմացուցմանէ այ, յետ այնորիկ հետեւի դործոյն, եւ հալածէ զթշնամիս իւրս մինչեւ ՚ի մահ, հանդերձ մեծաւ ոգեաւ, եւ քաջորոշմամբ։

Կամէի զի այսորիկ իւք բարեպէս ծնկանիցեին յոմանց անձանց, որք զինքեանս ունին իբրեւ զհոգեւորս, որք յորժամ ներարշաւեն ՚ի յոռի պակասութի, ոչ կարեն, եւ ոչ կամին խաղաղացուցանել զինքեանս, եւ երբեմ ռաւել ոչ վասն այլոյ իրի, եթէ

ոչ

ռէ վասն ազատելոյ զինքեանս 'ի յան-
հանգստութենէ, և 'ի յանհանգարտութենէ,
որ ծնանի 'ի յատկականէ սիրոյն .
սաստկապէս փափաքին գնալ առ 'ի
գտանել զհոգևոր հայրն, առ որ մա-
նաւանդապէս պարտէին գնալ վասն
լուծանելոյ զինքեանս 'ի յաղտոյ մե-
ղաց , և վասն ընդունելոյ զզօրութի̃
ընդդէմ նոցա ամենասուրբ խորհր-
դով.

Յաղագս միոյ մոլորութե̃ բազմաց .
յորոց փոքրոգութիւնն հա-
մարի առաքի-
նութի̃ .

## ԳԼՈՒԽ Ե.

Ազուամք նաև 'ի յայսմիկ ջա-
նան, որք զփոքրոգութի̃ն,
և զանհանգարտութիւնն ,
որ հետևի զկնի մեղաց
(զի ընկերակցեալ է 'ի յումեքէ ան-
հաճոյութե̃ ) առընձեալն առաքի-
նու-

նութեն, ոչ գիտելով, թէ ծնանի
'ի թագուցեալ հպարտութենէ, և 'ի
յինքնահաւանութենէ հիմնեցելոյ 'ի
յուսադրութեան յիւրեանս ինքեանս,
և 'ի յատուկս զօրութիւնս․ քանզի 'ի
յորս (համարելով զինքեանս իր ինչ)
աւելորդաբար յուսացեալք էին,
զգալով 'ի փորձառութենէ սահեց-
ման, թէ ինքեանք պակասին, վը-
տանգին, և զարմանան, որպէս զկր-
Ճողակերպէ, և լինին փոքրոգիք,
տեսանելով անկանիլ 'ի յերկիր զխան-
դայն, 'ի յոր ունայնաբար եդեալք
էին զյոյսն իւրեանց։

Այս ոչ պատահի խոնարհի, որ
յուսալով 'ի միայն յԱծն իւր, և ոչ
ինչ կերպիւ ապաւինելով 'ի յիւր
ինքն, յորժամ անկանի 'ի յոր և իցէ
մեղ, թէպէտ զգայցէ ցաւիլ․ սա-
կայն ոչ վրդովի, և ոչ զարմանայ,
գիտելով, թէ այս ամենայն հանդի-
պի իւրեան վասն իւրոյ թշուառու-
թեան, և վասն յատկականի տկարու-
թեան, որ լուսով Ճշմարտութեան
յոյժ բարեպէս ճանաչեցեալէ յինք-
ենէ։

### Յաղագս այլոց ազդարարմանց, զի ստանայցեմք զանապաւինութիւն ՚ի մեզ, և զապաւինութիւն ՚ի յԱծ։

## ԳԼՈՒԽ Զ։

Եւ քանզի բոլոր զօրութիւն յաղթահարելոյ զթշնամիս մերս մանաւանդապէս ծնանի ՚ի յանապաւինութենէ ՚ի մեզ ինքեանս, և ՚ի յապաւինութենէ ՚ի յԱծ, նորապէս պատրաստեմ քեզ զգուշացուցմունս. զի ստանայցես զնա օգնութեամբն Ածայնով։

Ուրեմն պարտիս գիտել, և պարտիս ըմբռնել որպէս զհաստատուն իր, թէ ոչ համայնք պարգևք, թէ իցեն բնականք, թէ ստացականք, ոչ բովանդակ շնորհք ձրի տուեցեալք, ոչ ճանաչումն բոլորից Ածաշնչոյ, ոչ երկարաբար ծառայեալ գոլ Այ, և ՚ի յայսմիկ եղեալ սովորութիւն արասցէ զմեզ առնել զկամս

C նո-

նորա, եթէ 'ի յիւրաքանչիւրում բարեգործութեն հաճոյացելոյ նմա, զոր պարտիմք առնել, և 'ի յիւրաքանչիւրում փորձութեն զոր պարտիմք յաղթահարել, և 'ի յիւրաքանչիւրում վտանգի, յորմէ պարտիմք փախչիլ, և 'ի յիւրաքանչիւրում խաչի, զոր պարտիմք տանիլ, ըստ կամաց նորա, ոչ իցէ օգնեցեալ, և վերացուցեալ սիրտ մեր 'ի մասնաւորէ օգնութենէ այ, և նաև եթէ ոչ կարկառիցէ զձեռն առ 'ի առնել զայն։

Ուրեմն մեք 'ի բոլորոջ կենի մերում, 'ի յամենում աւուր, և յամենում ժամու, և 'ի յամենում բոպէի պարտիմք ունիլ զասացեալ բացորոշումն, զի այսու կերպիւ ոչ իւիք ճանապարհաւ, կամ մտածմամբ կարասցուք երբեմն տապալինիլ 'ի մեղ։

Յետ այնորիկ որքան առ ապաւինութիւնն 'ի յած, գիտա՛, թէ առ Ած ոչ է դիւրագոյն յաղթել զսակաւս թշնամիս, քան զբազումս, ոչ դժուարագոյն յաղթահարել զծերացեալս, և զհնացեալս, քան զտկարս,

կայիս, և զնորականերուս ։

Ուստի իցէ ևս մին հոգի ծանրացեալ մեղօք, նաև ունիցի զբոլորս պականութիս աշխարհի. և իցէ պակասաւոր որքան կարիցէ մտածիլ. և ևս ջանայցէ որքան և կամեցեալ իցէ, և կալեալ իցէ զիւրաքանչիւր միջոց, և զներկրթութի վասն թողլոյ զմեղս, և գործելոյ զբարի, ոչ երբեք կարացեալ իցէ առանալ զիմ փոքրագունեղ բարի, այլ ևս առաւել բեռնաւորեցեալ իցէ չարեօք, այսու միւ ոչ պարտի պակասիլ ապաւինիլ 'ի ՅԱԾ, և ոչ երբեք պարտի թողուլ զզէնս, և զհոգևորս կրթութիս. այլ հանապազ քաջապէս պատերազմիլ, քանզի պարտի գիտել, թէ 'ի յայսմիկ հոգևորականի մարտի, ոչ կորուսանէ, որ ոչ դադարի պատերազմիլ, և ապաւինիլ 'ի ՅԱԾ, որոյ օգնութին ոչ երբեք պակասի պատերազմողաց իւրոց, թէպէտ երբեմն թոյլ տայցէ, զի վիրաւորիցին. սակայն պատերազմեսցի. քանզի աստ կայ բոլորն, վասնզի ապեղանին պատրաստ է վի-

րաց , և գործունեայ պատերազմո-
ղաց , որք խնդրեն զԱծ , և զօգ-
նութիւն նորա յուսադրութբ հան-
դերձ , և երբ ոչ կարծեն , թշնա-
միքն գտցին մեռեալք :

Յաղագս կրթութե , և նախ յա-
ղագս իմացականի զօրութեան ,
զոր պարտիմք պաշտպանել
'ի տգիտութէ , և 'ի
հետաքրքրութէ :

## ԳԼՈՒԽ Է.

Եթէ անապաւինութիւնն 'ի
մեզ , և ապաւինութիւնն 'ի
յԱծ այնքան հարկաւորք
'ի յայսմիկ մարմնի իցեն մի-
այնք , ոչ միայն ոչ կալցուք զյաղ-
թութիւնն զմէնջ ինքեանց , այլ
գահավիժիցուք 'ի բազումս չարիս .
ուստի բաց 'ի յայսցանէ հարկաւոր
է մեզ կրթութիւն , որ է երրորդ-
ին 'ի վեր առաջադրեցեալ :
Կրթութիւս այս մանաւանդապէս
պար-

պարտի լինել իմացականաւ զօրու-
թբ̄, և կամօք ։

Որքան առ իմացական զօրութեն,
՚ի յերկուց իրաց պարտի գոլ նախ-
ախնամեցեալ ՚ի մեզ, որք սովորին
մենամարտիլ ընդդէմ նր̄ ։

Մինն է տգիտութիւնն, որ խաւ-
արեցուցանէ, և արգելու զնա ՚ի ճա-
նաչմանէ ճշմարտին, որ է յատուկ
առարկայն նորա ։ Ուստի պարտիմք
լուսաւորել, և պայծառացուցանել
զնա կրթութբ̄, զի կարիցէ տեսա-
նել, և քարեպէս ճանաչել որքան
պիտոյանայցէ ինքեան ․ վասն մա-
քրելոյ զհոգին ՚ի յանկարգ ախտից,
և զարդարել զնա առաքինութբ̄ք
սրբովք ։

Լոյսս այս երկոս եղանակօք կարէ
ստանիլ ։

Առաջինն և առաւել հարկաւորն
է աղօթքն, աղաչելով զհոգին սբ̄ ․
զի արժանաւորիցէ հեղուլ զնա ՚ի
սիրտս մեր ։ Նա յարաժամ սրբա-
ցէ զայս, եթէ մեք ՚ի ճշմարտութե̄
խնդրիցեմք զԱծ̄ միայն, և ջանայ-
ցեմք առնել զսբ̄ կամս նր̄, և եթէ

զհամայնս իւր հանդերձ յատկակա֊
նաւ դատաստանաւ ենթարկիցեմք
դատաստանի հոգևորաց հարց մե֊
րոց ։

Միւս եղանակն է մին հանապա֊
զորդական կրթութիւն խորին, և
իրական նկատման զիրաց, առ ՚ի
տեսանել որպէս իցեն բարիք. կամ
չարք, ըստ որում ուսուցանէ հոգին
մեր, և ոչ որպէս երևին արտաքոյ,
և յանդիման կացուցանին զգայու֊
թեանց մերոց, և որպէս աշխարհս
դատէ ։

Նկատումն այս արարեցեալ որպէս
վայելէ, առնէ զի մեք պայծառա֊
պէս ճանաչիցեմք, թէ համայնք այ֊
նոքիկ իրք, զորս կոյր, և եղծեցեալ
աշխարհն սիրէ, և այնց ցանկայ,
պարտին համարիլ որպէս ոչ ինչ,
ունայնութի, և ստութիւն, և թէ
զանազանիւք եղանակօք, և միջոցօք
ջանայ ցուցանել մեզ, թէ փառք,
և փափկութիւնք երկրի ոչ այլ ինչ են,
եթէ ոչ ունայնութի, և վիշտ ոգւոյ.
թէ զրկանքն, և վատահամբաւու֊
թիւնք, զորս աշխարհն տայ մեզ՝ առ֊
բե֊

քերեն զճշմարիտ փառս . և անձ-
կութիւք զգոհունակութի̅ . թէ նե-
րելն թշնամեաց , և առնել նշ̅ զբա-
րի , իցէ մեծահոգութի̅ , և մինն
մեծագունեղից նմանութեց ընդ ա̅յ .
թէ առաւել արժէ խոտել զաշ-
խարհս , քան թէ գոլ Տէր . թէ
վասն սիրոյն ա̅յ կամաւորապէս հնա-
զանդիլն անարգագունից ստեղծո-
ածոց , է իր առաւել մեծահոգիա-
կան , և ազնիւ , քան զմենամարտիլն
ընդ մեծից իշխանաց ։ Թէ խոնարհ
ճանաչումն զանձանց մերոց պարտի
համարիլ առաւել , քան զբարձրու-
թիւն համայնից գիտութեց , և թէ
յաղթահարելն . և մահացուցանելն
զյատուկս ցանկութիս , թէպէտ ի-
ցեն փոքրագունեղք , արժանի է
մեծարագունից գովասանաց . քան զքա-
ջամարտութի̅ տիրելն բազմաց քա-
ղաքաց , յաղթել զզօրս ուժեղս
հանդերձ զինուք 'ի ձեռին , առնել
զսքանչելիս , և յարուցանել զմեռ-
եալս ։

Յաղագս պատճառաց, վասն որոյ իրքն ուղղապէս ոչ ճանաչին ՚ի մէնջ, եւ յաղագս եղանակի, զոր պարտիմք ունիլ վասն բարեպէս ճանաչելոյ զնս :

## ԳԼՈՒԽ Բ.

Պատճառն, վասն որոյ համայնք վերոյասացեալք իրք ընդ այլոց բազմաց ուղղապէս ոչ ճանաչին ՚ի մէնջ, է այս. քանզի մինչ նախապէս երեւին մեզ, առաջեցեմք նոցա կամ զսէր, կամ զատելութիւն, յորմէ խաւարեցեալ իմացական զօրութիւն մեր, ոչ ենթադատէ զնս ուղղապէս, ըստ որում են :

Դու, զի ՚ի քեզ ոչ գտանիցէ զտեղի ախտութիւս այս, կաց ուշադիր. զի որքան առաւել կարես, զկամս քո ունիցիս մաքրեցեալ, եւ

ազատ

ազատ 'ի յանկարգ ցանկութենէ իւրաքանչիւրոյ իրի։

Եւ յորժամ առաջադրի քեզ ո՛ և իցէ առարկայ․ զի դու շարժիցիս կամիլ զնա, կամ թէ բացահերքել զնա․ Նախ հայեաց 'ի նա իմացականաւ զօրութեամբ, և ուշադրաբար նկատեա զնա, 'ի յատելութենէ, եթէ է զերծ ներհակաց բնականաց յօժարութեանց մերոց․ կամ 'ի սիրոյ, եթէ առբերէ քեզ զհեշտութիւն։

Քանզի յայնժամ իմացութիւնն ոչ ջոլով խաւարեցեալ 'ի յախտից, է ազատ, և սպայծառ, և կարէ ճանաչել զճշմարիտն, և թափանցել 'ի ներքս չարին, որ թաքուցեալ կայ 'ի ներքոյ ստոյ հեշտութեան, և թափանցել 'ի ներքս բարւոյն, որ դառնացեալ է յերեւմանէ չարին։

Բայց եթէ կամքն նախ հակեցեալ է առ 'ի սիրել զիրն, կամ թէ դարշեցեալ է յայնմանէ․ իմացութիւնն ոչ կարէ բարեպէս ճանաչել, վասն զի իղձն այն, որ եդեալ է 'ի միջի, այնպէս խաւարեցուցանէ, զի համարեսցի զնա այլ ինչ քան թէ իցէ,

և երևեցուցանելով զնա կամացն իբրև զայնպիսի, կամքն շարժի առ 'ի սիրել զնա առաւել բորբոքելաբար, քան զյառաջ. կամ առ 'ի յատել զնա ընդդէմ համայնից կարգէից, և օրինաց բանի:

Յորմէ ըղձէ սաստկապէս խաւարի իմացութիւնն, և այսպէս խաւարեցեալ դարձեալ երևեցուցանէ կամաց զիւրն առաւել սիրելի. կամ ատելի քան թէ իցէ:

Ուստի եթէ ոչ պահիցի կանոնն, զոր ասացի (որ 'ի բոլորոջ այսմիկ կրթութեան կարի յոյժ հարկաւոր է) այսոքիկ երկու կարողութիւնք, իմացութիւնն, և կամքն այնքան ազնիւք, և գերազանցք, հանապազ թշուառաբար գնան որպէս 'ի շրջաբերութեան խաւարի 'ի յամփոփագոյն խաւար, և մոլորութեան 'ի մեծագոյն մոլորութին.

Զգոյշ լեր ուրեմն, ով դուստր հանդերձ ամենամեծիւ հսկմամբ 'ի յամենայնէ ոչ բարեպէս կարգեցելոյ ըղձէ իւրաքանչիւրոյ իրի, որ նախ 'ի քէն ոչ իցէ բարեպէս քննեցեալ,

ցեալ , և վերաճանաչեցեալ երրև-
գայն , որ է ճշմարտապէս լուսով իմացութե . և մանաւանդ լուսով շնորհի , և աղօթից , և դատողութե հոգևորի հօր քո ։

Որ իմասցի , թէ դու երբեմն 'ի յոմանս արտաքինս գործս , որք բարիք , և սուրբք են , պարտիցիս առաւել վերանկատել , քան 'ի յայլս իրս , վասնզի 'ի յայսոսիկ գոլով այնպիսիս , 'ի կողմանէ մերմէ գոյ առաւել վտանգ պատրանաց , և անխոհեմութե , քան 'ի յայնոսիկ ։

Ուստի վասն ուրուք պարագայի ժամանակի , տեղւոյ , և չափոյ. կամ վերահայեցմամբ հնազանդութեան , երբեմն կարիցէին տուբերել քեզ զմեծ վնաս , որպէս գիտեմք զբազմաց , թէ 'ի կրթութիւնս գովելիս . և ամենասուրբս եղին զինքեանս 'ի վտանգի ։

Յաղագս միոյ այլոյ իրի, յորմէ
պարտի պահպանել խմացու-
թիւն, զի կարիցէ բարե-
պէս ուսամանճա-
նաչել:

## ԳԼՈՒԽ Թ.

Միւս իրն, յորմէ պարտիմք պահպանել զիմացութիւն, է հետաքօտութիւն. քանզի մեք վերալնլով զնա ձեռասակարիւք, ունայնօք, և անպատեհիւք մտածմամբք, առնեմք զնա անընդունակ, և անըմբռն առ 'ի յիմանալ զայս, որ առաւել պատկանի առ ճշմարիտ մահացուցութեան, և կատարելութեն մեր:

Վասն զի դու պարտիս գոլ որպէս մեռեալ 'ի բոլորում իրի առ ամենայն հետաքօտութի երկրայնոց իրաց, ոչ հարկաւորաց, թէպէտ օրինաւորաց:

Դու որքան կարես միշտ վերա-
ան-

պնդեա՛ զիմացութի քո , և սիրեա՛
ցուցանել զքեզ յիմար ։

Նորք իրք , և փոփոխմունք աշ-
խարհի , և փոքունքն , և մեծքն լի-
ցին քեզ , որպէս եթէ ոչ լիցէին , և
եթէ ընծայեն քեզ ընդդիմացիր նո-
ցա , և բացահերքեա զնս ՚ի քէն ։

՚Ի բաղձանի իմանալոյ զիրս երկ-
նայինս , արա զի դու լիցես զգաստ ,
և խոնարհ , ոչ կամելով գիտել զայլ
քան զխաչեցեալն Քս , և զկեանս ,
և զմահ նորա , և զորքան խնդրէ
՚ի քէն ։

Զբոլոր ճայրեալն հեռացո՛ ՚ի
քէն , զի արասցես զմեծ հաճոյու-
թի Այ , որ սիրէ , և ըղձակերտէ
զայնոսիկ , որք ցանկան , և խնդրեն
՚ի նմանէ զիրս զայնոսիկ . որք բա-
ւականանան առ ՚ի սիրել զնր Ած-
ային բարութիւն , և առ ՚ի առնել
զկամս նորա ։ Այլ ամենայն խնդ-
րունած . և հետազօտութի է յատ-
կական սէր , հպարտութի , և որո-
գայթ սատանայի ։

Եթէ դու հետևիցիս այսոցիկ ա-
ռաջադրեցմանց , կարասցես փախչել
՚ի

՚ի բազմաց դարանակալութեանց · քանզի օձն խորամանկ տեսանելով , թէ ՚ի յայնոսիկ , որք պարապին հոգեւորականի կենի , կամքն է ուժեղ, եւ զօրեղ , ջանայ կործանել զիմացութի նոցա , զի այսպէս իցէ Տէր իմացութեն, եւ կամաց ։

Ուստի առ[illegible]որ է բազմիցս տալ նոցա զզգացմունս վսեմս , կենդանիս, եւ հետազօտականս , եւ մանաւանդապէս այնոցիկ , որք սրամիտք են , եւ ունին զմեծ հանճարեղութիւն , եւ որք դիւրք են առ ՚ի հպարտանալ , եւ քանզի զբաղեցեալք ՚ի հեշտութեն , եւ ՚ի տրամաբանութեն այնոցիկ իրաց , ՚ի յորս ստաբար համոզին վայելել զԱծ , մոռանան մաքրել զսիրտ , եւ պարապել ճանաչման անձանց իւրեանց , եւ ճշմարտի մահացուցման · այսպէս ներմուծեցեալք ՚ի յորսարան հպարտութեն, լինին մին կուրք յատկի իմացութեն ։

Յայսմանէ հետեւի , թէ սակաւ առ սակաւ ոչ նկատելով համարին , թէ ոչ ունին զկարօտութի խրատուց , եւ ուսուցմանց այլոց , գոլով

արդէն սովորեցեալք 'ի յամ̃ում ընդ-
առաջ հանդիպման վերընթանալ առ-
կուսս յատկականի նորոյ դատողու-
թեան ։

Իր մեծի վտանգի, և կարի յոյժ
դժուար առ 'ի բժշկել · վտանգի է
առաւել վտանգաւոր հպարտութինն
իմացութե, քան զհպարտութի կա-
մաց · քանզի հպարտութի կամաց
գոլով յայտնի յատկականի իմացու-
թե, 'ի միում աւուր դիւրապէս կա-
րասցէ բժշկել զնա հնազանդելով
յորում պարտի ։ Բայց որ ունի զհաս-
տատուն կարծի, թէ համարումն
իւր իցէ լաւագոյն, քան զայլոցն,
յումեքն, և որպէս կարասցէ ապա-
քինել · զի մարդ ենթարկեսցէ զինքն
դատաստանի այլոց · զոր ոչ համա-
րի այնքան բարի, որքան զիւր յա-
տուկն ։

Եթէ ակն հոգւոյ, որ է իմացու-
թիւնն, որով պարտիւր ճանաչել,
և մաքրել զվէրս հպարտի կամին, է
տկար, և կոյր, և լի ինքեամբ հպար-
տութբ, ո՞վ կարասցէ առողջացու-
ցանել զնա ։

Եւ

Եւ եթէ լոյսն լինի խաւար, և կանոնն թիւրի, զի՞նչ լիցի մնացեալն։

Վասն որոյ դու վաղվաղակի ընդդիմացիր այսպիսւոյ վտանգաւորի հպարտութեան, նախ քան զթափանցել նորա ՚ի ծուծս ոսկերաց։

Բթացո՛ զսրութիւն մտաց քո. դիւրապէս ենթարկեա՛ զյատուկ կարծիս քո կարծեաց այլոց. լեր յիմար վասն սիրոյն ա՟յ, և եղիցիս իմաստուն առաւել քան զսողոմօն։

Յաղագս կրթութեան կամաց, և յաղագս վաղճանի, առ որ ուղղել պարտին համայնք արարողութիւնք ներքին, և արտաքինք։

# ԳԼՈՒԽ Ժ.

Բաց ՚ի կրթութենէն, զոր պարտիս առնել շուրջ զիմացութեամբ, պիտոյ է քեզ այնպիսաբար կանոնաւորել զկամս քո, զի ոչ թողլով զնա ՚ի յիւրս փափագմունս, ՚ի յամենայն համակերպեսցի Աստուծոյ հաճոյութեան։

Եւ բարեպէս նկատեա՛, թէ այս միայն ոչ պարտի բաւականանալ քեզ կամիլ, զի հոգայցես զիրս, որք առաւել հաճոյական են. այլ առաւել ևս պարտիս կամիլ, և գործել զնոսա. և որպէս շարժեցեալ ՚ի նմանէ, և վասն վաղճանի ասսկապէս հաճոյանալոյ նմա։

Սակայն 'ի յայսմիկ առաւել քան 'ի վերոյ ասացելոց, ունիմք զմեծ մարտ ընդ բնութեան, որ այնպիսաբար հակեցեալ է դէպ 'ի յիւր ինքն, թէ 'ի յամենայն իրս, և երբեմն առաւել քան 'ի յայլս իրս բարիս, և հոգևորս, խնդրէ զյատուկ օգուտն, և հանգստութիւն, յորում ըմբռնելով զինքն, և այնոքիւք որպէս կերակրով ոչ երկբայեցելով փափագելաբար ճարակելով:

Եւ վասն այսորիկ երբ ընծային մեզ, փութով հայիմք 'ի յայնս, և կամիմք, ոչ որպէս շարժեցեալք 'ի կամացն այ̃, և ոչ վաղձանաւ հաճոյանալոյ նմա միայն, այլ վասն այնր բարւոյն, և վասն քաղցրութեան, որ հոսէ 'ի կամելոյն զիրս կամեցեալ 'ի յայ̃:

Որ խաբէութիւնն այնքան առաւել դաղեցեալ է, որքան կամեցեալ իրն լաւագոյն է ըստ իւրեան ինքեան: Ուստի մինչև 'ի բաղձալն ինքեան այ̃, անդ սովորեն լինիլ պատրանք յատկականի սիրոյն, բազմիցս առաւել հայելով առ օգուտն, և բա-

րին մեր, որոց սպասեմք · քան առ կամս ա̃յ, որ վասն փառաց իւրոց համահաճի, և կամի սիրել, և գոլ ցանկացեալ, և հնազանդեցեալ 'ի մէնջ։

Վասն պաշտպանելոյ զքեզ յայսմանէ որոգայթէ, որ արգելոյր զքեզ 'ի յընթացմանէ կատարելութեան, և առ 'ի սովորեցուցանելոյ զքեզ կամիլ, և գործել զբոլորն, որպէս շարժեցեալ 'ի յա̃յ, և հանդերձ մաքուր դիտաւորութբ̃ պատուելոյ զնա, և զհաճոյս նր̃ միայնոյ առնելոյ (որ կամի գոլ միայնակ սկիզբն, կամ վաղճան համայնից աբարողութեց, և մտածմանց մերոց) պահեսցես զեղանակս զայս, յորժամ ընծայի քեզ իմն իր կամեցեալ 'ի յա̃յ, ոչ հակել զկամս քո առ 'ի կամիլ զնա, եթէ ոչ նախ վերացուցանիցես զմիտ քո առ Ա̃ծ, առ 'ի տեսանել, արդեօք իցէ կամք նորա զի դու կամիցիս զնա, և քանզի ինքն այսպէս կամի, և վասն հաճոյանալոյ նմա միայն։

Այսպէս 'ի յայսմանէ կամէ շար֊

ժե֊

ժեցեալ, և քարշեցեալ կամս քո, յետոյ հանեսցէ առ 'ի կամիլ զնա, որպէս կամեցեալ 'ի յայ ; և վասն միայնոյ համահաճութեն, և պատուոյ նորա :

Նմանապէս կամելով դու 'ի բաց մերժել զիրս ոչ կամեցեալս 'ի յայ, ոչ 'ի բաց հերքել զնոսա, եթէ ոչ նախ մխիցես զհայեցումն իմացութեն 'ի յիւր Ածային կամս, որ կամի, զի դու վասն հաճոյանալոյ նմա 'ի բաց մերժիցես զնոսա :

Բայց պարտիս գիտել, թէ պատրանք նրբոյ բնութեն սակաւ ճանաչին, որ հանապազ գաղտաբար խնդրելով զիւր ինքն, բազմիցս երևեցուցանէ մեզ, թէ իցէ 'ի մեզ ասացեալ շարժականն, և վաղճանն հաճոյանալոյ այ, և ոչ է այսպէս :

Ուստի բազմիցս հանդիպի, թէ զայն, զոր կամիմք, կամ ոչ կամիմք վասն յատկականի օգտի մերոյ, երևիւր մեզ կամիլ, կամ ոչ կամիլ զնա վասն հաճոյանալոյ, կամ ոչ հաճոյանալոյ Տն այ :

Ուրեմն վասն փախչելոյ յայսմա-

նէ խաբէութենէ, յատկագոյն, և ներքին դեղն լինիցի՛ւր մաքրութեան որտի որ կայանայ ( առ որ ուղղի բոլոր հոգևորական մարտս այս ) 'ի մերկանալն զհին մարդն, և զգենուլն զնորն ։

Սակայն վասն նախապատրաստելոյ քեզ զզէնս, որով հետև ես լիքև ինքեամբ, ասեմ, թէ դու 'ի սկզբան արարողութեանց քոց, պարտիցիս բարեգունեղապէս զգուշանալ առ 'ի մերկացուցանել 'ի քէն որքան կարես զամենայն խառնուած, սուր դու կարիցես համարել, թէ պնդ լիցէ իր լին քոյոյն ։ և ոչ կամիլ, ոչ գործել, ոչ բացամերժել զիր լին, եթէ ոչ նախ զդայցես շարժիլ, և քարշիլ 'ի սոսկէ, և 'ի պարզէ կամեցմանէ այ ։

Եթէ 'ի յամենայն արարողութեանս, և մանաւանդ 'ի ներքինս հոգւոյ, և 'ի յարտաքինս, որք փութով որպէս զմին փչուածն հողմոյ ապառին, ոչ կարիցես միշտ այսպէս 'ի ներգործութեն զգալ զշարժականս զայս, բաւական համարեա՛ քեզ ունիլ զայն

'ի

'ի յիւրաքանչիւրում՝ զօրութեննաքարի, միշտ ունելով զհաստատուն, եւ զճշմարիտ դիտաւորութիւն 'ի յամենում հաճոյանալոյ միայնոյ այ քո։

Բայց 'ի յարարողութեանս քոյս, որք մնան զժամանակ ինչ, ոչ միայն 'ի սկզբան բարւոք է, զի դու զարթուցանիցես 'ի քեզ զշարժականս զայս, այլ պարտիս ունիլ 'ի մտի զազդումն ստէպ վերանորոգելոյ զնա, եւ սպահելոյ զնա զարթուցեալ մինչեւ 'ի վախճան. քանզի այլապէս լիցիր անդ-վտանգ անկանելոյ 'ի մին այլ ուրգայթ արդարեւ սիրոյ մերոյ բնականի. որ գոլով առաւել հակեցեալ, եւ դիւրահակելի առ իւր ինքն, քան առ Այ, բազմիցս սովորէ միջամրկութե ժամանակի առնել, զի մեք աննկատելաբար փոփոխիցեմք զառարկայս, եւ յեղափոխիցեմք զվախճանս։

Ծառայն այ, որ 'ի յայսմիկ բարեպէս ոչ զգուշանայ, բազմիցս սկսանի գործել զինչ իր, դիտաւորութե հաճոյանալոյ միայն Տն իւրում՝ բայց յետոյ այսպէս սակաւ առ

առ-

տանկան գրեթէ ոչ զգալով. այնպի-
սաբար համահաւանելով 'ի յայն
յատկականաւ զգայութե՟, թէ մո-
ռանալով զԱծային կամս, վերա-
դառնայ, և սաստկաբար առակցի
համեղութեն զոր զգայ, և օգտի,
և պատուոյ, որ կարէ գալ առ նա,
որպէս թէ ինքն Ած գնէ զարգելումն
գործոյ ուրեք հիւանդութե՟. կամ
պատահմամբ, կամ թէ միջադրու-
թե՟ ուրուք ստեղծուածոյ, բոլոր
խռովեցեալ, և վրդովեցեալ մնայ,
և երբեմն անկանի 'ի բամբասանս, և
զայրանայ, վասն ոչ տալոյ երբեմն
զինքենէ ինչ։ Նշան կարի յայտնի,
թէ դիտաւորութի իւր յամուտ ոչ
էր 'ի յԱծ, այլ ծնանիւր 'ի յարմա-
տոյ, և 'ի յատակէ ապականեցելոյ
և եղծեցելոյ։

Քանզի ով ոք շարժի, որպէս
շարժեցեալ 'ի յԱյ, և վասն հաճոյա-
նալոյ նմա միայնում, ոչ կամի առ-
նել զմին իր, քան զայլն, այլ միայն
ունիլ զայն, եթէ Այ հաճոյանայցէ.
զի ունիցի զայն, և 'ի յեղանակի և
'ի ժամանակի, որ նմա հաճոյասցի,

և

և ունելով զայն, կամ ոչ, հաւատա-րապէս խաղաղ, և հանդարտ մնասցէ, քանզի մ̃իւ կերպիւ հասանի դիտեցելոյն իւրում, և ժամանէ վաղճանի, որ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ հաճոյութիւն ա̃յ ։

Ուստի բարեպէս ժողովեալ, և զգուշացո՝ զքեզ, զի միշտ զարարո-ղութիւս քոյս ուղղիցես առ այս կա-տարեալ վաղճան ։

Եւ եթէ երբեմն (այսպէս խնդ-րելով տրամադրութիւն հոգւոյ քո) դու շարժիցէիր զքեզ առ 'ի գոր-ծել զբարի, դիտաւորութ̃բ փախ-չելոյ 'ի տանջանաց դժոխոց. կամ վասն յուսոյ արքայութ̃են. նաև 'ի յայտնիկ վասն վերջին վաղճանի կա-րես առաջադրել քեզ զհաճոյութիւն, և զկամքն ա̃յ, որ համահաճի. զի դու ոչ երթիցես 'ի դժոխն, այլ թէ մտանիցես 'ի յարքայութիւն իւր ։

Շարժականս այս զօրքան ուժ-գնութիւն, և զօրութ̃ի ունիցի, ոչ ոքէ, որ լիապէս կարիցէ ճանաչել զնա. քանզի իր ինչ որքան և ան-արգ, կամ որքան և փոքրադունեղ

ալա-

արարեցեալ վաղճանաւ հաճոյանալոյ ա̃յ միայնոյ, և վասն փառաց նորա առաւել արժէ ( զի այսպէս ասի-ցեմ ) անհունապէս, քան զայլս բազ-մագունեղս, որք են մեծագինք, և ազնիւք, որք արարեցեալք իցեն Թարց այսորիկ շարժականի ։

Ուստի առաւել հաճոյ է նմա մին միայն դրամ տուեցեալ միոյ չքաւո-րի միայն այսու դիտմամբ, զի տա-նիցեմք զեր հաճոյ իւրում Ածայնոյ մեծվայելչութե̃, քան եթէ այլով դիտաւորութեամբ նաև վայելելոյ վերկնայինս բարիս ( որ է վաղճան ոչ միայն սոսկապէս բարի, այլ ծայ-րագունեղապէս ցանկալի ) տա̃ն զընկ-ցեր զինքն ՚ի համայնից ընչից իւրոց, նաև հարստագունեղից ։

Կրթութիւն այս առնելոյ զբոլորն վաղճանաւ սոսկապէս հաճոյանալոյ ա̃յ ․ ՚ի սկզբան դժուարին երևեա-ցի, բայց եղիցի հարթ, և դիւրին, ՚ի սովորութէ̃, և ՚ի բազմիցս փա-փագելոյն ինքեան ա̃յ, և ՚ի հառա-չելոյն առ նա մեծօք փափագանօք սրտի, որպէս առ կատարելագու-

նեղ, և առ միայնակ բարին մեր, որ վասն իւրոյ ինքեան արժանաւոր է, զի համայնք ստեղծուածք խնդրիցեն զնա, և ծառայիցեն, և սիրիցեն 'ի վեր քան զայլ ա͞մ իր :

Որ նկատումն իւրոյ անհնոյ արժանաւորութեան, որքան առաւել խորագէս, և ստէպ ստէպ առնիցի, այնքան առաւել ջերմեռանդք, և յաճախք եղիցին վերոյ ասացեալք ներգործութիւք կամաց, և այսպէս մեծագունիւ դիւրութ͞բ, և փութագոյն եկեսցուք առ 'ի ստանալ զունակութ͞ի առնելոյ զամենայն արարողութ͞ի վերահայեցմամբ, և վ͞ս սիրոյ այնորիկ Տ͞ն, որ միայն է արժանաւոր :

Վերջապէս տուր առնեմ քեզ վ͞ս ստանալոյ զայս Ա͞ծային շարժականն, զի դու բաց 'ի վերոյասացելոյն անդադար աղօթիւք խնդրիցես զնա 'ի յ͞այ, և թէ ստէպ մտածիցես զանհուն բարերարութ͞իս, զորս Ա͞Ծ արար մեզ, և ևս անդադար առնէ վասն միայնոյ սիրոյ, և թարց շահի իւրոյ :

Յա-

Յաղագս ամանց նկատմանց, որք
վերածեն զկամս առ 'ի կամիլ
'ի յամենում իւրի զհաճոյ-
ութին այ։

# ԳԼՈՒԽ ԺԱ·

Եւս առաւել վասն վերածելոյ զկամս քո մեծաւ դիւրութեամբ առ 'ի կամիլ 'ի յամենում իւրի զհաճոյութին ԱՅ, և զպատուին նորա, առէպ 'ի միտ ած թէ նախ ինքն զանազանիւք եղանակօք պատուեաց, և սիրեաց զքեզ։

'Ի ստեղծման, ստեղծելով զքեզ 'ի յոչընչէ 'ի նմանութիւն իւր, և զայլս համայնս ստեղծուածս 'ի ծառայութին քո։

'Ի փրկութեն, առաքելով ոչ զմին հրեշտակ, այլ զորդին իւր միածին առ 'ի վերադնել զքեզ, ոչ գնով ապականելեաւ ոսկւոյ, և արծաթոյ, այլ արեամբ իւրով պատուականաւ,

եւ իւրով չարչարելեաւ, եւ արհամարհեցելով մահուամբն։

Թէ յետ այնորիկ յիմում ժամու նաեւ յիմում բոպէի պաշտպանիցէ զքեզ 'ի թշնամեաց, պատերազմիցի վասն քո շնորհիւ իւրով, հանապազ պատրաստ ունիցի վասն պաշտպանման քո, եւ վասն կերակրոյ զիւր սիրելի որդին 'ի սրբազնութեն սեղանոյ, ո՞չ է նշան անճառելւոյ համարման, եւ սիրոյ, զոր անչափն ած ունի 'ի վերայ քո. այնքան թէ, ոչոք է, որ կարիցէ ըմբռնել, որքան համարիցի զմեզ չքաւորս այնպիսի ազնիւ Տէրին, զնուաստութիւն, եւ զողորմելութի մեր, եւ հակադարձաբար զայն, զոր մեք պարտիմք առնել վասն այնպէս վսեմի մեծվայելչութեան, որ զայնպիսիս, եւ զայնքանիս իրս գործեաց վասն մեր։

Զի եթէ իշխանք աշխարհիս, երբ պատուէին 'ի յանձանց նաեւ չքաւորաց, եւ խոնարհաց, այսուամիւ համարին զինքեանս պարտաւորս առ 'ի պատուել զնոսա, զինչ պարտաւոր լիցի առնել նուաստու-

Թի

թէ մեր ծայրագունեղի թագաւորի ընդհանրոյ, յորմէ տեսանի այսպէս վեհապէս պատուեցեալ, և սիրելի համարեցեալ։

Բայց 'ի վերոյ ասացելոյն, 'ի վեր քան զամենայն ինչ միշտ զուարթուն պահեա զմիտ քո, թէ Ածային մեծավայելչութիւնն յիւրենէ ինքենէ անհունապէս արժանաւորի պատուելի, և անհունապէս արդիւնաւորի, զի ծառայիցեմք նմա միայն վասն իւրոյ համահաճոյութեն։

Յաղագս բազմաց կամաց որք են 'ի մարդում, և յաղագս պատերազմի, զոր ունին 'ի մէջ իւրեանց ։

## ԳԼՈՒԽ ԺԲ.

ՍՏուգեալ, թէ 'ի յայսմիկ պատերազմի կարիցէ ասիլ թէ 'ի մեզ իցեն երկու կամք, մինն բանի վասն որոյ ասացեալ բանաւոր, և վերնագոյն. միւսն զգայութեան, որ կոչեցեալ է ստորնագոյն, և զգայական, որ այսոքիւք անուամբք ախորժակի մարմնոյ, զգայութեան, և ախտից սովորէ նշանակիլ, սակայն քանզի մեք եմք մարդիկք վասն բանի. Յորժամ միայն զզգայութեան կամիմք զկամս իւր, ոչ լիմանի, թէ երբեք ճշմարտապէս կամեցեալ իցէ 'ի մէնջ, մինչև վերնագունիւ կամաւ ոչ հակիցեմք զմեզ առ 'ի կամիլ զայն ։

Ուստի բոլոր հոգևորական պա-

տերազմն մեր Նախապետաբար կայ ՚ի յայսմիկ, թէ բանաւոր կամս, որպէս եղեալ ՚ի միջի, ՚ի մէջ Ածայնոյ կամին, որ կայ ՚ի վերայ նորա, և ստորնագունի, որ է զգայութեանն, հանապազորդապէս ՚ի միոյն, և ՚ի միւսոյն պատերազմեցեալ է, մինչ իւրաքանչիւրն այսոցիկ ջանայ քարշել զնա առ ինքն, և տանել զնա ենթակայ, և հնազանդ ինքեան։

Բայց զմեծ պատիժ, և զաշխատանս մանաւանդ ՚ի սկզբան կրեն այնորիկ, որք ունին զվատս ունակութիս; երբ բացորոշեն փոփոխել զվատթար կեանն իւրեանց ՚ի լաւագոյնն, և օտարացուցանելով զինքեանս յաշխարհէս, և ՚ի մարմնոյ, տալ զինքեանս սիրոյ, և ծառայութեն Յի Քի։

Քանզի հարուածքն, զորս կրէ վերնագոյն կամքն նոցա ՚ի յԱծային կամացն, և ՚ի զգայականէ, որք միշտ կան ՚ի շրջանակի, մենամարտելով ընդ նմա կարողք, և հզօրք են, և առնեն զի բարեպէս զգայցէ զնոսա հան-

հանդերձ մեծօք չարչարանօք ։

Որ ոչ պատահի այնոցիկ, որք արդէն ունին զունակութիւն առաքինութեանց, և մոլութեանց, և այսպէս միշտ դիտեն յարատևել, վասնզի առաքինիքն դիւրապէս հաճին Ածային կամացն, և յոռիքն թարց ընդդիմութեան հաւանին այնմիկ, որ է զգայութիւն ։

Բայց ոչոք համարձակաւորեսցի կարել հասանիլ ճշմարտից քրիստոնէականաց առաքինութեանց, ոչ ծառայել այ, որպէս պատշաճի, եթէ ոչ կամի ճշմարտապէս ընդդիմանալ, և կրել զչարչարանս, զորս զգայ 'ի բացահերքելն ոչ միայն զմեծագոյնս ախտորժակս. այլ նաև զփոքունս, որոց յառաջ առակցեցեալ էր փափագաւ երկրայնով ։

Եւ 'ի յայսմանէ հետևէ, թէ կարի սակաւք հասանին առ նշան կատարելութեան, վասնզի զկնի յաղթելոյն հանդերձ աշխատանօք զմեծագոյնս մոլութիւնս, յետոյ ոչ կամին ընդդիմանալ, հանապազ տանելով զհարուածս, և զաշխատանս, որք

փոք-

փորձին 'ի յընդդիմութենէ իբր անհունից յատկից կամեցմանց, և ախտից փոքրագունից, որք մինչ զօրանալով 'ի նոսա ստանան զտէրութի, և զիշխանութի 'ի վերայ արտից նոցա ։

'ի մէջ սոցա գտանին ոմանք, որք եթէ ոչ բառնան զբարիս այլոց, կարի աւելի փափագին նոցա, զորս արդարաբար ժառանգեն. եթէ ոչ ջանան հասանիլ պատուոց միջոցիւք ապօրինաւորօք, սակայն ոչ դարշին յայնց, որպէս պարտիցեն. և ոչ դադարին 'ի ցանկալոյ նոցա, և երբեմն խնդրել զնոսա այլովք զանազանիւք ճանապարհօք. եթէ պահեն զծոմապահս հրամայեցեալս, ոչ ճնշեն վասն այսորիկ զկոկորդ 'ի յաւելորդաբար ուտելն, և 'ի ցանկալն կերակրոց քաղցրաճաշակաց, և ժուժկալելով ոչ հրաժարին 'ի յոմանց ընկերակցութեանց ըստ հաճոյից իւրեանց, որք առբերեն զմեծ արգելումն միաւորութեան ընդ այ, և հոգևորականի կենի. այլ և մինչ են յոյժ վտանգաւորք 'ի յիւրաքանչ-

իւր-

խաւրում անձին որքան և ոք իցէ, և առաւել 'ի յայնմիկ, որ նուաղ երկնչի · իւրաքանչիւրին պարտի խուսափել 'ի նոցանէ, որքան առաւել կարիցէ ։

Յորոց իրաց նաև հետևի, թէ այլք բարեգործութիւնք նշ առնանեն գաղջութե հոգւոյ, և ընկերակցին բազմաց օգտից, և անկատարելութեց ծածկեցելոց, և մեծի համարման անձանց իւրեանց, և ցանկութե, զի գովեսցին, և համարեսցին մեծք յաշխարհէ ։

Այնք, որք այսպիսիք են, ոչ միայն ոչ յառաջանան 'ի ճանապարհի փրկութե, այլ յետս դառնալով կան 'ի վտանգի վերստին անկանելոյ 'ի յառաջինս չարիս, քանզի ոչ սիրեն զճշմարիտ առաքինութի, և ցուցանեն զինքեանս սակաւ սիրելիս Տն, որ ազատեաց զնոսա 'ի բռնութենէ սատանայի, և բաց 'ի յայսմանէ տգէտք, և կոյրք են առ 'ի տեսանել զվտանգն, 'ի յորում գտանին, մինչ սուտաբար համոզեն զինքեանս գոլ 'ի կացութե իբրև ստուգի ։

Եւ

Եւ ասա բանի մի՛ն պատրան այն֊
քան առաւել վնասակար , որքան
նման զգուշացեալ է , թէ բազումք.
որք պարապին հոգևորականի կենի.
գոլով սիրողք անձանց իւրեանց
առաւել քան զայն , որ պիտոյանայ֊
ցէր ( թէպէտ ոչ գիտեն ճշմարտա֊
պէս սիրել զինքեանս ) մանաւանդ
զբուռն արկանեն զայնց կրթութեց.
'ի յորս առաւել ախորժին , և թո֊
ղուն զայլս , որք են ընդդէմ յատկի
բնականի յօժարութե՛ , և ընդդէմ
զգայականաց փափագմանց նոցա ,
ընդդէմ որոց ամենայն բան կամի֊
ցիւր , զի դարձուցանիցիւր բոլոր
ջան պատերազմի ։ Ուստի ով սի֊
րելի դուստր իմ ազդ առնեմ քեզ ,
և յորդորեմ զքեզ , զի սիրիցես
զդժուարութիւնն , և զչարչարանս ,
որք առբերեն ընդ ինքեանս զյաղ֊
թելն զինքն , 'ի յորում կայ բոլորն ,
և այնքան ստուգագոյն , և փութա֊
գոյն լիցի յաղթութիւն , որքան ա֊
ռաւել հզօրապէս սիրիցէիր զդժուա֊
րութիւն , զոր առաքինութիւնն , և
պատերազմն ցուցանէ սկսանողաց .

եւ եթէ դու առաւել սիրեցես զդ-ժուարութիւնն, եւ զտաժանական մենամարտիլն, քան զյաղթութիւնս, եւ քան զուրախութիւնս, փութագոյն ստասցիս զամենայն իր ։

Յաղագս երանելի պատերազմելոյ ընդդէմ չարժամանց զգայութեան, եւ յաղագս ներգործութեանց, զորս կամքն պարտի առ-նել վ̄ ստանալոյ զունակութիւն առաքինու-թեանց ։

# ԳԼՈՒԽ ԻԳ.

Որքանիցս բանաւոր կամքն քո պատերազմեցեալ է ՚ի միոյ կողմանէ ՚ի զգայու-թենէ, եւ ՚ի միւսոյ կողմա-նէ ՚ի յԱ̄ծայնոյ կամէն, մինչ իւրա-քանչիւրն խնդրէ ստանալ զար-մանելին յաղթութեան, պարտիս կր-թել

Թէ զքեզ բազմօք եղանակօք , զի ՚ի յա͞մում իրի զօրանայցէ ՚ի քեզ Ա͞ծ ային կամքն :

Նախ յորժամ արձակեցեալ , և պատերազմեցեալ ես ՚ի շարժմանց զգայութե͞ն , պարտիս առնել զուժ-գին ընդդիմութիւն , զի վերնա-գոյն կամքն ոչ համահաւանիցի այ-նոցիկ :

Երկրորդաբար վասն զի դադա-րեցեալք են՛ , դարձեալ զարթո՛ զնոսա ՚ի քեզ առ ՚ի սանցահարել զնոսա մեծագունիւ ուժգնութե͞բ, և զօրութե͞բ :

Յետ այնորիկ վերակոչեա՝ զնոսա առ երկրորդ պատերազմ , յորում սովորեսցիս բացամերժել զնոսա ՚ի քէն հանդերձ բարկութե͞բ , և զար-շեցմամբ :

Որք երկու զարթուցմունք առ պատերազմ պարտին առնիլ ՚ի յա͞մ-ում անկարգի բաղձանի մերում , բաց ՚ի շարժմանց ՚ի խայթեցմունս մարմնաւորս , զորոց ճառեսցուք ՚ի տեղի իւրում :

Վերջապէս պարտիս առնել զներ-

գործունէութիւն ներհակս առ ամենայն յոռի ախտ քո :

Հետեւողաւ օրինակաւ բոլորն յայտնագոյն եղիցի քեզ :

Զորօրինակ , յորժամ դու պատերազմեցեալ ես 'ի շարժմանց անհամբերութեան . եթէ մնալով ներքո ինքեան, բարեպէս անսայցես, զգասցես , թէ նոքա յարաժամ բախեն զվերնագոյն կամքն , զի հակիցի , եւ հաւանիցի նոցա :

Եւ դու 'ի ձեռն առաջնոյ կրթութեան կրկնեցելովք կամեցմամբք, ընդդիմանալով իւրաքանչիւրոյ շարժման , արա որքան կարես, զի կամքն քո ոչ տայցէ զհամահաւանութիւն :

Ոչ երբեք դադարիլ յայսմանէ մարտէ , մինչեւ դու ոչ զգայցես , թէ թշնամին իբր վաստակեալ , եւ որպէս մեռեալ յաղթեցեալ իցէ :

Արդ ով դուստր , տես զչարութիւն սատանայի : Յորժամ նա զգայ , թէ մեք քաջապէս ընդդիմանամք շարժմանց իւրաքանչիւրոյ ախտի . ոչ միայն դադարէ 'ի զարթուցանելոյ զնոսա 'ի մեզ , այլ զզարթուցեալս

եալս յայնժամ ջանայ դադարեցուցանել , զի մի կրթութե̃ ստանայցեմք զունակութի̃ այնորիկ առաքինութե̃ , որ է ներհակ ինքեան ախտի . և բաց ՚ի յայսմանէ վասն առնելոյ զի դու անկանիցիս ՚ի յորսարանս սնափառութե̃ , և հպարտութե̃ , յետ այնորիկ խորամանկաբար իմացուցանելով քեզ , թէ մեք որպէս զօրեղք զինուորք շուտով ոտնակոխս արարաք զթշնամիս մեր :

Վասն որոյ դու անցցես առ երկրորդ պատերազմ , վերածելով ՚ի միտս քո , և զարթուցանելով ՚ի քեզ զայնոսիկ մտածմունս , որք պատճառէին քեզ զանհամբերութի̃ , այնու կերպիւ , թէ դու զգայցես զքեզ շարժեցեալ ՚ի յայնցանէ ՚ի զգայականի մասին , և յայնժամ յաճախիւք կամեցմամբք , և մեծագունիւ ջանիւ , քան թէ յառաջ , սանձահարեա՛ զշարժմունս իւրս :

Եւ քանզի որքան և մեք բացամերժեմք զթշնամիս մեր , վասն զի ձանձանչեմք առնել զբարի , և հաճոյանալ ա̃յ . սակայն քանզի բոլորովին

ոչ ատեմք զնոսա , ընթանամք 'ի վտանգ , թէ 'ի յայլում ժամանակի յաղթիմք 'ի նոցանէ. վասն որոյ պարտիս դու ընդդիմանալ նոցա երրորդիւ վերայառեցմամբ , և բացահերքել զնոսա 'ի քէն ոչ միայն կամեցմամբք հակառակօք, այլև բորբոքեցելովք. մինչև ատելիք , և գարշելիք լինիցին:

Վերջապէս վասն զարդարելոյ, և կատարելացուցանելոյ զհոգին քո ունակութեմբք առաքինութեանց , պարտիս արտադրել զներքինս ներգործութիւնս , որք ուղղապէս լիցեն ներհակք անկարգից ախտից քոց:

Հիբար կամելով դու կատարելապէս ստանալ զունակութիւն համբերութեան , եթէ ոմն արհամարհելով զքեզ , կարկառէ քեզ զառիթ անհամբերութեան , ոչ բաւականանայ , զի դու կրթիցես զքեզ 'ի յերկիս եղանակս մարտի . զոր ասացի , այլ և առաւել պարտիս կամիլ , և սիրել զընկալեալ արհամարհութիւն, ցանկալով գոլ դարձեալ անարգեցեալ 'ի նոյնում կերպի , և 'ի նոյնոյ անձնէ ,

նէ , սպասելով , և առաջադրելով քեզ տանիլ նաև զերս ծանրագոյնս ։

Պատճառն վասն որոյ այնպիսիք ներգործութիւնք ներհակք հարկաւորք են առ'ի կատարելագործել զմեզ 'ի յառաքինութիւնս , է այս , վասնզի այլապէս այլք ներգործութիւնք , թէ և իցեն բազումք , և զօրեղք , ոչ են բաւականք առ 'ի յարտաքսել զարմատս , որք արտադրեն զմոլութիւն ։

Առաւել ( վասն յարատևելոյ 'ի նոյնում օրինակի ) թէպէտ մեք գոլով արհամարհեցեալք , ոչ հաւանիմք շարժմանց անհամբերութեան, այլ ևս ընդդէմ նոցա պատերազմիմք երիւք վերոցուցելովք եղանակօք , սակայն եթէ ոչ սովորեցուցանիցեմք զմեզ բազմօք , և յաճախեցելովք ներգործութեմբք առ 'ի սիրել զարհամարհանս , և ուրախանալ 'ի վերայ նոցա , ոչ երբեք կարասցուք ազատել զմեզ 'ի մոլութէ հակեցման մերոյ առ յատկական համարումն , որ հիմնի 'ի գարշեցման արհամարհման ։

Եւ 'ի միում կենդանի մոլեկանի արմատոյ, միշտ արժանէ զտերեւս, այնպէս զի տկարացուցանիցէ զառաքինութիւնն, նաև երբեմն 'ի բոլորում զնա հեղձուցանիցէ, և բաց 'ի յայսմանէ յարաժամ պահէ զմեզ 'ի պարբերութենէ վերանկանելոյ 'ի յամենայնում առթի, որ երևեցուցանիցի :

Յորոց իրաց հետևի, թէ թարց ստացելոց ներգործութեանց ներհականաց ոչ երբէք կարիցեմք ստանալ զճշմարիտ ունակութիւն առաքինութեանց :

Նաև նկատեսցի, թէ այսոքիկ այսպիսիք ներգործութիւնք պարտին գոլ այնքան յաճախք, և բազմաթիւք, զի կարիցեն ամենևին եղծել զմոլեկան ունակութիւնն, որ որպէս 'ի բազմաց մոլեկանաց ներգործութեանց կալաւ զառաջացումն 'ի սրտի մերում. այսպէս բազմօք ներհակօք ներգործութեամբք պարտի արտաքսել յայնմանէ առ 'ի ներմուծանելոյ անդ զառաքինական ունակութիւն :

Այլ և ասեմ, թէ բազմադոյնք բա-

բարիք ներգործութիւնք խնդրին առ ՚ի սահման զառաքինական ունակութիւն. և պատճառն է, զի այնոքիկ ոչ են որպէս այսոքիկ օգնեցեալք ՚ի բնութենէ եղծեցելոյ ՚ի մեղաց:

Բաց ՚ի յայնմանէ, որ մինչև ցաստ սասցեալ է, առակցեմք, զի եթէ առաքինութին, զոր յայնժամ ՚ի գործ ածես, այսպէս խնդրէ, պարտիս նաև առնել զներգործութիս արտաքինս համակերպս ներքնայնոց, հիբար ( առ ՚ի մնալ ՚ի յաստացելոյ օրինակի ) ՚ի կեր առնելով զխօսս հեզութեն, և սիրոյ, և ծառայելով եթէ կարես նմա, որ քեզ եղեալ է թախանձական, և հակառակ իւիք կերպիւ:

Եւ որքան և այսոքիկ ներգործութիւնք այնքան ներքինք, որքան արտաքինք իցէին, և երևիցեին քեզ ընկերակցեալք ՚ի յայնքանոյ տկարութէ հոգւոյ, թէ երևիցիւր քեզ առնել զնոսա ընդդէմ համայնի կամեցման քո, սակայն ոչ իւիք կերպիւ պարտիս ՚ի բաց թողուլ զնոսա, քանզի որքան և տկարք իցեն,

պահեն զքեզ հաստատ, և անշարժ 'ի պատերազմի, և դիւրացուցանեն քեզ զճանապարհն յաղթութեան:

Եւ բարեպէս զգուշ լեր, և ժողովեա զքեզ 'ի քեզ ինքեան առ 'ի պատերազմիլ ոչ միայն ընդդէմ կամեցմանց մեծաց, և զօրեղաց, այլ նաև ընդդէմ փոքունց ;՝ և մեղմաց իւրաքանչիւրոյ ախտի, վասնզի սոքա բանան զճանապարհ մեծաց, ուստի յետոյ ծնանին 'ի մեզ մոլեկանք ունակութիւնք:

Եւ 'ի սակաւոյ ջանէ, զոր կալան ոմանք առ 'ի յարմատախլել 'ի սրտից իւրեանց զայսպիսի կամեցմունս, յետ յաղթելոյն զմեծագոյնս նոյնոյ ախտի, պատահեցաւ նոցա, թէ երբ նուազ կարծէին. վերարձակեցեալք, և յաղթեցեալք եղեն 'ի նոյնոց թշնամեաց սաստկագոյն, և կործանելագոյն քան թէ յառաջ:

Այլ ևս ազդ առնեմ քեզ. զի դու երբեմն անսայցես մահացուցանել, և խորտակել զկամեցմունս քոյս, նաև զիրաց օրինաւորաց ոչ հարկաւորաց, քանզի յայսմանէ հետեւեա-

տևեսցին բազումք բարիք, և միշտ
արասցես զքեզ առաւել տրամադ-
րեցեալ, և յօժար առ 'ի յաղթել
զքեզ 'ի յայլս իրս։ Եւ արասցես
զքեզ զօրեղ, և հմուտ 'ի պատե-
րազմի փորձութեց, փախիցես 'ի
զանազանաց դարանաց սատանայի,
և արասցես զիր հաճոյագունեղ Տն։

Ո՛վ դուստր յայտնապէս խօսիմ
քեզ, եթէ 'ի կերպի, զոր ասացի
քեզ գնայցես յարատևելով 'ի յայտ-
նիկ ապահովս, և սէս կրթութիւնս
զսան վերանորոգման, և յաղթութե
քոյոյ ինքեան, ստուգեմ զքեզ, թէ
ներ սակաւու ժամանակի յոյժ գե-
րազանցեսցես, և եղիցիս ճշմարտա-
պէս հոգևոր, և ոչ անուամբ միայն.
բայց այլով կերպիւ, և այլուք կր-
թութեք, թէպէտ ըստ համարման
քո լիցէին գերազանցք, և այնքան
քաղցրահամք, թէ քեզ երևիցիւր
կալ 'ի յայնոսիկ բոլոր միաւորեցեալ
ընդ այ, և քաղցրաբար խօսակցիլ
ընդ նմա, մի՛ հաւատար թէ երբեք
ստասցիս զառաքինութի, և զճշմա-
րիտ ոգի։ Որ (որպէս ասացի 'ի

յառաջնում գլխոյ ) ոչ կայանայ 'ի կրթութիս արտաքսելիս, և համակերպս բնութեան մերում, նաև ոչ ծնանի յայնց, այլ ծնանի յայնցանէ, որք դնեն զնա 'ի խաչի հանդերձ համայնիւք ներգործութեբք իւրովք· ուստի զվերանորոգեցեալ մարդն 'ի ձեռն ունակութեց աւետարանականաց առաքինութեց, համագունեն ընդ իւրում խաչեցելում, և ստեղծողին:

Եւ ոչոք է, որ երկբայիցի, թէ որպէս մոլեկանք ունակութիւք եղանին 'ի բազմաց, և 'ի յաճախից ներգործութեց վերնագոյն կամացն, մինչ տայ զտեղի փափագմանց ըղձայութեան, այսպէս հակադարձաբար ունակութիւք աւետարանականաց առաքինութեց ստանին բազմիցս, և յաճախագունեղամբ առնելով զներգործութիւնս համանմանս Ածային կամացն, յորմէ կոչիմք մերթ առ այս, և մերթ առ այլ առաքինութիւն:

Զի որպէս կամքն մեր ոչ երբեք կարաց լինիլ մոլեկան, և երկրային,

Թէպէտ բազմիցս պատերազմեցաւ իցէ 'ի վայրագոյն կողմանէ , և 'ի մոլութենէ , մինչև ոչ տայցէ նմա զտեղի , և հակիցի առ նա · այսպէս ոչ երբէք լիցի առաքինի , և միաւորեցաւ ընդ այ , Թէպէտ կարէ սաստկապէս կոչեցաւ , և մենամարտեցաւ իցէ 'ի ներշնչմանց , և 'ի յԱծայնոյ շնորհէ , մինչ ներքնայնովք ներգործութեամբք ոչ համակերպէ զինքն նմա , նաև արտաքնովք երբ սխտոյանայ ։

Այն որ պարտիցի առնել յորժամ
վերնագոյն կամքն յաղթեցեալ,
և բոլորովին հեղձուցեալ
երևի 'ի վայրագունն է,
և 'ի թշնամեաց ։

## ԳԼՈՒԽ ԺԴ.

Եւ եթէ երբեք երևիցիւր քեզ, թէ վերնագոյն կամքն ոչ ինչ կարիցէր ընդդէմ վայրագունի, և ընդդէմ թշնամեաց իւրոց, քանզի ոչ զգայցէիր 'ի քեզ զնոյն գործունեայ կամեցումն ընդդէմ նոցա, այսու ամենակաց հաստատ ոչ թողուլ զպատերազմ, վասնզի յարաժամ պարտիս համարել զքեզ որպէս յաղթողական. մինչ յայտնապէս ոչ տեսանես, թէ հաւանեալ իցես նոցա։

Զի որպէս վերնագոյն կամքն մեր ոչ ունի զկարօտութիւն կամեցմանց վայրագունից առ 'ի յարուագրել զներգործութիւնս իւրս, այսպէս եթէ

նա

նա ինքն ոչ կամի , ոչ երբեք կարե-
գոլ բռնադատեցեալ տալ զինքն նո-
ցա որպէս յաղթեցեալ, թէպէտ կա-
րի խստաբար պատերազմիցին ընդ-
դէմ նորա ։

Վասն զի ԱՃ զարդարեաց զկամս
մեր անձնիշխանութբ , և այնպի-
սեաւ զօրութբ , զի եթէ համայնք
զգայութիւք համդերձ համայնիւք
դիւօք , և աշխարհն ՚ի միասին զի-
նաւորիցեն , և միաշունչ նիւթի-
ցեն պչար ընդդէմ նորա , և պա-
տերազմելով ընդ նմա , և պնդելով
զնա համայնիւ զօրութբ իւրով ,
սակայն նա առ անարգանս նոցա կա-
րէ աղատադունեղաբար կամիլ, կամ
ոչ կամիլ զայս ամենայն , զոր կամի ,
կամ ոչ կամի , և քանիցս անգամ , և
զորքան ժամանակ, և այնու կերպիւ,
և առ այն վաղձան , որ առաւել հա-
ճոյական նմա ։

Եւ եթէ սատանայք թշնամիք եր-
բեմն յառնիցեն ՚ի վերայ քո այն-
քանաւ բռնութբ , և պնդիցեն
զքեզ, թէ կամքն քո իբրև հեղ-
ձուցեալ, ոչ ունիցիւր ( զի սատանա
անի-

ասիցեմ ) զշունչ առ 'ի յարտադրել զումն՝ ներգործութեան կամեցմանց ներհականաց , մի ձգեր զզէնս յերկիր , այլ 'ի յայսմիկ դիպուածոջ վարիր լեզուաւ , և պաշտպանեա՛ զքեզ ասելով :

Ո՛չ հնազանդիմ քեզ , ոչ կամիմ զքեզ , որպէս այն , որ ունելով զթշնամին 'ի վերայ իւր , որ նեղէ զնա , ոչ կարելով ծայրիւ սուսերի, ձաղէ զնա միւսով կողմամբ սուսերի :

Եւ որպէս սա ջանայ առնել 'ի յետ կոյս կողմանէ զմին վերարձակումն , զի կարիցէ վիրաւորել զնա ծայրիւ սուսերի, այսպէս դու դարձո՝ զքեզ 'ի ճանաչումն քոյոյ ինքեան , որ ոչ ինչ ես , և զոչ ինչ կարես , և յուսադրութբ 'ի յԱծ , որ ամենայն կարէ , հար զթշնամի ախոյն , ասելով , օգնեա՛ ինձ Տէր , օգնեա՛ ինձ Ած իմ , օգնեա՛ ինձ Յս, Մարիամ , զի մի տայցեմ նմա զհամահաւանութիւն :

Երբ թշնամին տայ քեզ զժամանակ , նաև կարասցես օգնել տկա-

րու-

րութե կամաց , վերընթանալով առ իմացութի , նկատելով զզանազանս մասունս , որոց նկատմամբ յետոյ կամքն ստանայ պչունչ , և զզօրութի ընդդէմ թշնամեաց ։ Զօրօրինակ ,

Դու ես 'ի յումեք հալածման, կամ 'ի յայլում վշտի , այնպիսաբար վերայառեցեալ 'ի յանհամբերութե , թէ կամքն քո գրեթէ ոչ կարէ , կամ թէ ոչ կամի տանիլ , ուրեմն զօրացուսցես զնա , տրամաբանելով ընդ իմացութե , շուրջ զհետևեցելովք , կամ այլովք իրօք մտածելեօք ։

Նախ ։ Մտածեա՛ եթէ դու արգինաւորիս զայն չար , զոր կրես . քանզի ետուր նմա զառիթ, թէ արգինաւորելով զայն , ամենայն պարտաւորութի արդարութե կամի , զի դու համբերութե տանիցես զվէրն զայն , զոր յատկօք ձեռօք ետուր քեզ ։

Երկրորդ . դու ոչ ունելով զիմն մեղ , դարձո՛ զմտածումն քո առ այլս պակասութիս քոյս , զորոց զպատիժն

տուժն դեռևս ԱԾ ոչ ետ քեզ, և ոչ դու պատժեցեր զնոսա որպէս պարտէ ։ Եւ տեսանելով, թէ ողորմածութիւն ԱՅ փոխէ քեզ զպատուժն նոցա, որ լինէր յաւիտենական, կամ՝ նաև ժամանակաւոր, բայց քաւարանին, ընդ միոյ փոքրկան ներկայի, պարտիս ընդունիլ զնա ոչ միայն կամաւորապէս, այլ նաև մատուցանելով զշնորհակալութիւն ։

Երրորդ, և յորժամ երևիցի քեզ, թէ զբազում ապաշխարութի գործեալ ես, և սակաւ վճարցուցեալ ես զԱծային մեծվայելչութեն (սակայն լիր, առ որ ոչ երբեք պարտիս համոզել զքեզ) պարտիս մտածել, թէ ոչ մտանի 'ի յարքայութին երկնից, եթէ ոչ 'ի ձեռն անձկի դրան անձկութեց ։

Չորրորդ, թէ թէպէտ դու կարիցէիր մտանել անդ այլով ճանապարհաւ 'ի ձեռն օրինի սիրոյ ոչ ևս պարտիցեիր մտածել զայն, որով հետև անդ որդին այ հանդերձ համայնիւք բարեկամօք, և անդամօք

իւր-

իւրովք մտեալ է 'ի ձեռն փշոցն խաչին: Հինգերորդ, բայց այն, առ որն 'ի յայսմիկ, և 'ի յայլում առթի դու պարտիս նախապատուաբար վերահայել, է կամքն այ քո, որ վասն սիրոյ, զոր ունի առ քեզ, և վասն համահաճելոյ անձառելաբար 'ի յամենայն ներգործութիւն առաքինութե, և 'ի մահացուցումն, զոր առ'ի պատասխանել նմա սիրով, տեսցէ զքեզ առնել իբրև զիւր հաւատարիմ, և արի պատերազմող: Եւ գիտասցիր ստուգապէս, թէ որքան նեղութիւնն իցէ յինքեան առաւել անբան, և առաւել անարժան 'ի կողմանէ ուստի գայ, և վասն այսորիկ քեզ առաւել թախանձական, և ծանր առ 'ի տանիլ, զայնքան առաւել հաճոյութի տայցես Տն, ընդունելով, և սիրելով նաև 'ի յիրս անկարգս 'ի յիւրեանս ինքեանս, և քեզ առաւել դառնս, զիւր Ածային կամս, և տրամադրութիւնն, 'ի յորում ամենայն պատահումն, որքան անկանոնաւորեցեալ, ունի զկանոն, և զկարգ կատարելագունեղ:

Յա-

Յաղագս ոմանց ազդեցմանց շուրջ զկերպիւ պատերազմելոյ , և մանաւանդ դաւալէս ընդդէմ ում, և որով առաքինութեան պարտի աճիլ:

## ԳԼՈՒԽ ԺԵ.

ԱՐդ տեսեր ով դուստր , զկերպն , որով պատերազմելի է առ ի յաղթել զանձն քո , և զարդարել զքեզ առաքինութեամբք:

Այժմ գիտասցիր ևս , թէ առ 'ի տանել զյաղթութիւն զթշնամեաց քոց մեծագունիւ արագութեամբ, և դիւրութեամբ , պատշաճի քեզ պատերազմիլ, այլ ևս պիտոյ է , զի դու պատերազմիցիս յամենայն աւուր , մանաւանդ ընդդէմ յատկականի սիրոյ , սովորեցուցանելով զքեզ առ 'ի ունել փոխանակ սիրելեաց բարեկամաց

զա-

զանարգանս, և զանհաճոյութիւնս՝, զորս աշխարհս կարիցէր երբէք տալ քեզ ։

Եւ 'ի յոչ նկատելոյն զմարտս զայս, և 'ի սակաւոյ համարմանէ, պատահեցաւ, և պատահի (որպէս 'ի վեր ասացի) թէ յաղթութիւքն են դժուարայինք, անօսերք, անկատարք, և անհաստատք ։

Նաև ազդ տանեմ քեզ, թէ պատերազմին քո պարտի լինել զօրութբ հոգւոյ, զոր դիւրաբար ստացիս, եթէ խնդրիցես զնա 'ի յԱՅ· եթէ նկատելով զկատարութիւն, և զանման տէրութի, և զմեծ թիւն գնդից, և զօրաց նոցա, հակադարձաբար նկատիցես, թէ անհունաբար մեծագոյն է բարութիւնն այ, և սէրն, որով սիրէ զքեզ, և թէ կարի յոյժ առաւելք են հրեշտակք երկնից, և աղօթք սրբոց, որք պատերազմին 'ի կողմանէ մերմէ ։

Եւ 'ի յայսմանէ նկատմանէ յառաջեկեալ է, թէ այնքանք, և այնքանք տկարք կանայք, և աղջկունք յաղթեցին, և պարտեցին զբոլոր կա-

րո-

բողութիւն , և զիմաստութիւն աշխար֊
հի , զբոլորս վերյարուցմունս մարմ֊
նոյ , և զբոլոր կատաղութիւն դժո֊
խոյ :

Ուստի ոչ երբէք պարտիս զար֊
հուրեցուցանել զքեզ, թէպէտ եր֊
բեմն երևիցին քեզ , թէ պատե֊
րազմն թշնամեաց առաւել զօրանայ֊
ցէ , և թէ մնալոց իցէ 'ի բոլոր
կեան քո , և թէ սպառնայցէ քեզ
գրեթէ զատոյգս սահեցմունս 'ի զա֊
նազանաց կողմանց , վասն զի բաց 'ի
վերոյասացելոյն պարտիս գիտել ,
թէ ամենայն զօրութիւն , և գիտու֊
թիւն թշնամեաց մերոց կայ 'ի ձեռին
Աստուծոյ զօրագլխոյն մերոյ , վասն
պատուոյ որոյն իրացագործի պատե֊
րազմ , որ անձառելաբար համա֊
բերելով , և կոչելով զմեզ նոյն ինքն
աշխատաբար առ պատերազմ, արդա֊
րև ոչ երբէք թոյլ տացէ , թէ քեզ
առնիցի անօգտութիւն , այլ ինքն պա֊
տերազմելով վասն քո , տացէ զնոսա
յաղթեցեալս 'ի ձեռս քո , յորժամ
հաճոյասցի նմա , և հանդերձ մե֊
ծագունիւ օգնուիւ քոյով , երբ նա

ժա֊

յաղաղէցիւր մինչև 'ի վերջին օր կե-
նաց քոյ ։

Այս միայն պատկանի քեզ, զի դու պատերազմիցես արիաբար. և եթէ երբեմն հանդիպիցի, զի դու վիրաւորիցիս մի երբէք թողուցուս զզէնս և մի փախիցես ։

Վերջապէս զի դու քաջապէս պատերազմիցես, պարտիս գիտել, թէ ոչ է կարելի փախչել յայսմանէ պատերազմէ, և ով ոչ պատերազմի հարկաւորապէս ըմբռնի, և մեռանի ։

Բաց 'ի յայսմանէ առնելի է ընդ թշնամեաց այնպիսւոյ որպիսութե, և որք լիք են ատելութե, թէ ոչ իւիք կերպիւ կարելի է յուսալ զխաղաղութի, կամ ոչ զլռեցուն պատերազմի առ ժամանակ մի ։

### Որո՛վ կերպիւ առաւօտուն առ արշալոյսն զինուորին Ք͞սի պարտիցի դնել ՚ի դաշտի :

## ԳԼՈՒԽ ԺԶ:

Մինչ զարթիս ՚ի քնոյ առաւջին իրն, զոր պարտին նկատել ներքին աչօք քոյք, է տեսանել զքեզ ներ մոյ փակեցելոյ ձորոյ, այսու օրինաւ, թէ ով ոչ պատերազմի անդ, յարաժամ մեռեալ վերամնայցէ :

Ներ որոյ նկարակերտեսցես զքեզ տեսանել առաջի քո ՚ի միոյ կողմանէ զթշնամին զայն, և զվատ յօժարութին քո, զոր արդ առեալ ես առ ՚ի յաղթահարել զնա, զինուորեցեալ առ ՚ի վիրաւորել, և սպանանել զքեզ, և ՚ի յաջմէ կողմանէ զյաղթօղ զօրապետն քո զՅ͞ս Ք͞ս, հանդերձ իւրով ամենասրբով մարբ Մարիամաւ կուսիւ, ՚ի միասին հանդերձ

դերձ խուռով սիրելագունեղիւ փե-սայիւ Յօսեփաւ, հանդերձ բազմօք զօրօք հրեշտակաց, և սրբոց, և մա-նաւանդապէս հանդերձ սրբով մի-քայելիւ հրեշտակապետիւ, և 'ի ձախմէ կողմանէ զդժոխային դևն հանդերձ խուռովք առ 'ի յընդոստու-ցանել զվերոյասացեալ ախտն քո մորակելով զքեզ առ 'ի տալ նմա զտեղի ։

'Ի յորում թուեցի քեզ լսել զմին ձայն, իբրև 'ի հրեշտակէ քումմէ պահապանէ . որ այսպէս ասիցէ քեզ ։

Դու այսօր պարտիս պատերազ-միլ ընդ այսմիկ, և ընդ այլոց թշնա-մեաց քոց ։ Մի երկիցէ սիրտ քո, և մի թուլանասցէ, մի տայցէ նմա զտեղի վասն երկիւղի, կամ վասն այլոյ ուրուք վերահայեցման . քան-զի Տէրն մեր, և զօրապետն քո կայ աստ ընդ քեզ հանդերձ այսոքիւք համայնիւք փառաւորօք զօրօք, որ ընդդէմ ամենից թշնամեաց քոց պատերազմեսցի, ոչ թոյլ տալով, զի 'ի զօրութե 'ի վերայ քո առնել

զօրանայցեն, և թէ դու պատերազմիցիս անօգտաբար ։ Նաև հաստատկաց, բռնադատեա՛ զքեզ, և տար զնեղութիւնն, զոր 'ի բռնադատելն զքեզ երբեմն զգայցես ։ Աղաղակեա՛ առէպ 'ի խորոց սրտի, և կոչեա՛ զՏէրն քո. և զՄարիամ կոյսն, և զհամայնս սբս, և թարց երկբայութեն սպասցիս զյաղթութին ։ Եթէ դու թուլացեալ ես, և վատ ունակութի ստացեալ, եթէ թշնամիք քո հզօրք, և բազումք են, սակայն առաւել բազումք են օգնութիւնք այնր, որ ստեղծեաց, և փրկեաց զքեզ, և 'ի վեր քան զկերպ, և թարց ուրուք բաղդատման առաւել հզօր է Այն քո, նաև առաւել կամի նա փրկել զքեզ, քան թշնամին կորուսանել զքեզ ։ Պատերազմեա՛ քաջապէս, մի երբէք ձանձրացուսցէ զքեզ չարչարիլն, քանզի 'ի յաշխատանաց, և 'ի բռնադատմանէ ընդդէմ քոյոց վատից յօժարութեց, և 'ի չարչարանաց, որք զգացեալք լինին վասն վատից ունակութեանց, ծնանի յաղթութիւնն, և մեծ գանձ,

որով

որով գնի Արքայութիւնն երկնից,
և հոգին յաւիտեան միաւորի ընդ
ԱԾ։

Սկսեսցիս անուամբ Տ̃ն պատե-
րազմիլ զինօք անապաւինութեան
յանձն քո, և ապաւինութե̃ 'ի յԱԾ̃,
աղօթիւք, և կրթութբ̃, կոչելով 'ի
մարտ զթշնամին զայն, և զյօժա-
րութիւնն քո զայն, զոր ըստ վերոյ
ասացելոյ կարգի սահմանեալ ես
յաղթահարել մերթ ընդդիմացմամբ,
մերթ ատելութբ̃, և մերթ ներգոր-
ծութբ̃ առաքինութե̃ ներհականի,
վիրաւորելով զնա բազմիցս 'ի մահ,
վասն հաճոյանալոյ Տ̃ն քում, որ
հանդերձ բոլորով յաղթանակողաւ
եկեղեցեաւ կան առ 'ի տեսանել
զմարտ քո։

Դարձեալ ասեմ քեզ, թէ պա-
տերազմիլն ոչ պարտի ձանձրացու-
ցանել զքեզ, նկատելով զպարտաւ-
որութի, զոր համայնքս ունիմք առ
'ի ծառայելոյ, և հաճոյանալոյ ԱԾ,
և զհարկաւորութիւնն պատերազմե-
լոյ, ոչ կարելով փախչել յայնմանէ
պատերազմէ թարց վիրաց, և մա-

F նու-

հոճան մերոյ. այլ եւ ասեմ քեզ, թէ երբ ուրեք ապստամբ կամիցեիր փախչել 'ի յԱՅ, եւ տալ զքեզ աշխարհի, եւ հեշտութեանց մարմնոյ, առ արհամարհան քո պարտ է քեզ պատերազմել, եւ այնքանիւք, եւ այնքանիւք ներհակութեամբք, թէ բազմիցս քրտնեցի ճակատ քո, եւ յածեցի 'ի սիրտ քո ցաւօք մահուան:

Նկատեա՛ աստ, թէ որպիսի յիմարութի լիցէր յանձն առնուլ զայնոսին աշխատանս, եւ զայնոսին չարչարանս, որք ներածեն զմեծագոյն աշխատանս, եւ չարչարանս մահուամբ 'ի միասին, որք ոչ երբեք սպառեսցին, փախչելով յայնմանէ, որ շուտով վերջանալով, միաւորէ զմեզ ընդ յաւիտենականին, եւ անհունաբար երանեցելոյ կենին 'ի յաւիտեան վայելելով զԱԾն մեր:

## Յաղագս կարգի պատերազմելոյ ընդդէմ մոլեկանաց ախտից մերոց:

## ԳԼՈՒԽ ԺԷ.

Արի շահաւէտ է գիտել զկարգն, որ պարտի պահիլ առ 'ի պատերազմիլ որպէս պարտէ, և ոչ ըստ դիպուածոյ, և ըստ երևութի, որպէս առնեն բազումք, ոչ թարց վնասու իւրեանց: Կարգն պատերազմելոյ ընդդէմ թշնամեաց, և ընդդէմ վատից յօժարութե̄ց քոց է, թէ դու մտանելով 'ի ներքս արտի քո, հայցիցես ուշադրիւ քննութե̄, յորմէ ցեղէ մտածմանց, և ըղձից շրջափակեցեալ իցէ, և յորմէ ախտէ առաւել տիրապետեցեալ, և բռնադատեցեալ իցէ, և մանաւանդ ընդդէմ նորա առնուցուս զզէնս, և զմարտ:

Եւ եթէ պատահիցի, թէ դու վերարձակեցեալ իցես 'ի յայլոց թշ-

նամեաց, միշտ պարտիս պատերազմիլ ընդդէմ նորա, որ յայնժամ 'ի ներգործութե, և 'ի մերձաւորունէ մարմնոյն ընդ քեզ, սակայն յետոյ վերադառնալով առ գլխաւոր գործառութի :

### Յաղագս կերպի ընդդիմանալոյ փութականաց շարժմանց ախտից :

## ԳԼՈՒԽ ԺԲ.

Դեռ ևս դու ոչ գոլով սովորեցեալ առ 'ի բժշկել զփութականս հարուածս անխրատութեանց, կամ այլոյ իրի ներհակի, վասն առնելոյ զսովորութիս զայս, կրթեա զքեզ առ 'ի նախատեսանել, և յետոյ կամիլ զնոսա բազմիցս, ստանելով նց ոգւով պատրաստեցելով :

Կերպն նախատեսանելոյ զնոսա է, զի նկատեալ զորպիսութի ախտից քոց, նաև նկատիցես զանձինս, և զտե-

զտեղիս, ուրն, և ընդ որոց վարի-
ցիս, յորմէ դիւրապէս կարասցես
նշմարել զայն, որ քեզ կարիցէր
հանդիպիլ:

Եւ 'ի վերայ հասանիլ քեզ որոց
և իցէ այլոյ իրի հակառակի ոչ մտա-
ծեցելոյ, բաց 'ի յօգնութենէ, զոր
առբերեալ իցէ քեզ պատրաստ պա-
հելն զդիրն քո այլոց իրաց, զորս
նախատեսանէիր, կարասցես նուաս
վարիլ այսու այլով եղանակաւ:

'Ի յայնմիկ, յորում դու սկսանիս
զգալ զառաջինս վէրս անիրաւութեն,
կամ այլոյ իրի չարչարելականի, կաց
ուշադիր զօրացուցանել զքեզ առ 'ի
յամբառնալ զմիտ քո առ ԱԾ, նկա-
տելով զհուր անպատմելի բարութին,
և զսէրն, զոր ունի առ քեզ, որով
առաքէ առ քեզ զձախորդութիւնս
զայն, զի համբերութբ տանելով
զայն վասն սիրոյ նորա առաւել մա-
քրիցիս, և մերձենայցես, և միաւո-
րեցիս ընդ նմա:

Եւ տեսեալ որքան համահաճիցի
նա, զի դու տանիցիս զայն, զարձն
զքեզ առ քեզ իսկ, յանդիմանելով

զքեզ, և ասելով ցքեզ. Աղէ՛ վ՞
էր ոչ կամիս դու համբերութեամբ
տանիլ զխաչս զայս, զոր ոչ այսու֊
քիկ, կամ այնոքիկ, այլ երկնաւոր
հայրն քո առաքէ առ քեզ: Յետոյ
դարձո զքեզ առ խաչն, դրկեա՛
զնա մեծապատունիւ համբերութեամբ, և
ուրախութեամբ, որով կարես, ասելով՝
Ո՛հ խաչ կերտեցեալ 'ի յԱստուածայնոյ
նախախնամութենէ, յառաջ քան զլի֊
նիլն իմ: Ո՛հ խաչ քաղցրացուցեալ
'ի քաղցր սիրոյ խաչեցելոյն իմոյ:
Բևեռեա՛ զիս արդ 'ի քեզ, զի կա֊
րիցեմ տալ զիս այնմիկ որ մեռանե֊
լով 'ի վերայ քո, փրկեաց զիս:

Եւ եթէ 'ի սկզբան առաւել զօ֊
րանալով 'ի քեզ ախտն քո, ոչ կա֊
րիցես վերացուցանել զքեզ առ
Աստուած, այլ մնայցես վիրաւորեցեալ,
սակայն խնդրեա առնել զայն վաղ֊
վաղագոյն. որպէս եթէ ոչ լիցիս
վիրաւորեցեալ:

Արդ առ գործունեայ դեղ ընդ֊
դէմ այսոցիկ փութականաց շարժ֊
մանց փութով բարձցես զառիթն,
ուստի արտաբղխին:

Որ֊

Որզան եթէ վասն ըղձի, զոր ունիս առ ի՛մն իր, տեսանես երբ 'ի յայնմիկ թախանձեցեալ ես, և առվոր ես անկանիլ 'ի փութական այլ այլութի ոգւոյ, կերպ ունելոյ զհոգածութի առ այս 'ի ժամանակի է, թէ դու սովորիցիս բառնալ 'ի քէն զիղձն:

Իսկ եթէ այլայլութիւնն արտաբերի ոչ 'ի յիրէ, այլ 'ի յանձնէ, որում, քանզի ոչ ես արենակից, ամենայն փոքրիկ արարողութի զզուեցուցանէ, և շարժէ զքեզ · սակեղանին է, թէ դու ջանայցես հակել զկամս քո, առ 'ի սիրել զնա, և ունիլ զնա հաճոյ, վասն զի բաց 'ի յայսմանէ թէ է ստեղծուած որպէս եւ դու 'ի վերնադունէ ձեռանէ կերտեցեալ, և նոյնով Աճայնով արարեալ, որպէս և դու վերանորոգեցեալ, նաև մատուցանէ քեզ զառիթ (եթէ ցաւակից լինիցիս նմա) համանմանեցուցանելոյ զքեզ Տն քում մարդասիրի, և գորովագթոյ ընդ ամենեսեան:

Յա-

## Յաղագս կերպի պատերազմելոյ ընդդէմ մոլութեան մարմնոյ ։

## ԳԼՈՒԽ ԺԹ.

Ընդդէմ այսր մոլութեան պարտիս պատերազմիլ մանաւանդ, և զանազանաւ կերպիւ ՚ի յայլոց ։ Ուստի զի դու գիտիցես պատերազմիլ կարգաւորապէս, պարտիս նկատել զերիս ժամանակս ։

Նախ քան զփորձիլն մեր ։

Յորժամ փորձիմք, և յետոյ յորժամ փորձութիւնն անցեալ է ։

Նախ քան զփորձութիւնն պատերազմն եղիցի ընդդէմ պատճառաց, որք սովորք են պատճառել զայս փորձութիւն ։

Նախ դու պարտիս պատերազմիլ ոչ ճակատելով առ մոլութիւն, այլ փախչելով բոլորով կարողութեամբ քով յիւրաքանչիւրոյ առթէ, և անձնէ, յոր-

յորմէ կարիցէ գալ առ քեզ իմն փո-
քրագունեղ վտանգ ։

Եւ երբեմն 'ի պխտոյանալն խօսիլ
ընդ ումեք անձին , խօսեաց փու-
թագունեղապէս հանդերձ կարի
պարկեշտուիւք , և ծանուք դիմօք , և
ևս առաւել խօսքն պարտին ունիլ
զխստութի , քան զսիրելականութի ,
և զաւելորդական քաղցրաբարոյու-
թիւն ։

Մի ապաւինիր 'ի քեզ , քանզի
դու ոչ գիտես , և զայնքանս, և զայն-
քանս ամն ընկերակցեցեալ ոչ զգա-
ցեր զխայթս մարմնոյ , քանզի այս
անխնեալ մոլութիս , զայն , զոր ոչ
է արարեալ 'ի բազումս ամս , առնէ
'ի միում' ժամու , և բազմիցս զպա-
տրաստութիս իւրս գաղտաբար կար-
դաւորէ , և այնքան առաւել վնա-
սէ , և անբժշկելաբար վիրաւորէ ,
որքան առաւել ցուցանէ զինքն բա-
րեկամ, և նմանապէս կասկածեցու-
ցանէ զինքենէ ։

Եւ բազմիցս առաւել երկնչելի է
( որպէս փորձառութիւնն յոլովիցս
եցոյց , նաև ցուցանէ ) ուր կենցա-
ղա-

ղավարութիւնն յարատևէ ընդ քո-
ղով օրինաւորաց իրաց որպէս ազ-
գականութեան , կամ պատուաւորի
պաշտօնի , կամ նաև առաքինութեան,
որ իցէ 'ի յանձին սիրեցելում, վասն
զի յաճախականաւ , և անխոհեմաւ
կենցաղավարութեամբ , խառնի թիւն-
աւոր հեշտութիւն զգայութեան , որ
անզգալաբար կաթելով սակաւ առ
սակաւ , և թափանցելով մինչև 'ի
ծուծս հոգւոյ , միշտ առաւել խաւ-
արեցուցանէ զբան , այնպէս , թէ
սկսանին համարիլ որպէս զոչինչ իւք
վտանգաւորք , հայեցմունք սիրելա-
կանք , բանք քաղցունք երկաքանչ-
իւրոյն , և համեղութիւնք կենցաղա-
վարութեան , և 'ի լինիլն իրին այս-
պէս 'ի յերկաքանչիւրոյ կողմանէ ,
յետոյ լինի անկանումն 'ի կործան-
ումն , կամ 'ի յիմն աշխատական փոր-
ձութիւն , և տաժանական առ 'ի յաղ-
թահարել ։

Դարձեալ ասեմ քեզ , զի դու
փախիցիս , քանզի ես խծուծ , մի
ապաւինիր 'ի քեզ թէ թացեալ ես,
և բարեպէս ըն ջուրբ բարւոյ, և զօ-
րեղի

րեղն կամին, և ևս առաւել բացո֊
րոշեցեալ, և պատրաստեցեալ առ֊
մահ, քան վշտացուցանել զԱծ,
վասն զի ՚ի յաճախ կենցաղավարին
քո, հուրն ջերմութե̄ լուրով սակաւ
առ սակաւ, չորացուցանելով զջուրն
բարւոյ կամին, երբ նուաղ կարծէր,
զինքն հալեցուցեալ նմա, այնպէս թէ
ոչ վերահայեցի առ ազգականութի,
և ոչ առ բարեկամս. ոչ երկեւցէ ՚ի
յԱծ, ոչ համարեցաւ զպատիւ, ոչ
զկեանս, և ոչ զպատիժս բոլորոյ
գժոխոյ։ Սակայն փախիր, փա֊
խիր, եթէ ճշմարտապէս ոչ կամիս
գոլ ժամանեցեալ, ըմբռնեցեալ, և
սպանանեցեալ։

Երկրորդ փախիր ՚ի պարապու֊
թէ, և կաց զուարթուն, և ուշա֊
դիր միտօք, և գործովք պատշա֊
ճաւորօք կացութե քում։

Երրորդ մի երբեք առնիցես զըն֊
դիմութիւն, այլ դիւրապէս հնա֊
զանդեաց մեծաւորաց քոց, և հան֊
դերձ յօժարութե̄ կատարելով զիւր
հրամայեցեալս, և առաւել կամա֊
ւորապէս զայնս, որք խոնարհեցու֊
ցա֊

կանեն զքեզ, և առաւել ներհակք
են կամաց քոց, և բնականի յօժա-
րութեն քո:

Չորրորդ մի երբէք առնիցես
զթիւր դատողութի զընկերէ, մա-
նաւանդ զայնմանէ մոլութե, և եթէ
յայտնապէս անկեալ իցէ, ցաւակից
լեր նմա, մի զայրանայցես ընդդէմ
նորա, ոչ միայն ոչ պարտիս ծաղր
առնել, այլ հան զպտուղ խոնար-
հութե, և ճանաչման քոյոյ ինքեան
ճանաչելով զքեզ փոշի, և ոչ ինչ
աղօթիւք հանդերձ մատիր առ Ած
և որքան կարես փախիր 'ի կենցա-
ղավարութեց, ուր նաև իցէ առաւել
վտանգի:

Զի եթէ դու դիւրապէս դատի-
ցես զայլս, և անարգիցես զնոսա
Ած ըստ արժանեաց քոց խրատես-
ցէ զքեզ, թոյլ տալով զի և դու
անկանիցիս 'ի նոյն պակասութի, զի
այսպէս ջանայցես ազատիլ 'ի հպար-
տութե քումմէ. և խոնարհեցեալ
խնդրիցես զպակասանին այսոցիկ եր-
կուց մոլութեց:

Եւ ոչ անկանելով, նաև ոչ փո-

փո-.

փոխելով զմիտն , սակայն գիտասցիր. թէ կարի յոյժ երկբայելի է զկացութիւն քումմէ ։

Հինգերորդ , և վերջապէս բարուօք նկատեա՛ , զի դու գտանելով զքեզ հանդերձ իւիք պարգևաւ , և համեղութիւն հոգևորականաց փափկութեանց , ոչ ունիցիս զքեն զմին առոյգ ունայն համահաճութիւն , համարելով զքեզ գոլ իր ինչ , և թէ թշնամիք քո ոչ ևս պատերազմելոց են ընդ քեզ , վասն զի երևի քեզ հայիլ 'ի նոսա գարշեցմամբ , զզուեցմամբ , և ատելութիւն հանդերձ , զի եթէ 'ի յայսմիկ անզգուշ լինիցիս դիւրապէս սահեսցիս ։

'Ի ժամանակի փորձութեան նկատեա՛ , արդե՛օք բղխիցէ 'ի յարտաքնոյ , թէ 'ի ներքնայնոյ պատճառէ ։

Ես զարտաքինն իմանամ , թէ իցէ հետաքրքրութիւնն աչաց , ականջաց , յաւելորդ զարդարան զգեստուց , կենցաղավարութիւք , և խօսակցութիւք , որք զարթուցանեն առ այս մոլութի ։

Գեղն այսոցիկ պատահմանց է ,

 պար-

պարկեշտութիւն , ամօթխածութիւն , ոչ կամելով տեսանել , կամ լսել զինչ , որք զարթուցանեն առ այսմոլութիւն , եւ փախուստ որպէս 'ի վեր ասացի :

Ներքինն արտաբղխի , կամ 'ի զօրեղութենէ մարմնոյ , կամ 'ի խորհեցմանց մտաց , որք յառաջագային 'ի վատթարաց ունակութեանց մերոց , կամ նաեւ 'ի ձեռն թելադրութեան սատանայի :

Զօրեղութիւնն մարմնոյ պարտի ճնշիլ ծոմապահօք , ճաղեցմամբք , խարազանիւք , հսկմամբք , եւ այլովք նմանօք խստութեամբք , ըստ որում ուսուցանէ խոհեմութիւն , եւ հնազանդութիւն :

Որքան առ մտածմունս , յորմէ եւ կողմանէ գայցեն , դեղքն են այսոքիկ :

Անսացմունք 'ի զանազանս ներկրթութիւս յարմարս յատկի կացութե :

Աղօթքն , եւ խոկումն :

Աղօթքն ճիգի այսու կերպիւ :

Երբ դու սկսանիս զգալ նաեւ սակաւիկ մի ոչ միայն զայնպիսիս մտածմունս ,

մունս, այլ նաև զառաջնորդ նոցին. փութով երթ մոօք առ խաչեցեալն, ասելով, Յ՟ս իմ, քաղցր Յ՟ս իմ ։ Օգնեա ինձ փութանակի, զի մի ես ըմբռնիցիմ յայսմանէ թշնամւոյ ։

Եւ երբեմն փարելով զխաչին, ուստի կախեալ կայ Տէրն քո, համբուրեա բազմիցս զվէրս սրբազանից ոտից նորա, ասելով ամենամեծափափագաւ. վէրք գեղեցիկք, վէրք ողջախոհք, վէրք ս՟րբք, վիրաւորեցէք արդէն զայս ողորմելի, և անմաքուր սիրտն իմ, ազատելով զիս 'ի վշտացուցմանէ քումմէ ։

Ոչ կամիցեի, թէ 'ի ժամանակի, 'ի յորում առատանան փորձութիւնք հեշտութեանց մարմնականաց, խոկումն իցէր շուրջ զոմանց իւրաց մտածելեաց, զորս առաջագրեն բազումք մատեանք առ դեղ այսորիկ փորձութեան, որպէս զնկատելն զոչընչութիւն այսր մոլութեան, զանյագելութիւնն, զանհամեղութիւն, զդառնութիւնս, որք հետևին, զվտանգս, և զկորուստ ապրանաց, կենաց, պատուոյ, և իւրաց նմանաց ։

G ։ Քան-

Քանզի այս ոչ է միշտ ապահով միջոց առ 'ի յաղթել զփորձութիւն, այլ ևս կարէ առբերել զվնաս, զի եթէ խմացութիւնն միով ճանապարհաւ արտաքսէ զայսոսիկ մտածմունս, միւսով մատուցանէ մեզ զառիթ, և զվտանգ հեշտանալոյ, և հաւանելոյ հեշտութեան, ուստի ճշմարիտ դեղն է ամենևին փախչիլն, ոչ միայն 'ի յայնց, այլ նաև յամէ իրէ, ներհականէ նոցին, որ նմա առաջադրիցի:

Սակայն խոկումն քո առ այս գործ լիցի շուրջ զկենօք, և զչարչարանօք խաչելոյն մերոյ:

Եւ եթէ մինչ դու խոկաս առաջադրիցեն քեզ զինքեանս ընդդէմ կամաց քոց նոյնք մտածմունք, և առաւել քան զսովորութիւնն թախանձեցուցանիցեն զքեզ (որպէս դիւրապէս հանդիպեսցի քեզ) վասն այսր մի երկնչիր, և մի թողուր զխոկումն, ոչ ևս առ 'ի յընդդիմանալոյ նոցա դարձուցես զքեզ առ այնոսիկ, այլ որքան կարելի իցէ քեզ, մտադրագոյն հետևեսցիս խոկման

մամն քո, ոչ ունելով զխոյթ զայնպիսեաց մտածմանց, որպէս թէ ոչ էցէին քոյք։ վասն զի ոչ գոյ լաւագոյն կերպ քան զայս վասն ընդդիմանալոյ նոցա, թէպէտ առնիցէին քեզ զհանապազօրդական պատերազմ։

Յետոյ եզրակացուցես զխոկումն այսոքիւք, կամ նմանօք աղաչանօք։ Ազատեա՛ զիս ստեղծօղ, և փրկիչ իմ ՚ի թշնամեաց իմոց վասն պատուոյ չարչարանաց, և անպատմելի բարութեն քո. մի դարձուցաներ զմիտս քո առ մոլութիւնն, վասն զի միայնակ յիշումն նորա ոչ է թարց վտանգի։

Եւ ոչ երբէք պարտիս մերձենանել ընդ նմանի փորձութեն, եթէ դու տուեալ իցես զհաւանութիւն, կամ ոչ. քանզի այս ՚ի ներքոյ տեսակի բարւոյ, է խաբէութի սատանայի, առ ՚ի վրդովել զքեզ, և անապաւինեցուցանել զքեզ, կամ առնել զքեզ փոքրոգի. կամ նաև քանզի զբաղեցուցանելով զքեզ ՚ի յայնպիսիս խօսակցութիս, յուսայ սա֊

հեցուցանել զքեզ 'ի յիմն յանցանս ։

Սակայն 'ի յայսմիկ փորձութեան ( երբ հաւանումն ոչ է յայտնի ) բաւական է քեզ խոստովանել զբոլորն կարճառօտութբ Հօր քո հոգեւորի, յետոյ մնալով հանդարտ ընդ ենթադատման նորա , թարց մտածելոյ զայլ ինչ ։

Եւ արա , զի միշտ հաւատարմաբար բացայայտիցես նմա զհամայն մտածմունս քոյս , եւ մի երբեք ըմբռնիցէ զքեզ իմն վերահայեցումն, կամ ամօթ ։

Զի եթէ մինչ պատերազմիմք ընդ համայնից թշնամեաց մերոց կարօտանամք առաքինութեն խոնարհութեն առ 'ի յաղթել զնոսա , 'ի յայսմիկ առաւել քան թէ 'ի յայլում պարտիմք խոնարհիլ , որով հետեւ մոլութիս այս յարածամ գրեթէ է պատիժ հպարտութեն ։

'Ի յանցանելն ժամանակի փորձութեն , այն զոր դու առնել պարտիս է այս , թէ , թէպէտ երեւիցի քեզ թէ լիցես ազատ , եւ բոլորովին ապահով , սակայն կայցես մօտ ամե-

նեւին

ներին հեռի կայնց առարկայից , ոյք պատճառէին քեզ զփորձութիւնն , թէպէտ զգայցեիր շարժիլ առ 'ի առնել այլապէս վասն վախճանի առաքինութե , կամ այլոյ բարւոյ , քանզի այս է խաբէութի մոլեկանի բնութե , և որոգայթ խորագիտու հակառակորդին մերոյ , որ մտանէ 'ի կերպարան հրեշտակի լուսոյ առ 'ի ներածել զմեզ առ խաւար :

## Յաղագս կերպի պատերազմելոյ ընդդէմ ծուլութե :

## ԳԼՈՒԽ Ի.

Զի դու մի անկանիցիս 'ի թշուառ ծառայութիւն ծուլութե , իր որ ոչ միայն արգելուցու քեզ զգնացս կատարելութե , այլ տայցէր զքեզ 'ի ձեռս թշնամեաց :

Պարտիս փախչիլ յամե հետաքրքրութե , և 'ի հպմանէ իրաց երկ-

րայնոց, և 'ի յիւրաքանչիւրոյ զբաղմանէ, որ կացութեան քո ոչ յարմարի ։

Յետայնորիկ պարտիս ջանալ, զի դու փութով պատասխանիցես ամից բարեաց ներշնչմանց, և իւրաքանչիւրում հրամանի մեծաւորաց քոց, առնելով զհամայնս իրս 'ի յայնմիկ ժամանակի, և այնու կերպիւ, որպէս հաճոյ է նոցա ։

Ոչ յապաղել պարտիս նաև զկարճառօտագունեղ ժամանակ յամեցմանէ, քանզի այն միայնակ առաջին յամեցումն բերէ ընդ իւրն զերկրորդն, և այս զերրորդն, և զայլս, որոց զգայութիւնն հնազանդել, և դիւրագոյն տայ զտեղի, քան առաջնոյն, գոլով արդէն յօժարեցուցեալ և ըմբռնեցեալ 'ի հեշտութէ, զոր իսկ ճաշակեալ է ։

Ուստի կամ լինի սկսումն աղօթից կարի յամեցողաբար, կամ երբեմն ամենևին 'ի բաց թողանի վ̃ զղոնեցման ։

Եւ այսպէս սակաւ առ սակաւ գտանի ունակութիւն ծուլութեն, որ

յետոյ

յետոյ վերածել զմեզ առ այն նշան, զի 'ի նոյնում կէտոջ, յորում 'ի յայնմանէ ըմբռնեցեալք, և կապեցեալք եմք, առաջադրիցեմք մեզ միւս անգամ կամիլ գալ կարի յուշադիրք, և հոգաբարձուք իմանալով թէ յայնժամ լեալք իցեմք հեղգացունեղք հանդերձ ամաչմամբ մեր ինքեանց: Ծուլութիւն այս արշաւէ ընդ ամենայն, և թիւնով խայթով ոչ միայն ապականէ զկամս, առնելով, զի նա դարձիցի 'ի գործոյ, այլ ևս կուրացուցանէ զիմացութիւնն, զի մի տեսանիցէ, թէ որքան ունայնաբար, և վտանգաւոր հիմնեցեալք իցեն առաջադրութիւնքն փութով, և ուշադրաբար գործածելոյ 'ի յապագայն զայն, որ յայնժամ գոլով առնելի, կամաւորապէս բոլորովին 'ի բաց թողանի, կամ թէ յապաղի առ այլ ժամանակ:

Ոչ բաւականանայ առնել զգործն փութով, զոր պարտիս առնել, այլ պարտի առնել 'ի յատկի ժամանակի զոր խնդրէ որպիսութիւն, և գոյն այնր գործոյ, և այնու միշտ ուշա-

դրութիւն , որ նմա յարմարի , զի ու-
նիցի զամենայն կարելի կատարելու-
թիւն :

Զի ոչ է ուշադրութիւն , այլ նրբա-
գունեղ ծուլութիւն առնել զգործն
յառաջ քան զժամանակ , և փութա-
պէս վերջացուցանել զնա , և թարց
այսր զի բարեպէս առնիցի , զի յե-
տոյ հանդարտաբար տայցեմք զմեզ
հեղգականի հանգստութեան . առ որ
սևեռեցեալ էր խորհուրդ մեր , մինչ
փութապէս առնուլ գործն :

Այս բոլոր մեծ չարին հանդիպի ,
զի ոչ նկատի զինն բարւոյ գործոյ
արարեցելոյ 'ի ժամանակի իւրում ,
և ոչ եւս բացորոշեցելով առ 'ի յըն-
դառաջ հանդիպել աշխատանաց , և
դժուարութեան , զոր առաքերէ մոլու-
թիւնն ծուլութեան նորակերտից զի-
նուորաց :

Ուրեմն դու պարտիս ստէպ մտա-
ծել , թէ մի միայն վերապացումն մտաց
առ Ած , և մին ծնրադրութիւն ,
և երկրպագութիւն 'ի պատիւ նորա ,
առաւել արժէ , քան զհամայն
գանձս աշխարհի , և թէ որքանիցս
յաղ-

յաղթեմք զմեզ ինքեանս, և ընդդէմանամք մոլեկանաց ախտից, 'ի յարքայութեն երկնից հրեշտակք բերեն հոգւոյ մերում զմին պսակ փառաւոր յաղթութեն։

Եւ հակադարձաբար թէ Աճ 'ի ծուլից սակաւ առ սակաւ բառնայ զշնորհս, զորս տուեալ էր նոցա, և ուշադրից զնոսա աճեցուցանէ, յետոյ առնելով զնոսա մտանել 'ի յատուկ ուրախութի իւր։

Եթէ դու ոչ ես այնքան 'ի յառաջինս սկզբունս, զի արիաբար ընդառաջ ելանիցես աշխատանաց, և դժուարութեն, պարտիս թագուցանել զնա այնու կերպիւ, զի երևիցի փոքրագոյն քան զայն, որ 'ի հեղգաց դատեցեալ էր։

Կրթութի քո երբեմն վերախնդրէ զբազումս, և զբազումս ներգործութիս առ 'ի տանել զմին առաքինութի, և զմին աշխատան ընդ բազումս աւուրս, և թշնամիքն առ 'ի պատերազմիլ բազումք, և զօրեղք երևին քեզ։ Սկսեալ դու արտաքրել զներգործութիւնս, իբր թէ

պարտիցիս առնել զսակաւս, և թէ վասն սակաւուց ախտոյանայ քեզ աշխատիլ, և թէ պատերազմիս ընդդէմ միոյ թշնամւոյ, որպէս թէ ոչ իցեն այլք ընդ որոց պարտիցեսիր պատերազմիլ, և հանդերձ միով մեծաւ յուսադրութ՟բ, թէ դու օգնութ՟բն Ա՟Յ իցես հզօրագոյն քան զնոսա, զի մինչ այսու կերպիւ առնես, ծուլութիւն սկսեսցի տկարանալ, և յետոյ դու սկսեսցես տրամադրիլ, զի սակաւ առ սակաւ մնանիցէ 'ի քեզ ներհակ առաքինութիւնն:

Զնոյն առեմ զաղօթից: Երբեմն կրթութի քո վերախնդրէ զմին ժամ աղօթից: Եւ այս խիստ երևի ծաղութե քում, դիր զքեզ 'ի յայնմիկ իբր կամելով աղօթել ընդ արձակութիւն միոյ ութերորդի ժամու, զի դիւրապէս անցցես առ այլ, և 'ի յայսմանէ առ այն, որ վերամնայ:

Զի եթէ 'ի յայսմիկ երբեմն 'ի յերկրորդի, կամ 'ի յայլս ութերորդս մասունս ժամու զգայցեսիր զկարի բռնաւոր ընդդիմութի, և դժուա-

բութի, թող զկրթութիւնն, զի մի զզուիցիս, սակայն յետ սակաւու ժամանակի դարձեալ վերառնլով զթողեցեալ կրթութիւնն։

Զայս նոյն կերպս նաև պարտիս պահել 'ի գործս ձեռաց, երբ պատահի, թէ դու պարտիս առնել զբազումս իրս, որոց 'ի յերևիլ ծուլութեն քում, թէ լիցին բազումք, և դժուարինք, դու բոլոր վրդովիս, այսու ամիւ սկսեաց արիաբար, և հանդարտ 'ի միջէ, որպէս թէ զայլ առնելի ոչ ունիցեիր, զի այսպէս ուշադրաբար առնելով, արասցես զհամայնս կարի փոքրագունիւք աշխատանօք քան զայն, որ 'ի ծուլութեն քում երևէր քեզ։

Զի եթէ դու ոչ առնիցես վերոյ ասացելով կերպիւ, և ոչ ընդ առաջ ելանիցես աշխատանաց, և դժուարութեն, որ ցուցանի քեզ, այնպէս առաւել զօրասցի 'ի վերայ քո մոլութիւնն ծուլութեան, զի աշխատանքն, և դժուարութիւն, զոր ընդ ինքեան բերէ 'ի սկզբան կրթութեն առաքինութեանց, ոչ միայն յորժամ

լիցի

իցէ ներկայ, այլ նաեւ յորժամ է բացակայ, զքեզ անհանգստացուցանիցէ, եւ թախանձեցուցանիցէ, զերկնչօղդ միշտ, թէ թշնամիքն նեղացուցանիցեն զքեզ, եւ վերարձակիցեն ՚ի վերայ քո, եւ թէ տեսանիցես զոմն լինիլ ՚ի վերայ ուսոց քոց, որ զեր իմն դնիցէ ՚ի վերայ քո. ուստի ներ ինքեան հանգստութեան անհանգիստ իցեիր։

Եւ գիտացիր ով դուստր, թէ այս մոլութիւնս ծուլութեամբ իւրով ծանկեցելով թիւնով սակաւ առ սակաւ, ոչ միայն փտեցուցանէ զառաջինս, եւ զփոքրկունս զարմատս, որք արտադրելոց էին զունակութիւնս առաքինութեանց, այլ նաեւ զայնոսիկ արմատս, որք են ունակութեանց արդէն ստացելոց, որպէս առնէ որդն փայտի, այսպէս նա անզգալաբար. հաշէ, եւ ծախէ զծուծս հոգեւորի կենի. եւ սատանայն այսու միջոցաւ լարէ զդարանս, եւ զորոգայթս իւրաքանչիւրում, բայց մանաւանդապէս հոգեւորաց։

Ուրեմն հսկեա՛ դու աղօթելով,

եւ

և գործելով զբարի , և մի տաղանր հինել զատուեղէնն վասն զգեստուց հարամնեաց , երբ պարտիս գտանել զքեզ զարդարեցեալ առ ՚ի յընդառաջ ելանել փեսային :

Եւ ՚ի յամնում աւուր յիշեա , թէ նա , որ տայ քեզ զառաւօտն , ոչ խոստանայ զերեկոյն , և մինչ տրի երեկոյն , ոչ խոստանի քեզ առաւօտն : Եւ վասն այսորիկ ծախեա՛ զհամայնս բոպէս ժամու , ըստ բարեհաճութե ԱՅ , և որպէս թէ այլ ժամանակ ոչ շնորհիցէր քեզ , այնքան առաւել թէ տալոց ես զմանրամասնագունեղ համար ամենայնի բոպէի :

Եզրակացուցանեմ աղդառնելով քեզ , զի դու համարիցիս որպէս զկորուսեցեալ զօրն զայն ( թէպէտ ՚ի յաւուր այնմիկ արարեալ իցէիր զբազում գործս ) ՚ի յորում ոչ առացեալ իցես զբազումս յաղթութիւնս ընդդէմ վատից յօժարութեց քոց , և ընդդէմ յատկականաց կամաց , և ոչ զշնորհակալութիւնս մատուցեալ իցես ՏՆ քում վասն բարերարութեց

թեց արարեցելոց քեզ 'ի նմանէ, և մանաւանդ վասն վշտակիր չարչարանաց իւրոց, զոր կրեաց վասն քո, և վասն հայրականի, և քաղցր պատժոյ, երբ զքեզ արարեալ իցէ արժանաւոր անչնոյ գանձի ոմանց փորձութեց:

Յաղագս կատարութե արտաքնոց զգայութեց, և զի՛արդ 'ի յայնց կարիցէ ոք անցանել առ խոկումն Ածու-
թեան:

## ԳԼՈՒԽ ԻԱ:

Մեծ զգաստութի, և հանապազորդական կրթութի խնդրի 'ի կատարելն, և 'ի բարեպէս կանոնելն զարտաքինս զգայութիս մեր, քանզի ցանկականն, որ է որպէս դուռ եղծեցելոյ բնութե մերոյ, դահավիժաբար յօժարեցուցանէ առ 'ի խնդրել զհեշտութիս, և զախորժե-

լիս

լիս, և ոչ կարելով ինքեամբ միայնով առնել զատացումն վարի զգայութեանց իբր զխնոտորօք խուրովք, և բնակա֊նօք գործեօք առ ՚ի ունիլ զառար֊կայս նոցա, որոց զերևակայութիւնս արտահանելով, և ձգելով առ ինքն ներատուլէ ՚ի հոգւոյն, յորմէ յետ այնորիկ հետևի հեշտութիւն, որ վասն ազգականութեան որ է ՚ի մէջ նորա, և մարմնոյ առաւել ընդ համայնս այնո֊սիկ կողմանս զգայութեանց, որք ըն֊դունակք են այնպիսւոյ հեշտութեան, ուստի հետևի այնքան հոգւոյ, որ֊քան մարմնոյ մին հասարակ ժանտա֊ցաւ, որ ապականէ զբոլորն ։

Դու տես զմնան, անսա՛ դեղոյ ։

Կաց բարեպէս զգաստ առ ՚ի յոչ թողուլ զզգայութիւնս քոյս գնալ ա֊շատաբար ուր և կամին, և մի վա֊րիր ըստ սովորութեան նոցա, ուր միայնակ հեշտութիւն, և ոչ ումն բա֊րի վաղճան, կամ օգուտ, կամ հար֊կաւորութիւն շարժիցէ զքեզ առ ՚ի առնել զայն, և եթէ մինչ դու ոչ զգուշանաս, կարի յոյժ ընդառաջ արշաւեսցեք են, արա, զի դու յետս քայլ ։

քարշիցես զնոսա , կամ թէ այնու կերպիւ կանոնաւորիցես զնոսա , զի ուր նախ ողորմելաբար ծառայեալք էին ունայնից հեշտութեց , 'ի յուրաքանչիւրոյ առարկայէ տանայցեն զաղնիս առար , և զայն ներբերիցեն առ հոգին . ուստի նա վերածողովեցեալ 'ի յիւրեան ինքեան բանայցէ զթևս կարողութեց դէպ 'ի յերկինս առ խոկումն ԱՅ : Զոր կարասցես առնել այսու կերպիւ :

Յորժամ յանդիման կացուցանի որում և իցէ արտաքնոց զգայութեց քոց իմն առարկայ ; զատեա՛ մտածմամբ առեղծեցելոյ իրի զհոգին , որ է 'ի յայնմիկ , և մտածեա՛ թէ նա յինքենէ ոչ ինչ ունի զայսմանէ ամենայն է , որ ենթարկի զգայութեց քոց , այլ թէ բոլորն է գործ ԱՅ , որ ոգւով իւրով անտեսանելաբար տայ նմա զայն գոյն , բարութիւնն , կամ գեղեցկութիւնն , և զամենայն բարի , որ է 'ի նմա . և աստ ուրախասցիր , թէ Տէրն քո միայն իցէ պատճառ , և ակնզբն այնքանաց , և այնպէս զանազանաց կատարելութեց իրաց ,

իրաց , և թէ 'ի յիւրեան ինքեան
գերազանցապէս պարունակիցէ զայ-
նոսին ամենեսեան . մինչ այն ոչ է ,
եթէ ոչ մին փոքրագունեղ աստի-
ճան իւրոց Ածայնոց , և անհունից
գերազանցութենց ։

Երբ նկատիցես թէ դու զբաղե-
ցեալ ես 'ի նայիլն 'ի յիրս , որք ու-
նին զազնիւ գոլ , վերածեսցես
մտածմամբ զստեղծուածն առ ոչըն-
չութի իւր , աւելելով զայս մնաց
'ի ծայրագունեղ ստեղծօղն անդ ներ-
կայն , որ զայն գոլն ետ նմա , և 'ի
նմա միայն բերկրելով , ասասցես .
ո՛վ Ածային էութե ծայրագունե-
ղապէս ցանկալի , որքան զմայլիմ ,
թէ դու միայն իցես անհուն սկիզբն
ամե ստեղծեցելոյ գոլոյն ։

Նմանապէս տեսանելով զծառս ,
զբանջարս , և զիրս նմանս , իմա-
ցութե տեսցես , թէ այն կեանն ,
զոր ունին , ոչ ունին 'ի յինքեանց ,
այլ 'ի յոգւոյ , զոր ոչ տեսանես , և
թէ նա միայն կենդանացուցանէ զնո-
սա , և կարասցես ասել այսպէս .
Ահա առա ճշմարիտ կեանն , յորմէ
'ի

'ի յորում , և վասն որոյ կեան , և աճին համայնք լիրք : Ո՛հ որքան կեամ ուրախ այսու օրաւ :

Այսպէս 'ի տեսութէ անմասնոց , վերացուցես զքեզ մտօք առ Այ , որ տայ նոցա զզգայութին , և զշարժումն , առելով . ո՛հ առաջին շարժիչ , զի զբոլորն շարժելով , անշարժ ես 'ի քեզ ինքեան , որքան ուրախանամ 'ի վերայ անշարժելութէ , և հաստատութէ քո :

Եւ զգալով զքեզ յափշտակեցայ 'ի գեղեցկութէ առեղծուածոց , բաժանեալ զայն , զոր տեսանես , 'ի հոգւոյ , զոր ոչ տեսանես , և նկատեմ , թէ այն ամենայն գեղեցկութիւնն , որ երևի արտաքուստ , է միայնոյ աներևութի ոգւոյն , յորմէ պատճառեցեալ է այն արտաքին գեղեցկութիւնն , և ուրախ 'ի վերայ ամսասացես . ահա առուք անստեղծի աղբեր , ահա կաթիլք անհնոյ ծովու ամենայնի բարւոյ . ո՛հ որպէս ցնծունիմ 'ի խորոյ սրտէ , մտածելով զ յաւիտենական զանչափ գեղեցկութիւնն , որ է սկիզբն , և պատճառա-

ամե-

ամենայնի գեղեցկութեան առեղծե-
ցելոյ ։

Եւ տեսանելով 'ի յայլս զբարու-
թի՛ն, զիմաստութի՛ն, զարդարութի՛ն,
և զայլս առաքինութիւնս, արարեալ
զաստացեալ բաժանումն, ասասցես
Այ քում, ո՜հ փարթամագունեղ
գանձ առաքինութեանց, ո՛ է համա-
հաձոյութիւնն իմ, թէ 'ի քէն, և
վասն քո միայնականապէս ածանցիցի
ամենայն բարի, և թէ բոլորն հա-
մեմատութբ Ածայնոց կատարելու-
թեց քոց, ոչ ինչ իցէ ։ Շնորհակա-
լեմ զքեզ Տէր իմ զայսմանէ, և զայլ
մէ ամենայնէ բարւոյ, զոր արար-
եալ ես ընկերի, յիշեա՛, Տէր զաղ-
քատութիւնն իմ, և զմեծ կարօտու-
թիւնն, զոր ունիմ առ այս ինչ ա-
ռաքինութի ։ Յետոյ տարածելով
զձեռս առ 'ի գործել զիր ինչ,
մտածեա՛, թէ Ած է նախկին պատ-
ճառ այնր գործոյ, և դու ոչ այլ
ինչ ես, եթէ ոչ կենդանի գործի
նորա, առ որ վերացուցանելով զ-
մտածումն սա՛ այսու կերպիւ. որ-
քան է համահաճութին իմ, զոր զգամ

նել

ներ իմ ինքեան վերնատուածնել Տէր ամի, ոչ կարելոյ գործել թարց քո զիր ինչ, այլ եւ թէ դու լցես առաջին, եւ նախապատուական գործոց ամից իրաց:

Ճաշակելով զերկրաւոր, կամ զզգալի, նկատեա թէ այն, որ տայ նոցա զայն համեղութիւն է Այ, եւ հրաժարելով 'ի նմա միայնում կարասցես ասել, ուրախ լեր անձն իմ, զի որպէս արտաքոյ Այ քո ոչ ունիս զոմն ճշմարիտ բերկրութեան, այսպէս 'ի նմա միայնում, կարես 'ի յամենում իրի միայնականապէս բերկրիլ:

Եթէ դու համահաճիցիս 'ի քեզ 'ի հաստատելն զիր իմն հաճոյ զգայութեն, 'ոչ մնալով 'ի յայնմիկ համահաճութեն անց մտածմամբ առ Տէր, յորմէ ունի զսկիզբն իւր անուշահոտութիւնն այն, եւ զայսմանէ զգալով զներքին մխիթարութիւն, ասասցես, ո՛հ Տէր իմ արա, զի որպէս ես հրճուիմ, թէ 'ի քէն առաջագոյն ամենայն քաղցրութիւն, այսպէս հոգին իմ մերկացեալ զամենայն երկրաւոր

հեշ-

հեշտութեն , և գոլով մերկ 'ի նմանէ ելանիցէ 'ի բարձունս , և մատուցանիցէ զհաճոյագունեղ հոտ Ածայնոց ըղձկանց քոց ։

Յորժամ լսեմ զհամաձայնութիւն երգոց , և նուագաց վերացեալ մտօք առ Ած քո ասասցես , որքան հրճուիմ Տէր իմ , և Ած իմ 'ի վերայ անհունից կատարելութեց քոց , որք համայնք 'ի միասին , ոչ միայն 'ի քեզ ինքեան առնեն 'ի վերոյ քան զերկնային նուագ , այլ նաև համաղուգալէս 'ի հրեշտակս , որք 'ի յերկինս , և 'ի յամենայնս անեղծուածս առնեն զզարմանալի քաղցրանուագութիւն ։

Զի՛ մարդ ինքեանք իրք իցեն մեզ մի-
ջոց առ 'ի կանոնաւորել զզգայու-
թիւնս մեր , անցանելով յառ-
խոկումն բանի մարմնացելոյ , 'ի
խորհուրդս կենաց , և չարչարա-
նաց նորա ։

## ԳԼՈՒԽ ԻԲ.

'Ի վեր ցուցի քեզ , թէ որ-
պէս մեք կարիցեմք 'ի յիրաց
զգալեաց վերացուցանել զ-
միտս առ խոկումն Ածու-
թե ։ Այժմ ըմբռնեմ զմին եղա-
նակ առնլոյ զշարժականն 'ի նոյնոց
վասն խոկման բանի մարմնացելոյ ,
մտածելով զորբաղնադունեղս խոր-
հուրդս կենաց , և չարչարանաց նո-
րա ։

Համայնք իրք ընդհանրոյ կարեն
ծառայել առ այս գործ խոկալով 'ի
յայնս որպէս 'ի վեր զծայրագունեղ
Ածն , որպէս միայն առաջին պատ-
ճառ , որ ետ նոցա զբոլոր գոյն-
զայն,

զայն, զգեղեցկութիւն, և զգերա-
զանցութի, զորս ունէին. և յետոյ
'ի յայսմանէ անցանելով առ 'ի խո-
կալ թէ որքան մեծ, և անբաւ իցէ
բարութի նորա, թէ գոլով միայնակ
սկիզբն, և Տէր բոլորից ստեղծեցե-
լոց, կամեցաւ իջանել առ այնքան
ցածութի լինելոյ մարդ, և կրելոյ
զչարչարանս, և մեռանելոյ վասն
մարդոյ, թոյլ տալով զի ինքեանք
գործք ձեռին իւրոյ զինաւորիցեն
ընդդէմ նորա առ 'ի խաչել զնա։

Յետոյ բազումք իրք մանաւորա-
պէս երևեցուցանեն մեզ, և դնեն
առաջի աչաց մտաց մերոց զայսոսիկ
սէս խորհուրդս, որպէս զէնք, ա-
ռասանք, խարազանք, սիւնք, փուշք,
եղեգունք, բևեռք, ուռանք, և
այլք, որք եղեն գործիք չարչարա-
նաց նորա։

Աղքատք իջևանք վերածեսցեն
'ի միտս մեր զայրն, և զմսուրն Տն։
Մինչ անձրևէ, 'ի միտ մեր եկեսցէ
այն Աճային արիւնահեղ անձրևն,
որ 'ի պարտիզի, կաթելով 'ի յիւր-
մէ սրբազնագունեղէ մարմնոյն ուռ-
գեաց

դեաց զերկիր · քարինքն, զորս տեսանեմք, երեւեցուցեն մեզ զայնոսիկ, որք պատառեցան 'ի ժամու մահուան նորա, երկիրն զշարժումն զայն, զոր յայնժամ արար · Արեգակն զստուերս, որք խաւարեցուցին զնա, եւ տեսանելով զջուրս յիշեսցուք զայն, որ բղխեաց 'ի յիւրմէ սրբազնագունեղէ կողէն : Զոր նմանապէս առեմ զայլոց նմանաց իրաց :

Ըմպելով զգինի, կամ զայլ ըմպելի, վերայիշեա զլեղին, եւ զքացախն Տն քո :

Եթէ անուշահոտութիւնքն բերկրեցուցանեն զքեզ, վերընթացիր միտօք առ գարշահոտութիւն մարմնոց մեռելոց, զոր ինքն զգայր 'ի լերինն գողգոթայ :

Զգենլով դու յիշեա, թէ բանն յաւիտենական զգեցաւ զմարդկային մարմին վասն զգեցուցանելոյ քեզ զԱծութի̃ իւր :

Մերկանալով, վերայիշեա զՔն քո, որ մերկացուցաւ, զի ծաղրիցիւր, եւ բեւեռիցիւր 'ի վերայ խաչին վս քո:

Լաւ.

Լսելով զգոչմունս , և զաղաղակս մարդկան , յիշեա՛ զայնոսիկ դարշելիս ձայնս . 'ի խաչհան , 'ի խաչհան, բարձ , բարձ , որք հնչեցին 'ի յիւրս Ածային ականջս ։

Որքանիցս հնչէ ժամացոյցն , յիշեա՛ զայն ցաւալից բախումն սրտի , զոր Յս̃ն քո հաճեցաւ զգալ , երբ 'ի պարտիզի սկսաւ երկնչել 'ի մերձակայից չարչարանաց , և 'ի մահուանէ իւրմէ , կամ թէ երևեսցի քեզ զգալ զայնոսիկ սաստիկս բախեցմունս , որովք բևեռեցաւ 'ի վերայ խաչին ։

Յորում ուրեք առթի զգաս զտրտմութի , և զցաւս քոյս , կամ զայլոցն , մտածեա՛ թէ են որպէս ոչինչ , վերահայեցմամբ առ անըմբռնելիս վիշտս , որք թափանցեցին , և վշտացուցին զմարմինն , և զհոգին Տն քո ։

Յաղագս այլոց եղանակաց վասն կանոնաւորելոյ զզգայութիւնս մեր, ըստ զանազանաց առթից, որք երեւեցուցանին մեզ:

# ԳԼՈՒԽ ԻԳ.

Յետ տեսանելոյն զիա՞րդ պարտիցի վերացուցանել իմացութիւն 'ի յիրաց զգալեաց առ Աստուածութիւն, եւ առ խորհուրդս բանի մարմնացելոյ, աստ առաջիկեցից զայլս եղանակս վասն արտահանելոյ զզանազանս խոկմունս զի որպէս զանազանք են 'ի մէջ իւրեանց համեղութիւնք հոգեաց, այսպէս ունիցին զբազումս, եւ զզանազանս կերակուրս. քանզի այս կարասցէ ծառայել, ոչ միայն անձանց միամտաց, այլ նաեւ նոցա, որք են բարեկամիտք, եւ յառաջացեալք են 'ի ճանապարհի հոգւոյ, որ 'ի յորում եւ իցէ, ոչ է միշտ հաւասարապէս տրա-

տրամադրեցեալ, և պատրաստ բարձրագունից խոկմանց։

Եւ ոչ պարտիս երկբայիլ չփոթիլ 'ի մէջ այսր պէսպիսութեան իրաց, եթէ դու պահիցես զկանոն խոհեմութեան. և զխրատն այլոց, որում գիտեմ, թէ դու պարտիցիս հետևիլ խոնարհութեամբ, և յուսադրութեամբ. ոչ միայն 'ի յայսմիկ, այլ նաև 'ի յամենայն այլում զգուշացուցման, որ յինէն գայցէ առ քեզ։

'Ի նայիլն 'ի յայնքանիս իրս գեղեցիկս աչաց, և համարեցեալս 'ի յերկրի մեծագինս, նկատեա՛, թէ համայնքն են անարգելագունեղք, և որպէս զաղբ, վերահայեցմամբ առ երկնային փարթամութիւն, առ որս (անարգելով զաշխարհս բոլոր) հառաչեա՛ սրտիւ փափագանօք։

Վերադարձուցանելով զաչս դէպ 'ի յԱրեգակն, մտածեա՛, թէ առաւել քան զայն է պայծառ, և գեղեցիկ հոգին քո, եթէ կայ 'ներ շնորհի ստեղծողին քո, այլապէս, թէ նա է նսեմագոյն, և գարշելագոյն, քան դժոխային նսեմութիւն։

Համբառնալով զաչս մտօրմիոյ դէպ 'ի յերկինս, ուր ծածկեն զքեզ, թափանցեա աչօք հոգւոյ 'ի վերնա-գունեղ հրեղէն երկինն, և անդ քննեա զքեզ մտածմամբ, որպէս 'ի տեղւոջ, որ պատրաստեցաւ է քեզ վասն յաւիտենականին երջանկա-գունեղի իջևանի, եթէ 'ի յերկրի կեայցես անմեղաբար :

Լսելով երգել զթռչունս, կամ զայլս երգս, վերացո զմիտն առ այ-նոսիկ երգս, որք են երգք արքայ-ութե, ուր վերահնչէ անդադար ալէլուիայ, և աղաչեա զՏէրն, զի առնիցէ զքեզ արժանաւոր գովել զնա յաւիտենականապէս 'ի միասին ընդ այնոսիկ ոգիս երկնայինս :

Յորժամ տեսանես թէ զգաս զհեշտութի զգեղեցկութեց ստեղ-ծուածոյ, հայեաց իմացութբ, թէ անդ գաղեցեալ կայ օձն դժոխային բոլոր մտադիր, և պատրաստ առ 'ի սպանանել, կամ գոնեայ վիրաւո-րել զքեզ, ընդդէմ որոյ այսպէս կարասցես ասել . ո՜հ անիծեալ օձ որպէս նենգաւորապէս կաս պատ-

րա-

բաստեցեալ առ 'ի կլանել զիս։ Յետոյ վերադարձեալ առ Ած, ասասցես. օրհնեալ լիցիս դու Ած իմ. զի յայտնեցեր ինձ զթշնամին, և ազատեցեր զիս 'ի ժխւրոց կատաղեցելոց քիմանց։

Եւ 'ի հեշտացուցմանէ փութով փախիր առ վէրս խաչեցելոյն, զբաղեցուցանելով զմիտս 'ի յայնոսիկ, և նկատելով թէ որքան կրեաց Տէրն 'ի յիւրում՝ սրբազնագունեղին մարմնոջ վասն ազատելոյ զքեզ 'ի մեղաց. և վասն առնելոյ քեզ ատելիս զհեշտութիւ մարմնոյ։

'Ի միտս քո ածեմ՝ և զայլ իմն եղանակ վասն փախչելոյ յայսմանէ վտանգաւորէ հաճեցուցմանէ, և է, զի դու խորապէս, և բարեպէս մտածիցես, որպիսի լիցի յետ մահուան այն առարկայն, որ յայնժամ այնքան հաճոյանայ։

Մինչ շրջիս յիշեա՛, թէ ամիւ քայլիւ, որով շարժիս, մերձենաս մահուան քո։

Այսպէս տեսանելով զթաչունս 'ի յօդոջ, և զընթացս ջուրց, մտածեա,

ծեամ, թէ մեծագոյն արագութբ կեանն քո թուի առ վախճան իւր ։

Մինչ վեր յառնեն ստուերք հողմունք, կամ մինչ լինին փայլատակմունք, և գոռացմունք, 'ի միտ ած զարհուրելի օրն դատաստանի, և աբարեալ զծնրադրութի, երկրպագեա ԱՅ, աղաչելով զնա, զի տայցէ քեզ զշնորհ, և զժամանակ առ 'ի բարեպէս պատրաստելոյ զքեզ առ 'ի յանդիման կացուցանիլ յայնժամ առաջի իւրոյ բարձրագունեղ մեծվայելչութե ։

'Ի պէսպիսութե պատահմանց, որք կարեն ընդառաջ ելանել անձին, այսպէս կրթեսցես զքեզ, զորօրինակ, երբ վշտացուցեալ ես իւիք ցաւով, կամ տրտմութբ, կամ ջերմանաս, ցրտանաս, կամ այլապէս վշտանաս, վերացո զմիտն առ այն յաւիտենական կամս, որում հաճոյացեալ է վասն օգտի քո, զի դու այնպիսեաւ չափով, և յայնպիսում ժամանակի զգայցես զթախանձականն զայն ․ ուստի դու ուրախ վասն սիրոյ, զոր քեզ ցուցանէ ԱԾն քո,

և

և առ այս, զի ծառայիցես նմա 'ի բոլորում այնմիկ, որ նմա առաւել հաճոյանայ, ասասցես 'ի սրտի քում. ահա՛ 'ի լիս համալցուցումն Ածայնոյ կամեցման, որ 'ի յաւիտենից ամենամեծ սիրով տրամադրեաց, զի ես այժմ 'ի ներկայումս կկիցեմ զայս նեղութիւն։ Գովեալ լիցի հանապազ քաղցրագութենեղ Տէրն իմ։

Եւ երբ 'ի մտի քում առեղծանես մտածումն զբարւոյ իրէ, փութով դարձո՛ զքեզ առ Ած, և ճանաչեա զայն 'ի նմանէ, և մատո՛ զշնորհակալութիւս։

Յորժամ ընթեռնուս, երևեսցի քեզ տեսանել զՏէրն 'ի ներքոյ այնոցիկ բանից, և ընկալ զնոսա, որպէս եթէ գոյցէին 'ի յԱծայնոյ բերանոյ նորին։

Տեսանելով զքո խաչն, մտածեա՛, թէ նա է նշանակն զինուորութեան քո, յորմէ հեռանալով անկցիս 'ի ձեռս անողորմից թշնամեաց, և հետևելով նմա, հասցես 'ի յերկինս բեռնաւոր փառաւորօք աւարիւք։

'Ի տեսանելդ զսիրելի պատկերն

Մա-

Մորիամայ Կուսին, դարձո՛ զսիրտ քո առ նա, որ թագաւորէ 'ի յարքայութեան, զշնորհակալութիւն մատուցանելով նմա, որ միշտ եղև պատրաստ կամացն ԱՅ քո, որ ծնաւ, դիեցոյց, և սնոյց զփրկիչն աշխարհի, և որ 'ի մերում հոգևորականի պատերազմի ոչ երբեք դադարէ 'ի բարերարելոյ, և 'ի յօգնելոյ մեզ:

Պատկերքն սրբոց, երևեցուսցեն քեզ զայնքանս քաջամարտիկս, որք զօրեղապէս արկեալք զգեղարդն իւրեանց բացին քեզ զճանապարհ, ընդ որ նաև դու գնալով 'ի միասին ընդ նոսին պսակեսցիս յաւիտենականօք փառօք:

Երբ տեսանիցես զեկեղեցիս, 'ի մէջ այլոց ջերմեռանդից նկատմանց, կարասցես մտածել, թէ հոգին քո է տաճար ԱՅ, և վասն այսորիկ որպէս զօթևան նորա պարտիս պահել զնա մաքուր, և անարատ:

'Ի յորում և իցէ ժամանակի լսելով զերլիս նշանս հրեշտակային ողջունի, կարասցես տանել զհետևեալս կարճառօտս խոկմունս, որք են հա-

համակերպք սրբազանից բանից, որք սովորք են ասել յառաջքան զիւրաքանչիւրն այսոցիկ երկնայնոց կարճառօտից աղօթից ։

'Ի յառաջնում նշանի մատո՛ զշնորհակալութիւն ԱՅ վասն այնր պատգամաւորութեան, զոր 'ի յերկնից առաքեաց 'ի յերկիր, և եղև սկիզբն փրկութեան մերոյ ։

'Ի յերկրորդում, ուրախացիր ընդ Մարիամու Կուսին 'ի վերայ գերազանցութեանց նորին, առ որս բարձրացաւ վասն իւրոյ եզականի խորագունեղի խոնարհութեան ։

'Ի յերրորդում նշանի, 'ի միասին ընդ երջանկագունեղի մօր, և Գաբրիելի Հրեշտակին երկիրպագեա՛ Աստուածայնում մանկան արդէնաբար ըղձացելոյն ։

Եւ մի մոռանար առ պատիւ սակաւ մի խոնարհեցուցանել զգլուխ առ իւրաքանչիւր նշան, և սակաւ մի առաւել 'ի վերջնում ։

Այսոքիկ մատամականք աղօթք բաժանեցեալք առ երիս նշանս, ծառայեն ընդ յամենայն ժամանակս ։

Հե-

Հետեւողքն բաժանին վասն երեկոյն , վասն առաւօտուց , և վասն միջօրէի , և են պատկանօղք առ չարչարանս Տն , որով հետեւ մեք կարի յոյժ պարտականք եմք առէպ վերայիշել զցաւս , զորս վասն այնոցիկ չարչարանաց կրեաց տիրուհին մեր , և ցուցցուք զմեզ ապերախտս, եթէ ոչ առնիցեմք զայս :

'Ի յերեկոյի , վերայիշեալ զվիշտ ամենամաքրոյ կուսին , վասն արիւնահօսից քրտանց , որք հոսեցան 'ի պարտիզի , և վասն դառնացելոց ցաւոց իւրոյ օրհնեցելոյ որդւոյն 'ի բոլորում գիշերի այնմիկ :

'Ի յառաւօտուն , ցաւակից լեր նմա 'ի յիւրս վշտագնութիւնս վասն ներկայացուցման առաջի պիղատոսի, և՝ հերովդեսի, վասն վճռոյ մահուան նորա , և վասն տանելոյն զխաչն :

'Ի միջօրէի , խորապէս մտածեա՛ զցաւն որոյ , որ եմուտ 'ի սիրտ տրտմագին մօր , վասն խաչեցման , և մահուան Տն , և վասն անողորմագունեղի տիգախոցեցման արքայնագունեղն կողի նորին :

Զայ-

Զայսուհիկ խոկմունս ցաւոց Կու-
սին կարասցես առնել 'ի յերեկոյէ
հինգշաբաթի մինչև 'ի կէս օր շա-
բաթու, զոյլս 'ի մնացեալս աւուրս։
Սակայն թողում քոյոյ մանաւորի
ջերմեռանդութեան. և առթի, զոր
մատուսցեն իրք արտաքինք։

Եւ առ 'ի յեզրակացուցանել հա-
մառօտաբար խօսելով, զկերպն,
որով պարտիս կանոնաւորել զզգայ-
ութիւս, լեր ուշադիր, զի 'ի յա̃մնում
իրի, և պատահման, ոչ 'ի սիրոյ
նոցա, կամ 'ի գարշեցմանէ. այլ 'ի
միայնոյ կամէն ԱՅ դու շարժիցիս,
և ձգիցիս, և գրկելով զայն միայն,
և գարշելով, զոր կամի ԱԾ, զի դու
դիրկիցես, և գարշիցիս։

Եւ նկատեա՛, թէ ես ոչ ետու
քեզ զվերոյասացեալս կերպս կառա-
վարելոյ զզգայութիս, զի դու զբա-
ղիցիս 'ի յայսոսիկ, գոլով պարտա-
կան կալ իբրև յարաժամ վերաժո-
ղովեցեալ 'ի մտի քում ընդ Տեառն
քում, որ կամի զի յաճախիւք ներ-
գործութե̃ք անսայցես յաղթել զթշ-
նամիս, և զմոլեկանս ախտս քոյս, և

ընդդիմանալով նոցա, և ներգործութեք առաքինութեց ներհակաց, այլ ուսուցի քեզ զնոսա, զի գիտիցես կանոնաւորել զքեզ, երբ պիտոյանայ։

Քանզի պարտիս գիտել, թէ սակաւ պտուղ առաջադայի, երբ բուռն արկանի զբաղմանց կրթութեց, թէպէտ 'ի յիւրեանս ինքեանս իցեն բարեգունեղք, և ստէպ են շփոթումն մտաց, ինքնասիրութի, անհաստատութիւն, և որոգայթ սատանայի։

## Յաղագս ներքին կանոնաւորելոյ զլեզու ։

## ԳԼՈՒԽ ԻԴ.

Լեզուն մարդոյ ունի զմեծ կարողութիւն, զի բարեպէս կանոնաւորիցի, և սանձիցի, վասն զի ամենայն ոք կարի յոյժ հակեցեալ է թողուլ զնա ընթանալ, և խօսիլ զայնց իրաց, որք առաւել հաճոյք են զգայութենց մերոց ։

Բազմախօսութիւնն բազմիցս ունի զարմատն 'ի հպարտութենէ իմիքէ, որով համոզելով մեք զմեզ գիտել զբազումս, և համահաւանելով մեզ 'ի յատկական իմացմունս, ջանամք յաւելորդիւք վերակրկնեցմամբք ներապաւորել 'ի յոգիս այլոց, զի լինիցիմք ուսուցիչք 'ի վերայ նոցա, իբր թէ ունիցին զկարողութիւն ուսանելոյ 'ի մէնջ ։

Ոչ կարեն բացայայտել սակաւուք խօսիւք չարիքն, որք ծնանին 'ի բազմախօսութենէ ։

Բազմախօսութիւնն է մայր ծուլութեան, ձեռնարկումն տգիտութեան, եւ յիմարութեան, դուռն չամբաստանաց · պաշտօնեայ ստութեանց, եւ ցրտացուցումն ջերմեռանդականի եռացման ։

Բազմախօսութիւնք տան զուժգնութիւն մոլեկանաց ախտից, եւ յետոյ 'ի յայսցանէ շարժի լեզուն առ 'ի յարատեւել այնքան առաւել գիրապէս 'ի յանխոհեմի խօսակցութեն ։

Մի լայնացուցաներ զքեզ 'ի յերկարախօսութիս ընդ այնոսիկ, որք ակամայ ունկնդրնեն քեզ, վասն ոչ զզուեցուցանելոյ զնոսա, եւ զնոյն արա ընդ այնմիկ, որ ունկնդիր լինի քեզ, վասն ոչ անդրանցանելոյ զսահմանս պարկեշտութեան ։

Փախիր 'ի գործունեայ, եւ 'ի բարձրաձայն խօսելոյն, վասնզի մին, եւ միւս իր կարի ատելի է, եւ տայ զնշան յանդգնութեան, եւ ունայնութեան ։

Զքէն, և զգործոց քոց, և զաղջականաց քոց բնաւ մի խօսիր, եթէ ոչ միայն վասն հարկաւորութեան, և որքան առաւել կարճառօտաբար, և համառօտաբար կարասցես, եթէ երևիցիւր քեզ, թէ այլք աւելորդաբար խօսիցեն զինքեանց, ջանասցիր ունիլ զբարի իմացումն, բայց մի հետևիր նոցա, թէպէտ բանք նոցա պատկանիցեն յառակի խոնարհեցման, և ամբաստանութե զիւրեանց ինքեանց:

Զընկերէ քումմէ, և զիւրաց պատկանողաց նմա, որքան իցէ կարելի խօսեաց նուաստապէս, բաց 'ի բարեպէս խօսելոյն, ուր լինի պատշաճաւորութիւն:

Յօժարապէս խօսեաց զԱԾ; և մանաւանդ զսիրոյ, և զբարութենէ նորա, բայց երկիւղիւ հանդերձ կարելոյ ողալիլ նաև 'ի յայտնիկ, և հաճոյացի քեզ կալ ևս առաւել մտադիր, երբ այլք տրամաբանեն, պահելով զբանս նոցա ներ սրտի քո: Այլոց բանից միայն հնչումն ձայնի բախեսցէ զականջս քոյս, և միտ քո

 կաց-

կացցէ վերացեալ առ Տէր , բայց սակայն եթէ պիտոյանայցէ ունկնդիր լինել տրամաբանողի, վասն խմանալոյ , և պատասխանելոյ , մի թողուր վասն այսորիկ զհայիլն մտօք 'ի յերկինս , ուր բնակի ստեղծողն քո , և հայեաց 'ի բարձրութիւն նորա , որպէս նա միշտ վերահայի 'ի նուաստութիւն քո :

Իրքն , որք անկանին 'ի սիրտ քո վասն ասելոյ զնոսա , նախ քան զխօսիլն քո 'նկատեսցին 'ի քէն , զի զբազմաց նկատեսցես , թէ բարւոք իցէր , թէ ոչ արտաքսերիցեսին 'ի քէն : Բայց դարձեալ ազդ առնեմ քեզ, թէ նաև ոչ զսակաւս այնոցիկ, զորս յայնժամ մտածեսցես գոլ բարիս , զի դու ասիցես , կարի լաւագոյն իցէր , եթէ զայնոսիկ թաղիցես լռութեամբ , և զայն ճանաչեսցես , յետ որոյ անցեալ իցէ առիթն խօսակցութեան :

Ով դուստր իմ լռելն է ինձ մեծ պարիսպ հոգևորականի մարդոյ, և է մին սպոյգ յոյս յաղթութեան :

Լռելն է բարեկամ այնորիկ , որ անապատականի 'ի յիւր ինքն, և ապաւինի

ինի 'ի յԱՅ, և է պահպանիչ սրբոց աղօթից, և զարմանալի օգնութիւն կրթութեան առաքինութեանց։

Վասն սովորեցուցանելոյ զքեզ լսել սուտ նկատեալ զվնասս, և զվտանգս շատախօսութեան, և զմեծս բարիս լռութեան, և սիրեալ զառաքինութիւնս զայս, զժամանակ ինչ (վասն ստանալոյ զունակութիւն) լռեալ նաև ուր ոչ իցէր չար խօսիլն, միայն թէ այս ոչ իցէ քեզ, կամ այլոց վնասակար։

Վասն որոյ նաև օգնեսցէ քեզ հեռանալն 'ի կենցաղավարութեանց, զի 'ի տեղի մարդկանց, ունեսցիս 'ի յընկերութիւն զհրեշտակս, զսուրբս, և զինքն ԱՅ։

Վերջապէս յիշեալ զպատերազմս, զոր ունիս 'ի ձեռին, զի տեսանելով զորքան 'ի յայսմիկ ունիս առնելի, յօժարեսցիս թողուլ զաւելորդախօսութիւն։

Թէ վասն պատերազմելոյ քաջապէս
ընդդէմ թշնամեաց, զինուորն
Քո որքան կարէ պարտի
փախչել 'ի վրդովմանց,
եւ 'ի յանհանգստու-
թեանց սրտի ։

# ԳԼՈՒԽ ԻԵ.

Զի որպէս մեք կործանեալք զխաղաղութիւն սրտի, պարտիմք տանել զայն ամենայն, զոր կրիցեմք, վասն վերստանալոյ զնա, այսպէս դու պարտիս գիտել, թէ ոչ կարէ ընդառաջ հանդիպիլ յաշխարհի պատահումն, որ զայն բանաւորապէս պարտիցի բառնալ, կամ վրդովել ։

Չյանկարծակեաց մեղաց այս' պարտիմք ցաւիլ, բայց միով ցաւիւ խաղաղականաւ, 'ի կերպի, զոր 'ի վեր 'ի բազումս տեղիս ցուցի, այսպէս Թողցի անհանգստութիւն ոգւոյ լիցի ցաւակցութիւն բարեպաշտոնի ախորժաւ.

ժութէ՞ սիրոյ ա͞մուլ այլում մեղաւո-րի, և դոնեայ ներքսապէս ողբա-ցեալ լիցին մեղք նորա։

Որքան առ այլս պատահմունս, ծանունս, և վշտալիս, որպէս են հիւանդութիւնք, վէրք, մահք, նաև մերձաւորաց արենակցաց մերոց, ժանտացաւք, պատերազմունք, հրդեհմունք, և նմանք չարիք, թէպէտ որպէս թախանձականք բնութեան, յոլովիցս ՚ի մարդկանէ աշխարհի բա-ցահերքիցին, սակայն այսու ա͞մի-Ա͞ծային շնորհօքն կարեմք ոչ միայն կամիլ զնոսա, այլ ևս նաև սիրել զնոսա, իբրև զարդարս պատուիճս անօրինաց, և բարեաց իբրև զա-ռիթս առաքինութեանց, որոց վասն այսոցիկ վերահայեցմանց նաև Տէր Ա͞ծ մեր համահաճ՚ի, որոյ կամին հպատակելով, ՚ի մէջ ա͞մից դառնու-թեանց, և ընդդիմութեանց այսորիկ կենի, անցցուք մեք հանդարտ, և անդորր հոգւով։ Եւ դիտացի՛ր տառապալէս, թէ ամենայն անհան-դատաւթի մեր անհամբոյ է Ա͞ծայնոց աչաց նորա. քանզի որպիսի և լիցի,

ոչ երբեք է թարց ընկերակցութն անկատարելութն, և միշտ արտաբղխի 'ի յումեքէ վատթարէ արմատոյ յատկականի ախտոյ:

Սակայն յայրաժամ կալ զմին ուշադիր պահապան, որ շուտով, մինչ գայ 'ի ճանաչումն որպիսւոյ և իցէ իրի, որ կարիցէ վրդովել, և անհանգստացուցանել զքեզ, տայցէ քեզ զնշան, զի դու առնուցուս զզէնս առ պաշտպանութն, նկատելով թէ այնոքիկ բոլորք չարիք, և բազումք այլք նմանք, թէպէտ արտաքոյ այսպէս երևիցին, սակայն ոչ են ճշմարիտք չարիք, և ոչ կարեն բառնալ զճշմարիտս բարիս 'ի մէնջ. և թէ Ած կարգաւորէ, կամ թոյլ տայ զհամայնս վասն ասացելոց ուղղոց վախճանից, կամ վասն այլոց մեզ անծանօթից, բայց թարց երկբայութն արդարագունեղից և սրբագունեղից:

Այսպէս մինչ ըմբռնի 'ի յորում ումեք, թէպէտ ձախորդականի պատահման, ոգին հանդարտ և 'ի խաղաղութն, կարէ առնել բազում բարի,

րի, այլապէս ամենայն ներկրթութին մեր լինի սակաւ, կամ ոչինչ պտղաբեր։

Բաց 'ի յայսցանէ մինչ սիրոն կայ անհանդարտ, և հանապազ բացադրեցեալ զանազանաց հարկանմանց թշնամեաց, և ևս մեք 'ի յայնպիսում կացութեան ոչ կարեմք բարեպէս գալ 'ի ճանաչումն ուղղոյ շաւղի, և ապահովի ճանապարհի առաքինութեանց։

Թշնամին մեր որ 'ի վեր քան զեզանակ գարշի յայսմանէ խաղաղութէ, որպէս 'ի տեղւոջէ, ուր բնակի հոգին Ա.Տ, վասն գործելոյ անդ զիւր մեծամեծս, բազմիցս 'ի ներքոյ բարեկամականաց նշանաց ջանայ բառնալ զնա միջնորդութբ զանազանաց փափագմանց, որք ունին զերևումն բարւոյ, որոց խաբէութիւնն 'ի մէջ այլոց նշանաց կարէ ճանաչիլ 'ի յայսմանէ, թէ բառնան 'ի մէնջ զհանդարտութի սրտի։

Ուստի վասն խափանելոյ զայնքան վնասն, երբ պահապանն տայ քեզ զնշան ուրուք նորոյ փափագման, մի բանար նմա զմուտ սրտի, եթէ

նախ ազատ 'ի յորմէ ումեքէ յատ-
կութէ, և կամեցմանէ ոչ ներկայա-
ցուցանիցես զնա ԱՅ, և խոստովա-
նելով զկուրութի, և զողջխութի
քո, ոչ աղաչիցես զնա թախանձա-
նօք, զի լուսով իւրով ցուցանիցէ
քեզ, որդե՞օք գայցէ 'ի նմանէ, կամ
թէ 'ի հակառակորդէ, նաև յորժամ
կարես երթ առ դատողութի հոգե-
որի հօր քո։

Եւ թէպէտ փափագն իցէր 'ի
յԱՅ, որում զի դու նախ քան զգործ-
ածելն զայն մահացուցանիցես զկա-
րի քաղցրութիւն քո, քանզի
գործն, յորմէ արտաբղեալ այնպիսի
մահացուցումն, լիցի նմա կարի ա-
ռաւել հաճոյ, քան թէ առնիցիւր
բաղձանաւ բնութե, այլ և ս երբեմն
առաւել հաճոյացի նմա մահացու-
ցումն, քան զինքն գործողութի։

Այսպէս բացահերքելով 'ի քէն
զտենչս ոչ բարիս, և ոչ 'ի գործ-
ածելով զբարիս, եթէ նախ ոչ սան-
ձեալ իցես զբնականս շարժեցմունս,
կալցես 'ի խաղաղութե, և 'ի յապա-
հովութե զամրոցն սրտի քո։

Եւ

Եւ վասն տանելոյ զնա 'ի յամնում հանդարտ , նաև ալխոտյանսյ , զի դու պաշտպանիցես , և պահպանիցես զնա 'ի յոմանց կշտամբութեանց, և խայթմանց ներքնայնոց ընդդէմ քո ինքեան , որք երբեմն են 'ի սատանայէ ( թէպէտ քանզի ամբաստանեն զքէն զիմն պակասութի ) երևի թէ իցեն 'ի յԱյ : 'Ի պտղոց նոցա ճանաչեսցես , ուստի արտաբղխիցին :

Եթէ խոնարհեցուցանեն զքեզ · առնեն զքեզ զգոյշ 'ի գործելն զբարիս , և ոչ բառնան 'ի քէն զյուսադրութիւն 'ի յԱծ , որպէս 'ի յԱծ պարտիս վերընդունիլ զնոսա հանդերձ մատուցմամբ շնորհակալութե: Բայց եթէ շփոթեն զքեզ, և առնեն փոքրոգի զանապաւինօղ , և ծոյլ, և թոյլ 'ի բարւոջ , գիտասցիր ստուգապէս , թէ գան 'ի հակառակորդէ · սակայն ոչ ունկնդնելով նց, հետևեաց կրթութե քում:

Եւ քանզի բաց 'ի վերոյ ասացելոյն , հասարակագոյն ծնանի 'ի որտի մերում անհանդարտութիւնն 'ի

պա-

պատահմանէ իւրաց ներհակաց, վասն պաշտպանելոյ զքեզ յայսցանէ հարկանմանց զերկուս իրս պարտիս առնել:

Մինն է, զի դու նկատիցես, և տեսանիցես որում իցեն ներհականք այնորիկ պատահմունք, ոգւոյ, կամ թէ ինքնասիրութե, և յատկականաց կամեցմանց:

Զի եթէ են ներհականք յատկականաց կամեցմանց, և ինքնասիրութե գլխաւորի, և նախապետականի թշնամւոյ քում, ոչ պարտիս կոչել զնոսա ներհակս, այլ ունիլ զնոսա ՚ի տեղի շնորհաց, և օգնութեց ամենաբարձրելոյն Այ, ուստի ուրախ սրտիւ, և մատուցմամբ շնորհակալութե պարտին գոլ վերընդունեցեալք:

Եւ մինչ են ներհակք ոգւոյ, ոչ վասն այսորիկ պարտի կորուսանիլ խաղաղութիւն սրտի, որպէս ՚ի հետեւեալ գլխոյ ուսուսցի քեզ:

Միւս իրն է, զի դու վերացուցանիցես զմիտն առ Աճ, ընդունելով զբոլորն աչօք փակեցելովք,

թարց

Թարց կամելոյ գիտել զայլ ինչ, 'ի յամենագթոյ ձեռանէ Ածայնոյ նախախնամութեն, իբրև զեր եւ զանազանիւք բարեօք, զորս դու յայնժամ ոչ ճանաչես։

## Յաղագս այնր, զոր պարտիմք առնել, յորժամ վիրաւորիմք։

## ԳԼՈՒԽ ԻԶ։

Յորժամ դու զքեզ գտանես վիրաւորեցեալ այնութէ սահեցեալ իցես 'ի յիմք պակասութեն վասն տկարութեն քո, կամ նաև երբեմն կամաւ և չարութեք, մի փոքրոգիանար, և մի լինիր անհանդարտ վասն այսորիկ, այլ շուտով վերադարձուցանելով զքեզ առ Ած ասա նմա այսպէս։

Ահա Տէր իմ, զի եւ արարի ըստ այնմ, որ եմ, եւ յինէն ոչ կարէր սպա-

տպաւիլ այլեր , եթէ ոչ սահեցմունք ։

Եւ աստ սակաւ մի յամելով ունայնացուր զքեզ առաջի աչաց քոց, ցուցիր վասն վշտացուցման Տն . և թարց չփոթելոյ զքեզ , բարկացիր ընդդէմ մոլեկանաց ախտից քոց , և մանաւանդ ընդդէմ այնորիկ, որ քեզ պատճառեաց զսահեցումն ։

Յետոյ հեծեծեա ։

Տէր իմ, ես աստ ոչ դադարիցեմ , եթէ դու վասն բարութեան քո ոչ ըմբռնիցես զիս ։

Եւ աստ մատո նմա զշնորհակալութիւն , և սիրեա զնա որքան կարես , զարմանալով 'ի վերայ այնքանոյ բարեգթութեան , զի վշտացուցեալ 'ի քէն , ձեռնտու լինի քեզ , զի դու կրկին ոչ անկանիցիս ։

Վերջապէս տասցես մեծաւ յուսադրութբ 'ի յիւր անհուն ողորմածութիւն ։

Արդ դու Տէր իմ , ըստ այնմ , որ ես , շնորհեա ինձ զներումն , մի թոյլ տար , զի ես կեայցեմ բաժանեցեալ 'ի քէն , և զի հեռանայցեմ

եր-

երբեք 'ի քէն, և զի դարձեալ վշտացուցանիցեմ զքեզ։

Եւ արարեալ զայս մի մտածեր արդեօք ԱՅ ներեալ լիցի քեզ, թէ ոչ, քանզի այս ոչ այլ ինչ է, եթէ ոչ հպարտութիւն, անհանդարտութիւն մտաց, կորուսումն ժամանակի, և խաբէութիւն սատանայի, ընդ պատրուակաւ երևեցուցմանց զանազանաց բարեաց. այլ թողլով զքեզ ապաստաբար 'ի յամենագթութիւն ձեռին ԱՅ, հետևեաց կրթութեան քում, որպէս թէ ոչ լիցէիր սահեցեալ։

Եւ եթէ բազմիցս 'ի յաւուր դարձեալ սահիցեսիր, և վիրաւորիցեսիր, արա՛ զայս, զոր ես ասացի քեզ, ոչ փոքրագունիւ յուսադրութեամբ երկրորդ, երրորդ, և նաև վերջին անգամն քան զառաջինն, և միշտ առաւել արհամարհելով զանձն քո, և առաւել ատելով զմեղն, ջանացիր կեալ առաւել զգոյշ։

Կրթութիւս այս կարի յոյժ անհաճոյ է սատանայի, և զի տեսանէ, թէ է՛ հաճոյագունեղ ԱՅ, և նաև զի ինքն մեծայ ամօթի հարեցեալ, դողով

յաղ-

յաղթեցեալ յայնմանէ, զոր նախ ինքն յաղթեալ էր: Եւ վասն այսորիկ վարի զանազանիւք խաբէականօք եղանակօք, զի թողուցումք առնել զայն, և բազմիցս հասանի փափագանաց իւրոց վասն անհոգութեան մերոյ, և վասն սակաւոյ հսկման 'ի վերայ մեր ինքեանց:

Վասն որոյ եթէ դու 'ի յայսմիկ դատանիցես զդժուարութիւն, այնքան առաւել պարտիս ջանալ վերառնուլ զկիրթութիւնս զայս առաւել քան զմին անգամ, նաև 'ի միում միայնում սահեցման:

Եւ եթէ յետ պակասութեան զդայցես զքեզ անհանգիստ, վրդովեցեալ, և զանապաւինեցեալ. առաջին իրն, զոր դու պարտիս առնել, է վերստանալ զխաղաղութիւն, և զհանգստութիւն սրտի, և 'ի միասին զյուսադրութիւնն, և ամրացուցեալ այսօքիւք զինուք, վերադարձ յետոյ զքեզ առ Տէր. անհանգստութիւնն, զոր ունիմք վասն մեղաց, ոչ ունի վն առարկայի զվշտացուցումն ԱՅ, այլ զյատուկ վնասն:

Կերպն

Կերպն վերադառնալոյ զխաղա֊
ղութիս զայս, է զի դու յայնժամ
ամենեւին մոռանայցես զպահեցումն,
եւ դնիցես զքեզ մտածել զանձնաւե֊
լի բարութիւնն ԱՅ, եւ որպէս 'ի
վեր քան զեղանակ կայ պատրաստ,
եւ ցանկայ շնորհել զներումն որոյ եւ
իցէ մեղք որքան եւ ծանու, կոչելով
զմեղաւորն զանազանիւք եղանակօք,
եւ բազմօք ճանապարհօք, զի դարձցէ
առ նա, եւ միաւորիցի ընդ նմա 'ի
յայտնին կենի շնորհիւ իւրով վասն
սրբացուցանելոյ զնա, եւ 'ի յայլում
փառօք վասն առնելոյ զնա յաւիտե֊
նականապէս երանեցեալ։

Եւ յետ որոյ այսոքիւք, կամ նմա֊
նիւք նկատեցմամբք խաղաղացուցեալ
իցես զմիտ, 'վերադարձուսցես զքեզ
առ սահեցումն քո, առնելով որպէս
'ի վեր ասացի։

Յետոյ 'ի ժամանակի խորհրդա֊
կանի խոստովանութեան (զոր յորդո֊
րեմ զքեզ ստէպ յաճախել) վերայ֊
իշեա զհամայն սահեցմունս քոյս,
եւ հանդերձ միով նորոգիւ ցաւով,
եւ անհաճոյութեամբ 'ի վերայ վշտացուց֊
մանն

մանն իւրոյ , եւ առաջադրութիւն այլեւս ոչ վշտացուցանելոյ զնա , ճշգրտիւ խոստովանութիւն յայտնեա՛ զնոսա հօր քո հոգեւորի ։

Յաղագս կարգի , զոր ունի սատանայն առ ՚ի պատերազմիլ , եւ պատրել զայնոսիկ , որք կամին տալ զինքեանս առաքինութեան , եւ զայնոսիկ , որք արդէն գտանին ՚ի ծառայութեան մեղաց ։

## ԳԼՈՒԽ ԻԷ.

ՈՎ դուստր , պարտիս գիտել , թէ սատանայն ոչ անսայ այլում իրի , քան կործանման մերում, եւ թէ միով . եւ նոյնով կերպիւ պատերազմի ընդ ամենեսեան ։

Եւ վասն սկսանելոյ ստորագրել զոմանս պատերազմաց , կարգից , եւ խաբէութեանց նորին , առաջադրեմ

քեզ

քեզ զբաղումն կացութիւն մարդոյ ։

Ոմանք գտանին ՚ի ծառայութեան մեղաց, թարց ուրուք մտածման ազատելոյ զինքեանս ։

Այլք կամին ազատել զինքեանս, բայց ոչ սկսանին զերթողութիւն ։

Այլք հաւատան, թէ գնան ընդ ճանապարհ առաքինութեան, եւ հեռանան ՚ի նմանէ ։

Վերջապէս այլք յետ ստացման առաքինութեանց, սահին մեծագունիւ կործանմամբ ։

Եւ որոշաբար ճառեսցուք շնամայնից ։

Յաղագս պատերազմի, և խաբէութեց, որովք վարի սատանայն ընդ այնոսիկ, զորս ունի 'ի ծառայութեն մե-
ղաց :

# ԳԼՈՒԽ ԻԸ.

Սատանայն ըմբռնելով զոմանս 'ի գերութի մեղաց, ոչ պարապի այլում իրի, քան առ 'ի առաւել կուրացուցանել զնոսա, և առ 'ի առաւել բացաշարժել զնոսա յորմէ ումեք մտածմանէ, որ կարիցէր ներածել զնոսա 'ի ճանաչումն աներջանկագունելից կենաց իւրեանց :

Ոչ միայն բացաշարժէ զնոսա 'ի մտածմանց, և 'ի ներշնչեցմանց, որք կոչեն զնոսա առ դարձումն, այլովք օտարականօք մտածմամբք, այլ նաև պատրաստիւք, և փութականօք առթիւք սահեցուցանէ զնոսա 'ի նոյն մեղս, կամ թէ 'ի յայլս մեծագոյնս

Ցորմէ մինչ լինի յիմարագոյն, և
կուրագոյն կուրութ̅ն նոցա, առաւ-
ել գահավիժին, և ստանան զունա-
կութ̅ի 'ի մեղս, այսպէս 'ի յայսմա-
նէ առ մեծագոյն կուրութ̅ի, և 'ի
յայսմանէ առ մեծագոյն մեղս, իբր
շրջաբերութ̅բ ներընթանայ թշուառ
կեանն նոցա մինչև 'ի մահ, եթէ
Այ̅ ոչ լինի նոցա խնամատար շնոր-
հիւ իւրով։

Դեղն մ̅ր, ըստ այնմ որ պատկա-
նի մեզ, է, թէ ով ոք գտանի 'ի
յայսմիկ աներջանկագունեղի կացու-
թ̅ե, շուտով տայցէ զտեղի մտած-
ման, և ներշնչեցմանց, որք կոչեն
զնա 'ի խաւարէ առ լոյս, աղաղա-
կելով բոլորով սրտիւ առ ստեղծողն
իւր. ո՛հ Տէր իմ օգնեա ինձ, օգ-
նեա ինձ փութանակի, մի թողուր
զիս այսու հետև մնալ 'ի յայսմիկ
խաւարի մեղաց։ Մի թողուր կրկ-
նել բազմիցս, և աղաղակել այսու,
կամ նմանաւ եղանակաւ։

Եւ կարելով փութով, փութով
ընթասցէ առ մին հոգևոր Հայր,
խնդրելով զօգնութ̅ի, և զխրատ,

զի կարիցէ ազատիլ 'ի թշնամւոյն :

Եւ ոչ կարելով գնալ առ նա փութով, ամենամեծիւ արագութեամբ ընթացէ առ խաչեցեալն, անկանելով առաջին սրբազանից ոտից նորա երեսանկեալ. և յորժամ առ Մարիամ կոյսն, խնդրելով 'ի նմանէ զողորմութի̄, և զօգնութի̄ :

Եւ գիտասցիր, թէ յաղթութիւնն կայ 'ի յայսմիկ արագութե̄, որպէս 'ի հետևեալ գլխոջ իմասցիս :

Յաղագս արուեստի, և խաբէութեց, որովք կալէ զայնոսիկ, որք ճանաչելով զչարն իւրեանց, կամիցեին ազատիլ․ և զի առաջադրութիւքն մեր ստէպ ոչ ունիցին զգործ իւրեանց։

## ԳԼՈՒԽ ԻԹ․

Այնք, որք արդէն ճանաչեն զչար կեանն 'ի յորում գտանին, և կամիցեին փոփոխել զայն, սովորեն խաբիլ, և յաղթիլ 'ի սատանայէ հետևեցելովք զինուք։

Յետոյ, յետոյ։

Վաղիւն, վաղիւն, որպէս ասէ ագռաւն հնչելով, քռաս, քռաս, որ է ասել վաղիւն։

Նախ կամիմ աւարտել զայս գործ, և ազատել զիս յայսմանէ խռովութէ, և զբաղմանէ, և յետոյ մեծագունի-

հանգստութեան տալ զիս ոգւոյ ։

Որսարան, որ զբազումս ըմբռնեաց, և հետևապէս ըմբռնէ ։ Որոյ պատճառն է ծուլութիւն, և պղերգութիւն մեր ; զի 'ի յիմարութեն, ուր հոգալի է փրկութիւն հոգւոյ, և պատուիրան ԱՅ, ոչ առնանի արագութեամբ զէնն այն այնքան հզօր ։

Արդ, արդ ; և վաղն է՞ր յետոյ ։

Այսօր, այսօր, և վաղն է՞ր 'ի վաղիւն ; ասելով իւրեան ինքեան ։

Բայց երբ չնորհիցիւր ինձ յետոյն, և վաղիւն ; ուրեմն այս լիցի ճանապարհ փրկութեան ; և յաղթելոյ նախ կամիլ ընդունիլ զվէրս, և առնել զնորս զանկարգութիս ։

Ուրեմն տեսանես դու, ով դուստր, թէ վասն փախչելոյ և 'ի յայսմանէ խաբէութենէ, և 'ի յայնմանէ, զորմէ խօսեցաք 'ի յառաջողի գլխոջ, և վասն յաղթելոյ զթշնամիս, գտեղն է փութանակ հնազանդութիւն մտածմանց, և Աստուծոյ ներշնչմանց ։ փութութիւն (ասեմ) և ոչ առաջադրութիւնք . քանզի այսորքիկ առէպ խաբէին, և բազումք 'ի յայնս պատ-

րե-

րեցեալք են վասն զանազանաց պատ-
ճառաց ։

Առաջինն, զորմէ նաեւ 'ի վեր խօ-
սեցաք, է, թէ առաջադրութիւնք
մերք ոչ ունին վասն հիման զանա-
պաւինութիւնն 'ի մեզ ինքեանս, եւ
զապաւինութիւն 'ի յԱծ· զայս զմեզ
ոչ թողու տեսանել մեծ հպարտու-
թիւն մեր, ուստի արտաբղխի խա-
բէութիւն, եւ կուրութիւն այս ։

Լոյսն առ 'ի ճանաչել զայն, եւ օգ-
նութիւնն վասն բժշկելոյ զմեզ, գայ
'ի բարութենէ Այ, որ թոյլ տայ, զի
սահիցիմք ; կոչելով զմեզ 'ի ձեռն
սահեցման 'ի յապաւինութենէ մերմէ
առ իւրն միայն, եւ 'ի հպարտութենէ
մերմէ առ խոնարհ ճանաչումն մեր
ինքեանց ։

Ուստի մինչ կամիս դու, զի առա-
ջադրութիւնքն քոյք լիցեն գործու-
նեայք, պիտոյանայ, զի լիցեն հզօրք,
եւ յայնժամ եղիցին հզօրք, յորժամ
զոչ ինչ յուսադրութիւն ունեսցին 'ի
մեզ ինքեանս, եւ համայնքն խոնար-
հութբ հանդերձ հիմնեսցին 'ի յու-
սադրութենէ 'ի յԱծ ։

Միւս բանն է, զի մեք երբ չարժիմք առաջադրել, հայիցիմք 'ի գեղեցկութին, և 'ի զօրութիւն առաքինութեան, որ ձգէ առ ինքն զկամս մեր, որքան և անզօր, և տկար իցէ, ուստի յետոյ, մինչ առաջադրի նմա դժուարութիւնն, որ պիտոյանայ ջանան ստանալով զայն, գոլով տկար, և նորավարժ, պակասի, և 'ի յետս քաշի:

Սակայն դու սովորեցո՛ զքեզ կարի առաւել սիրահարիլ դժուարութեանց, զորս ստացումն առաքինութեանց տանի յառաջ քան զինքեան առաքինութիս, և այսուքիւք դժուարութեամբք հանապազ սնանի կամք քո, մերթ սակաւուք առ սակաւս, և մերթ բազմօք, եթէ կամիս դու ճշմարտապէս ստանալ զառաքինութիս:

Եւ գիտասցիր, թէ այնքան փութագոյն, և բարձրագոյն յաղթեսցես զանձն քո, և զթշնամիս քոյս, որքան քաջագոյն դրկիցես զդժուարութիւնս, և սիրելագոյնք լինիցին քեզ:

Երրորդ պատճառն է, քանզի ա-

ռա

ռաջադրութիւնքն մեր երբեմն ոչ հայցին յառաքինութիւն, և 'ի կամս ԱԾային, այլ 'ի յատուկ շահաւէտութիւն։ Որ սովոր է պատահել 'ի յառաջադրութիւս, որք սովորք են լինել 'ի ժամանակի զբօսանաց հոգւոյ, և 'ի ժամանակի տառապանաց, որք կարեն նեղեն զմեզ, և 'ի յայսմիկ ոչ գտանեմք զայլ մխիթարութիւն, քան առաջադրել կամիլ տալ զմեզ բոլորս Այ, և կրթութեանց առաքինութեանց։

Դու զի մի անկանիցիս 'ի յայս իր, 'ի ժամանակի հոգևորականաց զբօսանաց լեր կարի զգոյշ, և խոնարհ 'ի յառաջադրութիւս, և մանաւանդ 'ի խոստմունս, և 'ի յուխտս. և երբ գտանես զքեզ զուարթացուցեալ, առաջադրութիւնք քո պարապեսցին առ 'ի տանել համբերութեամբ զխաչն, քան որում կամի ԱԾ, և առ 'ի բարձրացուցանել զնա, հրաժարելով յորմէ ումեքէ երկրայնոյ մխիթարութենէ, և երբեմն նաև 'ի յերկնայնոյ։ Եղիցի միտ խնդիր, և փափագ քո, զի լիցես օգնեցեալ 'ի յԱԾ, զի կարիցես տանել զամենայն իր հակառակ, թարց

արատոյ առաքինութե՛ համբերութեան, և թարց անհաձոյութեան Տ՟ն քո։

Ցաղագս պատրանաց այնոցիկ, որք հաւատան շրջիլ 'ի կատարելութե՛։

# ԳԼՈՒԽ Ը.

Թշնամին գոլով արդէն յաղթեցեալ 'ի յառաջնում, և 'ի յերկրորդում վերյաուեցման, և 'ի վերոյ ասացելում խաբէութե՛ . չարաբարոյն վերընթանայ առ երրորդն, որ կայանայ 'ի յիրոցեղն, զի մեք մոռացեալք զթշնամիս; որք ներգործութե՛ մենամարտին ընդ մեզ, և վնասեն մեզ, զբաղեցեմք 'ի փախստանս, և 'ի յառաջադրութիւս վսեմաց աստիճանաց կատարելութե՛։

Ցորմէ ծնանի, զի մեք յարաժամ խոցեցեմք, և ոչ հոգայցեմք զվերս

և

և համարելով զայնպիսիս առաջադրութիս, որպէս թէ իցէին արդարք, զանազանապէս հպարտանայցեմք։

Ուստի ոչ կամելով համբերութե՟ տանել զիմ՟ փոքրիկ իր, կամ խօս ընդդէմ մեր, յետոյ ծախեմք զժամանակն 'ի յերկարս խոկմունս առաջադրութե՟ կրելոյ զմեծամեծս չարչարանս, և երբեմն նաև զայնս, որք են 'ի քաւարանին, վասն սիրոյն այ՟։

Եւ քանզի 'ի յայսմիկ վայրագոյն մասն ոչ զգայ զընդդիմութիւն, որպէս զիրս հեռակայս, վասն որոյ մեք թշնամաքս հաստատեմք գոլ 'ի յաստիճանի այնոցիկ, որք արդէն համբերութե՟ տանին զիրս մեծամեծս։

Ուրեմն դու զի փախիցես յայսմանէ խաբէութէ, առաջադրեա՛, և պատերազմեա՛ ընդ թշնամեաց, որք 'ի մերձակայս, և իրականապէս մենամարտին ընդ քեզ, զի այսպէս յայտնի լիցի քեզ, արդեօ՞ք առաջադրութիւնքն քոյ ճշմարիտք իցեն, կամ սուտք, հզօրք, կամ թէ տկարք.

և

և դնասցես 'ի յառաքինութիւն, և 'ի կատարելութի ճանապարհի հարթոյ, և արքունականի ։

Բայց ընդդէմ թշնամեաց, յորոց ոչ ես սովոր վշտացուցանիլ, ոչ խրատեմ զքեզ · զի դու պատերազմիցիս, եթէ ոչ երբ հաւանականապէս նախատեսանես, թէ անոք զկնի սակաւոյ ժամանակի յառնելոց են 'ի վերայ քո, զի առ 'ի դիմանել զքեզ յայնժամ նախապատրաստեցեալ, և հզօր, օրէն է քեզ առնել նախ զառաջադրութիս ։

Սակայն մի երբեք դադարեցես զառաջադրութիս քոյս իբրև զգործս · թէպէտ առ ժամանակ ինչ պարտաւորիք եղանակօք իւրովք կրթեցեալ լինել 'ի յառաքինութիս · այլ 'ի յայնոսիկ լեր խոնարհ, երկիր յանձնէ քումմէ, և 'ի տկարութէ քումմէ, և ապաւինելով 'ի յԱծ · յաճախիւք աղաչանօք վերընթացիր առ նա, զի զօրացուցանիցէ զքեզ, և պահպանիցէ 'ի վտանգից, և մանաւանդ 'ի յամենայնում փոքրագունեղի համարձակութեան, և

յու-

յուսադրութեան 'ի յանձն քո։

Զի 'ի յայսմիկ պատահման, թէ֊
պէտ ոչ կարիցեն յաղթել ոմանք փո֊
քրիկք պակասութիւք, 'ի յորս եր֊
բեմն Տէրն վասն մերոյ խոնարհին
ճանաչման, և վասն պահպանման
ուրուք բարւոյ թողու զմեզ, սակայն
օրէն է մեզ առնել զառաջադրութիւս
զբարձրագունս աստիճանէ կատա֊
րելութե։

Յաղագս խաբէութեան, և մարտի, որով վարի սատանայն, զի բա-ցաթողանիցի ճանապարհն, որ տանի 'ի յառա-քինութիւն:

## ԳԼՈՒԽ ԼԱ:

Զորորոգ խաբէութիւնն 'ի վեր առաջադրեցեալն, որով յառնէ 'ի վերայ մեր չարաբարոյ սատանայն, երբ տեսանէ, թէ ոչ շրջիմք ուղ-ղապէս 'ի յառաքինութեան, են զա-նազանք բարիք փափագք, զորս մեզ ընդոստուցանէ, զի 'ի կրթութենէ առաքինութեանց անկանիցիմք 'ի մո-լութիւն:

Մի ոմն գոլով հիւանդ, համբե-րողաւ կամաւ արդարև տանի զհի-ւանդութիւնն: Խորամանկ հակառա-կորդն, որ ճանաչէ, թէ սա կարի-ցէ ստանալ զունակութիւն համբերու-թեան, առաջադրէ նմա զբաղումն բա-

բարեգործութիւնս , զորս կարիցեր առնել 'ի յայլում կացութեան , և ջանայ համոզել զնա ; զի եթէ իցէր առողջ , լաւագոյն ծառայիցէր ԱՅ. օգնելով ինքեան ; և նաև այլոց :

Եւ քանզի 'ի նմա զարթոյց զայսպիսիս կամեցմունս ; զայնոսիկ սակաւ առ սակաւ աճեցուցանէ այնպիսաբար , թէ առնէ զնա անհանգիստ , քանզի ոչ կարիցէ զնոսա 'ի գործ ածել որպէս կամիցին :

Եւ որքան 'ի նմա առաւել մեծանան , և առաւել զօրանան , այնքան աճէ անհանգստութիւնն : Եւ յետոյ 'ի յայսմանէ սակաւ առ սակաւ թշնամին խորամանկաբար ածէ զնա առ 'ի լինել անհամբեր զհիւանդութե , ոչ որպէս զհիւանդութե , այլ որպէս զարգելմանէ այնոցիկ գործոց , զորս անհանգստաբար փափագէր 'ի գործ ածել վասն մեծագունի բարւոյ :

Յետոյ երբ ձգեաց առ այս նշան , նոյնով խորամանկութբ բառնայ 'ի մտաց զվաղձանն Ածայնոյ ծառայութե , և բարեգործութեց , թողլով

լով զսոսկ փափագն զերծանելոյ 'ի հիւանդութենէ :

Որ մինչ ոչ հանդիպի ըստ կամեց֊ման իւրում, այնպիսաբար վրդովի, թէ ամենեւին լինի անհամբեր : Եւ այսպէս 'ի յառաքինութենէ, զոր 'ի գործ ածէր, անկանի 'ի ներհակ մո֊լութի նորա, առանց զգացման :

Կերպն զգուշանալոյ, եւ ընդդի֊մանալոյ այսմիկ խաբէութեան է, թէ երբ գտանիս 'ի յումեք վշտականի կացութեան . բարեպէս զգոյշ լեր, զի մի տայցես զտեղի փափագանաց որոյ ուրուք բարւոյ, որք յայնժամ, մինչ ոչ կարես զնոսա 'ի գործ ածել, ճշ֊մարտանմանապէս անհանդարտացուցա֊նիցեն զքեզ :

Եւ 'ի յայսմիկ ա̄միւ խոնարհութ̄բ, համբերութ̄բ, եւ համակերպեցմամբ պարտիս հաւատալ, թէ փափագք քոյք ոչ ունիցեին զայն գործ, զոր զքեզ համոզէիր ունելոյ . գոլով դու տկար, եւ անհաստատ, առաւել քան զայն, զոր համարիս զքեզ լի֊նիլ :

Կամ մտածեա, թէ ԱՅ 'ի գաղտ֊

նիս

նիս զդատաստանս իւրոյ , կամ՝ զամէն
ապարգիւնաւորութեանց քոց , ոչ կա-
մի 'ի քէն զայն բարին , այլ եւ ա-
ռաւել զի ցածանայցես , եւ խոնար-
հիցիս համբերութբ 'ի ներքոյ քաղցր՝ ,
եւ կարող ձեռին կամաց նորա :

Այսպէս նմանապէս արգելեցաւ
'ի հոգեւորէ հօրմէ , կամ 'ի յայլմէ
պատճառէ , այնպէս , զի դու ոչ կա-
րիցես ըստ կամեցման քո յաճախա-
պէս 'ի կիր արկանել զջերմեռան-
դութիւն քոյն , եւ մանաւանդ ստէպ
մատչիլ առ սրբազան հաղորդութեան ,
մի վրդովիր , եւ մի անհանգստանար
'ի փափագանաց նոցին , այլ մերկա-
ցեալ զամենայն յատկութիւն քո զգե-
ցիր զհաճոյութիւն Տն քո , ընդ քեզ
ինքեան , ասելով :

Եթէ այն Աստուածայնոյ խնամատա-
րութե ոչ տեսանիցէր 'ի յիս զապե-
րախտութիւնս , եւ զպակասութիւնս ,
ես ոչ կամիցէի այժմ զրկիլ 'ի յըն-
կալմանէ ամենասուրբ սրբազնութե ,
սակայն տեսանելով ես , թէ Տէրն
իմ այսու յայտնէ ինձ զանարժանու-
թիւնն իմ , մինչ ինքն դուլեցաւ , ե

զոհնեցեալ լիցի ։ Այսու ամ̃իւ յու-սամ Տէր իմ ՚ի ծայրագունեղ բա-րութ̃ի քո, թէ դու կամիցիս, զի ես հանդուրժելով վասն քո, և հա-ճոյանալով քեզ ՚ի յամ̃ում, բանայցե քեզ զսիրտն իմ տրամադրեցեալ ա-մենայն կամեցուածոց քո, զի դու հո-գևորապէս միաւորելով ՚ի նա, մխի-թարիցես, և զօրացուցանիցես զնա ընդդէմ թշնամեաց, որք խնդրեն բառնալ զնա ՚ի քէն ։ Այսպէս եղի-ցի այն ամենայն, որ ՚ի յոյս քոյ է բարի, ստեղծող, և փրկիչ իմ, կամք քո այժմ, և միշտ լիցի կերակուր, և զօրութ̃ի իմ ։ Ով սիրելագունեղ Տէր իմ, զայս միայն շնորհս խնդ-րեմ ՚ի քէն, զի հոգին իմ մաքրե-ցեալ, և ազատեցեալ յորմէուքէ իրէ, որ անհաճոյանայ քեզ, միշտ զարդարեցեալ առաքինութ̃ք ա-ռովք պատրաստիցի առ գալուստ քո, և որքան քեզ հաճոյանայցէ տրամադրել զինէն ։

Եթէ դու պահիցես զայսոսիկ խրատս, գիտասցիր ստուգապէս, թէ ՚ի միւրաքանչիւրում փոփոխում

բա-

բարւոյ, զոր դու ոչ կարիցես 'ի գործ ածել, թէ այն պատճառիցի 'ի բնութե̅, կամ թէ 'ի սատանայէ վ̅ա̅ անհանգստացուցանելոյ զքեզ, և հեռացուցանելոյ զքեզ 'ի ճանապարհէ առաքինութե̅, կամ թէ երբեմն նաև 'ի յԱՅ վասն փորձելոյ զհամբերութի̅ քո առ կամս իւր, մինչ ունեացիս զառիթ բաւարարելոյ Տե̅ քում, 'ի կերպի, որ առաւել հաճոյանայ նմա։ Եւ 'ի յայսմիկ կայանայ ճշմարիտ ջերմեռանդութիւնն, և ծառայութիւնն, զոր ԱԾ վերախնդրէ 'ի մէնջ։

Նաև ազդ առնեմ քեզ, զի դու մի լինիցիս անհամբեր 'ի նեղութիս յորմէ և կողմանէ պատճառեցեալս, թէ դու վարելով միջոցիւք օրինաւորօք, որք սովորք են 'ի կիր արկանիլ 'ի ծառայիցն ԱՅ, մի վարիցիս նոքօք փափագանաւ, և յարեցմամբ հանդերձ զերծանելոյ 'ի նոցանէ, այլ քանզի կամի ԱԾ, զի 'ի կիր արկանիցին, և ոչ դիտեմք մեք արդեօք հաճոյանայցէ իւրում ԱԾայնում մեծ

վայելչութեան ազատել զմեզ այսու մի-
ջոցաւ :

Զի եթէ այլապէս առնիցես , ան-
կանիցիս ՚ի բազումս չարիս , վասն
զի դիւրապէս սահիցես ՚ի յանհամ-
բերութիւն , ոչ հասանելով իրին ըստ
փափագանաց , և ըստ հաճոյից քոց
կամ համբերութիւն քո լիցի պակա-
սաւոր , ոչ բոլոր հաճոյ ԱՅ, և փա-
քու արդեան :

Վերջապէս ծանուցանեմ քեզ սա-
զմին ծածուկ խաբէութիւն մերոյ
յատկականի սիրոյ , որ սովոր է ՚ի
յոմանս պատահմունս բացայայտել ,
և պաշտպանել զպակասութիս մեր :

Ուստի զորօրինակ, գոլով ոմն հիւ-
անդ սակաւ համբերող վասն հիւան-
դութեան , ծածկէ զանհամբերութիւն
իւր ՚ի ներքոյ քողոյ ուրուք նախ-
անձաւորութեան բարւոյ երևելւոյ ,
ասելով , թէ վշտացումն իւր ոչ լինէ
ճշմարտապէս անհամբերութիւն վասն
նեղութեան , զոր կրէ ՚ի հիւանդու-
թենէ , այլ բանաւոր անհաճոյութիւն ,
վասնզի ինքն ես նմա զաւիթն ,
կամ թէ քանզի այլք վասն ծառայ-

ու-

ութեն, զոր առնեն ինքեան, կամ վասն այլոց պատճառաց զգան զձանձրութի, և զվնաս:

Նմանապէս ամբարհաւաճն, որ խուսափի վասն արժանապատուութեն, որում ոչ եհաս. ոչ ընձեռէ զայս խորում յատկի հպարտութե, և ունայնութե, այլ այլոց վերահայեցմանց. զորոց կարի բարեպէս գիտեմք, թէ ՚ի յայլս առիթս, որք առաբերեն նմա զծանրութի, ոչ ունի զհամարումն ինչ. որպէս նաև հիանդն ոչ հոգայ, եթէ նոքին ինքեանք, վասն որոց ասէր թէ կարի ցաւիր, թէ կրիցէին զնեղութիւն վասն իւրեան, կրեն զնոյն նեղութի, և զցաւս վասն հիւանդութեան ուրուք այլոյ:

Նշան կարի յոյժ յայտնի, թէ ապմառն ցաւելութե այսոցիկ այսպիսեաց ոչ է վասն այլոց, կամ վասն այլոյ վերահայեցման. քան զզարշուռն, զոր ունին զիւրաց ներհականաց կամեցմանց իւրեանց:

Սակայն դու զի մի անկանիցիս ՚ի յայս մոլորութի, և ՚ի յայլս, միշտ

համբերութե՟ տար զիւրաքանչիւր նեղութի՟ , և չարչարան , գտցէ այն ( որպէս ասացի ) յորմէ ունէքէ պատճառէ :

Յաղագս վերջնոյ վերարձակմանց , և խաբէութեն 'ի վեր առաջադրեցելոյ , որով սատանայն փորձէ , զի ստացեալք առաքինութիք իցեն մեզ առիթ կործանման :

# ԳԼՈՒԽ ԼԲ.

Որամոնք , և չարաբարոյ օձն ոչ դադարի 'ի փորձելոյ զմեզ խաբէութե՟ք իւրովք , նաև 'ի յառաքինութիւս . զորս ստացեալք եմք , զի իցեն մեզ առիթ կործանման , մինչ մեք համահաճելով 'ի յայնոսիկ, և 'ի մեզ ինքեանս վերացուցանեմք զմեզ 'ի բարձունս , զի յետոյ անկանի-

նիցիմք 'ի մոլութիւն հպարտութեան, և սնափառութեան:

Ուրեմն դու սա 'ի զգուշանալ յայսմանէ վտանգէ, միշտ պատերազմեա՛, նստելով 'ի հարթում, և 'ի յապահովում դաշտի ճշմարտի, և խորոյ ճանաչման, թէ ոչինչ ես, զոչինչ գիտես, զոչինչ կարես, և ոչ այլինչ ունիս, քան զթշուառութիւն, և զպակասութիւնս, ոչ զայլ ինչ արդիւնաւորիս, քան զյաւիտենական դատապարտութիւն:

Եւ գոլով հաստատեցեալ, և կացուցեալ ներ եղերաց այսր ճշմարտութեան, մի երբէք թողուցուս զքեզ քարշել արտաքս, նաև բաւ ժամանակի միոյ րոպէի, յորժամ և իցէ մտածմանէ, կամ իրէ, որ քեզ հանդիպեսցի, առուգապէս գիտելով, թէ համայնքն են այնքանք թշնամիք քոյք, յորոց (եթէ տայցէիր զքեզ 'ի ձեռս նորա) վերամբարձցէիր կամ մեռեալ, կամ վիրաւորեցեալ:

Չի բարեպէս կրթիցես առ 'ի յընթանալ 'ի վերոյ ասացելում դաշտի ճշմարտի ճանաչման քոյոյ ոչընչու-

թէ, վարիր այսու կանոնաւ։

Քանիցս անգամ՝ դարձուցանիցես զքեզ առ մտածութիւն քոյոյ ինքեան, եւ գործոց քոց, միշտ խոկա՛ զայն, որ է քոյդ, եւ ոչ զայն, որ է ԱՅ, եւ շնորհաց նորա, եւ յետոյ համարեա՛ զքեզ այնպիսի, զորպիսի գտանես զքեզ լինիլ քոյովն։

Եթէ մտածիցես զժամանակն նախ քան զլինիլ քո, տեսցես թէ ՚ի յայնմիկ անհուն վիհում յաւիտենականութեն եղեալ իցես մին առնել ոչ ինչ, եւ թէ զոչ ինչ գործեալ իցես, ոչ կարացեալ գործել, զի ունիցեիր զգոյն։

Յետոյ ՚ի յայսմիկ ժամանակի, յորում դու ունիս զգոյ ՚ի ձեռն միայնոյ բարութեան ԱՅ, թողեալ նմա զիւրն (որ է յարաժամ կատարումն, որով յանուն վայրկենի պահէ զքեզ) զինչ այլ ինչ ես քոյովդ, եթէ ոչ նմանապէս մին ոչինչ; Քանզի ոչ գոյ իմն երկբայութիւն, թէ առ առաջին ոչինչութիւն քո, յորմէ եհան զքեզ ամենակարող ձեռն նորա, վերադառնայցեիր ՚ի միում վայրկենոջ, եթէ նա վաճան միոյ միայ-

նոյ

նոյ փոքրագունեղն րոպէի թողուցուր զքեզ։

Ուրեմն յայտնի իր է, թէ՝ի յայսմիկ բնականի գոլում, մնալով քոյումն, ոչ ունիս պատճառ համարելոյ զքեզ, կամ կամելոյ համարիլ՝ի յայլոց։

Որքան յետոյ պատկանի առ բարուք գոլն շնորհի, և առ՝ի գործելն զբարի, բնութիւն քո մերկացեալ զԱծային օգնութենէ, զինչ բարի, և զինչ արդիւնաւոր կարիցէր՝նա երբէք առնել յիւրմէ ինքնէ։

Եւ՝ի յայլմէ կողմանէ նկատելով զբազումս անցեալս աղալանս քոյս, և բաց՝ի յայսմանէ զբազումս այլս չարիս, որք յառաջացեալ.ք իցեն՝ի քէն, եթէ Այծ իւրով ամենագթածիւ ձեռամբ ոչ իցէր ըմբռնեալ զքեզ, գտցես թէ անօրէնութիւք քոյք վասն բազմապատկութեան ոչ միայն աւուրց, և ամաց, այլ՝նաև ներգործութեանց, և ունակութեանց չարաց (վասն զի մին մոլութի կոչէ, և քարշէ ընդ ինքեան զմիւսն) հասեալ.ք իցեն առ թիւ գրեթէ անհուն, և

դու լեալ իցեիր մին այլ դժոխային սատանայ ։

Ուստի ոչ կամելով դու գոլ աւազակ բարութեանն ԱՅ , այլ հանապազ կալ ընդ Տն քում , յօրէ յօր պարտիս համարիլ զքեզ վատագոյն։

Եւ զգուշ լեր , զի դատաստանս այս , զոր դու առնես յանձնէ քումմէ , իցէ հանդերձ արդարութբ , քանզի այլապէս իցէր քեզ իր ոչ սակաւու վնասու ։

Եւ եթէ որքան առ ճանաչումն չարաբարոյութե քո գերազանցես զոմն , որ վասն կուրութե իւրոյ համարիցի զինքն գոլ իր ինչ , սակայն դու կորուսանես զբազումն ինչ և առնես զքեզ վատթարագոյն քան զնա 'ի գործս կամաց , եթէ կամիս գոլ համարեցեալ , և պատուեցեալ 'ի մարդկանց որպէս զայնպիսի ոք , զորպիսի ոք գիտես զքեզ ոչ լինիլ։

Ուրեմն եթէ դու կամիս , զի ճանաչումն չարութե , և ոչընչութեան պահիցէ հեռակայս զթշնամիս քոյս , և առնիցէ զքեզ սիրելի ԱՅ · պիտոյանայ , թէ ոչ միայն արհամարհի-

հիցես զանձն քո , որպէս զանարժան ամ̃ բարւոյ , և արժանաւոր ամ̃ից չարեաց , այլ նաև թէ հաճիցիս արհամարհիլ 'ի յայլոց , դարշելով 'ի պատուոց , հրճուելով 'ի վերայ արհամարհանաց , և խոնարհեցուցանելով զքեզ յորժամ հանգիպին քեզ առիթք խոնարհեցման առ 'ի առնել զայն ամենայն , զոր այլք արհամարհեն :

Որոց զդատողութի , զի մի թողուցուս զայս ո̃ք կրթութի̃ , պարտիս համարիլ ոչինչ , միայն թէ այս առնիցի 'ի քէն վասն այսր միայնոյ վաղճանի խոնարհեցման , և կրթութե̃ քո , և ոչ վասն իրիք ինքնահաւանութե̃ ոգւոյ , և վասն հպարտութե̃ ոչ բարեպէս ճանաչեցելոյ , որով երբեմն 'ի ներքոյ այլոց բարեաց քողոց սակաւ , կամ ոչինչ համարիս զկարծիս այլոց :

Եւ եթէ երբեմն ընդառաջ հանդիպիցի քեզ վասն ուրուք բարւոյ , զոր ԱՅ ետ քեզ , որպէս գոլ բարի , սիրեցեալ , և գովեցեալ 'ի յայլոց , կաց բարեպէս ժողովեցեալ ներ

քոյոյ ինքեան , և բնաւ մի շարժեր զքեզ 'ի վերոյասացելոյ ճշմարտութենէ , և արդարութենէ , այլ նախ դարձո՛ զքեզ առ Ած̃ , ասելով նմա սրտիւ ։

Տէր իմ մի լիցի , զի ես լիցեմ աւազակ պատուոյ , և շնորհաց քոց · քեզ գոհութիւն , փառք , և պատիւ , ինձ ամաչումն . և յետոյ դէպ 'ի գովաբանողն քո ներքսապէս այսպէս խօսելով , ուստի՞ է , թէ սա համարիցի զիս բարի , եթէ ճշմարտապէս է բարի Ած̃ն իմ միայն , և գործք նորա ։ Զի այսու կերպիւ առնելով և տալով Տն̃ զիւրն , հեռացուցես զթշնամիս քո , և տրամադրեսցես զքեզ առ 'ի վերընդունիլ զմեծագոյնս պարգևս , և զշնորհս 'ի յԱյ̃ ։

Եւ յորժամ յիշումն բարեգործութեց դնէ զքեզ 'ի վտանգի ունայնութե , փութով նայելով առ նոսա ոչ որպէս առ իւր քոյս , այլ Այ̃ , դիէթէ խօսելով ընդ նոսա , կարասցես ասել յոգւոջ քում ։ Ես ոչ գիտեմ թէ որով կերպիւ երևեցայք դուք , և սկսայք առնուլ զգոլ 'ի մօտ իմում .

խմում ․ քանզի ես ոչ եմ սկիզբն ձեր, այլ ամենաբարին Այ, և շնորհ նորա ստեղծ, սնոյց, և պահեաց զձեզ ։ Ուրեմն կամիմ վերաճանա- զնա միայն որպէս զճշմարիտ, և զնախախնամական հայր, գոհանալ զնմանէ, և կամիմ տալ նմա զամենայն գոհաբանութիւն ։

Յետոյ նկատեա՛, թէ համայնք գործք, զորս արարեալ ես, արդեն իսկ եղեն ոչ միայն սակաւ պատասխանօղք լուսոյ, և շնորհի. որ վասն ճանաչելոյ, և 'ի գործ ածելոյ զնոսա շնորհեցաւ քեզ, այլ նաև բաց 'ի յասացելոյն եղեն կարի անկատարք, և նաև կարի յոյժ հեռացեալք յայնմանէ մաքրոյ դիտաւորութենէ, և պարտականութենէ, յեռանդէ, և յուշադրութենէ, որոց պարտէին ընկերակցիլ, և որովք հանդերձ գործիլ ։

Ուստի եթէ բարեպէս մտածիցես, ես աւելի պարտիս ամաչել քան համահաճիլ ընդ քեզ ունայնաբար, վասն զի կարի յոյժ ճշմարիտ է, թէ շնորհք, զորս 'ի յԱյ ընդունիմք

մա-

մաքուրս, և կատարեալս, 'ի կիր արկանելն զնոսա 'ի յանկատարելութեանց մերոց բծաւորին։

Այլ և ես բաղդատեմ զգործս քոյս ընդ գործոց սրբոց, և այլոց ծառայից ԱՅ, զի առ համեմատութի նոցա, պայծառապէս ճանաչեսցես, թէ լաւագոյնքն, և մեծագոյնքն քոյոցն կարի անարգի պայմանի, և գնոջ են։

Յետոյ բաղդատելով զնոսա ընդ գործոց Քի, զորս 'ի խորհուրդս կենաց իւրոց, և համապազորդականի խաչի գործեաց վասն քո, և նկատելով զնոսա թարց Աճայնոյ անձին, 'ի յիւրեանս ինքեանս միայն, և վասն ախորժութե, և մաքրութե սիրոյ, որով գործեցան, տեսցես թէ համայնք գործք քոյք են, որպէս ոչ ինչ։

Եւ եթէ վերջապէս վերացուցանիցես զմիտն քո առ Աճութի, և առ անչափ մեծվայելչութի ԱՅ քո, և առ ծառայելութի, զոր արժինաւորի, տեսցես յայտնապէս, թէ ոչ ունայնութիւն, այլ երկիւղ մեծ

վե.

վերամբայ քեզ յորմէ ուստեքէ զօր-
ծոյ քումմէ։ Ուսոյ ամիւք ճանա-
պարհօք 'ի յամրում գործոջ քում,
որքանև սրբում պարտիս բոլորով
սրտիւ տալ Տն քում. Ած քաւեա
զնա զմեղաւորս։

Նաև ազդ առնեմ քեզ, զի ոչ լիցես
դիւրին առ 'ի բացայայտել զպար-
գևս, զորս Ած արար քեզ, զի այս
դրեթէ միշտ անհաճոյ է Տն քում,
որպէս բարեպէս ծանուցանէ մեզ
նոյն ինքն հետևողաւ մարդապե-
տութբ։

Երևեցաւ նա մի անգամ 'ի կեր-
պարանի մանկան միում խորում ջեր-
մեռանդուհւում, իբրև զսոսկ ստեղ-
ծուած. 'ի նմանէ այսպէս պարզա-
պէս վերախնդրեցաւ, զի ասիցէ
զհրեշտակային ողջոյնն. սկսաւ նա
յօժարաբար։ Ողջոյն քեզ մարիամ,
լի շնորհօք Տէր ընդ քեզ. օրհնեալ
ես դու 'ի կանայս, և յետոյ լռեաց,
քանզի ոչ կամեցաւ այլովք հետևո-
ղօք բանիւք զովել զիւր ինքն։ Եւ
մինչ նա այլ ևս աղաչէր, զի նաև
զմնացեալսն ասիցէ, նա թագուցա-
նէ-

նելով զինքն , եթող մխիթարեցեալ զաղախինն իւր , յայտ առնելով նմա օրինակաւ իւրով զայս երկնային վարդապետութիս :

Ուսիր և դու ով դուստր խոնարհեցուցանել զքեզ , ճանաչելով զքեզ հանդերձ համայնիւք գործովքքովք իբրև զոչինչ , որ ես :

Այս է հիմն համայնից այլոց առաքինութեանց : Նախ քան զգոլն մեր Այ ստեղծեաց զմեզ 'ի յոչընչէ , և արդ վասն զի եմք վասն նորա, կամի 'ի վերայ այսորիկ ճանաչման մերոյ , թէ 'ի մէնջ ոչ ինչ իցեմք , հիմնել զբոլոր հոգևորական շէնն : Եւ որքան առաւել խորացուցանեմք զմեզ 'ի յայնմիկ , այնքան առաւել բարձրացեալ աճեսցի սա : Եւ ըստ համեմատութեան երկրի թշուառութեանց մերոց , զոր պեղեսցուք , Այային ճարտարապետն դիցէ անդ զայնքան հաստատագունեղս վէմս , զի բարձրանայցէ շէնն : Մի համոզեր զքեզ ով սիրելագունեղ դուստր , կարել երբեք այնքան խորացուցանել զքեզ զի առիցես թէ բաւ է , այլ և ս առ-

աւել

առնել արդ զքէն զհամարումն զայս, զի եթէ անհուն իր կարիցէր տրել 'ի առեղծուածոյ, այնպիսին լիցէր ցածութեն քո ։

Այսու ճանաչմամբ բարեպէս 'ի կիր արկեցելով․ ատանամբք զամենայն բարի․ Թո՛ղ սոսա եմք սակաւ մի առաւել քան զոչինչ, թէպէտ առնիցէաք զգործս ա̃մից մ̃րդոց, և մշտ̃ զբաղեցեաք 'ի յԱծ ։

Ո՛վ երանեցեալ ճանաչումն, որ առնես զմեզ երջանիկս 'ի յերկրի, և փառաւորս 'ի յերկինս ։ Ո՛վ լոյս որ ծագելով 'ի խաւարս, առնէ զհոգիս լուսաւորս, և պայծառս ։ Ո՛վ անին ոչ ճանաչեցեալ, որ վերափոխէ 'ի մէջ անմաքրութեանց մերոց ։ Ո՛վ ոչ ինչ, որ ճանաչեցեալ առնէ զմեզ առաւել համայնի ։

Ոչ երբեք յագիցէր ճառել քեզ զայսմանէ․ եթէ կամիս գովել զԱծ, ամբաստանեա զանձնէ քումմէ, և ըղձա ամբաստանիլ 'ի յայլոց ։ Խոնարհեցո զքեզ ընդ ամենեսեան, և 'ի ներքոյ ամենեցուն, եթէ կամիս բարձրացուցանել զնա 'ի քեզ, և

զքեզ

զքեզ 'ի նմա ։ Եթէ տենչաս գտանել զնա, մի բարձրացուցաներ զքեզ, զի նա փախիցի ։ Ցածացո՛ զքեզ, և ցածացո՛ զքեզ որքան կարես, զի նա եկեսցէ առ 'ի գտանել զքեզ, և փարիլ զքեւ ։ Եւ այնքան ընկալցի զքեզ, և այնչափ միաւորեսցէ ընդ ինքեան մեծագունիւ սիրով, որքան առաւել ոչընչացուցանիցես զքեզ 'ի յաչս քոյ, և համահաճիցիս արհամարհիլ յամենից, և ուզէս զզարշելի իր բացահերքիլ ։

Եւ այնքանոյ պարգեւի, զոր առնէ քեզ, վասն քո արհամարհեցեալ Ած քո, առ 'ի միաւորել զքեզ ընդ ինքեան, այլ՝ զի համարիցիս զքեզ անարժան, և մի լուեր մատուցանել նմա զշնորհակալութիւն ատէպ, և ճանաչել զքեզ պարտական նմա, որ ետ քեզ զառիթ, և առաւել այնոց, որք արարին զքեզ տանակոծս, կամ' թէ առաւել հաւատան, թէ դու ակամայ, և ոչ սիրով տանիս զայն ։ Որ երբ նաև իցէր, ոչ պարտիս ցուցանել զնշանս արտաքուստ ։

Եթէ

Եթէ մինչ 'ի կիրարկանին 'ի մէնջ այնքանք միաբանութիւնք, որք արդարև են կարի ճշմարիտք, խորամանկութիւնն սատանայի, և աղիտութի, և չար յօժարութիւնն մեր առաւել զօրանայցեն 'ի մեզ, այնպէս թէ միաբանութիւնքն յատկականի բարձրացուցմանց ոչ դադարիցեն նեղացուցանել զմեզ, և առնել 'ի սրտի մերում զներհակութիւն, նաև յայնժամ է ժամանակ խոնարհեցուցանելոյ զմեզ այնքան առաւել 'ի յանցս մերս, որքան թէ 'ի փորձառութէ տեսանեմք զմեզ սակաւ զարգացեալս 'ի կենս հոգւոյ, և 'ի ճշմարիտ ճանաչման մեր ինքեանց, վասնզի ոչ կարեմք ազատել զմեզ յայսպիսեաց թախանձանաց, որք ունին զարմատ 'ի յունայնէ հպարտութէ մերմէ։ Այսպէս 'ի թունոյ արտահանեսցուք զմեղր, և զառողջութէ 'ի վիրաց։

### Յաղագս ոմանց արգասաւորութեանց առ 'ի յաղթելոյ զմոլեկանս ախտս և առ 'ի ստանալոյ զնորա առաքինութիւնս :

## ԳԼՈՒԽ ԼԳ.

Որպէս զբազումն ասացեալ իցեմ զեղանակէ, զոր պարտիս ունիլ առ 'ի յաղթել զանձն քո, և զար-դարել զքեզ առաքինութեամբք. սա-կայն մերձաւորաց ինձ զգուշացուցա-նել զքեզ փոյթով նոցա :

Նախ : Մի երբեք թողուցուս զքեզ հաճոյսն, կամելով ստանալ զառաքինութիւնս, յայնցանէ հոգեւո-րականաց կրթութեանց, որք երև-ութաբար եղերեալք են զաւուրս շաբաթու, մինն վասն միոյ առաքի-նութեան, և այլքն վասն այլոց :

Այլ կարգն պատերազմելոյ, և կրթութեան, լեցի պատերազմիլ ընդ-դէմ

դէմ այնոցիկ ախտից, որք միշտ մնա-սեցին քեզ, և հետևապէս ատեալ վերարձակին 'ի վերայ քո, և մնա-սեն, և զարդարել զքեզ առաքի-նութեամբք նոցին ներհակօք, և որքան կատարելագոյն կարելի իցէ։

Քանզի ստանալով դու զայսոսիկ առաքինութիւնս, զհամայնս այլս զխե-բութ̄ և սակաւուք ներգործու-թեամբք փութով ստասցիս 'ի յաւիտս նոյին, որք ոչ երբէք պակասին. քանզի առաքինութիւնք միշտ շաղկա-պեցեալք են ընդ իրեարս, և ով կատարելապէս վայելէ զմինն, զայլս համայնս ունի պատրաստ 'ի դրան սրտի։

Երկրորդ։ Ոչ երբէք բացորոշի-ցես զժամանակս առ ստացումն ա-ռաքինութեանց, ոչ զաւուրս, ոչ զշա-բաթս, ոչ զամս, այլ հանապազ ի-բրև յայնժամ ծնեցեալ, և որպէս նորակերտ զինուոր պատերազմեա՝ միշտ, և երթ առ բարձրութիւն կա-տարելութեան նոցա։

Մի ևս զկայ առնիցես նաև զմին փոքրագունեղ վայրկեան, վասն զի զկայ

զկայ առնելն 'ի շրջման առաքինութեց, և կատարելութեան, ոչ է առնուլ զշունչ, և զշօրութի. այլ յետս դառնալ, կամ եղանիլ տկարագոյն քան զյառաջ:

Չկայ առնելն իմանամ ես. հաստատ գոլ ստացեալ զառաքինութի խորհել: Եւ երբեմն առնել զական համարում, և զաւթից, որք կոչեն զմեզ առ նորա ներգործութիւն առաքինութեան, և զփոքրկանց պակասութեց:

Ուստի լեր հոգաբարձ, և ջերմեռանդ, և զգաստ, զի մի ևս կորուսանիցես նաև զմին փոքրագունեղ առիթ առաքինութեան:

Սիրեա ուրեմն զհամայնս առիթս, որք մերձեն զքեզ առ առաքինութի, և կարի առաւել զայնս, որք դժուարք են առ 'ի յաղթահարել, քանզի ներգործութիքն, որք լինին առ 'ի յաղթահարելոյ դժուարութիս փութագոյն, և բարձրագունին արմատս առնեն զունակութիս, և սիրեա զնոսա, որք կարկառեն զնոսա քեզ: Միայն յայնց պար-

պատուխ փախչիլ արագապէս ամենայաղթութբ, և փութացմամբ, որք կարիցեն ներածել զքեզ 'ի փորձութի մարմնոյ ։

Երրորդ ։ Լեր խոհեմ, և շրջահայեաց 'ի յայնոսիկ առաքինութիս, որք կարեն պատճառել մարմնոյ զվնաս, որպէս են վշտացուցանել զնա խարազանօք, խոլքովք, ծոմապահօք, հսկմամբք, խոկմամբք, և այլովք նմանիւք իրօք, քանզի այսոքիկ առաքինութիւնք պարտին ստանիլ սակաւ առ սակաւ, և ըստ աստիճանաց նոցին, որպէս սակաւ 'ի վայր ասասցուք ։

Յետոյ զայլոց առաքինութեանց բոլորապէս ներքնայնոց, որպէս զսիրելոյ զԱծ, զարհամարհելոյ զաշխարհս, զցածանալոյ 'ի յատուկս աչս, զատելոյ զմոլեկանս ախտս, և զմեղս, զլինելոյ համբերօղ, և հեզ, զսիրելոյ զհամայնս, և ով զքեզ վշտացուցանէ, և զայլոց նմանեաց, վասն ստանալոյ զորս ոչ պիտոյանայ առաջանալ սակաւ առ սակաւ, և ոչ պիտոյանայ թողուլ 'ի կատարելու-

լութի նոցա ատոխձանօք, այլ ջանասցիր, որքան կարես, առնել զհամայնս ներգործութիս, որքան կատարելագոյն կարելի իցէ:

Չորրորդ: Բոլոր մտածումն, փափագ, և սիրտ քո ոչ մտածեսցէ, և փափագեսցի, կամ ըղձասցէ այլում իրի, քան յաղթել զայն ախտն, ընդդէմ որոյ պատերազմիս, և ստանալ զներհակ առաքինութին նորա: Այս լիցի բոլոր աշխարհ, երկին, և երկիր, այս բոլոր գանձ քո, և բոլորն վաղձանաւ հաճոյանալոյ ԱՅ:

Եթէ ճաշակես, եթէ ըմպես, եթէ աշխատիս, եթէ հանգստանաս, եթէ հսկես, եթէ ննջես, եթէ ես 'ի տան, եթէ արտաքոյ տան, եթէ պարապիս ջերմեռանդութեց, եթէ ձեռակերտից գործոց, բոլորն ուղղեսցի առ 'ի յաղթել, և յաղթահարել զատացեալ ախտն, և ստանալ զներհակ առաքինութին նորա:.

Հինգերորդ: Լեր թշնամի ընդհանրականապէս հեշտութեանց, և հան֊

հանդստութեանց երկրայնոց, զի այսուկերպիւ 'ի վերայ քո սակաւ զօրութեան վերարձակեսցին մոլութիւնք. որք ամենեքին ունին վասն արմատոյ զհեշտութիւն: Ուստի հատեցելոյ այսորիկ ատեցմամբ մեր ինքեանց կորուսանեն այնոքիկ զզօրութիւս, և զուժգնութիւս:

Եւ եթէ կամիցիս պատերազմիլ 'ի միոյ կողմանէ ընդ ումեք մոլութեան, և մանաւորի հեշտութեան, և 'ի յայլմէ կողմանէ պարապիլ այլոց հեշտութեանց երկրայնոց, թէպէտ ոչ իցեն մահացուք, այլ թեթևք մեղանք, պատերազմն լիցի խիստ արինահեղ, և կարի անօգուտ, և յաղթութիւնն անօսր: Վասն որոյ միշտ պահեսցես 'ի մտի զայնասիկ ասացեալս Ածայինս:

|| Որ սիրէ զանձն իւր արձակէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ 'ի կեանս յաւիտենականս պահեսցէ զնա: Յօհ. 12. Թիւ. 25.

|| Եղբարք պարտականք եմք, ոչ մարմնով ըստ մարմնոյ կեալ: Զի

եթէ ըստ մարմնոյ կեցջիք, մեռա-
նելոց էք ։ Իսկ եթէ հոգւով զգործս
մարմնոյ սպանանիցէք, կեցջիք։ Հռո.
Ը. Թիւ. 12.

Վեցերորդ ։ Եւ վերջապէս աղ-
աչեմ քեզ, թէ իցէ բարւոք, և
դուցէ հարկաւոր, զի դու նախ առ-
նիցես զմին ընդհանրական խոստո-
վանութիւն, այնոքիւք համայնիւք
պարտաւորօք կերպիւք, որովք պար-
տի լինիլ ։ քանզի առաւել զքեզ
սատուգես կալ 'ի շնորհս Տն քո, յոր-
մէ ստանելիք են համայնք շնորհք,
և յաղթութիւնք ։

Թէ առաքինութիւնքն առ սակաւ առ սա-
կաւ ստանիլ պարտին 'ի կրթելն
մեր զմեզ աստիճանօք նո-
ցին, և 'ի պարապելն
մեր նախ միում, և
յետոյ նորին
այլում։

## ԳԼՈՒԽ ԼԴ.

Յիշեա թէ ճշմարիտ զինուո-
րն Քրի, որ փափագէ
զագաթան կատարելու-
թեն, ոչ երբեք պարտի
ունել զոմն եզր զարգացման իւրում,
սակայն պարտին սանձիլ լուծք խո-
հեմութեք ամանք եռանդք հոգւոյ,
որք զրկեցեալք մանաւանդ 'ի սկզ-
բան կարի բորբոքմամբ, յետոյ պա-
կասին, և թողուն 'ի միջի զընթա-
ցումն մեր։ Ուստի բաց 'ի յայնմա-
նէ, որ ասացեալ է շուրջ զկանոնաւ-
որելով զմեզ 'ի յարտաքինս կրթու-
թիս, և ևս զխտացի, թէ նաև

ներքինք առաքինութիւնք պարտին ստանիլ սակաւ առ սակաւ, և աստիճանօք իւրովք, զի այսպէս սակաւն շուտով եղանի բազում. և մնացական: Ուստի (զորօրինակ) 'ի հակառակս հասարակաբար ոչ պարտիմք յամիլ առ 'ի յուրախանալ 'ի վերայ նոցա, և փափագիլ նոցա, եթէ նախ ոչ լիցիմք անցեալք ընդ ցածագոյնս աստիճանս առաքինութեան ապաշխարութեան:

Եւ ոչ խրատեմ զքեզ զի դու մանաւանդ այսպէս պարապիցիս համայնից, և բազմաց առաքինութեանց 'ի միասին, այլ միում միոյնում, և յետոյ այլոց, քանզի այսպէս դիւրագոյն, և հաստատագոյն տնկի 'ի հոգւոջ առաքինական ունակութիւնն. մինչ լինի թէ հանապազորդականաւ կրթութեամբ միոյ միայնոյ առաքինութեան, յիշողութիւնն 'ի յամենայն առթի ընթանայ առ նա յօժարագոյն. իմացութիւնն միշտ առաւել նրբանայ 'ի գտանելն զնորս եղանակս, և բանս վասն ստանալոյ զայն, և կամքն դիւրագոյն, և մեծագունիւ ախորժութեամբ

թէ

թէ հակիլ, զոր ոչ առնիցեին, եւթէ 'ի բաղում առաքինութիւս զբաղիցեին։

Եւ ներգործութիւնքն շուրջ զմիով միայնով առաքինութեան վասն համակերպութեան, զոր ունին 'ի մէջ իւրեանց, ընդ այսմիկ միակերպի կրթութեան լինին նուաղ աշխատականք, վասնզի մինն կոչէ, և օգնէ այլում նմանի իւրում, և վասն այսր նմանութեան նաև առնեն 'ի մէջ զմեծագոյն ներտպութիւն, գտանելով զաթոռ սրտի արդէն պատրաստ, և տրամադրեցեալ առ 'ի վերընդունիլ զայնոսիկ, որք նորապէս արտադրին, որպէս այլոց համակերպից նոցին առաջինն ետ զտեղի։

Որք բանք ունին զայնքան առաւել զօրութիւն, որքան ստուգապէս գիտացեալ լինի, թէ ով ոք բարեպէս կրթէ զինքն 'ի միում առաքինութեան, ըմբռնէ նաև զկերպն կրթելոյ զինքն 'ի յայլում, և այսպէս աճեցմամբ միոյ աճին ամենեքեան 'ի միասին 'ի ձեռն անբաժանելոյ զուգակցութեան, զոր ունին 'ի մէջ

իւրեանց , գոլով շառաւիղք բղխեցեալք 'ի միոյ , և նոյնոյ Ածայնոյ լուսոյ :

Յաղագս միջոցաց որովք տանին առաքինութիւնք , և որպէս պարտին մեք վարել նոքօք առ 'ի պարապելոյ միում միայնում զժամանակ ինչ :

## ԳԼՈՒԽ ԼԵ.

ԱՌ 'ի տանել զառաքինութիւնս , բաց 'ի վերոյ ասացելոցն , վերախնդրի մին քաջասիրտ , և մեծ ոգի , և մ[illegible]կամք ոչ տկար, ոչ թոյլ այլ հաստատ , և զօրեղ , հանդերձ աստուգիւ ենթադրեցելով, թէ պարտիմք անցանել ընդ բազում իրս ներհակս , և խիստս :

Բաց 'ի յայսմանէ պահեսցի մանաւոր յօժարութիւն , և ախորժութիւն , որ կարասցէ տանիլ , առէղ նկա-

նկատելով, որքան հաճոյանայցեն ԱՅ, և իցեն ազնիւք, և դերաղանցք 'ի յիւրեանս ինքեանս, և մեզ օգտակարք, և հարկաւորք, վասնզի 'ի յայնցանէ ունի զսկիզբն, և զվախճան ամենայն կատարելութի ։

Յամենայնում պատուօտեան ժամանակի արարցին գործունեայք առաջադրութիք կրթելոյ զմեզ 'ի յայնսսիկ բաւ իրաց, որք ընդ առաջ համդիպեացին հաւանականապէս 'ի յաւուր այնմիկ, 'ի յորում բազմիցս պարտիմք քննել զմեզ, արդե՞օք գործածեալք իցեմք զնոսա, թէ ոչ, յետոյ վերանորոգելով զնոսա զօրեղագոյն ։ Եւ այս բոլոր մանաւանդ շուրջ զայնու առաքինութե, զոր յայնժամ ունեցուք 'ի ձեռին ։

Նմանապէս օրինակքն սրբոց, աղօթք մեր, և խոկումն կենաց, և չարչարանաց Քի այնքան հարկաւորք 'ի յամի հոգևորականի կրթութե, բոլորք մերձեցուսցին մանաւանդ վասն այնր նոյնոյ առաքինութե, 'ի յորում յայնժամ կրթեսցուք զմեզ ։

Նոյնն

Նոյնն ասասցի զնմին առԹից (որ-պէս մանաւորապէս ցուցցուք 'ի վայր) Թէպէտ 'ի մէջ իւրեանց իցեն զանազանք :

Ջանասցուք այնպիսաբար սովո-րեցուցանել զմեզ 'ի յառաքինական ներգործութիւնս ներքինս, և արտա-քինս, զի մարթիցիմք առնել զնոսա այնու յօժարութբ, և դիւրութբ, որով նախ առնեմք զայս համա-կերպս բնականաց կամեցմանց : Եւ որչափ առաւել ներհակք լինիցին այսոցիկ (որպէս ասացաք 'ի յայլում տեղւոջ) այնքան փութադոյն ներ-մուծցեն զբարի ունակութիւն 'ի հո-գին մեր :

Սրբազանք ասացուածք Ածայնոց գրոց բացայայտեցեալք ձայնիւ, կամ գոնեայ մտօք, կերպիւ, որ յարմա-րի, ունին զզարմանալի զօրութիւն առ 'ի յօգնելոյ մեզ 'ի յայսմիկ կր-Թութեն : Սակայն եԹէ ոչ ունիցիմք 'ի սպառապատ զբաղումն շուրջ զա-ռաքինութբ, զոր 'ի գործ ածեմք, և ասիցեն ներ առուր , և մանաւանդ յորժամ վերյառնէ ներհակ ախտն , զո-

ղորօրինակ, եթէ անսայցեմք սաստ-
ման համբերութեն, կարասցուք տ-
անել զհեռաւորս, կամ զայլս համան-
մանս տառապանս։

Որդեակք երկայնամիտք լերուք
'ի վերայ բարկութեն հասելոյ ձեզ։
Բարուք. 4. Թիւ. 25.

Եւ համբերութի տնանկի մի կո-
րիցէ իսպառ։ Սաղ. 9. Թիւ. 19.

Լաւ է այր երկայնամիտ, քան
զհզօր, և այր որ ունի զխոնարհու-
թիւն քան զանդս մեծամեծս, և որ
յաղթէ բարկութեն, լաւ է քան զայր.
որ առնէ զքաղաքս հզօրս։ Առակ.
16. Թիւ. 32.

Եւ համբերութբ ձերով ստա-
ջիք զհոգիս ձեր։ Ղուկ. 21. Թիւ.
19.

Համբերութբ ընթասցուք 'ի
պատերազմ որ առաջի կայ մեզ։ Եբ-
րայ. 12. Թիւ. 1.

Նմանապէս վասն նոյնոյ փափագի
կարասցուք տանել զհեռաւորս, կամ
զնմանս համառօտս աղօթս։

Այ իմ, երբ զինաւորեսցի սիրտ
իմ վահանաւ համբերութեն։

Երբ

Երբ վասն հաճոյանալոյ Տ՟ն խնում անձինց հանդարտիւ ոգեաւ ընդ ա՟մս նեղութիս:

Ո՛հ կարի սիրելիք չարչարանք, որք առնեն զիս նմանս Տ՟ն խնում Յ՟ի չարչարեցելոյ վասն իմ։

Լիցի երբե՞ք, միայնակ կեան հոգւոյ իմոյ, զի վասն փառաց քոց 'ի մէջ հազարաց վշտաց կեայցեմ եւ գոհունակ:

Երջանիկ եղէց, եթէ 'ի մէջ հրոյ անձկութեանց, բորբոքիցիմ կամեցմամբ տանելոյ զիրս մեծագոյնս:

Վարիցուք այսուքիւք համառօտքիւք աղօթիւք, և այլովք համակերպիւք առ առաջադիմութիւն մեր 'ի յառաքինութիս, և զոր ուսուսցէ հոգին ջերմեռանդութե՟ն:

Այսուքիկ փոքրկունք աղօթք կոչին նետընկեցականք, քանզի են որպէս նետք, և սլաքք, որք ձգին դէպ 'ի յերկինս, և ունին զմեծ զօրութի՟, առ 'ի յընդոստուցանել զմեզ առ առաքինութիւն, և թափանցել մինչև 'ի սիրտն Ա՟Յ, եթէ եր-

կու

կու էրք էբրև երկու Թևք նոցա ըն-
կերակցեցին։

Մինն է ճշմարիտ ծանաչումն հա-
մահաձայնութեան ԱՅ մերոյ վասն
կրթութեան մերոյ ՚ի յառաքինու-
թիւնս։

Միւսն է մին ճշմարիտ, և հրա-
ցեալ փափագ ստանալոյ զնոսա, առ-
այսր վաղձան միայն, զի համոյա-
նայցեմք ևւրոյ Աճայնոյ մեծվայել-
չութեն։

Թէ 'ի կրթութն առաքինութեան պարտիցիմք շրջիլ հանապազորդականաւ հոգաբարձութբ :

## ԳԼՈՒԽ ԼԶ.

Ի ՄԷՋ ամ̃ից իւրաց պիտոյականոդունից, և հարկաւորաց առ ստացումն առաքինութեց, բաց 'ի վերոյ ուսուցելոցն, մինն է, թէ առ 'ի հասանիլ առ վախճան, զոր մեք առաջադրեմք մեզ, պիտոյանայ յարատևել, միշտ առաջանալով, այլապէս ոչ կայ առնելով միայն լինի յետս դարձուած :

Քանզի յորժամ մեք դադարիմք 'ի յառաքինականաց ներգործութեց, հարկաւորապէս հետևի, զի 'ի ձեռն բնաբարականի հակեցման զգայականի բաղձանի, և այլոց իւրաց, որք արտաքուստ շարժեն զմեզ, ծնանիցին 'ի մեզ բազումք անկարգ ախտք,

որք

որք եղծեն , կամ գոնեայ նուաղեցուցանեն զառաքինութիւս , բաց 'ի յայսմանէ , թէ զրկիմք 'ի բազմաց շնորհաց , և պարգևաց , զորս զարգանալով կարացեալք իցեաք ստանալ 'ի Տնէ ։

Վասն որոյ հոգևորական շրջումն է զանազան 'ի շրջմանէ , զոր առնէ ճանապարհորդն 'ի վերայ երկրի , վասն զի 'ի յայսմիկ , մինչ կայ առնի , ոչ ինչ արդեն առարեցելոյ ճանապարհին կորուսանի , որպէս կորուսանի 'ի յայնմիկ ։

Եւ բաց 'ի յայսմանէ ուժաթափութիւնն պանդխտի աշխարհի անձին յարատեւութեամբ մարմնաւորի շարժման , իսկ 'ի ճանապարհի հոգւոյ որքան առաւել յառաջաքայլէ , հանապազ այնքան մեծագոյն զօրութեն , և ուժգնութեն ստանի ։

Վասն զի առաքինականաւ կրթութեամբ ստորնագոյն մասն , որ իւրով ընդդիմութեամբ առնէր զշաւիղն կարծր , և աշխատաւոր , միշտ առաւել տկարանայ . և վերնագոյն մասն , ուր կայ առաքինութիւն , առաւել հաս-

հաստատել, եւ զօրանալ :

Ուստի 'ի ձեռն զարգացման 'ի բարւոք նոճայի չարչարման ինչ, որ անդ զգացեալ լինի, եւ ծածուկ զօրաձնացումն իմն, որ 'ի ձեռն Ածայնոյ ներգործութեն խառնի ընդ ինքեան չարչարանի, յամենայն ժամու լինի մեծագոյն : Այսու կերպիւ մեր յարատեւէ գնալ միշտ առաւել դիւրութբ, եւ բերկրութբ 'ի յառաջինութե 'ի յառաջինութի, վերջապէս ժամանի 'ի գագաթ լերին, ուր հոգին լեալ կատարեալ, յետոյ գործէ թարց զզուեցման, այլ եւս բերկրութբ, եւ ցնծութբ, քանզի գոլով արդէն յաղթեալ, եւ սանձահարեալ զանկարգս ախտս, եւ լեալ վերնագոյն քան զամենայն ստեղծեցեալս եւ քան զիւր ինքն կեայ երջանկապէս 'ի սրտի ամենաբարձրելոյն, եւ անդ քաղցրաբար աշխատելով, հանգստանայ :

Թէ

Թէ մինչ մինչ պիտոյանայ յարատ-
եւել 'ի կրթութեան առաքինութեց,
ոչ է փախչելի 'ի յաւթից,
որք առ 'ի տանել
զնոսա ներկայա-
ցուցանին։

## ԳԼՈՒԽ ԼԵ.

Արի յայտնապէս տեսաք, թէ 'ի ճանապարհի, որ տանի 'ի կատարելութի, վայելէ հանապազ յառաջքայլել առանց զկայ առնելոյն։

Առ 'ի առնել զստացումն բարեպէս զգոյշք եւ արթունք կացցուք ոչ թողուլ ելանել 'ի ձեռաց զոր եւ իցէ առիթ, որ առ 'ի ստանալոյ զառաքինութիւս, ներկայացուցանի մեզ. ուստի վատաբար խմանան այնոքիկ, որք որքան կարեն հեռանան 'ի ներհակաց, որք կարիցէին ծառայել առ այս գործ։

Զի՞ ցանկաս ( զի մի բացադնայ-

ցեմ 'ի նոյնոյ օրինակէ) ստանալ զունակութի համբերութեն ։ Ոչէ բարւոք, զի դու յետ քարշիցիս 'ի յայնցանէ անձանց, 'ի յայնցանէ արարողութեց, և 'ի յայնցանէ մտածմանց, որք շարժեն զքեզ 'ի յանհամբերութի ։

Եւ վասն այսորիկ ոչ պարտիս հեռանալ յոմանց կենցաղավարութեց, քանզի իցեն քեզ թախանձականք, այլ կենցաղավարելով, և խօսակցելով ընդ որում և իցէ, որ առբերէ քեզ զթախանձան, մինչ կալ տրամադրեցեալ, և պատրաստ զկամս առ 'ի տանիլ զծ և իցէ իր նեղացուցիչ, և անհաճոյ, որ կարիցէ քեզ հանդիպիլ, քանզի այսպէս առնելով, ոչ երբեք սովորեցուցանելիր զքեզ առ համբերութի ։

Այսպէս նմանապէս եթէ գործողութի ինչ առբերիցէ քեզ զտաղտկութիւն, կամ 'ի ձեռն իւրեան ինքեան. կամ 'ի ձեռն այնորիկ, որ զայն հրամայեաց քեզ, կամ զի արգելու զքեզ առնել զայլ իր, որ քեզ առաւել հաճոյանայցեր, վասն

այսր

այսր մի յետմնայր բուռն հարկանել զնմանէ, և յարատևել 'ի նմա, Թէպէտ զգայցէիր զքեզ անհանգիստ, և Թողլով զնա կարիցէիր գտանել զհանգիստ. քանզի այսպէս ոչ երբէք ուսանիցէիր տանիլ զչարչարանս, ոչ հանգստուԹիւն քո լիցէր ճշմարիտ հանգստուԹի՛, մինչ ոչ արտաքսէ 'ի հոգւոյ մաքրեցելոյ 'ի յախտից, և զարդարեցելոյ առաքինուԹե՛:

Զնոյնն ասեմ քեզ զմտածմանց Թախանձականաց, որք երբեմն նեղացուցանեն, և չփոԹեն զմիտն, քանզի ոչ պարտիս մերժել զնոսա 'ի քէն 'ի բոլորոջ, վասնզի չարչարանօք, զորս տան քեզ, 'ի միասին ծառայեն քեզ առ 'ի սովորեցուցանել զքեզ տանիլ զիրս ներհակս:

Եւ ով այլապէս ասէ քեզ, ևս առաւել ուսուցանէ քեզ փախչիլ 'ի նեղուԹէ, զոր զգաս, քան տանել զառաքինուԹի՛, որում ցանկաս:

Եւ կարի ճշմարիտ է, Թէ մանաւանդ յարմարի նորակերտի զինուորի պատերազմիլ, և մաքառիլ

՚ի յաստացեալս առիթս զգուշութե՟ , և ուշադրութե՟ , երբեմն ճակատելով նոցա , երբեմն տալով նշ՟ զտեղի · ըստ որում առաւել , կամ նուազ սատանայ զուժգնութի՟ , և զզօրութի՟ ոգւոյ ։

Բայց սակայն ոչ երբէք պարտիս ՚ի բոլորում զթիկունս դարձուցանել , և ՚ի յետս քարշիլ այնու կերպիւ , զի ամենևին յետ ձգիցես զամենայն առիթ ներհակութեց · քանզի , եթէ յայնժամ զերծուցանիցէաք զմեզ ՚ի վտանգէ անկանելոյ , ՚ի յապագայոջ մեծագունիւ վտանգաւ բացադրիցեաք հարմանց անհամբերութե , ոչ գոլով նախ զինաւորեցեալք , և զօրացուցեալք սովորութե՟ ներհակի առաքինութե՟ ։

Սակայն այսօքիկ ազդեցմունք ոչ ունին զտեղի ՚ի մոլութե՟ մարմնոյ , զորմէ արդէն մտանաւորապէս մեք ճառեալք եմք ։

Թէ համայնք առիթք պատերազմե-
լոյ սիրելիք լիցին վասն ստաց-
ման առաքինութեց, և ա-
ռաւել այնոքիկ, որք
առբերեն զաւելի
դժուարու-
թիւն։

## ԳԼՈՒԽ ԼԲ։

ՈՎ դուստր ոչ համարիմ բաւական, զի դու ոչ խորշիցիս ՚ի յառթից, որք ընդ առաջ հանդիպին քեզ վասն ստացման առաքինութեց, այլ կամիմ, զի որպէս զիր մեծագունի գնոյ, և համարեցման երբեմն ՚ի քեն խնդրիցես, և գրկիցես, միշտ ուրախաբար փութով, մինչ երևին. և զայնոսիկ համարեսցես պատուականագոյնս, և սիրելագոյնս, որք զգայութե՛ քում են անհաճոյագոյնք.

Այս շնորհեսցի քեզ օգնութե՛ն Ածայնով, եթէ բարեպէս ներա-

պլիցես 'ի մոլի զհետևողս նկատեցմունս :

Մինն է, թէ առիթքն իցեն միջոցք համեմատականք, այլ և հարկաւորք առ 'ի ստանալ զառաքինութիս : Ուստի երբ դու զայսոսիկ խնդրես 'ի Տնէ, հետևապէս խնդրես նաև զայնոսիկ, այլապէս աղօթքն քո իցէր ունայն, և հակառակիցէր քեզ ինքեան, և փորձիցեիր զԱծ, քանզի նա հասարակաբար ոչ տայ զհամբերութիւն թարց նեղութեանց, ոչ թարց արհամարհանաց զխոնարհութի :

Եւ այսպէս կարէ ասել վասն այլոց համայնից առաքինութեանց, որք թարց երկբայութեան ստանին 'ի ձեռն ներհակաց պատահմանց, որք առբերեն մեզ զայնքան մեծագոյն օգնութիւն առ այս գործ, զի պարտիցին լինել մեզ վասն այսորիկ այնքան սիրելագոյնք, և հաճոյագոյնք, ոլքան թախանձագոյնք իցեն, քանզի ներգործութիւք, զորս մեք առնեմք 'ի յայսպիսիս դիպուածս, են քաջագոյնք, և հզօրագոյնք, և դիւրագոյն, և

փու-

փութագոյն բանան մեզ զճանապարհն առ առաքինութի։

Սակայն նաև փոքրագունեղք առիթք, որպէս միոյ հայեցման, կամ բանի ընդդէմ կամաց մերոց, համարելիք, և ոչ 'ի բաց թողլիք են թարց իւրոյ կրթութե, վասնզի ներգործութիւքն որք առնեն, են յաճախագոյնք, թէպէտ նուաղապէս սաստիկք, քանզայնս, որք արտադրին 'ի մէնջ 'ի պիտոյականս դժուարութիւնս։

Միւս նկատումն (զորմէ նաև 'ի վեր ճառեցի) է, թէ համայնք, երբ, որք ընդառաջ հանդիպին մեզ, դան 'ի յԱՅ առ օգուտ մեր, և զի մեք արտահանիցեմք 'ի նոցանէ զու-տուղ։

Եւ թէպէտ ոմանք սոցին, որք են պակասութիւք մեր, կամ այլոց (որպէս նաև ասացաք 'ի յայլում տեղւոջ) ոչ կարէ ասիլ, թէ լիցեն ԱՅ, որ ոչ կամի զմեզս, սակայն են 'ի յԱՅ, ըստ որում նա թոյլ տայ զնոսա, կարելով արգելուլ զնոսա, ոչ արգելու, բայց համայնք վիշտք,

և չարչարանք , որք գան 'առ մեզ ,
և վասն պակասութեանց մերոց , կամ
վասն չարաբարոյութե այլոց , են և
'ի յԱՅ , և ԱՅ, վասն զի նա 'ի յայնս
համընթանայ , և զայս , զոր ոչ կա-
միցուք , զի առնիցուք , քանզի պա-
րունակէ զօգտութիւն 'ի վեր քան
զեղանակ աւելի իւրոց մաքրագու-
նեղից աչաց , կամի զի կրիցէ վասն
բարւոյն առաքինութե , զոր մեք
կարեմք արտաքարշել , և վասն այլոց
արդարոց պատճառաց , որք մեզ ծա-
ծուկք են ։

Ուստի մինչ մեք եմք կարի յոյժ
աներկբայք , թէ Տէրն կամի, զի կա-
մաւորապէս տանիցեմք զծ և իցէ
թախանձան , որ դայցէ մեզ 'ի յա-
նարդարոց գործողութեանց այլոց, կամ
նաև մերոց , առելն ( որպէս վասն
անմեղադիր առնելոյ զանհամբերու-
թին իւրեանց բաղումք ասեն ) թէ
ԱԾ ոչ կամի , այլ ևս դարձի յիրաց
վատաբար եղելոց , ոչ այլինչ է, քան
միով ունայնիւ քօղով ծածկել զյա-
կականս մեզս , և հրաժարել 'ի խա-
չէ , զոր ոչ կարեմք ուրանալ , թէ

նմա

նմա հաճոյանայ, զի մեք տանիցեմք։

Այլ ես առաւել ասեմ, թէ բաղ-
դատեցելոյ մնացելոյն, Տէրն առա-
ւել սիրէ 'ի մեզ զկրումն այնոցիկ
չարչարանաց, որք առաջագային 'ի
յանիրաւութենէ մարդկան (մանաւ-
անդ եթէ նախ օգնեցեալք, և բա-
րերարեցեալք իցեն 'ի մէնջ) քան
զթախանձանս, որք սրտաբեկին
յայլոց վշտացուցականաց պատահ-
մանց, և քանզի համարակաբար ա-
ռաւել 'ի յայնոսիկ, քան թէ 'ի յայ-
սոսիկ հպարտ բնութին սանձահա-
րի, և նաև քանզի մեք տանելով
զնոսա կամաւորապէս, առնեմք զհա-
ճոյս ԱՅ մերոյ, և բարձրացուցա-
նեմք զնա 'ի վեր քան զեղանակ, հա-
մագործելով ընդ նմա 'ի յիրի, ուր
ծայրագունեղապէս վերափայլի իւր
անձառելի բարութի, և ամենակա-
րողութի, որ է 'ի մահաբերէ թիւ-
նոյ չարութե, և մեղաց հանել զպա-
տուհական, և զքաղցրահամ պտուղ
առաքինութե, և բարւոյ:

Վասն որոյ գիտացիր ով դուստր,
թէ ոչ այսպէս փութանակի բանայ

Տէրն 'ի մեզ զկենդանի փափագ տա-
նելոյ զայն ճշմարտութիւ , և անսալոյ ,
որպէս պարտէ ստացման այսպէս
փառաւորի, թէ նա պատրաստէ մեզ
զբաժակն հզօրագունից փորձուեց ,
և առթից որքան և խստագունից ,
զի 'ի ժամանակի իւրում ըմպիցեմք
զնա , և մեք որպէս վերաճանաչօղք
սիրոյ նորա , և յատկականի բարւոյ
մերոյ , պարտիմք վերընդունիլ զնա
կամաւորապէս փակեցելովք աչօք ,
և ըմպել զնա բոլոր ապահովապէս ,
և յօժարապէս , մինչև առ երևելի
յատակն , վասն զի է բժշկականութի
կազմեցեալ 'ի ձեռանէ , որ ոչ կարէ
սղալել ; յիրաց այնքան առաւել օգ-
տակարաց հոգւոյ , որքան 'ի յեւր-
ծանս ինքեանս են դառնագոյնք ։

Որպէս կարիցեմք վարել զանազանօք առթիւք վասն կրթութեան միոյ, և նոյնոյ առաքինութեան։

## ԳԼՈՒԽ ԼԹ.

Ի Վէր տեսաք, որպէս վասն ուրուք ժամանակի իցէ առաւել պտղաբեր կրթութի միոյ միայնոյ առաքինութեան, քան բազմաց 'ի միասին, և թէ ըստ այնմ կանոնաւորելիք են առիթք, որք ընդառաջ հանդիպին մեզ, թէպէտ 'ի մէջ իւրեանց զանազանք։ Արդ անսամ որպէս սա կարիցէ 'ի գործ ածիլ կարի դիւրապէս։

Ընդ առաջ հանդիպեսցի 'ի միում, և նոյնում աւուր, և նաև 'ի միում, և նոյնում ժամու, զի յանդիմանիցիմք 'ի վերայ միոյ արարողութեան, որ իսկ իցէ բարի, կամ զի բամբասիցեն զմեզ վասն այլոյ իրի, կամ

զի խստաբար բացասիցի մեզ շնորհ ինչ, զոր մեք վերախնդրեալք իցեմք, կամ ո՛ եւ իցէ փոքրիկ իր վատաբար կարծիցի զմէնջ, թայց պատճառի, կամ զի մեզ վերագայցէ ինչ մարմնաւոր ցաւ, կամ զի գնիցի ՚ի վերայ մեր ինչ թախանձական գործ. կամ զի գնիցի առաջի մեր մին կերակուր վատաբար կերտեցեալ. կամ հանդիպլիցին մեզ այլք իրք պիտանաւորագոյք, և խնդաք առ ՚ի տանիլ զնոսա, որովք լի է ողորմելի մարդկային կեանն:

՚Ի պէտաւորութեան այսոցիկ, կամ ՚ի նմանեաց պատահմանց, թէպէտ կարիցեն արտադրել զանազանս ներգործութիւնս առաքինութեանց, սակայն կամելով պահել զցուցեալ կանոնն, կրթեսցուք զմեզ ներգործութեամբք ամիւք համակերպիւք առաքինութեան, զոր յայնժամ ունեսցուք ՚ի ձեռս, զորօրինակ:

Եթէ ՚ի ժամանակի, ՚ի յորում գայցեն ասացեալք առիթք, կրթիցեմք զմեզ ՚ի համբերութեան, արտադրեսցուք զներգործութիւնս տանելոյ

զայ-

զայնոսիկ ամենեսեան կամաւորապէս և ուրախութեամբ ոգւոյ ։

Եթէ կրթութիւն մեր իցէ զխոնարհութեան, 'ի յայնոսիկ ամենեսեան ներհակութիւս, ճանաչեսցուք զմեզ արժանաւորս ամ̃ից չարեաց ։

Եթէ զհնազանդութեան ենթարկեսցուք զմեզ յօժարապէս ամենակարողն ձեռին Ա̃Յ, և առ 'ի հաճոյանալոյ նմա ( քանզի նա այսպէս կամի ) ևս բանականաց սանձռնածոց, և նաև անհոգիաւորեցելոց, յորոց գան մեզ այսոքիկ նեղութիւք ։

Եթէ զաղքատութեան, լիցուք գոհունակք գոլ մերկք, և զրկեցեալք յամ̃է մխիթարութեան մեծէ, կամ փոքու այսր աշխարհի ։

Եթէ զսիրոյ, արտադրեսցուք զներգործութիւնս սիրոյ, և դէպ 'ի յընկեր մեր որպէս 'ի գործի բարւոյ, զոր կարիցեմք առնել, և դէպ 'ի Տ̃Ր Ա̃Յ, որպէս 'ի նախապատկան, և սիրելի պատճառ, յորմէ արտաքղխին, կամ թոյլ տուեցեալք են այնոքիկ վիշտք վասն մերոյ կը-

թու-

թութեան, և վասն հոգևորի առաջադրութեան ։

Եւ 'ի յայսմանէ զոր ասեմք շուրջ զգանազանիւք պատահմամբք, որք կարեն հանդիպել 'ի յիւրաքանչիւրում աւուր, համըմբռնի 'ի միասին, որպէս 'ի միում միայնում առթի հիւանդութեան, կամ այլոյ վշտի, որ երկարապէս յարատեւիցէր, կարեմք առնել զներգործութիւն այնր առաքինութեան, 'ի յորում յայնժամ կրթեմք զմեզ ։

Յաղագս ժամանակին, որ գնելի է 'ի կրթութեան իւրաքանչիւրոյ առաքինութեան, և յաղագս նշանաց զարգացման մերոյ:

## ԳԼՈՒԽ Խ.

Որքան առ ժամանակն, 'ի յորում պարտիմք յարատևել 'ի կրթութեան իւրաքանչիւրոյ առաքինութեան, ոչ պատկանի ինձ բացորոշել զնա. վասնզի այս կանոնաւորելի է 'ի կացութենէ, և 'ի պիտանաւորութենէ մասնաւորաց, 'ի զարգացմանէ, որ լինի 'ի ճանապարհի հոգւոյ, և 'ի դատողութենէ նորին, որ վասն այնորիկ առաջնորդէ մեզ:

Բայց եթէ այնոքիւք եղանակօք, և հոգաբարձութեամբ, զորս ասացաք, ճշգրտիւ մտադրիցիր անդ, ոչ է երկբայութիւն, թէ 'ի սակաւու ժա-

մու

մանկի առաւել պտղաբերիցիւր, քան 'ի բաղմի :

Նշան, թէ զարգացեալք իցեմք 'ի յառաքինութեան, է, երբ 'ի ցամաքութեան, և ներ խաւարի, և վշտաց հոգւոյ, և ներ բացաքարշեցման հոգևորաց համեղութեանց հաստատապէս լինի յարատևումն 'ի յառաքինականս կրթութիս :

Զայսմանէ նաև տայ զկարի յայտնի նշան ընդդիմութին, զոր 'ի յարտադրելն զներգործութիս առաքինութեան արասցէ մեզ զգայականութիւն, զի որքան սա կորուսանիցէ զուժգնութիս, այնքան 'ի յայնմիկ համարելի լիցի, թէ առաջացումն լեալ իցէ :

Ուստի մինչ ոչ լինի զգացումն հակառութեն, և ապստամբութեան 'ի զգայականի, և վայրագունի մասին, մանաւանդ 'ի մէջ փութականաց, և անկարծականաց վերարձակմանց, այս լիցի նշան, թէ արդ ստացեալք իցեմք զառաքինութի :

Եւ որքան ներգործութիւնք մեր ընկերակցեալք լինիցին 'ի մեծադու-

նէ

նէ յօժարութենէ , և ուրախութենէ ոգւոյ , այնքան առաւել կարասցուք մտածել, թէ տացեալ իցեմք զար-գացումն ՚ի յայսմիկ կրթութեան ։

Սակայն նկատեսցի , թէ ոչ երբեք պարտիմք համարիլ իբրև զստոյգ իր , թէ իցեմք ստացօղք առաքի-նութեանց , և բոլորովիմբ յաղթիչք ուրուք ախտի մերոյ , թէպէտ զկնի բազմի ժամանակի , և բազմաց պա-տերազմաց ոչ զգացեալք իցէաք զշարժմունս իւրս , զի նաև սա կա-րէ ունիլ զտեղի խորամանկութեան , և գործողութեան սատանայի , և նենգաւոր բնութեան մեր , ուստի երբեմն այս է մոլութիւն , որ վասն ծածկի հպարտութեան երևի առաքինութիւն ։ Բայց ՚ի յայսցանէ եթէ հայիցիմք ՚ի կատարելութիւն , առ որ Ած կոչէ զմեզ , թէպէտ արարեալք իցէաք զբազումս շրջմունս ՚ի ճանապարհի առաքինութեանց , ոչ լիցի մեզ պարտ համոզել զմեզ , թէ ևս մտեալք ի-ցեմք ՚ի յառաջինս սահմանս նոցա ։

Վասն որոյ դու , որպէս նորա-կերտ պատերազմիչ , և իբրև զմա-

նուկ

նուկ յայնժամ իսկ ծնեցեալ առ 'ի պատերազմիլ, մինչ վերընկալ որպէս 'ի սկզբանէ զկրթութիւնս քոյս, իբր թէ 'ի յայնցեալ ժամանակի զոչինչ գործեալ իցես:

Եւ արդ առնեմ քեզ ով դուստր, զի դու ես առաւել պարապիցիս առաջաքայլել 'ի յառաքինութիւնս, քան առնել զհետազօտութիւն զյատկականէ զարգացմանէ. քանզի Տէր Ած է ճշմարիտ, և միայն քննիչ սրտից մե-րոց, ոմանց ճանաչեցուցանէ զայս, ոմանց ոչ, ըստ որում տեսանէ, թէ առ այնպիսի ճանաչեցուցմն իցէ հե-տեւելոց կամ խոնարհեցուցմն, կամ հպարտութիւն, և որպէս սիրելա-գունեղ հայր 'ի յոմանց բառնայ զվ-տանգ, և յոմանց կարկառէ զաւիթ աճեցման առաքինութեն:

Եւ վասն այսորիկ թէպէտ հոգին ոչ զգայցէ զյառաջացումն իւր, սա-կայն հետեւեսցի կրթութեանց իւրոց, զի տեսցէ զայն, յորժամ հաճոյա-ցի Տն, զի վասն իւրոյ մեծագունի բարւոյ տեսանիցէ զայն:

Թէ ոչ պարտեսցիմք թողուլ զմեզ
ըմբռնիլ 'ի կամեցմանէ, զի լիցիմք
ազատք 'ի վշտաց, զորս համբե-
րութ͞ տանիմք. և յաղագս կեր-
պի կանոնաւորելոյ զհամայնս փա-
փագմունս մեր, զի լիցիմք առա-
քինիք։

## ԳԼՈՒԽ ԽԱ.

Երբ դու գտանես զքեզ ներ
որում և լիցէ իրի, որքան
և վշտացուցականի, և
համբերողաւ ոգեաւ տա-
նիս զնա, զգոյշ լեր զի մի երբեք
թողուցուս զքեզ համոզիլ 'ի սատա-
նայէ, կամ 'ի յինքնասիրութ͞է քում-
մէ ցանկալ ազատեցման, վասնզի
յայսմանէ գայցէին առ քեզ երկու
գլխաւորք վնասք։

Մինն է զի եթէ փափագս այս ոչ
բառնայցէր 'ի քէն յայնժամ զառա-
քինութ͞ի համբերութեան, գոնեայ
սա-

սակաւ առ սակաւ տրամադրիցես զքեզ առ անհամբերութիւն ։

Միւան է, թէ համբերութիւն քո լինիցիւր պակասաւոր, և վարժատրիցիւր ՚ի յԱԾ միայն վասն այնր ժամանակի, յորում դու կրիցես զչարչարանս ․ իսկ եթէ ոչ իցես ցանկացեալ ազատեցման, այլ բոլորովին զքեզ յանձնեալ իցես իւրում Ածայնում բարութեան, թէպէտ ՚ի գործում չարչարիլն քո լեալ իցէ միոյ միայնոյ ժամու, և նաև նուազի, Տէրն վերաձանաչեալ իցէ զնա փոխանակ ծառայութեան երկարագունեղի ժամանակի ։

Վասն որոյ ՚ի յայսմիկ, և ՚ի յայլ համայնս իրս կալ փոխանակ ընդհամբերականի կանոնի զխափանս քոյս այսպէս հեռացուցանել յամէ յայլմէ առարկայէ, զի մաքրապէս, և պարզապէս հոգիւքն առ իւր ճշմարիտ, և միայնակ նպատակ, որ է կամքն ԱԾ, զի սյսու կերպիւ լիցին արդարեւ, և ուղիղք, և դու ՚ի յորում և իցէ ներհակական պատահման կացցես ոչ միայն հանդարտ, այլ ևս գոհունակ-

քան-

քանզի մինչ ոչ կարէ հանդիպիլ մեզ իր իմն Թարց վերնայնոյ կամին, կամելով դու զայն ենկեսցես առ 'ի կամիլ 'ի միասին , և ունիլ զայս տմ , որում ցանկաս , և հանդիպիլ յամում ժամանակի ։

Այս , որ ոչ իմանի 'ի մեղս այլոց՝ կամ 'ի քոյս , վասնզի Այ ոչ կամի զնոսա , ունի զտեղի 'ի յամի չարում պատժոյ , որ 'ի յայնց , կամ 'ի յայլուստ գայցէր առ մեզ, Թէպէտ այն իցէր այնքան բռնաբարոյ , և այնպէս Թափանցիցէր 'ի ներքս , զի շօշափելով զյատակն սրտի առնիցէր զարմատս բնականի կենի , զի նաև այս է խաչ , որով Այ կամի երբեմն կարի յոյժ բարերարել ներքնագունեղից , և սիրելեաց բարեկամաց իւրոց ։

Եւ զայս , զոր ես ասեմ զհամբերութէ , զոր պարտիս ունիլ 'ի յամենայնում գիպուածոջ, իմացիր զայն, որքան առ այն կողմն իւրաքանչիւրոյ վշտի , որ վերաբերեայ , և է ըստ հաճոյից Տն , զի տանիցեմք ․ յետ որոյ 'ի կնր արկեցեալք իցեն 'ի մէնջ օրինա-

ծաւորք միջոցք , վասն զմեզ ազատելոյն :

Եւ նաեւ այսորքին պարտին կանոնաւորիլ 'ի տրամադրութեան , եւ 'ի կամացն ԱՅ , որ զայնոսիկ կարգաւորեալ է , վախճանաւ , զի մեք վարեսցիմք նոքօք , վասնզի նա այսպէս կամի , եւ ոչ հաճմամբ 'ի մեզ ինքեանս , ոչ նաեւ քանզի սիրեմք , եւ ցանկամք ազատեցման յերաց թախանձականաց առաւել քան այնմիկ , արդարեւ , որ է զծառայութեան , եւ զհամահաճոյութեան նորա :

Յաղագս կերպի ընդդիմանալոյ սա-տանայի, մինչ խնդրէ սպա-ռել զմեզ 'ի ձեռն անխոհեմութեան։

## ԳԼՈՒԽ ԽԲ.

Յորժամ խորագէտ սատա-նայն տեսանէ, թէ կեն-դանեօք, և բարեպէս կար-գաւորեցելովք փափագա-նօք ուղղապէս շրջիմք 'ի ճանապար-հի առաքինութեանց, ուստի յայտնիւք խաբէութեամբք ոչ կարէ քարշել զմեզ կերպարանօք իւրովք, այլափոխի 'ի հրեշտակ լուսոյ, և բարեկամականօք խորհրդովք, և ասացուածովք գրոց, և օրինակօք սրբոց ատխպմամբ հանդերձ դրդէ զմեզ անխոհեմա-բար շրջել 'ի գագաթն կատարե-լութեան, առ այս, զի յետոյ զմեզ գահավիժիցէ։ Ուստի զօրացուցա-նէ զմեզ առ 'ի պատժել խստաբար զմարմինն խարազանօք, պահօք։

խորդովք, և այլովք նմանիւք նու-
աճեցմամբք, զի կամ հպարտանա-
ցեմք 'ի յերևիլ մեզ (որպէս մանա-
ւանդ ընդառաջ հանդիպի կանանց)
առնել զիրս մեծամեծս, կամ զի 'ի
գալն 'ի վերայ մեր ուրուք հիւան-
դութեան, լինիցիմք անընդունակք
բարեաց գործոց, կամ նաև վաղճա-
նաւ, զի 'ի ձեռն խստից աշխատու-
նաց, և չարչարանաց մեք զզուի-
ցիմք, և դարձիցիմք 'ի հոգևորակա-
նաց կրթութեց, և այսպէս սակա-
ւու սակաւ դառնացեալք 'ի բարւոյ
մեծագունիւ փափագաւ քան յառա-
ջ, տաղցցեմք, զմեզ 'ի յաւար հեշ-
տութեց, և զբօսանաց երկրայնոց,
որ իր բազմաց հանդիպեցեալ է, որք
հանդերձ համարձակութբ ող-
ւոյ հետևելով դրդման միոյ անխո-
հեմի բարւոյ նախանձաւորութեան,
անդրանցեալք անկարգաւորեցելովք
հանապազորդականօք արտաքնովք
չարչարանօք զչափն յատկականի զօ-
րութե, կորեան 'ի հնարս իւրեանց,
և եղեն ենթակայ կատականաց չա-
րաբարոյից դիւաց. որ ոչ իցէ

հան-

հանդիպեալ նոցա, եթէ բարեպէս
վերանկատեալք իցեն զիրս տա-
ցեալս, և թէ այսպիսիք վճռալից
ներգործութիք. թէպէտ իցեն դո-
վելիք, և առաքելիցեն զպտուղ, որ
իցեն մարմնաւորք զօրութիւնք, և
խոնարհութի ոգւոյ համապատա-
խանօղք· սակայն պիտոյացի բա-
րեխառնութի համակերպ ուղխու-
թն, և բնութեան իւրաքանչիւրոյ։
Եւ յայնմիկ, որ ոչ կարէ չարչա-
րել զինքն ՚ի յայսմիկ խստութն կե-
նի ընդ մ̅բս, ոչ պակասին այլք ա-
ղիթք, առ ՚ի հեռևիլ կենաց նոցա
մեծամեծիւք, և գործունէիւք փա-
փագանօք, և ջերմեռանդիւք աղօ-
թիւք, հառաչելով առ փառաւորա-
գոյնս պսակս ճշմարտից քաջամար-
տութեց վասն Յ̅ի Ք̅ի, արհա-
մարհելով զաշխարհս բոլոր, նաև
զիւրեանս ինքեանս· տալով զինքե-
անս լռակացութե, և միայնակեցու-
թե, լինելով խոնարհք, և հեզք ընդ
ամենեսեան, կրելով զչարիս, և առ-
նելով զբարի որուսմունք, որ իցե
մեզ առաւել ներհակ, և զգուշանա-

լով յանմից մեղաց, նաև թեթևաց, որ է իր առաւել հաճոյ ԱՅ. քան զվշտացուցիչս կրթութիւնս մարմնոյ, 'ի յորս ես տամ քեզ զխրատ, զի լիցես 'ի յայնոսիկ ևս առաւել խոհեմաբար խնայող, զի կարիցես աճեցուցանել զնոսա, յորժամ պիտոյանայցէ, քան ոմանք առաւելութեամբք գնել զքեզ 'ի վտանգի հասանելոյ եղեր 'ի բաց ձգելոյ զնոսա, քանզի արդէն ես համարիմ, թէ դու ոչ լիցես 'ի մին ներարկանելոյ զքեզ 'ի մոլորութիւն ոմանց, համարեցելոց հոգևորաց, որք հրապուրեցեալք, և պատրեցեալք 'ի խաբեբայէ բնութէ, կարի յոյժ հոգաբարձք են 'ի պահպանելն զմարմնաւոր առողջութիւն իւրեանց: Եւ ցուցանեն զինքեանս այնքան նախանձաւորս, և հոգաբարձս, զի վասն միոյ փոքրագունեղի իրի, միշտ լիցեն 'ի կասկածի, և 'ի յերկիւղի կորուսանելոյ զայն: Եւ ոչ է իր, զորմէ առաւել մտածիցեն, կամ զորմէ առաւել կամաւորապէս խօսիցին քան զկառավարութէ այսր մասին կենաց իւրեանց:

եանց ։ Ուստի յարաժամ պարապելով առ 'ի պատրաստել զկերակուրս հաճոյագոյնս ճաշակողութեան , քան ստամոքսի նոցա , որ բազմիցս վասն աւելորդի փափկութեան տկարանայ , որ մինչ առնի ընդ քօղով , զի կարիցեն բարեգոյն ծառայել ԱՅ , ոչ այլ ինչ է , քան կամիլ միաբանեցուցանել 'ի միասին թարց ուրուք օգտի , այլ եւս հանդերձ վնասիւք երկաքանչիւրոյն , զերկուս գլխաւորս թշնամիս , որք են հոգին , եւ մարմինն . վասնզի այսպիսեաւ հոգաբարձութբ վնասեն առողջութեան սորա , եւ 'ի յայնմանէ բառնան զջերմեռանդութի ։

Եւ վասն այսորիկ է ապահովագոյն , եւ օգտակարագոյն ամիւ վերահայեցմամբ մին բացորոշեցեալ կերպ կերլոյ ազատ , սակայն ոչ հեռանալով յայնմանէ խոհեմութենէ , զոր ասացեալ եմ , ունելով զվերահայեցումն առ զանազանս կացութիս , եւ կազմուածս , վասնզի ոչ համայնք ենթարկին միոյ . եւ նոյնոյ կանոնի ։

Եւ աւարտեմ , թէ ոչ միայն 'ի

յիրս արտաքինս, այլ նաև 'ի ստա-նալն զներքինս առաքինութիւնս, պարտիմք առաջանալ հանդերձ խելք եղանակաւորութբ՟, որպէս ցուցեալ է 'ի վեր 'ի ստացման առաքինութեց յաստիճանէ առ աստիճան ։

Թէ որքան կարիցէ 'ի մեզ վատթար
յօժարութի մեր, և դրդումն
սատանայի վասն ներածելոյ
զմեզ առ 'ի դատել յան-
դգնաբար զընկերն,
և յաղագս կեր-
պի ընդդիմա-
նալոյ նմ ։

## ԳԼՈՒԽ ԽԳ.

Ի Վերոյասացելոյ մոլութենէ յատկի համարեցման, և մե-ծահամբաւութե. մին այլ ինչ ծնանի, որ առբերէ մեզ զծանրագունեղ վնաս, և է յան-դուգն դատողութի, զոր առնեմք զընկերաց մերոց. ուստի համարիմք զնո-

նոսա անարգս , արհամարհեմք զնո_
սա , և ցածացուցանեմք զնոսա : Որ
պակասութիւն , որպէս ունի զծնունդ
իւր 'ի վատթարէ յօժարութենէ , և
'ի հպարտութենէ , այսպէս 'ի յայնմա_
նէ բուծանի , և սնանի կամաւորա_
պէս , վասնզի 'ի միասին ընդ նմա ;
նաև նա աճեցուցանի համահաճե_
լով . և անզգալաբար պատրելով ,
վասնզի թարց վերանկատման մերոյ,
այնքան առաւել համարձակաւորիմք
բարձրացուցանել զմեզ ինքեանս ,
որքան առաւել 'ի կարծիս մերս ցա_
ծացուցանեմք զայլս , համարելով
զմեզ գոլ հեռացեալս յայնցանէ ան_
կատարելութեց , զորս հաւատամք
լինել 'ի նոսա :

Եւ խորագէտ սատանայն, որ տե_
սանէ 'ի մեզ զայսպիսի վատթարա_
գունեղ տրամադրութի ոգւոյ , հա_
նապազ հսկէ առ 'ի բանալ զաչս մերս,
և պահել զմեզ զոնարթունս , առ 'ի
տեսանել , քննել , և մեծացուցանել
զպակասութիս այլոց . ոչ հաւատա_
ցեալ լինի , ոչ ճանաչէ 'ի յանփոյթ
տրալողաց , թէ որքան նա ջանայ_
ցէ ,

ցէ, և աշխատիցի առ 'ի ներբողել 'ի միտս մերս զփոքրկունս պակասութիւնս այսորիկ, և այնորիկ, ոչ կարելով զմեծս:

Սակայն եթէ նա հակէ առ վնաս քոյս, դու նաև կաց զգաստ, զի մի անկանիցիս 'ի ծուղակս նորա, և իսկոյն, թէ նա առաջադրէ քեզ զիմ տղալան ընկերի քո, վաղվաղակի յետս քաշեա՛ զմտածումս քո յայնմանէ, կամ եթէ դու ևս զգայցես զքեզ շարժիլ առ 'ի դատել, մի թողուլ զքեզ ներածիլ, և նկատեա՛, թէ քեզ ոչ իցէ տուեցեալ իշխանութիւն այս, որ նաև երբ իցէր, ոչ ևս կարիցէիր առնել զուղիղ դատաստան, փոխանելով զքեզ շրջապատեցեալ 'ի հազարից ախտից, և կարի յոյժ յօժարեցեալ առ 'ի մտածել զչարն առանց արդարոյ պատճառի:

Բայց առ գործունեայ դեղ սոթին յիշեցուցանեմ քեզ, զի զբաղցիս մտածմամբ 'ի պէտս սրտի քո, վասնզի յամենայնում ժամու առաւել զգացցես ունել զայնքանս առնելիս

և

և զայնքանս հոգալիս 'ի քեզ, և վասն քո, և ոչ մնասցէ քեզ ժամանակ, ոչ կամեցումն նայելոյ 'ի յաղագս այլոց։

Բաց 'ի յայսմանէ պարապելով այսպիսւոյ կրթութեան 'ի կերպի, որ յարմարի, միշտ առաւել մաքրեսցես զներքինս աչս քոյս 'ի յայնցանէ վատից հիւթոց, ուստի արտաբղխին այս դարշահոտ մոլութիւնս։

Եւ գիտասջիր, թէ երբ ձախորդաբար մտածես զիմն չար զընկերէ, իմն արմատ նոյնոյ չարի լիցի 'ի սրտի քում, որ ըստ որում գտանի վատաբար տրամադրեցեալ, այսպէս վերընդունի 'ի յինքեան զամենայն նման առարկայ, որ ընդ առաջ հանդիպի նմա։

Սակայն յորժամ անկանի 'ի միտս քո դատել զայլս վասն ուրուք պակասութեան, բարկացեալ ընդդէմ քոյոց ինքեան, որպէս թէ ունիցէիր զնոյն պակասութիւն, ասասցես 'ի յոգւոջ քում, զի՞արդ ես ողորմելիս թաղեցեալ 'ի յայսմիկ, և 'ի մեծագոյնս պակասութիւնս, համարձակեցայց բար-

ձրա

Ձրացուցանել զգլուխ առ 'ի տեսա֊
նելոյ, և գտանելոյ զպակասութիւնս
այլոց :

Եւ այսպէս զէնք., զոր ուղղես
ընդդէմ այլոց, վիրաւորիցէն զքեզ
'ի գործ ած զնոսա ընդդէմ քո, քան֊
զի առբերցեն զվիրկութիւն վիրաց
քոց :

Եւ եթէ գործեցաւ մոլորութին
իցէ յայտնի, և երևելի, արդար֊
ցո՝ զնա ըղձիւ բարեպաշտութե՛, և
հաւատամ, թէ 'ի յայնմիկ եղբօր իցեն
գաղեցեալք առաքինութիւնք, առ֊
պահպանութի նոցին Տ՜րն Թոյլ տայ֊
զի նա անկանիցի, կամ զժամանակ
ինչ ունիցի զայն պակասութիւն, զի
ունիցի զինքն անարգագոյն 'ի յաչս
իւրս, և նաև լեալ արհամարհե֊
ցեալ 'ի յայլոց, արտահանիցէ զպ֊
տուղ խոնարհութե՛, և լինիցի հա֊
ճոյագոյն ԱՅ, և այսպէս օգուտն
իւր լինիցի մեծագոյն քան զկորու֊
ստն :

Եւ եթէ մեղն իցէ ոչ միայն յայտ֊
նի, այլ նաև ծանր, և կամակորի
ւքալի, մտածեա՛ զզարհուրելիս դա֊

տաս֊

տնտեսանս ԱՅ, ուր տեսցես զմար-
դիկ, որք յառաջ եղեռնագործա-
գունեղք էին, հասեալ լինիլ 'ի
յաստիճան մեծի սրբութեան, զայս 'ի
վսեմագունէ կացութենէ կատարելու-
թեան, առ որ երեւէր թէ հասեալք
իցեն, անկեալս դոլ 'ի յողորմելի
դահավիժութիւն ։

Եւ վասն այսորիկ միշտ կաց 'ի յեր-
կիւղի, և 'ի սարսափման, առաւել
քան զումեքէ այլմէ, զանձնէ քումմէ ։

Եւ գիտասցիր ստուգապէս, թէ
այն ամենայն բարին, և գոհունա-
կութիւն, զոր զգաս զընկերէ քում-
մէ, է գործ հոգւոյն սրբոյ. և ա-
մենայն արհամարհութեան, և յանդուգն
դատողութեան, և դառնութեան ընդդէմ
նորա, առաջադայր 'ի յատկականէ
չարութենէ մերմէ, և 'ի սատանայա-
կանէ թելադրութենէ ։

Սակայն եթէ ոչ անկատարելու-
թիւն այլոց արարեալ իցէր 'ի քեզ
զներողութիւն, մի երբէք դադարի-
ցես, և մի տայցես զքուն աչաց քոց,
մինչև ըստ կարողութեան քում ոչ բառ-
նայցես զնա 'ի սրտէ քումմէ ։

Յա-

## Յաղագս աղօթից ։

## ԳԼՈՒԽ ԽԴ.

Եթէ անապականութիւնն ՚ի մեզ, ապականութիւնն ՚ի յԱծ, և կրթութիւնն, են այնքան հարկաւորք ՚ի յայսմիկ պատերազմի, որքան ցուցեալ է մինչև ցաստ. ՚ի վեր քան զամենայն է հարկաւոր աղօթքն (որ է չորրորդ իրն, և զէնն առաջադրեցալն ՚ի վեր) որով ոչ միայն ասացեալս իրս, այլ և զհամայնս այլ բարիս կարեմք ընդունել ՚ի Տնէ Այ մերմէ ։

Վասնզի աղօթն է գործի վասն ընդունելոյ զհամայնս շնորհս, որք յայնմանէ Ածայնոյ աղբերէ բարութեն, և սիրոյ անձրևեն ՚ի վերայ մեր ։

Աղօթիւք (եթէ բարեպէս վարիցիս նոքօք) դիցես զսուսերն ՚ի ձեռին Այ, զի պատերազմիցի, և յաղթիցէ վասն քո ։

Եւ

Եւ զի բարեպէս վարիցիս նոքօք, պիտոյ է, զի դու ունիցիս զուսմակութիւն, կամ թէ դու ջանայցես, զի իցես 'ի հետեւօղս իւրս։

Նախ, թէ 'ի քեզ միշտ կեայցէ-ւն ճշմարիտ փափագ ծառայելոյ 'ի յամենայնում իւրում Ածայնոյ մեծվայելչութեան, և կերպիւ, որ նմա իցէ հաճոյագոյն։

Եւ 'ի բորբոքելոյ 'ի քեզ զփափագս զայս բարեպէս նկատեա՛։

Թէ Ած վասն իւրոց վերազարմանալեաց գերազանցութեանց, բարութեան, մեծվայելչութեան, իմաստութեան, գեղեցկութեան, և այլոց իւրոց անհնոց կատարելութեանց, է վերարժանաւորագունեղ, զի ծառայիցեմք նմա, և պատուիցեմք զնա։

Եւ թէ նա առ 'ի սանձելոյ քեզ զբազումս բարիս, կրեաց զչարչարանս, և աշխատեցաւ զերեսուն և զերիս ամս. և զքոյս դարշահոտս վէրս թիւնաւորեցեալս 'ի դժնդակութէ մեղաց, ապաքինեաց, և բժշկեաց ոչ ձիթով, գինեաւ, և խանձարրօք, այլ պատուականաւ

հիւթով, որ հոսեցաւ 'ի յիւրոց որ-բաղնագունեղից երակաց, և իւրով մաքրագունեղին մարմնով պատառեցելով խարազանիւք, փշովք, և բեւեռօք:

Եւ բաց 'ի յայսմանէ մտածեա', թէ որքան օգտակար լիցէ բարերարութիւն այս, վասնզի լինիմք Տեառ մեր ինքեանց, գերագոյնք սատանայի, և որդիք ԱՅ:

Երկրորդ, պարտի գոլ 'ի քեզ մի կենդանի հաւատ, և յուսադրութիւն թէ Տէրն կամի տալ քեզ զայն ամենայն, որ քեզ պիտոյանայ առ 'ի ծառայել նմա, և առ բարին քո:

Այս մք յուսադրութիւն է անօթ, զոր Ածային ողորմածութիւն վերանու գանձիւք շնորհաց իւրոց, որ որքան մեծագոյն, և ընդունակագոյն լիցէ, այնքան հարստագոյն դարձցի աղօթն 'ի ծոց մեր:

Եւ զի՞արդ կարասցէ պակասիլ անփոփոխելի ամենակարող Տէրն առնել զմեզ մասնակիցս պարգևաց իւրոց, մինչ նոյն ինքն հրամայեալ է մեզ, զի խնդրիցեմք զնոսա, և մինչ

խոս-

խոստանայ մեզ նաև զօգնին իւր, թէ հաւատով, և յարատևութբ աղերսանօք զնա վերախնդրիցեմք:

Երրորդ, թէ դու մատիցիս առ աղօթս դիտաւորութբ կատարելոյ զԱծային կամս միայն, և ոչ զքոյն, այսպէս 'ի խնդրելն, որպէս 'ի յընդունիլն զայն, զոր խնդրես, այսինքն, թէ դու շարժիցիս կալ յաղօթս, քանզի Այ կամի զնոսա, և թէ փափագիցիս, զի աղօթն քո լսելի լինիցի ըստ որում նաև նա այսպէս կամի: Վերջապէս դիտաւորութի քո պարտի լինիլ առ 'ի միաւորել զկամս քո ընդ Ածայնում կամին, և ոչ առ 'ի քարշել զկամս ԱՅ առ կամս քո:

Եւ այս, քանզի կամքն քո գոլով շաղախեցեալ, և ապականեցեալ 'ի յինքնասիրութէ, բազմիցս մոլորի, ոչ գիտէ զայն, զոր խնդրէ, բայց Ածայինն միշտ միաւորեցեալ է ընդ բարութե անճառելւոյ, և ոչ երբեք կարէ մոլորիլ: Ուստի նա է կանոն, և թագուհի ամից այլոց կամաց, և արժանաւորի, և կամի, զի ամենե-

քեան հետեւեցին , եւ հնազանդեցին նմա :

Եւ վասն այսորիկ միշտ պարտիս խնդրել իրք համակերպաք Ածայնոյ հաճոյութեն , եւ երկրպագելով, թէ իմն իր ոչ իցէ այնպիսի , խնդրեսցես զնա թէութէ համբերաւ կամելոյ զնա , եթէ Տէրն կամի , զի դու ունիցիս զայն :

Եւ զայնս , զորս առուգագէս գիտես , թէ հաճոյական նմա , որպէս են առաքինութիւնքն , խնդրեսցես զնոսա առաւել վասն կատարելոյ զկամս նորա , եւ ծառայելոյ նմա , քան վասն այլոյ որոյ ուրուք վարձանի , կամ վերահայեցման , թէպէտ հոգեւորի :

Չորրորդ , թէ դու մարթիցես առաղօթս զարդարեցեալ գործովք համապատասխանողօք խնդրուածոց, եւ թէ յետ աղօթից առաւել եւս ջանայցես առնել զքեզ ընդունակ շնորհի , եւ առաքինութե , որոց փափագիս :

Վասնզի կրթութիւն աղօթելոյ պարտի գոլ այնպիսաբար ընկերակ-

ցե-

ցուցեալ կրթութեան յաղթելոյ զմեզ ինքեանս, զի մինն 'ի շրջանակսն հետևիցի միւսոյ, քանզի այլապէս խնդրել զիմն առաքինութին, և ոչ ջանալ ստանալ զնա, ևս առաւել իցէր փորձել զԱյ̃, քան թէ այլ իր ։

Հինգերորդ, զի զխնդրուածս հասարակաբար կանխիցեն շնորհակալութիւք վասն բարերարութեանց ընդունեցելոց, այսու կամ նմանաւ կերպիւ. Տէր իմ, որ վասն բարութե քո ստեղծեր, և փրկեցեր զիս, և այնքան անհամարիցս, թէ ես ոչ գիտեմ, ազատեցեր 'ի ձեռաց թշնամեաց իմոց, օգնեա ինձ այժմ, և մի բացատեր զայն, զոր խնդրեմ 'ի քէն, թէպէտ ես միշտ տաղտամք եալ իցեմ 'ի քէն, և ապերախտ ։

Եւ եթէ խնդրելոց իցես զիմն մասնաւոր առաքինութի, և ունիցիս 'ի ձեռս զիմն ներհակ իր վասն վարժելոյ զքեզ 'ի յայնմիկ, մի մոռանար մատուցանել զշնորհակալութիս զաւթէ, զոր ես քեզ զի նաև այս ոչ է փոքրիկ բարերարութիւն նորին ։

Վեցերորդ, զի աղօթն ունիցի զիւր զօրութիւն, և կարողութիւն խոնարհեցուցանելոյ զԱծ առ փափագամերս 'ի բնականէ բարութէ, և ողորմածութենէ նորին, 'ի յորդեանց կենաց, և չարչարանաց միածնի որդւոյն իւրոյ, և 'ի խոստացմանէ, զոր նա արար մեզ, ունկնդիր լինել մեզ, աւարտեսցես զխնդրուածս քոյս միով, կամ բազմօք հետեւողօք մասնկօք. շնորհեա ինձ Տր զշնորհս զայս, վասն ամենամեծի գթութեան քո. զօրեղ լիցին առ քեզ արդիւնք որդւոյ քո ընդունիլ ինձ զայն, զոր ես խնդրեմ 'ի քէն: Յիշեա Ած իմ զխոստմունս քոյս, և խոնարհեցո՛ զքեզ առ աղաչանս իմս:

Եւ յայլում ժամանակի խնդրեսցես զշնորհս նաև վասն արդեանց Մարիամայ Կուսին, և այլոց Սբոց, որք յոյժ կարեն առ Ած, և յոյժ պատուելին 'ի նմանէ, քանզի 'ի յայամիկ կենի պատուեցին զիւր Ածային մեծվայելչութիւն:

Եօթներորդ, պիտոյէ զի դու անձկադար յարատեւիցես 'ի յաղօթս,

քան-

քանզի խոնարհ յարատեւութեան յաղթէ զանյաղթելին, զի եթէ յաճախութի, և աշխատաւորութի Աւետարանականի այրւոյն խոնարհեցոյց առ յորդորմամբ իւրս զդատաւորն զլցեալն ամենայն չարաբարոյութեամբ. Ղուկաս 18. զիարդ ոչ զօրասցի՝ ձգել առ աղաչանս մեր զինքն լրութին ամենից բարեաց։

Ուստի թէպէտ յետ աղօթից Տէր յապաղիցէ գալ, և ունկնդիր լինիլ քեզ, այլ և ցուցանիցէր քեզ զնշանս ներհակս, այսու ամենայն հետևեաց աղօթելով, և պահելով հաստատ, և կենդանի զյուսադրութիւնն օգնականութեան իւրոյ, քանզի ՚ի նմա ոչ երբեք պակասին, այլ նա վերստուստանան անհնով չափով այնք ամենայն իրք, որք վասն առնելոյ այլում զշնորհս հարկաւորք են։

Ուստի եթէ պակասութիւն ոչ է ՚ի կողմանէ քումմէ, կաց տոկունին ապահով, թէ ընդունելոց իցես միշտ զայն ամենայն, զոր խնդրեսցես. կամ զայլ ինչ, որ քեզ իցէ առաւել օգ-

զգաստակաց, կամ նաեւ զայն, եւ զայս ՚ի միասին։

Եւ որքան առաւել երեւիցիւր քեզ գոլ բացաձգեցեալ, այնքան առաւել ոչընչացո՛ զքեզ ՚ի յաչս քոյ, եւ նկատելով զանարժանաւորութիւնս քոյ, հաստատնով միամտամբ Ածայնոյ բարեգթութեան, աճեցո՛ միշտ ՚ի նա զյուսադրութիւն քո, որ մնալով կենդանի, եւ հաստատ, որքան առաւել պատերազմեցեալ լինիցի, այնքան առաւել հաճոյասցի Տն մերում։

Յետոյ հանապազ մատո՛ նմա զշնորհակալութիւնս, վերաձայնաչելով զնա բարի, խնամածու, եւ լի սիրով այնպէս երբ ամենք իրք ոչ շնորհէին քեզ, որպէս թէ շնորհիցեին քեզ, վերաբերելով ՚ի յորդորմունս հանդիպման անշարժ, եւ ուրախ ՚ի խոնարհի ենթարկեցման իւրոյ Ածայնոյ Նախախնամութեան։

Թէ զինչ իցէ մտածական
աղօթն ։

# Գ․ ԼՈՒԽ ԽԵ․

Մտածական աղօթն է մին վե֊
րացումն մտաց առ Ած
հանդերձ ներգործակա֊
նաւ, կամ զօրութենակա֊
նաւ հայցմամբ այնորիկ, որ փափա֊
գելեալ լինի ։

Ներգործականն լինի, յորժամ բա֊
նիւք մտաւորօք խնդրի շնորհն այ֊
առ, կամ նմանաւ կերպիւ ։

Տէր Ած իմ շնորհեա ինձ զշնոր֊
հս զայս առ պատուի քո, կամ այս֊
պէս ։

Տէր իմ ես հաւատամ, թէ քեզ
հաճոյանայցէ, և թէ իցէ փառք քո,
զի խնդրիցեմ 'ի քէն, և ունիցիմ
զշնորհս զայս, կատարեա ուրեմն
այժմ 'ի յիս զքո Ածային համահա֊
ճութին ։

Եւ երբ արգորէ պատերազմա֊

ցեալ ես 'ի թշնամեաց , աղօթեսցես այսու կերպիւ . փութա՛ օգնել ինձ Ա՜ծ իմ, զի մի տայցեմ՝ զտեղի թշնամեաց : Կամ թէ , Ա՜ծ իմ , ապաւէն իմ, զօրութի՜ հոգւոյ իմոյ , օգնեա՛ ինձ վաղվաղակի , զի մի անկանիցիմ :

Եւ 'ի յարատեւելն պատերազմին , յարատեւեա՛ նաեւ դու 'ի յայսմիկ կերպի աղօթելոյ , մինչ արիաբար ընդդիմանալով այնմիկ , որ ընդդէմ քո պատերազմի :

Յետոյ 'ի յաւարտիլ խստութեան պատերազմին դարձիր առ Տէր քո , եւ դիր առաջի նորա զթշնամին , որ պատերազմեցաւ ընդ քեզ , նաեւ զտկարութի քո առ 'ի յընդդիմանալ նմա , ասելով :

Ահա՛ , ո՛վ Տէր ստեղծուածն 'ի ձեռին բարութե քո , վերագնեցեալն Արեամբ քով : Ահա՛ թշնամին քո , որ ջանայ բառնալ զնա 'ի քէն , եւ կլանել զնա : Առ քեզ վերընթանամ Տէր իմ, 'ի քեզ միայնում յուսամ , որ ես ամենակարող , եւ բարի ; եւ տեսանես զտկարութի իմ,

Զօ-

զյօժարութիւն առ ՚ի յենթարկել զիս նմա կամաւորապէս թարց քոյոյ օգնութեան ։ Օգնեա՛ ինձ ուրեմն յոյս իմ, և զօրութիւն հոգւոյ իմոյ ։

Զօրութենական խնդիրն իմոնի, յորժամ բարձրացուցանի միտն առ Ած առ ՚ի յընդունելոյ զիմն շնորհ, ցուցանելով նմա զպիտոյս թարց ասելոյ, կամ տրամաբանելոյ զայլ իր ։

Որպէս երբ ես վերացուցանեմ զմիտս առ Ած, և ասեմ առաջի նորա ճանաչեմ զիս անզօր առ՚ի պահպանել զիս ՚ի չարեն, և առնել զբարի․ և վառեցեալ ըղձիւ ծառայելոյ նմա խոնարհաբար, և հաւատով ապաստելով օգնութեան նորա, նայիմ, և վերահայիմ առ ինքն Տէրն ։

Այս այսպէս արարեցեալ ճանաչումն, բորբոքեցեալ փափագն, կամ հաւատն առաջի ԱՅ, է մին աղօթք, որ զօրութեամբ խնդրէ զայն, որ ինձ պիտոյանայ, և որքան առաւել պայծառ, և մաքուր լինիցի ասացեալ ճանաչումն, և ասացեալ բորբոքեցեալ փափագն, և կենդանի հաւատն,

այնքան առաւել գործադրագոյն խնդրեսցէ ։

Նաև գոյ այլ ցեղ աղօթք զօրութենական ներգործագոյն, որ եղանի միով պարզիւ հայեցմամբ մտաց առ Այն, վաղճանու, զի օգնիցէ մեզ, որ հայեցումն ոչ այլ ինչ է, քան մին քուական յիշումն, և հայցումն այնորիկ շնորհի, զոր յառաջագոյն խնդրեալք էաք ։

Եւ արդ, զի բարեպէս ըմբռնիցես զայս ցեղ աղօթ, և արա՛ զնա ընտանեկից քեզ, քանզի ( որպէս փորձառութիւն ցուցցէ քեզ ) է մին զէն, զոր դիւրապէս ՚ի յամենայն առթի, և առեղուջ կարես ունիլ ՚ի ձեռս, և է հզօրագոյն, և օգտակարագոյն, քան ես գիտիցեմ ասել ։

Յաղագս աղօթից ըստ կերպի խոկման ։

# ԳԼՈՒԽ ԽԶ։

Ամելով աղօթել ըժամանակ ինչ, որպէս զկէս ժամ, կամ նաեւ զմին ամբողջ ժամ, առանձնացեալս աղօթից զխոկմունս կենաց, եւ չարչարանաց Յ̃ի Ք̃ի միշտ մերձեցուցանելով զարարողութիս նորա, այնմիկ առաքինութե̄ն որում փափագիս ։

Զորօրինակ, եթէ փափագիցիս վերընդունիլ զշնորհն առաքինութե̄ն համբերութե̄ն, ըստ հանդիպման առնուցուս առ ՚ի խոկալ զոմանս մասունս խորհրդոյ ձաղեցման ։

Նախ ։ Զի՛արդ յետ հրամանի տուեցելոյ ՚ի Պիղատոսէ, Տէրն աղաղակօք, եւ կատակմանօք քարշեցաւ ՚ի սպասաւորաց չարաբարոյութեան առ տանջմանեցեալ տեղին, զի ձաղեցիւր ։

Երկրորդ ։ Զի՛արդ ՚ի նոցանէ ա-ճապարականաւ կատաղեցմամբ մեր-կացուցաւ, և ամենայնք անդամք մա-քրագունեղի մարմնոյ նորա բացան ։

Երրորդ ։ Զի՛արդ անմեղք ձեռ-ինք նորա պրկեցեալք խստիւ պա-րանաւ կապեցան առ սիւնն ։

Չորրորդ ։ Զի՛արդ բոլոր մարմին նորա պատառեցաւ, և ծոծատեցաւ ՚ի խարազանաց․ ուստի հոսեցին մինչև ՚ի յերկիր վտակք Ածայնոյ արեան նորա ։

Հինգերորդ ։ Զի՛արդ ՚ի յառակ-ցին հարուածք առ հարուածս ՚ի նոյնում տեղւոջ, մինչ առաւել դառ-նացուցան վէրք արդէն արարեցե-ալք ։

Այսպէս, առաջադրեալ դու զայսոսիկ, կամ զնմանս մատուցս առ ՚ի խոկալ ընդոսա վասն ստանալոյ զհամբերութի, նախ որքան կարե-ցես մերձեցուսցես զզգայութիս առ ՚ի զգալ կենդանագոյն զդառնագու-նեղս ցաւս, և զվշտալից չարչարանս, զորս ՚ի յիւրաքանչիւրում մասին օր-քագնագունեղի մարմնոյ իւրոյ, և ՚ի

մտա-

միասին 'ի համայնս, սիրելագունեղ Տէրն քո կրէր:

Այսու անցցես առ սրբազնագոյնեղ հոգին նորա, որքան կարելի է խորագէս մտածելով զհամբերութիւն, և զհեզութիւն, որով կրէր զայնքան վիշտս, սակայն 'ի յոչ երբեք յաղիլն քաղցութեն նորա կրել վասն պատուոյ հօր, և օգտի մերոյ զմեծագոյնս, և զդառինս չարչարանս:

Յետոյ հայեաց 'ի նա 'ի վառեցեալն սատակաւ փափագանս, զի դու հաճ'իցիս կամիլ տանիլ զնեղութիւն քո, և տես թէ զի արդ'նաև դարձուցեալ առ հայրն աղաչէ վասն քո, զի արժանաւորիցի տալ քեզ զշնորհն համբերութեն տանելոյ զխաչն, որ յայնժամ դքեզ չարչարէ, և զո՛ և իցէ այլն:

Ուստի դու բազմիցս հակելով զկամս առ 'ի կամիլ տանիլ զբոլորն համբերողաւ ոգեաւ, դարձո յետոյ զմիտն առ Հայր, և նախ մատուցանելով նմա զշնորհակալութիւնս, զի վասն միայնոյ սիրոյ իւրոյ առաքեաց յաշխարհ զորդին իւր միածին առ 'ի տա-

տանել զայնքան խիստ չարչարանս, և առ 'ի յաղաչել վասն քո , խնդրեմ յետոյ 'ի նմանէ զառաքինութի̃ համբերութեան զօրութե̃ գործոց , և աղաչանաց ոգւոյ իմոյ :

Յաղագս միոյ այլոյ կերպի աղօթելոյ ըստ կերպի խոկման :

# ԳԼՈՒԽ ԽԷ.

ՆԱև կարասցես միով այլով կերպիւ աղօթել , և խոկալ , վասնզի յետ որոյ մտադրաբար մտածեալ իցես զվշտակրութիս Տն̃ , և մտօք տեսեալ իցես զյօժարութի̃ ոգւոյ , որով տանիւր զնոսա . 'ի մեծութե̃ վշտաց նորին , և 'ի համբերութենէ նորին անցցես առ այլս երկուս խոկմունս :

Մինն արգեան նորա :

Միւսն համահաճութե̃ , և փութաց հօրն յաւիտենականի , վասն

կա-

կատարեալ հնազանդութեն որդւոյ
իւրոյ չարչարեցելոյ ։
Զորս երկոսս իրս ներկայացուցա-
նելով իւրում Ածայնում մեծ վայել-
չութեն, խնդրեսցես զօրութիւն նո-
ցին զշնորհ, որում փափագիս ։
Եւ զայս կարասցես առնել ոչ մի-
այն ՚ի յիւրաքանչիւրում խորհրդոջ
չարչարանաց Տն, այլ և ս ՚ի յամում
ժամանաւորում ներքնայնում, և ար-
տաքնայնում ներգործութեն, զոր նա
առնէր ՚ի յիւրաքանչիւրում խորհր-
դոջ ։

Յաղագս միոյ կերպի աղօթելոյ մի-
ջոցաւ Մարիամայ Կուսին ։

## ԳԼՈՒԽ ԽԲ.

Բաց ՚ի վերոյ ասացելոց գոյ
և մին այլ կերպ խոկալոյ,
և աղօթելոյ միջոցաւ Մա-
րիամայ Կուսին, նախ
դարձուցանելով զմիտս առ Ածն
յաւիտենական, յետոյ առ քաղցր
Յսն,

Յս՟ն, և վերջապէս առ ինքն փառաւորապատուեալ մայրն :

Դարձիր առ ԱԾ, նկատեա զերկուս իրս :

Մինն են բերկրութիւնք, զորս նա 'ի յաւիտենից զեւրենէ ինքենէ նկատեցելոյ ունէր 'ի Մարիամ, նախ քան թէ նա ունիցէր զգոյն արտաքոյ ոչընչի :

Միւսն են առաքինութիւնք, և արարողութիւնք նորա, յետ որոյ արտաքրեցաւ 'ի յաշխարհի :

Զբերկրութիւնս այսպէս խոկասցես: Բարձրացո՛ զքեզ մինչ 'ի բարձունս 'ի վեր քան զամենայն ժամանակ, և 'ի վեր քան զամենայն ստեղծուած, և մտեալ 'ի յինքն յաւիտենականութիւն, և 'ի միտն ԱՅ, խոկա զբերկրութիւնս, զորս զեւրենէ ինքենէ ունէր 'ի Մարիամ կոյսն, և 'ի մէջ այսոցիկ բերկրութեանց գտեալ զինքն ԱԾ, զօրութբ նոցին խնդրեա ապաւինապէս զշնորհ, և զզօրութիւն վասն կործանման թշնամեաց քոց, և մանաւանդ այնոքիկ, որ յայնժամ պատերազմի ընդ քեզ :

Ան-

Անցանելով յետոյ առ նկատումն այնքանաց, և այնպէս եղականաց առաքինութեանց, և արարողութեանց 'ի յինքեան արբաղնագունեղի մօրն, և ներկայացուցանելով զնոսա մերթ զամենեսեան 'ի միասին, մերթ զումն նոցին ԱՅ, զօրութե նոցին խնդրեամ 'ի յանհնոյ բարութենէ նորին զհամայնս պիտոյս քոյս ։

Յետոյ վերաբարձուցանելով զմիտն առ որդին, վերայիշեցուցես նմա զկուսական արգանդն. որ զինն ամիս տարաւ զնա. զպատիւն. որով յետ ծննդեան նորա կոյսն երկրպագեաց նմա, և վերաճանաչեաց զնա որպէս զճշմարիտ մարդ, և զճշմարիտ ԱԾ, զորդի, և զստեղծօղ իւր։ Զայս բարեգութեա, որք հայեցան 'ի այնքան չքաւորն, զբազումս, որք ընկալան զնա. զխրախանս համբոյրս, որովք նա համբուրեաց զնա. զկաթն, որով սնոյց զնա. և զաշխատանս, և զնեղութիւս, զորս 'ի կենի, և 'ի մահուան կրեաց վասն նորա։ Արդ էրաց զօրութե արասցես ԱԾ որդւոյն զքաղցր բանութե, զի լուիցէ քեզ ։

Վեր-

Վերջապէս վերադարձիր առ ամենասուրբ կոյսն, յիշեցո՛ նմա թէ 'ի յաւիտենականէ նախախնամութենէ, և 'ի բարութենէ ընտրեցեալ է 'ի մայր շնորհի, և բարեգթութեն, և բարեխօսութեան մեր : Ուստի զկնի օրհնեցելոյ որդւոյ նորին ոչ ունիմք զապահովագոյն, և զկարողագոյն վերընթացուածս, քան առ նա :

Եւ ևս յիշեցո՛ նմա զճշմարտութիւն զայն, որ զնմանէ գրի, և է վասն այնքանեաց, և այնքանեաց գործոց հրաշալեաց, թէ ոչոք երբեք հաւատով զնա կարդաց, թէ նա ոչ իցէ նմա բարեգթածաբար պատասխանեալ :

Վերջապէս դիցես առաջի նորա զվիշտս միածնի որդւոյ իւրոյ, զորս կրեաց վասն փրկութեան մերոյ. աղաչելով առ նա, զի հայցիցէ քեզ 'ի նմանէ զշնորհ, զի վասն փառաց և հաճոյութեան նորին ունիցիս 'ի քեզ զգործն զայն, վասն որոյ նա կրեաց զայնոսիկ :

Յաղագս ամանց վերանկատեցմանց ՚ի
զի հաւատով, և յուսադրութե՟
լինիցի վերընծայացումն առ
Մարիամ Կոյսն ։

# ԳԼՈՒԽ ԽԹ․

Ամենայն վերընծայեալ առ Մարիամ կոյսն հաւատով, և յուսադրութե՟ ՚ի յանձնում կարօտութեն քում կարասցես ստանալ զնա ՚ի հետևողաց խոկմանց ։

Նախ ։ Արդեն դիտեմք ՚ի ձեռն փորձառութեն, թէ համայնք այնոքիկ անօթք յորս եղեալ է մուշք կամ իմն մեծագին հեղուկ, վերապահեն ընդ ինքեանս զիւր հոտ, թէպէտ այլ ևս ոչ իցէ անդ, և այնքան առաւել, որքան երկար ժամանակ լեալ իցէր անդ, և կարի առաւել, եթէ նաև կերպիւ ինչ անդ վերամնացեալ իցէր, և սակայն մուշքն է զօրութեն չափաւորեցելոյ, և հանա֊

նաւորեցելոյ, և այսպէս ամենայն մեծագին հեղուկ։ Որպէս նաև նա, որ կայ մերձ միում մեծի հրոյ, վերապահէ զբազում ժամանակ զջերմութիւնն, թէպէտ հեռանայցէ 'ի հրոյ։

Մինչ այս է ճշմարիտ, որո՛վ հրով սիրոյ, որովք զգացմամբք ողորմածութեան, և բարեգթութեան, ասասցուք մեք, թէ աղիքն Մարիամայ կուսին այրեցին, և լցեն լէք, որ զինն ամիս տարաւ զնա 'ի կուսական արգանդի իւրում, և մինչ ունի 'ի սրտի, և 'ի սիրում զորդին Ա.Յ, որ է նոյն ինքն սէր, ողորմածութիւն և բարեգթութիւն, ոչ արդ զօրութեան հունաւորեցելոյ, և չափաւորեցելոյ, այլ անհնոյ, և թարց ուրուք եզեր։ Վասնզի որպէս նա, որ մերձենայ միում մեծի հրոյ, ոչ կարէ ոչ վերընդունիլ զջերմութիւն նորա. այսպէս, և կարի առաւել ամենայն կարօտաւոր, որ խոնարհութբ, և հաւատով մերձենայցէ հրոյ սիրոյ, ողորմածութեան, և բարեգթութեան, որ մինչ վառի 'ի սրտի Մարիամայ

կու-

կուսին, վերընկալցի 'ի նմանէ զօգնութիւն, զօժանդակութիւն, և զշնորհս, և այնքան առաւել, որքան առէպագոյն, և մեծագունիւ հաւատով, և յուսադրութբ մերձենայցեմ նմա։

Երկրորդ։ Ոչոք ստեղծուած երբեք այնքան սիրեաց զՅն Քն, և ոչ այնքան համակերպ եղև կամին նորին, որքան ամենասրբուհի մայր նորա։

Եթէ ուրեմն նոյն որդին Այ․ որ զիւր բոլոր կեան, և զիւր ինքն բոլոր ծախեաց վասն կարօտութեց մերոց մեղաւորաց, ետ մեզ զմայր իւր 'ի մայր մեր, և բարեխօսուհի, վաղձանաւ զի օգնիցէ մեզ, և զկնէ նորա իցէ միջնորդ փրկութն մերոյ, որո՞վ կերպիւ կարասցէ երբէք ինքն մայրն, և բարեխօսուհին մեր, պակասել մեզ, և եղանիլ ապստամբ 'ի կամաց որդւոյն։

Արդ ուրեմն ով դուստր, վերավաղեա յուսադրութբ հանդերձ 'ի յամենում կարօտութե քում առ ամենասրբուհի մայր Մարիամ Կոյսն, վասն-

վասնզի փարթամ, և երանեցեալ է յուսադրութիւն այս, և ապահով է ապաստանն նորա, վասնզի միշտ ծնանի զշնորհս, և զողորմածութիւն:

Յաղագս միոյ կերպին խոկալոյ, և աղօթելոյ միջոցաւ հրեշտակաց, և ամենից երանեցելոց:

## ԳԼՈՒԽ Ծ.

ՍՈՎարիլ 'ի յայսմիկ օգնութեամբ, և օժանդակութեամբ հրեշտակաց, և սրբոց երկնից կարասցես պահել զերկուս եղանակս:

Մինն է, զի դու զքեզ դարձուցանիցես առ հայրն յաւիտենական, և ներկայացուցանիցես նմա զսէրն, և զգովասանս, որովք բարձրացուցեալ է յամենից երկնայնոց զօրաց, և զաշխատանս, և զչարչարանս, զորս նքա կրեցին 'ի յերկրի վասն սիրոյ նորա, և զօրութեամբ այսոցիկ իրաց, խն-

խնդրեա՛ դու 'ի յԱ՟ծայնոյ մեծվայելչութէ՟ նորա զայս ամենայն, որ քեզ պիտոյանայ ։

Միւսն է, թէ վերընթանայցես առ ինքեանս փառաւորեցելոց ոգիս, որպէս առ այնոսիկ, որք արդարև փափագին կատարելութե՟ մերում, այլ թէ զետեղիցիմք 'ի տեղւոջ բարձրագունի քան զինքեանս, խնդրելով զօգնութի նոցա ընդդէմ ամ՟ից մոլութեց, և թշնամեաց քոց, և նաև վասն պաշտպանման քո 'ի կետն մահուան ։

Եւ երբեմն դիցես զքեզ առ 'ի մատծել զբազումս շնորհս, և զեդականութիւս, զորս ընկալեալք են 'ի ծայրագունեղէ ստեղծողէ, զարթուցանելով 'ի քեզ դէպ 'ի նոսա զմին սաստիկ իղձ սիրոյ, և ուրախութե՟ վասնզի են փառթամք այնքանիւք պարգևօք, որպէս թէ իցէին յատուկք բարիք քոյք ։

Այլ և ուրախասցիս, եթէ իցէ կարելի, առաւել թէ նոքա ունիցին զնոսա, և ոչ դու, վասնզի այնպիսի եղև կամն Ա՟Յ, որ լինել դովի-

Զ ցի ,

ցի, և որում ես զգոհութիւն մատու-ցանիցեմ:

Եւ առ 'ի առնել զկրթութիւս զայս կարգաւ, և դիւրութբ̃ ։ կարասցես բաժանել զբանակս երանեցելոց ըստ աւուրց շաբաթու այսու եղանակաւ:

'Ի յաւուր կիւրակէի առցես զինն դասս հրեշտակաց ։

Յերկու շաբաթի զս̃բն Յօհաննէս մկրտիչն ։

Յերեք շաբաթի զնահապետս, և զմարգարէս ։

'Ի չորեքշաբաթի զԱռաքեալս ։

'Ի հինգշաբաթի զմարտիրոսս ։

'Ի յուրբաթի զհայրապետս ընդ այլոց սրբոց ։

'Ի շաբաթու զկուսանս ընդ այլոց սրբուհեաց ։

Բայց ոչ երբէք թողցես 'ի յիւրաքանչիւրում աւուր վերընթանալ առ Մարիամ Կոյսն, թագուհին ա̃մից սրբոց . առ պահապան հրեշտակն քո, առ սուրբ միքայէլ հրեշտակապետն, և առ ա̃մն ս̃բս բարեխօսս քոյս ։

Եւ 'ի յա̃մնում աւուր աղաչեա զմա-

րիամ

բիամ կայսն, զորդին նորա, զհայրն երկնաւոր, զի պարգևիցեն քեզ այնքան շնորհ տալ քեզ 'ի նախապետական բարեխօս, և պաշտպանիչ զՏէր Յօսէփ փեսայն իւրեան կուսին, յետոյ վերընթանալով առ ինքն մեն աղաչանօք, և յուսադրութք, զի վերընդունիցի զքեզ 'ի ներքոյ պաշտպանութե իւրոյ։

Պատմին բազումք իրք զայսմանէ փառաւորէ սրբոյ, և բազումք օժանդակութիք, զորս 'ի նմանէ ընկալեալ են այնոքիկ ամենեքին, որք պատուեցին զնա, և վերընթացան առ նա, ոչ միայն 'ի կարօտութիւնս հոգևորս, այլ նաև 'ի ժամանակաորս, և մանաւանդ 'ի յուղղելն զջերմեռանդս 'ի կերպի բարեպաշտ խոկալոյ, և աղօթելոյ։

Եւ եթէ Ած ունի զայնքան համարումն զայլոց սրբոց, վասնզի կելով 'ի մէջ մեր, հնազանդեցան նմա, և պատուեցին զնա, որքան հաւատալ պարտիմք, թէ 'ի նմանէ համարեցեալ իցէ, և առ նա ունիցին զզօրութի աղաչանք այսորիկ խոնար-

հաղթութեանցն , և երջանկագունեացն սր֊բոյ , որ ՚ի յինքենէ ԱՅ ՚ի յերկրի այնպիսաբար պատուեցաւ , զի կա֊մեցաւ ինքն ընթարկել նմա , և որ֊պէս հօր հնազանդիլ , և ծառայել նմա :

Յաղագս խոկման չարչարանաց քրի֊ստ ՚ի յարուցանել զզա֊նազանս խղճս :

# ԳԼՈՒԽ ԺԱ.

Զայն , զոր ՚ի վեր առաջի շուրջ զչարչարանօք Տն , ծառայէ վասն աղօթելոյ , և խոկալոյ ըստ նկրալի խնդրուածոց , և արդ վերատրեմ , որպէս կարիցեմք ՚ի նոյնոց քաղել ըստ մեր զզանազանս խղճս :

Առաջադրես քեզ ( զորօրինակ ) խոկալ զխաչեցումն , ՚ի յորում խոր֊հրդոց . ՚ի մէջ այլոց մասանց , կա֊րես խոկալ զհետեւօղս :

Նախ : Որպէս , զինչ Տէրն ՚ի

վերայ լերին գողգոթայ, մոլեգնաբարկութեամբ մերկացուցանիւր յայնցանէ կատաղեցելոց մարդկանց, որք ծուատեցին զմիս նորա զկցեցեալսն զգեստուց, վասն անցելոց ճաղեցմանց:

Երկրորդ: Որպէս վերացուցաւ 'ի գլխոյն փշեղէն պսակն, որ յետոյ դարձեալ եդեալ 'ի նմին, եղև պատճառ նորոց վիրաց:

Երրորդ: Որպէս հարմամբք ուռանց, և բևեռաց անողորմաբար բևեռեցաւ 'ի խաչին:

Չորրորդ: Որպէս որքաղանք անդամք նորա, ոչ հասեալք բացմանց արարեցելոց վասն ասացելոյ գործոյ, այնքան բռնութեամբ քարշեցան յայնցանէ շանց, թէ համայնք ոսկերք ելեալք 'ի տեղեաց կարէին թուիլ մի ըստ միոջէ:

Հինգերորդ: Որպէս 'ի կախիլն Տն 'ի վերայ խաչի փայտի, ոչ ունելով զայլ յենարան, քան զբևեռս, վասն ծանրութեան մարմնոյ, որ բերիւր դէպ 'ի վայր, լայնացան, և բաժանեցան անտանելեաց ցաւով սո-

բաղնադունեղք վէրք նորա :

Յայսցանէ, կամ՚ի յայլոց մասանց, կամելով զարթուցանել ՚ի քեզ զզղջալոյ, ջանամ խոկմամբ նոցին, անցանել ՚ի ճանաչմանէ առ մեծագոյն ճանաչումն անհնոյ բարութեան Տն քո, և սիրոյ դէպ ՚ի քեզ, որ վասն քո կամեցաւ այնքան չարչարիլ, զի որքան աճիցէ ՚ի քեզ ճանաչումս այս, այնքան նմանապէս աճեսցէ սէրն :

՚Ի յինքենէ ճանաչմանէ բարութեն, և անհնոյ սիրոյ, զոր ինքն Տէրն եցոյց քեզ, դիւրապէս արտահանցես զզղջումն, և զցաւ, քանզի վշտացուցեալ իցես այնքանիցս և այնքանաւ ապերախտութբ զԱծ քո, որ վասն անօրէնութեանց քոց անարգեցաւ, և խոշտանգեցաւ այնքանիւք եղանակօք :

Առ ՚ի վերածել զքեզ առ յոյս, նկատեա՛ թէ ՚ի յայսմիկ կացութեան այնքանոյ թշուառութե անկեալ է մին Տր այնքան մեծ առ ՚ի շիջուցանել զմեղս, և առ ՚ի յազատել զքեզ ՚ի յոլոտայթից սատանայի, և ՚ի մահաւորաց յանցանաց քոց . առ ՚ի առնել

նել քեզ այցարար զհայր իւր յաւիտենական, և վասն տալոյ քեզ զհամարձակութիւն վերընթանալոյ առ նա 'ի յանմուտ կարօտութեն քում։

Զգացցես դու զուրախութիւն անցանելով 'ի չարչարանաց նոցա առ գործս նոցա, այսինքն, թէ 'ի ձեռն նոցա քաւէ զմեղս բոլորոյ աշխարհի, մեղմացուցանէ զբարկութիւն հօր, ամաչեցուցանէ զիշխանն խաւարի, սպանանէ զմահն, և վերալնու զաթոռս հրեշտակայինս։

Դարձեալ շարժեսցէ զքեզ 'ի յուրախութիւն վասն համահաճոյութեն, զոր վերընդունի բոլոր ամենասուրբ Երրորդութիւն, հանդերձ Մարիամաւ Կուսիւ, եկեղեցին յաղթանակօղ, և զինուորօղ։

Վասն շարժելոյ զքեզ առ ատելութիւն մեղաց քոց, զհամայնս մասունս, զորս խոկայցես, մերձեցո՛ առ այս վախճան միայն, որպէս թէ Տէրն ոչ իցէ չարչարեցեալ վասն այլոյ գործոյ, քան առ 'ի վերածել զքեզ առ ատելութիւն վատից յօժարութեանց քոց, և իսկ այնորիկ, որ

տե-

տիրէ քեզ , և առաւել անհամձոյա-նայ խորում Աստուծոյ բարութեն :

Վասն շարժելոյ զքեզ 'ի զարմա-ցումն , նկատեա զինչ կարիցէ գոր-ծադրոյն քան զայս , տեսանել զա-տեղծողն ընդհանրոյ , որ անմիջ իրաց տայ զկեանս , հալածիլ 'ի մահ 'ի ստեղծուածոց, տեսանել ոտնակոխ ե-ղեալ , և անարգեցեալ զվերնագու-նեղ մեծվայելչութիւն : Զարդարու-թիւնն դատապարտեցեալ , վերըն-կալեալ զթուք գեղեցկութիւն Ամ: Արհամարհեցեալ զսէրն հօրն երկ-նաւորի : Զայն անստեղծ , և ան-հասանելի լոյսն , վերածեցեալ 'ի յիշխանութեն խաւարի. զինքն փառքն և զերջանկութիւն , համարեցեալ ա-նարգան , և պարտաւան մարդկայնոյ ոխոլ , և զմահացուցեալ 'ի յետին թշուառութի :

Ա՛ 'ի յաւանիցիլ վշտացելոյ Տն քում ; բայց 'ի խոկալոյ զարտաքինս չարչարանս նր , թափանցեա մտած-մամբ առ այս , թէ որչափ համեմատու-թե մեծագոյնս , որք ներքսայինս չարչարեցին զնա : Զի եթէ վասն

նոցա

նոցա մշտանայցես, վասն սոցա լիցի զարմացումն, զի՞արդ ոչ հերձիցի սիրտ քո 'ի ցաւոյ ։

Տեսանէր հոգին Քրիստոսի զԱծային եւթին, որպէս այժմ տեսանէ 'ի յերկինս, ճանաչէր զնա արժանաւո֊րագունեղ 'ի վեր քան զեղանակս մտի պատուոյ, եւ ծառայութեան, եւ տու այս վասն անձնաւէրելոյ սիրոյ իւրոյ դէպ 'ի նա, ցանկայր, զի համայնք ստեղծուածք ծառայիցեն նմա բո֊լորովք զօրութեամբք իւրովք ։

Ուստի տեսանելով զնա ներհա֊կաբար, վասն անհնոց մեղաց, եւ գարշելեաց չարագործութեանց աշ֊խարհի, այսպէս անկարգաբար վշ֊տացուցեալ եւ արհամարհեցեալ, 'ի միում, եւ 'ի նոյնում ժամանակի կրէր զանհունս խայթս ցաւոց, որք այն֊քան առաւել տանջէին զնա, որքան մեծագոյն էր սէր, եւ փափաք նո֊րա, զի այնքան բարձրացեալ մեծ֊վայելչութիւն պատուիցեն 'ի յամենից, եւ համայնք ծառայիցեն նմա ։

Եւ որպէս մեծութիւն այսր սիրոյ․ եւ փափաքանք ոչ կարէ ըմբռնիլ․ այս֊

պէս

պէս ոչոք է, որ կարիցէ հասանիլ առ 'ի ճանաչել, որքան դառն, և ծանր իցէր վասն այսր ներքին վիշտ խաչեցելոյ Տն ;

Դարձեալ սիրելով նա զհամայնս ստեղծուածս անճառելաբար, ըստ համեմատութեան այսորիկ սիրոյ, ցաւեցաւ 'ի վերայ քան զեղանակ վասն ամենեցուն մեղաց նոցին, 'ի ձեռն որոց բաժանեալք էին 'ի նմանէ : Քանզի վասն իւրաքանչիւր մահացու մեղի, զոր գործեալք էին, և գործելոցք էին համայնք մարդիկք, որք եղեն, և երբէք եղիցին, այնքանիցս, որքանիցս իւրաքանչիւրոյն մեղանչէր, այնքան անդամ բաժանիւր 'ի հոգւոյն Տն, որպէս 'ի ձեռն սիրոյ զուգակցեալ էր։

Բաժանմունքն այնքան առաւել ցաւալի, քան զբաժանումն մարմնաւորաց անդամոց, երբ զատին 'ի բնականէ տեղւոջէ իւրեանց. որքան հոգին գոլով առաւել ազնուագոյն, և կատարելագոյն քան զմարմին, վասն այսորիկ ընդունակագոյն էր ցաւոյ :

'Ի մէջ այսոցիկ չարչարանաց վասն

առեղ-

տեղծուածոց, եղև դառնադունեղ-
ային, զոր կրեաց Տէրն վասն ամ̃ից
մեղաց դատապարտեցելոց. որք ոչ
կարելով երբէք դարձեալ միաւորիլ
ընդ նմա, կրելոցք էին զյաւիտե-
նականս անհամեմատելիս տանջանս։

Եւ եթէ հոգին կակղացեալ վասն
Յս̃ի իւրոյ սիրականի, յառաջա-
նայցէ մտածմամբ, դիտցէ 'ի նմա առ
'ի ցաւակցիլ նմա, զչարչարանս կա-
րի յոյժ ծանունս ոչ միայն վասն գոր-
ծեցելոց մեղաց. այլ նաև վասն այ-
նոցիկ, որք ոչերբէք գործեցեալք
եղեն, քանզի ոչ է երկբայութիւն,
թէ զթողութիւն այնոցիկ, և զնա-
խապահու̃ն յայսցանէ, առաքեալ իցէ
մեզ Տէրն մեր գնով պատուականաց
վշտաց իւրոց։

Ով դուստր ոչ պակասեսցին քեզ
այլք խոկմունք առ 'ի ցաւակցիլ չար-
չարեցելոյ խաչեցելոյն քում։

Քանզի ոչ եղև, ոչ երբէք լիցի
իմն ցաւ 'ի յորում և իցէ բանականի
ստեղծուածոջ, զոր նա 'ի յիւրեան
ինքեան ոչ իցէ զգացեալ։

Անիրաւութիւն, և փորձութիւնք,

վա-

վստահամբաւութիւնք. ապաշխարանք, եւ ամենայն անձկութիւն, եւ վիշտ ամ̃ից մարդկան աշխարհի չարչարեցին զհոգին Ք̃ս ի սաստկագոյն : Քան չարչարեալք իցեն զհոգիս այնոցիկ նոյնոց, որք կրեցին զնոսա :

Վասնզի զհամայնս անձկութիւնս նոցին զմեծս, եւ զփոքունս հոգւոյ, եւ մարմնոյ, մինչեւ առ մին փոքրագունեղ ցաւ գլխոյ, եւ ծակումն աղան եռեսս կատարելապէս, եւ զամն անչափոյ սիրոյ իւրոյ կամեցաւ համակրել, եւ ներգոյել ՚ի սրտի իւրում գթածագունեղ Տեառն մեր :

Արդ որքան սաստկացեալք իցեն չարչարանք ամենասրբուհւոյ մօր նորա, ոչոք է, որ կարիցէ մեկնել զայս: վասնզի նա ամենիւք կերպիւք, եւ ամենիւք վերահայեցմամբք, որովք Տէրն ցաւեցաւ, եւ կրեաց այնքան, նաեւ ՚ի յամենեսին, թէպէտ ոչ այնպէս սաստկապէս, բայց սակայն դառնագունեղապէս ցաւեցաւ, եւ կրեաց սրբուհի կոյսն :

Եւ այսոքիկ ինքեանք ցաւք իւրք վերանորոգեցին օրհնեցելոյ որդւոյն

իւր-

իւրոյ զՆերքինս մեր, եւ խոցեցաւ, որպէս յայնքանից հրացելոց նետից սիրոյ քաղցրադունեղ սիրոյ Նորա, որ վասն այնքանեաց չարչարանաց, զորս ասացի, եւ վասն այլոց իբր անհնոց դաղեցելոց 'ի մէնջ, բարեպէս կարիցէր ասել, թէ իցէր մին սիրելական դժոխս կամաւորաց չարչարանաց, որպէս դրի վասն միոյ ջերմեռանդի հոգւոյ, որ այնքանաւ պարզամտութե̄ սովորէր այսպէս կոչէլ զնա:

Եթէ դու, ով դասաւոր, բարեպէս նկատիցես զպատճառն ամ̄ից մերոյ ասացելոց ցաւոց, զորս կրեաց խաչեցեալն, եւ փրկիչն, եւ Տէրն մեր, ոչ գտցես զայլ ինչ, քան զմեղս:

Ուստի յայտնապէս հետեւի, թէ ճշմարիտ, եւ նախապետական ցաւակցին, եւ չնորհակալութիւք, զորս նա վերախնդրէ 'ի մէնջ, եւ զայնոսիկ անպատմելաբար նմա պարտիմք, է ցաւքն մեր սոսկապէս վասն սիրոյ Նորա 'ի վերայ մշտացուցման, որով մշտացուցաք զնա, ասել 'ի վերքան զամենայն պատիժ իր զմեղս, եւ քա-

Ջայնէս պատերազմիլ ընդդէմ ամ̅ից թշնամեաց իւրոց , և վառից յօժարութեանց մերոց , զի մերկացեալք զհին մարդն , և զներգործութիւնս նորա , զգենուցումք զնորն, զարդարելով զհոգին մեր առաքինութ̅ք աւետարանականօք ։

## Յաղագս շահաւէտութ̅ց , որք կարեն արտահանել 'ի խոկմանէ խաչեցելոյն . և յաղագս համահետևման առաքինութ̅ց նորա ։

## ԳԼՈՒԽ ԾԲ.

ա. ԻՄԷՋ այլոց շահաւէտութեանց , որք բազումք են, զորս դու պարտիս արտահանել յայսմանէ սրբոյ խոկմանէ, մինն լիցի , զի դու ոչ միայն ցաւիցիս 'ի վերայ անցելոց մեղաց քոց , այլ նաև վշտանայցես , քանզի կենդանիք իցեն 'ի քեզ ան-

կարգք

կարգք ախտք քոյք , որք եղեն 'ի խաչին զՏէրն քո ։

Միւսն , զի դու խնդրիցես 'ի նմանէ զթողութիւն մեղաց քոց , և զշնորհն կատարեցելոյ ատեցման քոյոյ ինքեան , զի մի դարձեալ վշտացուցանիցես զնա , այլ և առաւել 'ի փոխարէն այնքանաց խիստ վշտաց վասն քո , սիրիցես զնա ; և ծառայիցես նմա , այսուհետև կատարելապէս , որ թարց այսմ սիրոյ ատեցման առնիլ ոչ կարէ ։

Երրորդ , զի դու գործով հանդերձ հալածիցես մինչև 'ի մահ զամենայն վատ յօժարութիւն քո որքան և փոքրագոյն ։

Չորրորդն է , զի բոլորով կարողութե՟ քով ջանայցես հետևիլ առաքինութեանց փրկչին , որ կրեաց ոչ միայն վասն փրկելոյ զմեզ , վճարելով վասն անօրէնութեանց մերոց , այլ նաև վասն տալոյ մեզ զօրինակ հետևելոյ սրբոց շաւղաց իւրոց ։

Ասա առաջադրեմ քեզ զմին կերպ խոկմանց , որ ծառայեսցէ քեզ առ այս գործ ։

Ուրեմն ցանկալով դու տանել (զօրօրինակ) զհամբերութիւն, զի հե-տեւեցիս Քի քում · Նկատեա զհե-տեւօղս մասունս :

Նախ, զայն զոր առնիցէ հոգին Քի չարչարեցելոյ դէպ 'ի յԱծ :

Երկրորդ, զոր առնիցէ Ած դէպ 'ի հոգին Քի :

Երրորդ · զոր առնիցէ հոգին Քի դէպ 'ի յիւր ինքն, եւ դէպ 'ի սրբազնագունեղ մարմին իւր :

Չորրորդ, զայն զոր առնիցէ Քս դէպ 'ի մեզ :

Հինգերորդ, զայն զոր մեք առ-նել պարտիմք դէպ 'ի Քս :

Առաջուրեմն նախ նկատեա, որ-պէս հոգին Քի կալով բոլոր պա-տրաստեալ 'ի յԱծ, զարմանայ տեսա-նելով զայն անհուն, եւ անըմբռնելի մեծութիւն, որոյ առ համեմատութիւն համայնք ստեղծեցեալք իբրեւ են որ-պէս մին ատոմ ոչինչ, ենթարկեցեալ (սակայն կալով անշարժ 'ի փառս իւրս) առ 'ի տանիլ 'ի յերկրի զըն-ձեռամունս անարժանութենէս վասն մարդոյ, յորմէ ոչինչ այլ վճռընկա-

լաւ

լաւ քան զանհաւատարմութիւն , և զանխրատութիւն , և որպէս երկրպագանէ նմա , և շնորհակալ լինի 'ի նմանէ , և բոլոր զինքն մատուցանէ նմա ։

Երկրորդ ։ Տես յետոյ զայն , զոր առնէ Ած դէպ 'ի հոգին Քի , որպէս կամի , և առնէ զնա կրել վասն մեր զապտակս , զթուքս , զհայհոյանս , զձաղեցմունս , զփուշս , և զխաչն ցուցանելով նմա զհամահաճոյութի իւր տեսանելոյ զնա բոլոր վերաբերեալ ամիւ ցեղիւ պարտաւանաց , և մեղաց ։

Երրորդ ։ Յայսմանէ անցիր 'ի հոգին Քի , և մտածեա թէ որպէս իմացութբ իւրով , որ բոլոր է լոյս , ճանաչելով որքան մեծ իցէ 'ի յԱծ համահաճութիւն այս , և բոլորով հրապուրելով ըղձիւ ուխտելով զԱծոյին մեծվայելչութի իւր 'ի վերքան զամենայն չափ , և վասն անհնոյ իւրոյ արդեան , և վասն անչափից պարտաւորութեց , զոր ունէր նմա , հրաւիրեցեալ 'ի նմանէ կրել վասն օգտոյ , և օրինակի մերոյ , դոհու_

ակ, և ուրախ, տրամադրէ զինքն առ 'ի հնազանդիլ յօժարապէս իւրում սրբազնագունեղի կամին:

Եւ ո՞վ կարէ հասանել այնոցիկ խորոց ըղձից, զորս զայսմանէ ունէր այն մաքրագունեղ, և սիրելագունեղ հոգին: Աստ գտանի նա ինքն 'ի միում լապերինթոսի նեղութեանց, խնդրելով միշտ, և ոչ գտանելով (որպէս կամիցիւր) զնորա կերպս, և ճանապարհս չարչարանաց: Եւ վասն այսորիկ կամաւորապէս տայ զիւր ինքն բոլոր, և զանմեղագունեղ մարմին իւր (զի առնիցեն զայն, զոր կամիցեն) ընտրութե, և աւարի անօրինաց մարդկանց, և դիւաց դժոխոց:

Չորրորդ: Յետ այսորիկ վերահայեաց 'ի Յ՟ն քո, որ անչափ բարեգթութեն դարձուցեալ դէպ 'ի քեզ առէ ցքեզ: Ահա ով դուստր, որքան կրեմ, և որքան ուրախաբար վասն սիրոյ քո, և վասն տալոյ քեզ զօրինակ ճշմարտի համբերութեան: Աղաչեմ զքեզ ով դուստր ամենայնիւք ցաւովք իմովք, զի դու կա-

մաս

մաւորապէս տանիցես զխաչս զայս, և զայլ ամենայն, որ առաւել հաճոյական իցէ, բոլորովին թողլով զքեզ ՚ի ձեռս հալածչաց քոց, զորս ծաց քեզ. Թէպէտ իցեն կարի յոյժ խստանք, և անողորմք ընդդէմ պատուոյ, և մարմնոյ քո. ո՞հ եթէ դու գիտիցես զմխիթարութիւն, զոր ես զգացից ։ Բայց բարեպէս կարես տեսանել զայն ՚ի յայսոսիկ վէրս ո-զորս կամեցայ վերընդունիլ, որպէս զպատուականս ակունս, վասն զարդարելոյ մեծագնովք առաքինութեք զողջքառ հոգին քո, յինէն ՚ի վեր քան զամենայն համարումն քո սիրեցեալ։ Եւ եթէ ես վասն այսորիկ վերածեցեալ եմ առ այսպիսի վերջին չարչարանս, ընդէ՞ր ով սիրելի հայր իմ ոչ կամեցցիս կրել և դու զսակաւիկ մի վասն առնելոյ զհաճոյս սրտի իմոյ, և վասն քաղցրացուցանելոյ զայնոսիկ վէրս, զորս պատճառեաց ինձ անհամբերութիւն քո, որ առաւել քան զինքեանս վէրս այսպէս դառնապէս վշտացոյց զիս ։

Հինգերորդ ։ Աստծեան յետոյ

բարեպէս, թէ ով իցէ այն, որ այս֊
պէս խօսի ընդ քեզ, և տեսցես թէ
է նոյն ինքն Թագաւորն փառաց Քս
Ճշմարիտ Այ, և ճշմարիտ մարդ։
Նկատեա զմեծութիւն չարչարանաց,
և արհամարհանաց նորա, որոց ա֊
նարժան համարեցիւր վատահամբաւ֊
ագոյն աւազակին աշխարհի։ Տես
զՏէրն քո 'ի մէջ այնքանեաց նախա֊
տանաց կալ ոչ միայն անշարժ, և
զարմանալեաւ համբերութբ, այլ թէ
հրճուել 'ի վերայ նոցա որպէս 'ի վե֊
րայ հարսանեաց իւրոց։ Եւ թէ որ֊
պէս 'ի ձեռն սակաւոյ ջրոյ առաւել
բորբոքի հուրն, այսպէս անձեցմամբ
տանջանաց, որք իւրում վերառաւարի
սիրոյ էին փոքունք, միշտ առաւել
աճիւր բերկրութն, և փափագն կրե֊
լոյ վասն մեր զմեծագոյնս։ Նկատ֊
եա թէ զայս ամենայն կրեաց, և
գործեաց գթածագունեղ Տէրն ոչ
բռնութբ, և ոչ վասն օգտի իւրոյ,
այլ (որպէս նա ասաց ցքեզ) վասն
սիրոյ իւրոյ առ քեզ, և զի դու առ
համահետեւութն նորին կրթիցես զքեզ
'ի յառաքինութն համբերութն. և

բա֊

ջարեալ է ծ թափանցելով 'ի յոյն, զոր
նա կամի 'ի քէն, և առ համաձայնու-
թի, զոր տացես նմա կրթելով զքեզ
'ի յայսմիկ առաքինութեն, արտա-
դրեամ զներգործութիւնս հրացելոց
կամեցմանց տանելոյ ոչ միայն համ-
բերութբ, այլ ուրախութբ հան-
դերձ զխաչն նորա յայնժամ. և զայլ
ամենայն որչափ ծանրագոյն լիցէր, զի
լաւագոյն համահետևլիցիս ԱՅ.քում,
և զի տայցես նմա զմեծագոյն մխի-
թարութի ։

Եւ դնելով առաջի աչաց մտաց
քոց զնախատինս նորա, և զդժու-
նութիս ճաշակեցեալս վասն քո, և
զերկայնամտութի, և զհամբերութի
նորա, մինչեւ համարիլ թէ քոյդ
լիցի սոսկ հովանի համբերութեան,
ոչ քոյքն լիցեն ճշմարիտք ցաւք, և
արհամարհանք. և երկիր, և սար-
սնաց, թէ նաև մին փոքրագունեղ
մտածութիւն ոչ կամելոյ կրել զնեղու-
թիս վասն սիրոյ Տն քո դատանիցէ
զոտեզի, յորում լիցես զկայ առնելոց
նաև զմին փոքր ժամանակ ներ սրտի
քում ։

Այս խաչեցեալ Տէրն , ով դուս-
տր իմ , է մատեան , զոր ես ետու-
ցքեզ առ 'ի յընթեռնուլ , յորմէ դու
կարասցես արտահանել զճշմարիտ
պատկեր ամ̃ի առաքինութե̃ն : Քան-
զի գոլով մատեան կենաց , ոչ միայն
հմտացուցանէ զիմացութի̃ բանիւք ,
այլ նաև կենդանեաւ օրինակաւ բոր-
բոքէ զկամս : Գրեամբք լի է աշ-
խարհս բոլոր , և սակայն համայնք
'ի միասին ոչ կարեն այսպէս կատա-
րելապէս ուսուցանել զկերպն ստա-
նալոյ զհամայնս առաքինութի̃ս , որ-
պէս լինի հայելով 'ի խաչեցեալն
Ած̃ :

Եւ գիտասցիր ով դուստր , թէ այ-
նոքիկ , որք վատնեն զբաղումս ժամս
'ի յարտասուելն վասն չարչարանաց
Տն̃ մերոյ , և 'ի նկատելն զհամբեր-
ութի̃ նորա , և յետոյ 'ի ձախորդու-
թիս , որք հանդիպին , ցուցանեն
այնպէս անհամբերք , որպէս թէ 'ի
յաղօթս զայլ ամենայն իր կալեալք
իցեն , նմանք են զինուորաց աշխար-
հի , որք 'ի ներքոյ բանակաց յառաջ
քան զժամանակ պատերազմի , խոս-

տա-

տանան զիւր մեծս, և յետոյ 'ի յերևիլ թշնամեաց, թողեալք զզէնս փախչին։ Եւ զինչ կարէ գոլ յիմարագոյն, և թշուառագոյն քան զայս, թէ նայիլ որպէս 'ի պայծառ հայելւոջ 'ի յառաքինութիս Տն, և սիրել զնոսա, և զարմանալ 'ի վերայ նոցա, և յետոյ ամենևին մոռանալ զնոսա, կամ ոչ համարիլ զնոսա, երբ ներկայացուցանի ժամանակն 'ի կիր առնելոյ զնոսա։

## Յաղագս սրբազնագունեղի խորհրդոյ հաղորդութեան։

## ԳԼՈՒԽ ԾԳ։

Մինչև աստ ով դուստր (որպէս արդէն տեսեր) նախապատրաստեցի քեզ զչորս զէնս, որք պիտոյանային քեզ առ 'ի յաղթել զթշնամիս քոյս, և եդի առաջի քո զբազում նկատեցմունս առ 'ի բարեպէս 'ի կիր արկանել զնոսին, արդ այժմ վե-

րամեայ զի՛ առաջադրիցեմ քեզ զմի այլ ինչ, որ է սրբազնագունեղ խորհուրդն հաղորդութե՟ն ։

Զի որպէս խորհուրդս այս է 'ի վեր քան զայլս ամենայն խորհուրդս. այսպէս այս հինգերորդ զէնն է վերնագոյն քան զայլս ամենայն ։

Զորս վերոյ ասացեալքն ընդունին զզօրութի՛ն 'ի յարդեանց, և 'ի շնորհաց, զորս արդիւնաւորեցաւ մեզ Արիւնն Ք՟սի, իսկ զէնս այս է ինքն արիւնն, և մարմինն հանդերձ հոգւով, և Ա՟ծութբ՟ Ք՟սի ։

Այնոքիւք լինի պատերազմ ընդդէմ թշնամեաց զօրութբ՟ Ք՟սի ։ Այսու պատերազմիմք ընդդէմ այնոցիկ 'ի միասին ընդ Ք՟սի, և Ք՟ս պատերազմի ընդդէմ նոցա 'ի միասին ընդ մեզ. քանզի որ ուտէ զմարմին Ք՟սի, և ըմպէ զարիւն նորա կայ ընդ Ք՟սի, և Ք՟ս կայ ընդ նմա ։ Եւ քանզի այս սրբազնագունեղ խորհուրդս, և այս զէնս երկու կերպիւք կարէ 'ի կիր արկանել, և առնանել խորհրդականապէս միանգամ 'ի յաւուր, և հոգևորապէս յամենայն

ժամու , և յանմուամ բռնէլ . ոչ պար-տիս ՚ի բաց թողուլ վերընդունիլ զնա յաճախագունեղապէս ՚ի յերկ-րորդում կերպի , և միշտ երբ շնոր-հի քեզ ՚ի յառաջնում կերպի ։

### Յաղագս կերպի վերընդունելոյ զոր-բաղնագաւնեղ խորհուրդն հաղորդութեան ։

## ԳԼՈՒԽ ԾԴ.

Աւն զանազանաց վաղճա-նաց կարեմք մեք մատչիլ առ այս Ածակմանագունեղ խորհուրդն , զոր առ ՚ի ստանալ պարտիմք առնել զզանա-զանս իւր բաժանեցելոյ ՚ի յերիս ժամանակս ։

Յառաջ քան զհաղորդութիւն . երբ հաղորդելոցք եմք . և յետ հաղոր-դութեան ։

Յառաջ քան զհաղորդութիւն ( և առ ցի վասն որոյ և վաղճանի ոք կա-մեցի ) պիտոյ է , զի լուանայցեմք , և

և մաքրիցեմք զմեզ խորհրդով ապաշխարութեան 'ի յարատոյ մահացուած մեղաց, եթէ իցէին 'ի մեզ, և թէ մինչ ըղձիւ սրտի տայցեմք զմեզ բոլորս բոլորով հոգւով, բոլորովք զօրութեամբք, և բոլորովք կարողութեամբք Յ̅ի Ք̅ի, և որքան հաճոյանոյ նմա, վասնզի նա 'ի յայսմիկ ողբաղձագունեղի խորհրդոյ տայ մեզ զարիւն, և զմարմին, և զհոգին իւր Ա̅ծութեան հանդերձ, և նկատելով, թէ սակաւ, և իբր ոչինչ է պարգևն մեր վերահասուցմամբ առ իւրն, պարտիմք ցանկալ ունիլ զորքան երբէք մատուցեալք իցեն, և տուեալք իցեն համայնք ստեղծուածք մարդկայինք, և երկնայինք, վասն տալոյ զնա իւրում Ա̅ծայնոյ մեծվայելչութեան։

Ուստի կամելով դու վերընդունիլ զնա վաղձանաւ, զի յաղթիցին 'ի քեզ, և եղծանիցին քոյք, և իւրք թշնամիք, յառաջ քան թէ հաղորդիցիս, սկսիր 'ի յերեկոյէ, կամ որքան յառաջ առ 'ի խորհել զորդին Ա̅Յ, զի դու տայցես նմա զտեղի 'ի

մէջ

մէջ սրտի քո այսու որբաղնադունեղէն խորհրդով, զի միաւորիցի ընդ քեզ, և զի օժնիցէ քեզ առ 'ի յընդդիմամարտիլ ընդդէմ ամի վատթարի ախտի քո։

Այս փափագս 'ի Տէրն մեր այնպէս մեծ, և անչափ է, թէ 'ի ստեղծեցելոյ իմացողութենէ ոչ կարէ ըմբռնիլ։

Դու, զի առնիցես զքեզ յիմիք մասին ընդունակ, բարեպէս 'նկատեսցես 'ի միտս զերկուս իրս։

Մին է անպատմելի համահաճոյութին ամենաբարւոյն ԱՅ միալոյ ընդ մեզ, վասնզի զայս կոչէ զբօսանս իւրս։

Միւսն է նկատելն, թէ նա 'ի վեր քան զնշանակ առնէ զմեղն, և որպէս զարգելուածն, և զխափան միաւորութեան իւրոյ ընդ մեզ այնքան յինքենէ փափագեցելոյ, և որպէս 'ի յատմուած զներհակն Աստուծոյ կատարելութեանց իւրոց. քանզի գոլով 'նա ծայրագունեղ բարի, պայծառ լոյս, և անհուն գեղեցկութիւն, ոչ կարէ, եթէ ոչ ատել զմեղն, և անհունաբար

քար դարձիլ 'ի նմանէ , որ ոչ այլ ինչ է , եթէ ոչ խաւար , պակասու֊թին , և անտանելի արատ հոգւոց մերոց :

Եւ այնպէս բորբոքեցեալ է ատե֊լութիւն այս Տն ընդդէմ մեղաց , թէ առ եղծումն նոցա կարգաւորեցեալք են համայնք գործք հնոյ , և նորոյ կտակարանի , և մանաւանդ այնոքիկ գործք , որք են սրբազնագունեղից չարչարանաց որդւոյն իւրոյ , որ ա֊սեն լուսաւորեալք ծառայքն ԱՅ , թէ առ 'ի յոչընչացուցանելոյ 'ի մեղ զամենայն մեր նաև փոքրիկ մեղն ; նորապէս ( եթէ պիտոյանայցէր ) հազարիցս մատնիցէր զինքն 'ի մահ :

Յորոց նկատեցմանց ըմբռնելով զու , թէպէտ կարի անկատարելա֊պէս զմեծութիւն ըղձի , զոր Տէրն ունի մտանել 'ի սիրտ քո, առ 'ի յար֊տաքսելոյ , և բոլորովին կործանելոյ զթշնամիս քոյս , զարթուսցես 'ի քեզ զմին կենդանի կամեցումն վերընդ֊ունելոյ զնա վասն նոյնոյ արարոյ :

Այսպէս բոլոր քաջասրտացեալ , և զօրացուցեալ 'ի յուսոյ գալստեան

քոյդ

քոյոյ երկնայնոյ դքսի 'ի քեզ, կոչեմ բազմիցս առ պատերազմ զախտն, զոր ունիս 'ի ձեռին առ 'ի յաղթելոյ, և սանձելոյ զնա ատեցմամբ հանդերձ կրկնեցելովք կամեցմամբք, արտադրելով զներգործութիս առաքինութեան ներհակս նմա, և այսպէս յարատևեսցես յերեկոյի, և յառաւօտուն նախ քան զսրբազնագունեղ հաղորդութի։

Յետոյ երբ ընդունելոց իցես զսրբազնագունեղ հաղորդութին, սակաւմի յառաջ տացես զմին կարճառօտ վերահայեցումն առ պակասութիս քոյս 'ի յառաջողէ հաղորդութե մինչև յայնժամ, որք այնպէս գործեցեալք են 'ի քէն, որպէս թէ Այ ոչ իցէր, ոչ այնքան կրեալ իցէր վասն քո զչարչարանս խաչի, 'ի համարիլն քո զմին խոտան համահաճոյութիւն քո, և զկամեցմունս քոյս, առաւել քան զկամն Այ, և քան զպատիւ նորա, և հանդերձ ամաչեցմամբ քոյոյ լինքեան, և միով սրբով երկիւղիւ ամաչեսցես 'ի վերայ

տալե-

ապերախտութեան, եւ անարժանութեան քո։

Բայց յետոյ մտածելով, թէ անչափ անդունդն բարութեան Տն քո, կոչէ զանդունդն ապերախտութեան, եւ սակաւոյ հաւատոյ քո, մատիր դու առ նա յուսադրաբար, տալով նմա զարժանի տեղի 'ի սրտի, զոր ամենեւին լինիցի Տր։

Եւ յայնժամ տացես նմա զարժանի տեղի, յորժամ արտաքսիցես յինքենէ սրտէ զո՛ եւ իցէ իղձն ստեղծոածոց, յետոյ փակելով զնա, զի մի այլ ինչ մտանիցէ 'ի նա, բաց 'ի Տնէ քումմէ։

Յետ հաղորդելոյդ՝ քարշեա՛ զքեզ մեղմաղակի 'ի ծածուկն սրտի քո, եւ նախ երկրպագեալ նմա, այսպէս ամենայն խոնարհութեամբ, եւ պատկառանօք խօսակցեաց մտօք ընդ Տն քում՝

Տեսանես դու ով միայնակ բարին իմ, որքան դիւրապէս վշտացուցանեմ զքեզ, եւ որքան կարիցէ ընդդէմ իմ ախտս այս, եւ թէ ես յինէն ոչ կարեմ ազատել զիս։ Սակայն քո է մանաւանդապէս մարտս այս, եւ

'ի

՚ի քէն միայնոյ յուսամ զյաղթութիւն. Թէպէտ նաև ինձ պիտոյանայցէ պատերազմիլ:

Յետոյ դարձուցեալ առ հայրն յաւիտենական, մատո՛ նմա ՚ի նոր-հնազանդութ՟ն, և զայն յաղթութեան քոյոյ ինքեան զնուէր օրհնեցեալ որ-դին, զոր նա ետ քեզ, և զոր աւ-ունիս ներ քո ինքեան, և քաջապէս պատերազմելով ընդդէմ վերոյասա-ցելոյ ախտի, հաւաստով սպասեա յաղթութեն ՚ի յԱՅ, որ ոչ է զքեզ թողլոց, եթէ ՚ի կողմանէ քումմէ առնիցես դու որքան կարասցես, Թէպէտ յամեցուցանիցէ զնա:

Որպէս նախապատրաստել պարտիմք
զմեզ առ հաղորդութիւն, վաղ-
ճանաւ զարթուցանելոյ
՚ի մեզ զսէր ։

# ԳԼՈՒԽ ԾԵ.

Զի զարթուցանիցես զքեզ այսու վերաբերկնայնով խորհրդով առ ՚ի սիրել զԱծն քո, դարձուսցես զքեզ մտօք առ սէր նորա դէպ ՚ի քեզ, խոկալով ՚ի յառաջնոյ երեկոյէ՝

Որպէս այն մեծ, եւ ամենակարող Տէրն, ոչ շատացեալ ստեղծեալ գոլ զքեզ ՚ի պատկեր, եւ ՚ի նմանութիւն իւր, եւ առաքեալ գոլ ՚ի յերկիր զԻւր միածին որդին առ ՚ի կրել զնեղութիւնս զերեսուն, եւ զերիս ամս վասն քոյոց անօրէնութեանց, եւ տանիլ զխստագունեղս անձկութիւնս, եւ զչարչարելական մահն խաչի առ ՚ի փրկել զքեզ, նաեւ կամեցաւ թողուլ զնա քեզ ՚ի կերակուր, եւ ՚ի լցուցում կա-

հարստութիւն քո 'ի սրբազնագունեղի սրբազնութիւն խորանի ։

Բարեպէս նկատեա՛ ով դուստր, զանըմբռնելիս դերազանցութիւնս այսր սիրոյ, որք զնա առնեն 'ի յանձն մատունս իւրս կատարելագունեղ, և եղական ։

Նախ, վասնզի եթէ հայիցիմք առ ժամանակն, Ածն մեր սիրեաց զմեզ մշտնջենաւորապէս, և թարց ուրուք սկզբան, և որքան ինքն է յաւիտենական 'ի յԱծութիւն իւրում, այնքան նաև է յաւիտենական սէրն, որով նախ քան զամենայն յաւիտեանս սահմանեցաւ 'ի մտի նորա տալ զմեզ զորդին իւր այսու զարմանալեաւ կերպիւ ։

Զորմէ ցնծալով ներ քո ինքեան վս ներքնայնոյ բերկրութեն, կարասցես այսպէս ասել ։ Ուրեմն 'ի յայնմիկ անդնդում յաւիտենականութեն, նուաստութիւն իմ այնքան համարիւր, և սիրիւր 'ի ծայրագունեղէ Այ. թէ նա մտածէր զինէն, և փափագիւր կամեցմամբք սիրոյ անձաւելւոյ,

ւոյ, տալ ինձ զինքն որդին իւր ՚ի կերակուր ։

Երկրորդ ։ Այլև համայնք այլք սէրք, որքան և մեծք, ունին զոմն եզր, և ոչ կարեն անդրադոյն տարածիլ, այլ այս միայն Տն մերոյ է Թարց չափոյ ։

Եւ սակայն կամելով առնել ինքեան զբաւարարութիւն լիապէս, ետ զյատուկ որդին զհաւասարն ինքեան ՚ի մեծվայելչութեան, և ՚ի յանհունութեան զունօղն զմին, և զնոյն գոյացութիւն, և բնութիւն ։ Ուստի այնքան է սէրն, որքան պարգևն, և այնքան պարգևն որքան սէրն, երկաքանչիւրն այնպէս մեծ, զի մեծագոյն մեծութիւն յոչումեքէ իմացութեան կարացեալ իցէ մտածիլ ։

Երրորդ ։ Այս ոչ է քարշեցեալ առ ՚ի սիրել զմեզ յումեքէ հարկաւորութենէ, կամ բռնութենէ, այլ իւր ներքին բնական բարութենէն միայնակապէս շարժեաց զնա առ այնպիսի, և առ այնքան անըմբռնելի իղձ դէպ ՚ի մեզ ։

Չորրորդ ։ Ոչ ոմն գործ, կամ թէ

ար.

արդիւն մեր կարաց յառաջել, զի
այն անչափ Տէրն առնիցէր ընդ թշուա-
ռութե մերում զայնքան առաւե-
լութի սիրոյ․ այլ նա վասն իւրոյ
առատաձեռնութե բոլոր պարգևե-
ցաւ մեզ անարժանագունեղից ստեղ-
ծուածոց իւրոց։

Հինգերորդ։ Եւ եթէ դու զքեզ
վերադարձուցանիցես մտօք առ մա-
քրութի այսր սիրոյ տեսցես, թէ
ոչ է որպէս սէրք աշխարհայինք
խառնեցեալ իւիք շահիւ․ վասնզի
Տէրն մեր ոչ կարօտանայ բարեաց
մերոց, գոլով նա թարց մեր 'ի յիւ-
րեան ինքեան միայնում, երջանկա-
գունեղ, և փառաւորագունեղ ուս-
տի անպարագրելի բարութի, և սէր
նորա սակաւպէս զբաղեցաւ 'ի հոգս
մերս, ոչ վասն իւրոյ, այլ վասն մե-
րոյ բարութե։

⁖ Զոր դու բարեպէս մտածելով
տեսցես ներ քո ինքեան․ զի՞արդ
է, թէ այնքան վսեմ Տէրն դնիցէ
զսիրտ իւր 'ի ստեղծուածոջ այսպէս
անարգում։ Զի՞նչ կամիս դու, ո՛վ
Թագաւոր փառաց․ Ո՞րում իրի
ապա-

տպաւորեալ լինէին , որ ոչ այլինչ եմ , եթէ ոչ սակաւամի փոշի ։ Ո՛վ Ած իմ բարերարս իմանամ՝ ես 'ի լուսում հրացեալոյ սիրոյ քո , թէ զմին միայն խորհուրդ ունիս դու , զոր պայծառագոյն յայտնէ ինձ մաքրութիւն սիրոյ քո դէպ 'ի յիս , վասնզի ոչ վասն այլոյ իրի պարգեւես ինձ զքեզ բոլոր 'ի կերակուր , քան առ 'ի գարձուցանել զիս բոլոր 'ի քեզ . ոչ վս կարօտութե̃ , զոր դու ունիցիս զինէն . այլ քանզի կելով դու 'ի յիս , և ես 'ի քեզ , 'ի ձեռն սիրելական միաւորութե̃ փոխարկիցիմ 'ի քեզ ինքն , և 'ի նուաստութե̃ սրտի իմոյ երկրայնոյ լինիցի ընդ քեզ մի միայն Ածային սիրտ ։

Ուստի դու լի հիացմամբ , և ուրախութե̃ , տեսանելով զքեզ այնպէս բարձրաբար պատուեցեալ , և սիրեցեալ 'ի յԱյ , և ճանաչելով թէ նա ամենակարողն սիրով իւրով զոչ այլ ինչ գտանէ , ոչ կամի 'ի քէն , քան վերաքարշել 'ի յինքն զբոլոր սէր քո , նախ բառնալով զքեզ յամից ստեղծուածոց , և յետոյ նաև 'ի քէն ին-

քե-

քենէ, որ ես ստեղծուած. մատո՛ւցեք զբոլոր Տեառն քում 'ի յողջակէզ, զի պատուհետև միայն սէրն, և Ածային համահաճութիւնն նորա շարժեսցէ զիմացութիւն, զկամս, և զյիշողութիւն բոլոր, և կառավարեսցէ զզգայութիւնս քոյս։

Եւ յետոյ տեսանելով, թէ ոչոք իր կարիցէ արտադրել 'ի քեզ զայսպիսիս Ածայինս գործս, որպէս վերախնդրեցին զնա արժանապէս 'ի սրբազնագոյնեղէն խորհրդոյ սեղանոյն, բաց նմա զսիրտ վասն այնր արարոյ հետևեցելովք աղօթիւք նետողականօք, և հառաչանօք սիրելականօք։

Ո՛հ, ո՜վ վերաերկնային կերակուր, երբ լիցի ժամն այն, որ ոչ այլով հրով, եթէ ոչ քոյով սիրոյն զիս բոլոր պատարագեսցեմ քեզ, եր՞բ, եր՞բ, ո՛հ անստեղծ սէր։

Ո՛հ, ո՜վ հաց կենդանի, երբ կեացցեմ ես միայն 'ի քեզ, վասն քո, և 'ի քէն, ա՛հ երբ, կեանք իմ, կեանք գեղեցիկ, զուարճալի, և յաւիտենականք։

Ո՛հ, ո՜վ երկնային մանանայ, երբ

զղջեցեալ եմ յորմէ և իցէ յայլմէ երկրայնոյ կերակրոյ քեզ միայն փափագեցայց․ քև միայնով կերակրեցայց․ եր՛բ լիցիս քաղցրութիւն իմ․ ե՞րբ միայնակ բարին իմ։ Ո՛հ ով սիրելի, և ամենակարող Տէր իմ ազատեա՛ այժմ զայս ողորմելի սիրտ յամ̃է շաղախմանէ, և յամ̃է վատթարէ ախտէ, զարդարեա՛ զնա քոյովք որբովք առաքինութ̃բք, և այնու մաքրով փաղձանաւ առնելոյ զամ̃ իր միայն վասն հաճոյանալոյ քեզ, զի այսու կերպիւ եկից ես առ ՚ի բանալ քեզ զսիրտ․ զքեզ հրաւիրեցից, և քեզ արարից զքաղցր բնութիւն, զի միանիցես անդ․ ուստի դու ով Տէր, յետոյ թարց ընդդիմութեան արասցես ՚ի յիս զայնս գործս, որոց միշտ ցանկացեալ եմ։

Եւ ՚ի յայսմանիկ սիրելական իղձս կարասցես զքեզ կրթել յերեկոյի, և յառաւօտուն, վասն նախապատրաստութեան հաղորդութեան։

Յետոյ ՚ի մերձենալ ժամանակի հաղորդութեան, մտածեա թէ զինչ ընդունելոց իցես։

Զորդին ԱՅ անըմբռնելւոյ մեծ-վայելչութիւն, որոյ առաջի սարսին երկինք, և բոլորք պետութիւնք։

Զսրբն սրբոց, զհայելին թարց ա-րատոյ, և զանըմբռնելի մաքրութիւն, որոյ առ համեմատութիւն ոչ է ստեղ-ծեալ ոք, որ մաքուր իցէ։

Զայն, որ որպէս որդ, և մրուր ժողովրդեան, կամեցաւ վասն սիրոյ քո գոլ անարգեցեալ. ոտնահարե-ցեալ, կատակեցեալ, թքանեցեալ, և խաչեցեալ 'ի չարութէ, և 'ի յա-նօրէնութէ աշխարհի։

Ասեմ թէ վերընծունելոցես զԱԾ, որոյ 'ի ձեռին կայ կեանն, և մահն բոլորոյ ընդհանրոյ։

Եւ թէ դու ներհակաբար, որպէս 'ի քէն մին ոչ ինչ ես, և թէ վասն մեղաց, և չարութե քո եղեալ ես ստորնագոյն քան զո՝ և իցէ անար-գագունեղ, և զազիր անքան ստեղ-ծեալ, արժանաւոր ամօթիհարիլ, և կատակիլ յամէց դժոխայնոց դիւ-աց։

Եւ թէ փոխանակ շնորհակալու-թե վասն այնքանից անչափից, և

անհամարից բարերարութեանց, 'ի քոյս ունայնս մտածմունս , և կամեցմունս արհամարհեցեր զմին այնքան, և այնպիսի բարձր , և սիրելի Տէրն , և ոտնակոխս արարեր զպատուական արեան Նորա ։

Եւ թէ այսու ամենիւ 'ի մշտնջենաւորում սիրոյ , և 'ի յանփոփոխելոյ բարութեն իւրում՝ նա կոչէ զքեզ առ իւր Ածային սեղանն , և երբեմն քննադատէ, զի գնայցես անդ սպառնացմամբ մահու · ոչ փակէ քեզ զդուռն գթութեն իւրոյ , ոչ եւս 'ի քէն յետս դարձուցանէ զիւր Ածայինս երեսս , թէպէտ դու ըստ բնութեն իցես բորոտ , կաղ , ջրգողեալ , կոյր , դիւահար , և տառեալ իցես զքեզ բազմաց պտունկաց ։

Զայս միայն խնդրէ 'ի քէն. նախ · Թէ դու ցաւիցես վասն վշտացուցանելոյդ զնա ։

Երկրորդ ։ Թէ 'ի վեր քան զայլ ամենայն իր ատիցես զմեղն և զմեծն, և զփոքրն ։

Երրորդ ։ Թէ զքեզ բոլոր մատուցանիցես, և տայցես միշտ ըղձիւ,

և գործովք հանդերձ ՚ի յաւիտենա-
կանաց, և հնազանդութեն նորին։

Չորրորդ։ Թէ յետոյ յուսայցես, և ունիցիս զհաստատուն հաւատ, թէ նա ներիցէ քեզ. մաքրիցէ զքեզ, և պաշտպանիցէ զքեզ ՚ի թշնամեաց քոց։

Զօրացուցեալ յայսմանէ անպատմելոյ սիրոյ Տն յետոյ մատիցես առ հաղորդութեն մեծաւ սիրով, և սիրելականաւ երկիւղիւ ասելով։

Ո՛վ Տէր իմ, ես ոչ եմ արժանաւոր վերընդունելոյ զքեզ վասն այնքանից, և այնքանից անգամաց, յորս ծանրագունեղանս վշտացուցի զքեզ. ոչ տակաւին ողբացի որպէս պարտիմ, զվշտացուցումն որով զքեզ վշտացուցի։

Ո՛վ Տէր իմ, ես ոչ եմ արժանաւոր ընդունելոյ զքեզ, քանզի ոչ եմ ամենևին մաքուր յղձից ներելեաց մեղաց։

Ո՛վ Տէր իմ, ես ոչ եմ արժանաւոր ընդունելոյ զքեզ, քանզի տակաւին ոչ ետու զիս ձ՚գրաւաբար սիրոյ քում, կամաց քոց, և հնազանդութեն քում

Ո՜հ ամենակարող Տ̅ր իմ, և անհունաբար բարի, զօրութ̅ի բարութեն, և բանի քո, արժանացո՛ զիս, զի այսու հաւատով ընդունիցիմ զքեզ (ով սէր իմ):

Յետ հաղորդելոյդ, փութով ներփակեա՛ զքեզ 'ի Թաքստեան սրտի քո, և մոռացեալ · զո՛ և լիցէ իր ստեղծեցեալ, այսու, կամ նմանակերպիւ խօսակցեաց ընդ Տ̅ն քում:

Ո՜հ բարձրագունեդ Թագաւոր երկնի, ո՛վ էած զքեզ 'ի սիրտ իմ, որ եմ Թշուառ, չքաւոր, կոյր, և մերկ · և նա պատասխանեացէ քեզ, սէրն:

Եւ դու կրկնելով ասասցես, ո՛հ անստեղծ սէր, ո՛հ քաղցր սէր, զի՞նչ կամիս դու յինէն, նա ասասցէ զքեզ, ոչ այլ ինչ, քան զսէր, ոչ այլ հուր կամիմ զի բորբոքիցի 'ի անոյշ սրտի քո, և 'ի նուէրս քոյս, 'ի յա̅մս գործս քոյս, քան զհուրն սիրոյ իմոյ, որ ծախելով զայլ ամենայն սէր. և զա̅մ յատկական կամս քո բուրիցէ ինձ զանուշահոտութիւն:

Զայս

Զայս խնդրեցի , և միշտ խնդրե-եմ, քանզի փափագիմ քոյդ գոլ բո-լոր , և թէ դու բոլոր լինիցիս իմ: Որ ոչ երբեք եղիցի , մինչ ոչ առ-նելով զքեն զայն համակերպութիւն , որ այնքան զիս բերկրեցուցանէ , հալեսցիս սիրոյ քոյոյ ինքեան , յատ-կականի կարծեաց քում , և ճմի կա-մեցման քում, և համարման:

Խնդրեմ 'ի քէն զատելութի քոյոյ ինքեան , զի տայցեմ քեզ զսէրն իմ, զի սիրտն քո միաւորիցի ընդ սրտի իմում, քանզի վասն այսորիկ բացա-ւ ինձ 'ի խաչին , և խնդրեմ զքեզ բո-լոր , զի ես բոլոր քոյդ լիցեմ: Դու տեսանես , թէ ես եմ անհամեմա-տելւոյ գնոյ , և սակայն վասն բա-րութեն իմոյ արժեմ որքան արժես դու: Գնեա՛ զիս ուրեմն այժմ ով սիրելի հոգի իմ. տալով զքեզ ինձ:

Ո՛վ քաղցր դուստր իմ , կամիմ ես 'ի քէն , զի դու զոչինչ կամիցիս , զոչինչ մտածիցես , զոչինչ գիտիցես, զոչինչ տեսանիցես բաց յինէն , և 'ի կամաց իմոց . զի ես 'ի քեզ բոլոր-ում, կամիցիմ, մտածիցեմ , գիտի-ցեմ,

ցեմ, և տեսանիցեմ. որպէս զի ոչընչութի քո ներընկղմեցեալ 'ի յանդունդն անհնութեան իմոյ, 'ի յայն գործուցանիցի, այսպէս դու լիցիս 'ի յիս լիապէս երջանիկ, և երանեցեալ, և ես 'ի քեզ բոլորովին համահաճ'եցեալ:

Վերջապէս մատուցեա հօրն զորդին իւր, նախ վասն շնորհակալութե, յետոյ վասն պիտոյից քոց, բոլորոյ սրբոյ եկեղեցւոյ, ամից քոյոց, և նոցա որոց պարտական ես, և վասն հոգւոց քաւարանին. և զայս մատուցումն արասցես հանդերձ յիշեցմամբ, և միաւորութե այնորիկ, զոր նա արար զիւրենէ ինքենէ, երբ բոլոր ներկեալ արեամբ, կախեալ 'ի խաչի, մատոյց զինքն հօրն,

Եւ այսու կերպիւ կարասցես նաև մատուցանել նմա զհամայնս պատարագս, որք 'ի յաւուր այնմիկ մատուցանին 'ի սրբում հռոմէականի եկեղեցւոջ:

Յաղագս հոգևորականի հաղորդութեան ։

# ԳԼՈՒԽ ԾԶ.

Էպէտ ոչ կարիցէ առնանիլ խորհրդականաց Տ͞րն առաւել քան զմի անգամ 'ի յաւուր, սակայն հոգևորապէս կարէ առնանիլ ( որպէս ասացի ) յամենայն ժամու, և յամենայն բոպէի, և այս յոչ յումեքէ տեղծանօթոյ, բաց 'ի ծուլութէ, կամ յայլմէ մերմէ մեղէ, կարէ բառնիլ 'ի մէնջ ։

Եւ հաղորդութիւս այս երբեմն լիցի այնքան պտղաբեր, և հաճոյ Այ͞. որքան ըստ պատահման ոչ լցին բազումք այլք խորհրդականք, վասն պակասութե այնոցիկ, որք վերընդունին զնոսա ։

Ուրեմն որքանիցս տրամադրիցես, և նախապատրաստիցես զքեզ առտյակխոյ հաղորդութէ, գտցես պա-

տրաստ

սորաստ զորդին ԱՅ, որ զիւրենէ ինքենէ յատկօք ձեռամբք հոգեւորապէս կերակրէ զքեզ ։

Զի նախապատրաստիցես զքեզ առ այս, դարձո՛ զքեզ միօք առ Նա այսու վախճանաւ, եւ միով կարճիւ վերահայեցմամբ առ պակասութիւս քոյս, ցաւիր ընդ նմա ՚ի վերայ վշտացուցման քո, որով զնա վշտացուցեալ ես, եւ ամ̃ի խոնարհութ̃բ, եւ հաւատով աղաչեա զնա, զի արժանաւորիցէ գալ առ աղքատիկ հոգին քո նորով շնորհիւ վասն առողջացուցանելոյ զնա, եւ զօրացուցանելոյ զնա ընդդէմ թշնամեաց ։

Կամ թէ երբ բռնաբարելոց, եւ միուցանելոց ես զքեզ յորումումեք բաղձանի քում, կամ առնելոց զոմն ներգործութիւն առաքինութ̃է, այնժամ զբոլորն վախճանաւ նախապատրաստելոյ զսիրտ քո Տ՛ն, որ անդադար խնդրէ զնա ։ Եւ յետոյ դարձուցանելով զքեզ առ Նա կոչեա զնա փափագանաւ հանդերձ, զի դայցէ շնորհիւ իւրով առ ՚ի բժշկել զքեզ, եւ պահել զքեզ ՚ի թշնամեաց,

մեաց, զի նա միայն լինիցի Տէր սր-տի քո։

Կամ, վերայիշելով զանցեալ խոր-հրդական հաղորդութիւն, ասա՛ վա-ռեցելով սրտիւ. երբ ո՞վ Տէր իմ ընկալայց զքեզ միւսանգամ, ե՞րբ, ե՞րբ։

Եւ եթէ կամիցիս նախապատրաս-տել զքեզ, և հաղորդիլ հոգևորա-պէս կերպիւ առաւել պտղաւորաց ուղղեա ՚ի յառաջնոյ երեկոյէ զա՛մս մահացուցմունս, զներգործութիւնս առաքինութէց, և զայլ ամենայն բա-րեգործութիւն; վաղձանաւ ընդունե-լոյ հոգևորապէս զՏէրն քո։

Եւ ՚ի յառաւօտուն ընդ արշալուսն նկատելով, թէ որպիսի բարի, որ-պիսի երջանկութիւն է այնորիկ հոգ-ւոյն, որ արժանապէս ընդունի զոր-բաղնագունեղ հաղորդութիւն խո-րանին, վասնզի ՚ի յայնմիկ վերստա-նին կորուսեցեալք առաքինութիւնք, հոգին վերադառնայ ՚ի յառաջին գե-ղեցկութիւն; և զինքեանս հաղորդեն նմա պտուղք, և արդիւնք չարչա-րանաց ինքեան որդւոյն ԱՅ, և որ-

քան

քան հաճոյանալ ԱՅ, թէ մեք ընդ-ունիցիմք զնա, և ունիցիմք զստա-ցեալս բարիս, ջանա՛ դու վառել ՚ի սրտի քում զմին մեծ փափագ ընդու-նելոյ զնա վասն հաճոյանալոյ նմա:

Եւ վառեցեալ այսու փափագաւ, վաղվաղակի դարձո՛ զքեզ առ նա ասելով նմա: Քանզի, ո՜վ Տէր իմ, ոչ շնորհի ինձ թէ ՚ի յայսմիկ աւուր խորհրդականապէս ես զքեզ վեր-ընդունիցիմ, արա՛ դու ո՜վ բարու-թի՛, և անստեղծ կարողութիւն, զի ես արժանապէս, ՚ի ներքսն քո ինձ զամենայն աղալան, և ՚ի յառաջա-ցուցանելն քո զիս վերընդունիցիմ զքեզ հոգևորապէս այժմ, յամենայն ժամու, և յամենայն աւուր, տալով ինձ զնոր զշնորհ, և զզօրութիւն ընդ-դէմ ամից թշնամեաց, և մանաւանդ ընդդէմ այսօրիկ, ընդդէմ որում վասն հաճոյանալոյ քեզ պատերազ-միմ:

## Յաղագս շնորհակալութեան ։

## ԳԼՈՒԽ ԾԷ.

ՎԱսն զի ամենայն բարի, զոր ունիմք, և առնեմք, է Այ, և ՚ի յԱՅ, պարտականք լիցուք մատուցանել նմա զշնորհակալութիւնս վասն ամ̃ի բարւոյ կրթութեան, և յաղթութեան մերոյ, և վասն ամ̃ից բարերարութեանց, զորս ՚ի բարեգթածէ ձեռանէ նորա ընկալեալ եմք, զմասնաւորս, և զհասարակս ։

Եւ վասն առնելոյ զայս պատշաճաւորաւ կերպիւ . նկատելի է վախճանն, յորմէ շարժի Տէրն առ ՚ի հաղորդել մեզ զշնորհս իւրս, զի ՚ի յայսմանէ նկատմանէ, և ճանաչմանէ ուսանիմք, որպէս կամիցի ԱԾ, զի մատուցանիցեմք նմա զշնորհակալութիւն ։

Եւ քանզի ՚ի յամենայն բարերարութեան Տէրն մանաւանդ դիտէ զպա֊

ուխ իւր, եւ քարշել զմեզ առ սէր, եւ ծառայութիւն իւր, նախ նկատեա ընդ քեզ այսու կերպիւ, որով կարողութբ՟, իմաստութբ՟, եւ բարութբ՟ Ած՟ն իմ՛ շնորհեալ, եւ արարեալ իցէ ինձ զբարերարութիւնս, եւ զշնորհս զայս:

Յետոյ տեսանելով, թէ ՚ի քեզ (որպէս ՚ի քէն) ոչ է իր արժանաւոր ուրուք բարերարութեն, այլ եւ ոչ այլ ինչ, քան անարժանաւորութիւնք, եւ ապերախտութիւն, հանդերձ խորին խոնարհութբ՟ ասասցես Տն:

Եւ զիա՞րդ, է ով Տէր, թէ դու արժանաւորիցիս հայիլ առ մին մեռեալ շուն; առնելով ինձ զայնքան բարերարութիւնս. լիցի անուն քո օրհնեալ ՚ի յաւիտեանս յաւիտենից:

Եւ վերջապէս տեսանելով, թէ նա բարերարութբ՟ վերախնդրէ ՚ի քէն, զի դու սիրիցես զնա, եւ ծառայիցես նմա, բորբոքեա զքեզ սիրով դէպ ՚ի յայնքան սիրելի Տէրն, եւ Ճշգրտիւ փափագաւ ծառայելոյ նմա ըստ հաճոյից նորա: Եւ վասն այսորիկ այսմիկ վերատարեսցես զմին

ի մատուցումն զոր արասցես հետեւ-
ողաւ կերպիւ ։

Յաղագս ընծայման ։

# ԳԼՈՒԽ ԾԸ.

Զի ընծայումն քոյոյ ինքեան իշխանից կողմանց հաճոյ ԱԾ կարօտի երկուց ի-րաց ։ Մինն է միաւորու-թն ընդ ընծայման, զոր արար Քն հօր. միւսն, թէ կամն քո անջատի-ցի յորմէուժեքէ հաճմանէ տանեղծոտ-ածոյ ։

Վասն առաջնոյ իրի, պարտիս դիտել, թէ որդին ԱԾ կելով 'ի յայսմիկ արտասուաց վայրիս, ոչ միայն զիւր ինքն, և զգործս իւրս, այլ նաև զմեզ ընդ իւրեան ինքեան, և զգոր-ծս մեր մատուցանէր հօրն երկնա-նոյ ։ Այնպէս զի մատուցմունք մերը պարտիցին առնիլ 'ի միաւորութե, և յուսադրութե իւրոցն ։

'Ի յերկրորդում իրի, նախ քան

Թէ ընծայիցես զքեզ, նկատեա՛ բա-
րեպէս, այդ ե՞օք կամս քո ունիցի
զոմն հպումն, քանզի՝ ՚ի յունիլն զայն,
նախ պարտի լինիլ անջատումն յամէ
ըղձէ, և վասն այսորիկ վերընթա-
ցիր առ Ած, վաղձանաւ, թէ ՚ի
յանջատելն նորին աջով իւրով զքեզ
կարիցես դու մատուցանել զքեզ
իւրում Ածայնում մեծվայելչութե
արժանիցեալ, և ազատեցեալ յամէ
այլմէ իրէ :

Եւ կարի զգոյշ կաց ՚ի յայսմիկ,
վասնզի եթէ դու ընծայիցես զքեզ
ԱՅ, հպեցեալ ստեղծուածոց, ոչ
մատուցանես զքոյդն, այլ զայն, որ
է այլոցն, մինչ դու ոչ ես քոյդ, այլ
այնոցիկ ստեղծուածոց, որոց հպե-
ցեալ կայ կամն քո, իր, որ անհա-
ճոյանայ ԱՅ, իբրթէ կամիցիս զնա
ծաղր առնել :

Եւ սատի առաջադայի, թէ այն-
քանք ընծայմունք, զորս առնեմք
ԱՅ զանձանց մերոց, ոչ միայն դա-
տարկք, և թարց պտղոյ վերադա-
նան, այլ յետոյ անկանիմք ՚ի զանա-
զանս պակասութիս, և մեղս :

Կա-

Կարեմք մեք ընծայել զանձինս մեր ԱՅ, թէպէտ հալեցեալք տեղծանաւոց, բայց սակայն վաղճանաւ, զի բարութի նորա արժանիցէ զմեզ, զի յետոյ կարիցեմք տալ զմեզ բոլորովին իւրում Ածայնում մեծվայելչութե, և ծառայութեան իւրում, և զայս պարտիմք առնել նմա տոեպ, և մեծաւ փափագաւ։

Լիցի ուրեմն ընծայումն քո թարց պղման, թարց յատկութե ուրուք կամեցման քո, ոչ հայելով, ոչ առ երկրայինս բարիս, ոչ առ երկնայինս, այլ առ սոսկ կամս, և նախախնամութին Ածային, որում զքեզ բոլոր պարտիս ենթարկել, և զոհել 'ի մշտնջենաւոր ողջակէզ, և մատուցեալ զամենայն ստեղծեցեալ իր, ասել։ Ահա Տէր. և ստեղծօղ իմ, բոլորն, և ամենայն կամս իմ 'ի ձեռին կամի, և յաւիտենականի նախախնամութե քո. արա զինէն զայն, որ քեզ երևի, և հաճոյանայ, 'ի կենի, և 'ի մահուան, և յետ մահուան, այսպէս 'ի ժամանակի, որպէս 'ի յաւիտենականութե։

Եթէ առնիցես այսու կերպիւ Ճգնութիւ (զորմէ զգացցես, յորժամ հանդիպին քեզ իբր ներհակք) եղիցիս դու ՚ի յերկրայնոյ աւետարանական վաճառականն, և երջանկագունեղ, զի դու եղիցիս Այ, և Ած եղիցի քոյդ. մինչ նա միշտ է այնոցիկ, որք զատելով զինքեանս ՚ի ստեղծուածոց, և ՚ի յիւրեանց ինքեանց, զինքեանս բոլորս տան, և զոհեն իւրում Ածայնում մեծվայելչութեն։

Այդ դու տեսանես աստ, ով դուստր, զմին հզօրագունեղ կերպ յաղթելոյ զամենայնս թշնամիս քոյս, վասնզի եթէ այնպէս միաւորէ զքեզ ՚ի յԱծում աստացեալ ընծայումն, զի դու բոլոր իցես նորա, և նա բոլոր քոյդ. ո՞ր թշնամին, և ո՞ր կարողութի կարասցէ երբէք վչտացուցանել զքեզ։

Եւ յորժամ կամիցիս ընծայել նմա զիմն գործ քո, զորօրինակ, զծոմապահութիս, զաղօթս, զներգործութիս համբերութեան, և զայլս իւրս բարիս, նախ դարձո՝ զմիտ քո առ

ըն֊

ընծայումն, զոր առնէր Քն̃ հօր մատուցանելով նմա 'ի յիւրոց ծոմապահոց, աղօթից, և այլոց գործոց, և յուսադրութե̃ ուժեղութեն, և զօրութեն այսոցիկ, յետոյ մատո՛ նմա զքոյս ։

Եւ եթէ կամիցիս առնել հօր երկնայնոյ զընծայումն 'ի գործոցն Քն̃ և վասն պարտականութեանց քոց, արտացես դու զնա այսու կերպիւ ։

Տացես զմին ահաւոր հայեցումն, և երբեմն զմանաւոր առ մեղքոյս, և յայտնապէս տեսանելով, թէ ոչ է կարելի, զի դու կարիցես 'ի քէն մեղմացուցանել զբարկութիւն ԱՅ, և ոչ վճարել իւրում Ածայնում՝ արդարուե, վերընթացես առ կեանն, և առ չարչարանն որդւոյ իւրոյ, Մտածելով զամն գործ նորա, զոր օրինակ, երբ ծոմապահեր· աղօթեր, կրեր, կամ հեղոյր զԱրիւն, ուր տեսցես, թէ առ 'ի հաշտեցուցանել զհայրն ընդ քեզ, և վասն պարտաւորութե̃ անօրէնութեանց քոց, մատուցանէր նմա զայնոսիկ գործս իւրս,

չարչարանս իւրս, եւ զարիւն իւր, իբրեւ ասելով :

Ահա հայր իմ յաւիտենական. Թէ ըստ կամաց քոց ես վճարեմ արդարութեան քում, վերատատպէս, վասն մեղաց, եւ պարտականութեանց, այս անուն մարդոյ : Հաճոյասցի Աճայնում մեծվայելչութեան քում ներել նմա, եւ վերընդունիլ զնա 'ի թիւ ընտրելոց քոց :

Ուստի դու յայնժամ զայս նոյն ընծայումն, եւ զայսոսիկ աղաչանս մատո՛ վասն քո նոյնոյ հոր, աղաչելով զնա զի զօրութեամբ նոցա թողուցու քեզ զամենայն պարտս :

Եւ զայս կարասցես առնել ոչ միայն անցանելով 'ի միոյ առ միւս խորհուրդն, այլ նաեւ 'ի միոյ առ միւս ներգործութիւն իւրաքանչիւրոյ խորհրդոյ, եւ ոչ միայն վասն քո, այլ նաեւ վասն այլոց կարասցես վարիլ այսու եղանակաւ մատուցման :

## Յաղագս զգալւոյ ջերմեռանդութեն, և յաղագս ցամաքութեն։

## ԳԼՈՒԽ ԾԹ.

Զգալի ջերմեռանդութիւնն զպատճառի, մերթ 'ի բնութէ, մերթ 'ի սատանայէ, և մերթ 'ի շնորհաց. 'ի պտղոց նոցա կարասցես տարորոշել ուստի՛ յառաջանայցէ, քանզի եթէ ոչ հետևի 'ի քեզ բարեգունութիւն կենաց, պարտիս երկբայիլ, թէ իցէ 'ի սատանայէ, կամ 'ի բնութէ, և այնքան առաւել, որքան մեծագոյն բերկրութի, քաղցրութի, և համարումն ինչ քոյդ 'ինքեան ընկերակցեցեալ իցէ նմա։

Ուստի երբ դու զգայցես քաղցրանալ զմիտն քո 'ի հոգևորականաց բերկրութեանց, մի վիճեր, թէ յորմէ կողմանէ գայցեն առ քեզ. և մի յենուր 'ի վերայ նոցա, և մի հեռա-

նար ՚ի ճանաչմանէ ողորմութե՟ քո, եւ մեծագունիւ ջանիւ, եւ առեց-մամբ քոյոց լինքեան, ջանամ պահել զսիրտ քո ազատ յոլմէումեքէ հաշ-մանէ, թէպէտ հոգեւորէ, եւ փա-փագեաց միայնում Այ՟, եւ համա-հաճութե՟ նորին, զի այսու կերպիւ բերկրութիւնն թէ իցէ ՚ի բնութե՟, թէ ՚ի սատանայէ լիցի քեզ ՚ի շնոր-հաց :

Նմանապէս ցամաքութիւնն կարէ յառաջագայել ՚ի յերից ասացելոց պատճառաց :

՚Ի սատանայէ, վասն դառնացու-ցանելոյ զմիտս, եւ վերադարձուցա-նելոյ զնա ՚ի հոգեւորէ գործոյ առ զբօսմունս, եւ բերկրութիս աշխարհի:

՚Ի մէնջ ինքեանց վասն մեղաց մե-րոց, վասն հալմանց երկրի, եւ վասն հեղգութեց :

՚Ի շնորհաց, կամ վասն ապա-նելոյ մեզ, զի իցեմք զգաստագոյնք թողուլ զամենայն հաճուսն, եւ զբա-ղումն, որ ոչ իցէ Այ՟, եւ ոչ եղե-րիցի առ նա : Կամ զի ճանաչիցեմք փորձառութե՟, թէ ամենայն բա-

րին

րին մեր գայ 'ի նմանէ. կամ զի առաւել համարիցիմք այսմ հետէ զպարգևս իւրս, և իցեմք զգուշագոյնք, և խոնարհագոյնք առ 'ի համապահել զնոսա, կամ վասն միաւորելոյ զմեզ անդադոյն ընդ իւրում Աստուածայնում մեծվայելչութեան, հանդերձ բոլորով ուրացմամբ անձանց մերոց, նաև 'ի բերկրութիւս հոգեւորս, զի մի վասն հպերձման ըղձի մերոյ այսոցիկ բաժանիցեմք զնիրա, զոր Տէրն բոլորն կամի վասն իւր, կամ եթէ, քանզի նա համահաճի վասն բարւոյ մերոյ, և վասն կիրառութեան շնորհի իւրոյ տեսանել զմեզ պատերազմիլ բոլորովք զօրութեամբ մերովք:

Ուրեմն, եթէ զգայցես զքեզ ցամաքեցեալ, մնա 'ի սիրտ քո, առ 'ի տեսանել, վասն ոչոյ պակասութեան քո բացաքարշեցեալ իցէ 'ի քէն զգալի ջերմեռանդութիւնն, և ընդդէմ նորա պատերազմեաց ոչ վասն վերստանալոյ զզգալութիւն շնորհի, այլ վասն բառնալոյ 'ի քէն զայն, որ անհաճոյանայ Այ:

Եւ 'ի յոչ գտանիլն պակասութեան, լիցի զգալի ջերմեռանդութիւն քո ճշմարիտ ջերմեռանդութի, որ է պատրաստական համակերպութի կամացն ԱՅ ։

Եւ սակայն ջանա՛, զի մի երբէք թողուցուս զհոգեւորս կրթութիւնս քոյս, այլ հետեւեա՛ նոցա ամի ջանիւ քոյով, երեւեցելոց, որքան անպաղողոց, և անհամից, կամաւորապէս ըմպելով զբաժակն դառնութեանց, զոր 'ի ցամաքութեան կարկառէ քեզ սիրական կամքն ԱՅ ։

Եւ եթէ երբեմն ցամաքութեան ընկերակցիցեն այնքանք, և այնպէս բազումք նսեմութիւնք մտաց, զի դու ոչ գիտիցես թէ ուր դարձուցանիցես զքեզ, կամ թէ զինչ մտածիցես. սակայն մի զահիհարիր, այլ կաց միանձնեայ, և հաստատ 'ի խաչին, հեռացեալ յամէ բերկրութէ երկնայնոյ, թէպէտ 'ի յաշխարհէ, և 'ի ստեղծուածոց մատուցանիցին քեզ ։

Գտցես զչարչարան քո յորժամ ումեքէ անձնէ, բայց 'ի հօրէ քումմէ

հո-

հոգևորէ, որում զնա ծանուցեր, ոչ վասն թեթևացուցանելոյ զչարչարանն, այլ վասն ուսանելոյ ՚ի նմանէ զկերպն տանելոյ զայն, ըստ հաճոյից ԱՅ։

Զհաղորդութիս, զաղօթս, և զայլս կրթութիս, մի ՚ի կիր արկաներ այսու վաղճանաւ, զի դու լքանիցես ՚ի խաչէն, այլ առ այս վաղճան, զի վերընդունիցիս զզօրութիւն բարձրացուցանելոյ զասացեալ խաչն առ մեծագոյնս փառս խաչեցելոյն։

Եւ ոչ կարելով խոկալ, և աղօթել ըստ կերպի քում վասն չփոթութեան մտաց, խոկեա բարեգունի կերպիւ, որով կարիցես։

Եւ զայն, զոր ոչ կարես կատարել իմացութեամբ, բանադատեա զքեզ, զի կատարիցես կամօք, և բանիւք խոստակցելով ընդ քեզ, և ընդ Տն, և տեսցես զգործս զարմանալիս, և այսպէս սիրտ քո ընկալցի զշունչ, և զզօրութիւն։

Ուրեմն ՚ի յայնպիսւոջ դիպուածոջ կարասցես ասել։

‖ Ընդէր տրտում ես անձն իմ,

կամ

կամ ընդէր խռովես զիս · յուսամ առ Ած · խոստովանեսցի նմա · փրկիչ երեսաց իմոց Ած է ։

|| Ընդէր Տէր կացեր 'ի հեռաստանէ անտես արարեր 'ի դէմս նեղութեան ժամանակի ։ Եւ մի թողուր զիս մինչեւ իսպառ ։

Եւ յիշելով դու զայն մեծ վարդապետութիւնն , զոր Ած 'ի ժամանակի նեղութեան եհեղ իւրում սիրելւոյն սառայի կնոջ տօբիթայ , դու եւս 'ի կիր արկ ասելով կենդանեաւ ձայնիւ ։

|| Արդ զայս վասն ստուգի ունի ամենայն ոք , որ զքեզ պաշտէ , թէ կեան նորա եթէ 'ի փորձութեան եղիցի , պսակեսցի · իսկ եթէ 'ի նեղութեան եղիցի , ազատեսցի · եւ եթէ 'ի կշտամբութեան եղիցի , առ ողորմութի քո գալ արժանասցի · քանզի ոչ բերկրիս 'ի կորստեան մերում , վասն զի յետ մրրկի զանդորրութի առնես , եւ յետ արտասուաց , եւ աշխարման ներհեղուս զուրախութի · լցի անուն քո օրհնեալ 'ի յաւիտեան Ած իսրայէլի · Տօբիթայ ։

Նաեւ յիշեսցես զգթն քո , որ 'ի

պար-

պատուեղի , և 'ի խաչին , 'ի մեծի
չարչարանի իւրում , 'ի յերկնային
հօրէն իւրմէ 'ի մասին զգայութեան
բացաթողեցեալ եղև , և ընդ նմա
տանելով զխաչն բոլորով սրտիւ ա-
սասցես , եղիցին կամք քո :

Չի մինչ դու այսպէս առնես ,
համբերութի քո , և աղօթ.քո բար-
ձրացուսցեն զբոցն ողջակիզի սրտի
քո մինչև առ հայեցուածս ԱԾ մե-
րանալով դու ճշմարիտ ջերմեռանդ:
Մինչ ( որպէս ասացի քեզ ) ճշմա-
րիտ ջերմեռանդութիւն է միոյ կեն-
դանի , և հաստատ պատրաստութի
կամաց հետևելոյ Քի հանդերձ
խաչիւն 'ի վերայ ուսոց , ընդ ո՛ և
իցէ ճանապարհ հրաւիրիցէ , և կո-
չիցէ զքեզ առ ինքն , և կամիլ զԱծ
վասն ԱԾ , և երբեմն թողուլ զԱծ
վասն ԱԾ:

Եւ եթէ յայսմանէ , և ոչ 'ի զգա-
լոյ ջերմեռանդութէ , բաղումք ան-
ձինք , որք պարտաւին ուղւոյ , և մա-
նաւանդ կանայք , չափիցեն զզար-
գացումն իւրեանց , ոչ պատրիցեին
զիւրեանց ինքեանց , ոչ 'ի սատա-
նայէ ,

նայէ , ոչ ցաւիցեն անօգտաբար , այլ եւ ապերախտաբար վասն միոյ այնքան մեծի բարւոյ զոր Տէրն անէ նոցա , եւ մեծագունիւ ջերմեռանդութե՟ պարապիցեն ծառայել իւրում Ածայնում մեծվայելչութե , որ զբոլորն տրամադրէ , կամ թոյլ տայ վասն փառաց իւրոց , եւ բարւոյ մերոյ :

Եւ ՚ի յայսմիկ եւս խաբին կանայք, որք երկիւղիւ , եւ խոհեմութե՟ խոյս տան ՚ի յառթից մեղաց , որք երբեմն թախանձեցեալք ՚ի զարհուրելեաց, տգեղաց , եւ սարսափելեաց մտածմանց , եւ երբեմն նաեւ ՚ի տեսլեանց տգեղագունեղից շփոթին , թուլանան , եւ հաւատան բացաթողանիլ , եւ հեռանալ ՚ի բոլորոջ ՚ի յԱՅ , եւ ոչ կարելով համոզել զինքեանս , թէ ՚ի մտի , որ լի է այնպիսեօք մտածմամբք , կարիցէ բնակիլ իւր Ածային ոգին :

Այսպէս կարի խորտակեցեալք գրեթէ յուսահատելոցք են, եւ թողեալք զամենայն բարի կրթութիւն իւրեանց , վերադառնալ ՚ի Յեգիպտոս :

Եւ

Եւ սոքա ոչ ըմբռնեն բարեպէս զշնորհն , զոր Տէրն առնէ նոցա, որ թոյլ տայ զայնպիսիս օգնիս փորձութե վերարձակիլ 'ի վերայ նոցա , վասն վերածելոյ զնոսա առ ճանաչումն իւրեանց ինքեանց , և զի որպէս կարօտք օգնութեան մատիցին առ նա ։ Ուստի ապերախտաբար ցուցին զայնմանէ , զորմէ պարտէին ճանաչել զինքեանս պարտաւորս իւրում անհնոյ բարութեան ։

Զայն , զոր դու առնել պարտիս 'ի յայսպիսիս պատահմունս է , թէ դու խորապէս մտածիցես զխեղաթիւր յօժարութին քո , զոր մտածումն կամի ԱԾ վասն քոյոյ բարւոյն. զի դու ճանաչիցես զքեզ պատրաստ առ ամենայնս ծանրագունեղս չարիս , և թէ թարց օգնութեան նորա ջահավիժիցեիր 'ի յետին կործանումն ։

Եւ 'ի յայսմանէ մուտ 'ի յոյս , և 'ի յապաւինութիւն , թէ նա իցէ օգնելոց քեզ , վասնզի ցուցանէ քեզ զվտանգ, և կամի քարշել զքեզ մերձագոյն ինքեան աղօթիւք , և վեր-

ըն-

ընթացմամբ առ նա, որում վասն այ-
սորիկ պարտիս մատուցանել զնո-
նորհագունեղս շնորհակալութիւնս:

Եւ կալ իբրև զստոյգ, թէ նմանք
ոգիք փորձութեան, և ուղեղք մտած-
մունք, լաւագոյն արտաքին միով
համբերողաւ հանդուրժմամբ չարչա-
րանաց, և միով արագաւ յետ դար-
ձուցմամբ ուսոց, քան խառնիւ աշ-
խարհականաւ ընդդիմամարտութեամբ:

## Յաղագս քննութեան խղճի մտաց:

## ԳԼՈՒԽ Կ.

Աւն քննութեան խղճի մտաց
նկատեա զերկիս իւրս:

Զանհեցմունս այնր աւ-
ուր:

Զպատճառս նոցա. և զոգին և
զպատրաստութիւն, զոր ունիս առ ՚ի
պատերազմիլ ընդդէմ նոցա, և առա-
ջնալ զառաքինութիւնս ներհակս նոցին:

Շուրջ զանհեցմամբ տրամադրեա զոր-
քան

քան ատեցեալ եմ քեզ 'ի դժոխոյն երբ վիրաւորեցիմք։

Զպատճառ նոցա ջանասցես խորտակել, և կործանել։

Զկամս վասն առնելոյ զայս, և վասն ստացման առաքինութեանց, զօրացուցես անապաւինութիւն 'ի քեզ ինքեան, ապաւինութիւն 'ի յԱծ, աղօթիւք, և բազմութիւն ներգործութեանց ատեցողականաց մոլութեան, և փափագողականաց ներհակի առաքինութեան։

Յաղթութիւնք, և բարեգործութիւնք, զորս արարեալ իցես, դիցեն 'ի քեզ զկասկածանս։

Բաց 'ի յորմէ, ոչ խրատեմ, զի կարի նկատեսցես զնոսա, վասն վտանգի իբր անխուսափելւոյ, գտանեայ զումեքէ ծածկեցելոյ շարժականէ սնափառութեան, և հպարտութեան։

Ուստի վերաթողեալ զնոսա բոլորս ողորմածութեան ԱՅ, որպիսի և իցեն այնոքիկ, ուղղեա զմտածումն քո առ կարի առաւելն, որ քեզ վերամնայ առնելի։

Որքան յետոյ պատկանի առ մա-

տու-

տուցումն շնորհակալութեան վն՜ բար-ւեաց, և օժանդակութեանց, զորս արար քեզ Տէրն 'ի յայնմիկ աւուր, վերաճանաչեալ զնա իբրև արարիչ ամի՜ բարւոյ, շնորհակալ լեր 'ի նմանէ, քանզի ազատեաց զքեզ յայնքանից թշնամեաց յայտնեաց, և կարի առաւել գաղտնեաց. որ ետ քեզ զբարիս մտածմունս, և զառիթս առաքինութեանց, և վասն ամի՜ այլոց բարերարութեան, զոր դու ոչ ճանաչես:

Թէ որպէս 'ի յայսմիկ պատերազմի
պիտոյ է յարատևել, պա-
տերազմելով միշտ
մինչև 'ի մահ:

## ԳԼՈՒԽ ԿԱ:

Ի ՄԷՋ այլոց իրաց, որք վերախնդրին 'ի յայսմիկ պատերազմի. մինն է յարատեւութիւն, որով միշտ պարտիմք պարապիլ առ 'ի մահացու.

ցուցանել զկիրս Դ․․ս , որք 'ի յայս-
միկ կենի ոչ երբեք տ․․անին , այլ
եւս , որպէս զվատ խոտ յանմուծ ժա-
մու բողբոջին :

Եւ այս է պատերազմ, որ որպէս
ոչ վերջանայ եթէ ոչ կենօք , այս-
պէս ոչ կարէ փախուցեալ լինիլ 'ի
մէնջ . եւ ով անդ ոչ կամի պատե-
րազմիլ , հարկաւորապէս ըմբռնի , եւ
մեռանի անդ :

Բայց 'ի յայսմանէ տանելի է ընդ-
այնպիսեաց թշնամեաց , որք միշտ
ատեն զմեզ , ուստի ոչ կարեմք յու-
սալ 'ի նոցանէ զխաղաղութի , եւ ոչ
երբեք զդադարումն , վասնզի առա-
ւել անողորմաբար սպանանեն զնա ,
որ առաւել խնդրէ բարեկամանալ
նոցա :

Սակայն ոչ պարտիս դու երկնչիլ
վասն կարողութե , եւ բազմութեան
նոցա , քանզի 'ի յայսմիկ պատերազմի
ոչ վերանայ կորուսիչ , եթէ ոչ որ
կամի : Եւ բոլոր զօրութի թշնամե-
աց մերոց կայ 'ի ձեռին զօրապետա-
քին , որոյ առ պատւին պարտիմք պա-
տերազմիլ :

Նա

Նա ոչ միայն ուրոյն տացէ , զի իբր էոչ 'ի լուր առնիցի քեզ , այլ նաև վասն քո տացէ զզէնս , և որպէս կարողագոյն քան զհամայնս հակառակորդս քոյս տացէ զ յաղթութիւն 'ի ձեռին · սակայն եթէ դու 'ի միասին ընդ նմա տրիաքար պատերազմելով ոչ 'ի քեզ , այլ 'ի կարողութի , և 'ի բարութի նորա ապաւինիցիս ։

Եւ եթէ Տէրն ոչ այսպէս փութով շնորհիցէր քեզ զարմանենին , մի թուլանար · քանզի դու պարտիս գոլ տուադագոյն ( և սա նաև օգնեցէ քեզ առ 'ի պատերազմիլ վստահաբար ) թէ նա զհամայնս լիս , որք ընդդառաջ հանդիպեցին քեզ , և զայնոսիկ , որք երևեցին քեզ հեռագոյնք , այլ ևս ներհակք յաղթութե քում ( որպիսիք և իցեն ) դարձուցէ 'ի բարերարութի , և 'ի յօգուտ քո , եթէ դու լինիցիս հաւատարիմ , և քաջամարտիկ ։

Ուրեմն ով դուստր , հետևելով դու երկնայնոյ զօրապետին քո , որ վասն քո յաղթեաց աշխարհի , և ետ

զմահ

զմահ իւրոյ ինքեան , մեծահոգեաւ սրտիւ անսամ այսմիկ պատերազմի , և բոլորականի եղծման ամիջ թշնամեաց քոց , զի եթէ նաև մինն թողանիցիւր կենդանի , իջէր քեզ իբրև զևոց 'ի յաչս , և զգեղարդ 'ի կողս . որ արգելուցուր քեզ զընթացն այսպէս փառաւորի յաղթութեան :

Յաղագս կերպի պատրաստելոյ զմեզ
ընդդէմ թշնամեաց , որք
յառնեն 'ի վերայ մեր
'ի ժամանակի մա-
հուան :

## ԳԼՈՒԽ ԿԲ·

Յիշեա՛ թէ բոլոր կեանն մեր իցէ մին հանապազորդական պատերազմ 'ի վերայ երկրի , սակայն նախապետական , և նշանաւորագոյն օրն է 'ի վերջին ժամու մեծի անցման , քանզի ովք 'ի յայնմիկ կետոջ անկանի , այլ ևս ոչ կանգնի :

Այն ,

Այն, զոր դու տանելոց ես, զի գտանիցես զքեզ յայնժամ բարեպէս պատրաստեցեալ, է, թէ ՚ի յայսմիկ ժամանակի, ուր քեզ շնորհի, դու փութաբար պատերազմիցիս, մինչ է իր առոյգ, թէ ով բարեպէս պատերազմի ՚ի կենի, դիւրաբար ստանայ զյաղթութիւն ՚ի կէտի մահուան, վասն բարւոյ ունակութեան արդէն ստացելոյ:

Բաց ՚ի յայսմանէ բազմիցս ուշադրաբար մտածեա, և խոկա զմահն, քանզի երբ գայցէ ՚ի վերայ քո, նուաղ երկիցես, և միտք քո եղիցին ազատ, և պատրաստ առ պատերազմ: Աշխարհականք մարդիկք փախչին յայսմանէ մտածմանէ, զի մի միջահատիցեն զհրճուանս իւրեանց ՚ի յիրս երկրայինս, որոց կամաւորապէս հպեցեալք սիրով, զգայցեն զչարչարան, եթէ մտածիցեն, թէ պարտիցեն թողուլ զնոսա: Այսպէս ոչ նուաղեցուցանի անկարգ խիղճն նոցա, այլ ևս միշտ առաւել զօրանայ· ուստի յետոյ բաժանիլն յայսմանէ կենցաղոյս, և յիրաց այն-
քան·

քան սիրելեաց, է նոցա անպատմելի ցաւ, և երբեմն ցաւս այս մեծագոյն է՝ ի յայնոսիկ, ուր երկարագոյն զայնոսիկ վայելեալք են։

Նաև, զի լաւագոյն առնիցես զայս պիտոյական նախապատրաստութին, կարասցես երբեմն մտածել, գտանել զքեզ միայն թալց օգնութեն ուրուք եղեալ ՚ի մէջ նեղութեանց մահուան, և վերածել ՚ի միտ քո զերս հետևօղս, ուր ՚ի յայնմիկ ժամանակի կարիցեն վշտացուցանել զքեզ. և յետոյ սատ տրամաբանեսցես շուրջ զդեղովք, զորս առբերից քեզ, զի դու կարիցես լաւագոյն վարիլ նոքօք ՚ի յայնմիկ վերջնում անձկութեն, քանզի հարուածն, որ միանգամ առնելի է, պիտոյ է, թէ նախ բարեպէս ներտալիցի, զի մի լինիցի մոլորութի, ուր վերուղղումն ոչ ունի զտեղի։

Յաղագս չորից վերարձակմանց թշնամեաց մերոց 'ի ժամանակի մահուան, և նախ յաղագս վերարձակման ընդդէմ հաւատոյ, և յաղագս կերպի պաշտպանելոյ զմեզ:

## ԳԼՈՒԽ ԿԳ.

Չորք են գլխաւորք վերարձակմունք, և վտանգաւորագոյնք, որովք թշնամիք մերք սովորք են արձակել 'ի վերայ մեր 'ի ժամանակի մահուան: Այսոքիկ են փորձութիւն զհաւատոյ: Յուսահատութիւն: Սնափառութիւն, և զանազանք պատրանք, և այլակերպութիւնք դիւաց 'ի հրեշտակս լուսոյ:

Որքան առ առաջին վերարձակումն, եթէ թշնամին սկսանիցի փորձել զքեզ խորովք ասովք ձեռնարկութեամբք, փութով յետաքարշեա՛ զքեզ 'ի յիմացութենէ առ կամն, ասելով

րով, երթ յետս իմ սատանայ, հայր
ատութեց, զի ես ոչ ևս կամիմ ուն-
կնդրել քեզ, որով հետև բաւակա-
նէ ինձ հաւատալն, զորքան հաւա-
տայ հռոմէական սբ եկեղեցին։

Եւ մի տար զանգն որքան կարի-
ցես, մտածմանց հաւատոյ որքանև
բարեկամաց քեզ երևեցելոց, հա-
մարելով զնոսա իբրև զշարժականս
սատանայի, զի սկսանիցի պատե-
րազմիլ։

Եւ եթէ և նաև ոչ իցէիր 'ի ժա-
մանակի, յորում յետաքարշիցէիր
զմիտն ըստ պատշաճաւորութե, կաց
բարեալէս հզօր, և հաստատ, զի մի
անկանիցիս վասն որոյ և իցէ բանի,
կամ հեղինակութե դրոց, զորս հա-
կառակորդն առբերիցէր, քանզի հա-
մայնքն եղիցին կորստեցեալք, կամ
վատաբար առբերեցեալք, կամ թէ
վատաբար մեկնաբանեցեալք, թէ-
պէտ երևիցին քեզ բարիք, պայ-
ծառք, և յայտնիք։

Եւ եթէ խորամանկ օձն հարցա-
նիցէր ցքեզ զայն, զոր հաւատայ
հռոմէական եկեղեցին, միտար նմա

զպատասխանի, այլ տեսանելով զխա-
բեբայութիւն նորա, և թէ նաև կա-
միցիւր ըմբռնել զքեզ 'ի խօսս, ե-
լուզեալ զմին ներքին ներգործութի
կենդանաչունի հաւատոյ, կամ նաև
զի առնիցես զնա պայթիլ 'ի բար-
կութէ, պատասխանեա՛ նմա թէ ս̅բ
հռոմէական եկեղեցին հաւատոյ զճշ-
մարտութիւն, և եթէ չարաբարոյն
վերակրկնիցէր, զինչ է ճշմարտու-
թիւս այս. վերակրկնեա՛ դու այն իսկ
զոր նա հաւատոյ:

'Ի վեր քան զամենայն միշտ պա-
հեա՛ զսիրտ քո ուշադիր առ խաչե-
ցեալն, ասելով. Ո՛վ իմ ստեղծօղ,
և փրկիչ իմ, օգնեա՛ ինձ վաղվաղա-
կի, և մի հեռանար յինէն, զի մի
ես հեռանայցեմ 'ի ճշմարտութենէ
ս̅բոյ կաթուղիկէի հաւատոյ քո. և
հաճոյասցի քեզ, զի 'ի յայնմիկ, որ-
պէս 'ի ձեռն շնորհի քո ծնեցեալ
եմ, այսպէս 'ի փառս քոյս վերջա-
նայցէ այս մահկանացու կեանն իմ:

Յաղագս վերարձակման յուսահա-
տութեան, և յաղագս
դեղոյ նորա։

# ԳԼՈՒԽ ԿԴ.

Միւս վերարձակումն որով ջանայ խեղաթիւր սատանայն բոլորովին կործանել զմեզ, է այն, որով ահացուցանէ զմեզ յիշեցմամբ մեղաց մերոց, զի գահավիժիցէ զմեզ 'ի մէջ խորխորատի յուսահատութեն։

'Ի յայսմիկ վտանգի, պահեա առ քեզ զայս ճշմարիտ կանոն, թէ մտածմունք զմեղաց քոց են 'ի շնորհաց, և առ փրկութի քո, երբ առնեն 'ի քեզ զգործս խոնարհութեն, ցաւոյ զղջացուցմանն ԱՅ, և յուսադրութեն 'ի բարութի նորա։ Բայց երբ անհանգստացուցանեն զքեզ, և դնեն 'ի յանապաւինութեն, և 'ի փոքրոգութեն, թէպէտ երևիցեն քեզ զիրաց ճշմարտից, և բաւականաց

առ 'ի ծանուցանել քեզ, թէ դու դատապարտեցիս, եւ թէ վասն քո այլ եւս ոչ իցէ ժամանակ փրկութեան, վերաճանաչեա՛ նաեւ զնոսա իբրեւ զգործս խաբեբային, առաւել խոնարհեցո՛ զքեզ, եւ առաւել յուսա՛ 'ի յԱԾ, զի այսու կերպիւ նոյնովք զինուք նորին յաղթիցես յթշնամւոյն, եւ տացես զփառս ԱԾ:

Այո՛ ցաւիր զվշտացուցմանէ, որով վշտացուցեալ իցես զԱԾ քանիցս անգամ գայցէ 'ի միտս քոյ, բայց սակայն ապաւինեալ 'ի չարչարանս նորա հայցեա՛ 'ի նմանէ զթողութիւն:

Նաեւ ասեմ քեզ, թէ եթէ երեւիցի՛ւր քեզ, թէ ինքն ԱԾ ասիցէ ցքեզ, թէ դու ոչ ես 'ի յոչխարաց իւրոց, սակայն դու ոչ պարտիցես իւիք կերպիւ թողուլ զապաւինութին 'ի նա, այլ խոնարհաբար ասել նմա. Տէր իմ բարուոք ունիս զբան 'ի մեղս իմս դատապարտելոյ զիս, բայց ես 'ի բարեգթութեան քում ունիմ զմեծագոյն, զի դու ներիցես ինձ:

Ուստի

Ուստի խնդրեմ 'ի քէն զփրկութի այսորիկ ողորմելոյ ստեղծուածոյ քո, այս՝ դատապարտեցելոյ 'ի չարութենէ իւրմէ, բայց փրկեցելոյ գնով արեան քո: Կամիմ ես, ով փրկիչ իմ 'ի փառս քոյս փրկել, և ապաւինութեամբ 'ի յանչափ ողորմութիւն քո, զիս բոլոր թողում 'ի ձեռս քոյս: Արա՛ զինէն որքան քեզ հաճոյանայ, քանզի դու ես միայնակ Տէրն իմ, և եթէ նաև սպանանիցէիր զիս, սակայն կամիմ ունել 'ի քեզ կենդանի զյոյս իմս:

### Յաղագս վերարձակման անափառութեան:

## ԳԼՈՒԽ ԿԵ:

Չորրորդ վերարձակումն է անափառութեան, և յանդգնութեան:

'Ի յայսմիկ ամենևին մի երբէք թողուցուս իւիք կերպիւ ներա-

բածել զքեզ նաև առ մին փոքրագունեղ համահաճոյութի քոյոյ ինքեան, ոչ գործոց քոց: Այլ համահաճութի քո իցէ սոսկապէս 'ի Տր, 'ի բարեգթութն նորա, 'ի գործս կենաց, և չարչարանաց նորին:

Միշտ առաւել արհամարհեա՛ զքեզ 'ի յաչս քոյս մինչև 'ի վերջին շունչն, և զամենայնէ բարւոյ 'ի քէն արարեցելոյ, որ երևեցուցանիցիւր քեզ, վերաճանաչեա՛ զԱծ միայն 'ի հեղինակ: Վերընթացիր առ օգնութի նորա, բայց մի ապաստեր նմա վն արդեանց քոց, թէպէտ զբազումս, և զմեծս յաղթութիս արարեալ իցէիր: Եւ միշտ կաց 'ի միում սրբում երկիւղի, ճշգրտաբար խոստովանելով, թէ համայնք խնամատարութիք քոյք իցէին ունայնք, եթէ ընդ հովանեաւ թևոց իւրոց ոչ ունիցիւր զքեզ Այն քո, որոյ 'ի պաշտպանութի միայնականապէս ապաւինեսցիս:

'Ի հետևելին քո այսօցիկ ազդարարութեց ոչ կարասցես ընդդէմ քեզ առաւել զօրանալ թշնամիքն քոյք:

Եւ

Եւ այսպէս բացցես քեզ ճանապարհն , որ ուրախարար անցանիցես 'ի յերկնային երուսաղէմ ։

## Յաղագս վերարձակման պատրանաց , և սուտ երևմանց 'ի կեանս մահուան ։

## ԳԼՈՒԽ ԿԶ

Եթէ յանդուգն թշնամին մեր , որ ոչ երբէք նջուի նեղացուցանել զմեզ յառնիցէ 'ի վերայ քո հանդերձ սուտ երևմամբք , և այլակերպութիւնք 'ի հրեշտակ լուսոյ , կաց դու հաստատ , և անշարժ 'ի ճանաչման ոչընչութեան քո և ասա՛ նմա համարձակապէս ։ Դարձիր ո՛վ ապերջան 'ի ստուերս քոյս , զի ես ոչ եմ արժանաւոր տեսլեանց , ոչ կարօտիմ այլում քան ողորմածութեան Յ̄ի իմոյ , և աղաչանաց մարիամայ կու-

սուսին, սրբոյն Յօսեփայ, և այլոց սրբոց ։

Եւ եթէ նաև երևեցիր քեզ 'ի ձեռն բազմաց իբր յայտնեաց չնանաց, թէ էջէին իրք եկեալք 'ի յերկնից, սակայն հրաժարեաց 'ի նոցանէ, և բացամերժեա, և հեռացո՝ զնոսա 'ի քէն որքան կարես, և մի երկնչիր, թէ ընդդիմութիւնս այս հիմնեցեալ 'ի խոնարհանաւորութեն քո, անհաճոյանայցէ Տն, քանզի եթէ իրողութին իցէ իւրն, բարեպէս գիտասցէ նա յայտնել զնա, և դու ոչինչ կորուսցես, վասնզի ու տայ զշնորհ խոնարհաց, ոչ բառնայ զնա վասն ներգործութեց, որք լինին զխոնարհութէ ։

Այսպիսի են հասարակագոյնք զէնք, որովք սովորէ թշնամին վարիլ ընդդէմ մեր 'ի յայնմիկ վերջնում անցման ։ Յետոյ փորձէ զիւրաքանչիւրոք, ըստ մասնաւորաց յօժարութեց, որոց զնա ծանաչէ առաւել ենթարկեցեալ ։ Սակայն նախ քան թէ մերձենայցէ ժամն մեծի պատերազմի, պարտիմք ընդդէմ ախտից

տից

ուժից մերոց հզօրագունից ; և որք առաւել ուժեն 'ի վերայ մեր, բարեպէս զինաւորիլ ; և քաջապէս պատերազմիլ , վասն դիւրացուցանելոյ զյաղթութիւնն 'ի ժամանակի , որ բառնայ 'ի մէնջ զայլ ամենայն ժամանակ կարելոյ առնել զայն ։

Տացես ընդ նոսա պատերազմ մինչև վախճանեսցես զնոսա ։ 1. Թագ. 15. Գլ. 'ի Թիւ. 18.

# ՑԱՆԿ

## ԳԼԽՈՑ։

Գլուխ 1. Թէ յորում կայանայ քրիստոնէական կատարելութի, և թէ վասն տանելոյ զնա պիտոյ է պատերազմիլ, և յաղագս չորից իրաց հարկաւորաց առ այս մարտ։ 10

Գլ. 2. Յաղագս անապաւինութեան ՚ի մեզ։ 22

Գլ. 3. Յաղագս ապաւինութեան ՚ի յԱծ։ 28

Գլ. 4. Զի՞արդ կարիցէ ճանաչել, թէ մարդն գործէ յանապաւինութէ ՚ի յինքն և ապաւինութէ ՚ի յԱծ։ 33

Գլ. 5. Յաղագս միոյ մոլորութեան բազմաց, յորոց փոքրոգութիւնն համարի առաքինութի։ 35

Գլ. 6. Յաղագս այլոց ազդարարմանց, զի տանայցեմք զանապա-

ւինու-

բնութեն 'ի մեզ, և զապաւինութեն 'ի յԱծ : 37

Գլ. 7. Յաղագս կրթութեն, և նախ յաղագս իմացականի զօրութեան, զոր պարտիմք պաշտպանել 'ի տգիտութեն, և 'ի հետաքրքրութեն : 40

Գլ. 8. Յաղագս պատճառաց, վասն որոց իրքն ուղղապէս ոչ ճանաչին 'ի մէնջ, և յաղագս եղանակի, զոր պարտիմք ունիլ վասն բարեպէս ճանաչելոյ զնոսա : 44

Գլ. 9. Յաղագս այլոյ իրի, յորմէ պարտի պահպանիլ իմացութիւնն, զի կարիցէ բարեպէս տրամաճանաչել : 48

Գլ. 10. Յաղագս կրթութեն կամաց, և յաղագս վարձանի, առ որ ուղղել պարտին համայնք արարողութիք ներքինք, և արտաքինք : 53

Գլ. 11. Յաղագս ոմանց նկատմանց, որք վերածեն զկամս առ 'ի կամիլ 'ի յամենայն իրի զհաճոյութին ԱԾ : 63

Գլ. 12. Յաղագս բազմաց կամաց որք են 'ի մարդում, և յաղագս

պատերազմի , զոր ունէին 'ի մէջ իւրեանց ։ 66

Գլ. 13. Յաղագս եղանակի պատերազմելոյ ընդդէմ շարժմանց զգայութեն, և յաղագս ներգործութեց, զորս կամքն պարտի առնել վասն ստանալոյ զունակութիւս առաքինութեց ։ 72

Գլ. 14. Այն որ պարտիցի առնել յորժամ վերնագոյն կամքն յաղթեցեալ, և բոլորովին հեղձուցեալ երևի 'ի վայրագունէ, և 'ի թշնամեաց ։ 84

Գլ. 15. Յաղագս ոմանց ազդեցմանց շուրջ զկերպիւ պատերազմելոյ, և մանաւանդապէս ընդդէմ ում, և որով առաքինութե՛ պարտի առնել ։ 90

Գլ. 16. Որով կերպիւ առաւօտուն առ արշալոյսն զինուորն Քի պարտիցի դնել 'ի դաշտի ։ 94

Գլ. 17. Յաղագս կարգի պատերազմելոյ ընդդէմ մոլեկանաց ախտից մերոց ։ 99

Գլ. 18. Յաղագս կերպին ընդդիմա-

նա-

նալոյ փութականաց չարժմանց ախտից ։ 100

Գլ. 19. Յաղագս կերպի պատերազմելոյ ընդդէմ մոլութեն մարմնոյ ։ 104

Գլ. 20. Յաղագս կերպի պատերազմելոյ ընդդէմ ծուլութե ։ 115

Գլ. 21. Յաղագս կառավարութեան արտաքնոց զգայութեց, և զի՛արդ ՚ի յայնց կարիցէ ոք անցանել առ խոկումն Ածութե ։ 124

Գլ. 22. Զի՛արդ ինքեանք իրք լիցեն մեզ միջոց առ ՚ի կանոնաւորել զզգայութիւնս մեր, անցանելով առ խոկումն բանի մարմնացելոյ, ՚ի խորհուրդս կենաց, և չարչարանաց նորա ։ 132

Գլ. 23. Յաղագս այլոց եղանակաց վասն կանոնաւորելոյ զզգայութիս մեր, ըստ զանազանաց առթից, որք երևեցուցանին մեզ ։ 136

Գլ. 24. Յաղագս կերպի կանոնաւորելոյ զլեզու ։ 147

Գլ. 25. Թէ վասն պատերազմելոյ բարեպէս ընդդէմ թշնամեաց, զինուորն Քի որքան կարէ պար-

տի փախչել 'ի վրդովմանց, և 'ի յանհանգստութենց սրտի ։ 152

Գլ. 26. Յաղագս այնր, զոր պարտիմք առնել, յորժամ վիրաւորիմք ։ 159

Գլ. 27. Յաղագս կարգի, զոր ունի սատանայն առ 'ի պատերազմիլ, և պատրել զայնոսիկ, որք կամին տալ զինքեանս առաքինութեան, և զայնոսիկ, որք արդէն գտանին 'ի ծառայութեան մեղաց ։ 164

Գլ. 28. Յաղագս պատերազմի, և խաբէութեանց, որովք վարի սատանայն ընդ այնոսիկ, զորս ունի 'ի ծառայութեան մեղաց ։ 166

Գլ. 29. Յաղագս արուեստի, և խաբէութեանց, որովք կապէ զայնոսիկ, որք ճանաչելով զչարն իւրեանց, կամիցին ազատիլ. և զի առաջադրութիւնքն մեր առեալ ոչ ունիցին զգործ իւրեանց ։ 169

Գլ. 30. Յաղագս պատրանաց այնոցիկ, որք հաւատան շրջիլ 'ի կատարելութիւն ։ 174

Գլ. 31. Յաղագս խաբէութեան, և մարտի, որով վարի սատանայն,

զի

զի բացաթողանիցի Ճանապարհն, որ տանի 'ի յառաքինութիւն : 178

Գլ. 32. Յաղագս վերջնոյ վերարձակմանց, և խաբէութեան 'ի վեր առաջադրեցելոյ, որով սատանայն փորձէ, զի պատցեալք առաքինութիւք իցեն մեզ առիթ կործանման : 186

Գլ. 33. Յաղագս ոմանց ազդարարութեանց առ 'ի յաղթելոյ զմոլեկանս ախտս, և առ 'ի ստանալոյ զնորս առաքինութիւնս : 200

Գլ. 34. Թէ առաքինութիւնքն սակաւ առ սակաւ ստանիլ պարտին 'ի կրթելն մեր զմեզ աստիճանօք նոցին, և 'ի պարապիլն մեր նախ միում, և յետայնորիկ այլում : 207

Գլ. 35. Յաղագս միջոցաց որովք ստանին առաքինութիւնք, և որպէս պարտիմք մեք վարիլ նոքօք առ 'ի պարապելոյ միում միայնում զժամանակ ինչ : 210

Գլ. 36. Թէ 'ի կրթութեան առաքինութեան պարտիցիմք շրջիլ հանապազորդականաւ հոգաբարձութեամբ : 216

Գլ. 37. Թէ միշտ մինչ պխտոյանայ յարատևել 'ի կրթութեան առաքինութեանց, ոչ է փախչելի 'ի յառաթից, որք առ 'ի ստանալ զնոսա ներկայացուցանին : 219

Գլ. 38. Թէ համայնք առիթք պատերազմելոյ սիրելիք իցեն վասն ստացման առաքինութեանց, և առաւել այնոքիկ, որք առբերեն զաւելի դժուարութիւն : 223

Գլ. 39. Որպէս կարիցեմք վարել զանազանօք առթիւք վասն կրթութեան միոյ, և նոյնոյ առաքինութեան : 229

Գլ. 40. Յաղագս ժամանակի, որ գնելի է 'ի կրթութեան իւրաքանչիւրոյ առաքինութեան, և յաղագս նշանաց զարգացման մերոյ : 233

Գլ. 41. Թէ ոչ պարտիցիմք թողուլ զմեզ ըմբռնիլ 'ի կամեցմանէ, զի իցեմք ազատք 'ի վշտաց, զորս համբերութեամբ տանիմք. և յաղագս կերպի կանոնաւորելոյ զհամայնս փափագմունս մեր, զի իցեմք առաքինիք : 237

Գլ. 42. Յաղագս կերպի ընդդիմանա-

նալոյ սատանայի , մինչ խնդրէ պատրել զմեզ 'ի ձեռն անխոհեմութեան : 241

Գլ. 43. Թէ որքան կարիցէ 'ի մեզ վատթար յօժարութին մեր, և դրդումն սատանայի վասն ներածելոյ զմեզ առ 'ի դատել յանդգնաբար զընկերն , և յաղագս կերպի ընդդիմանալոյ նոցա : 246

Գլ. 44. Յաղագս աղօթից : 252

Գլ. 45. Թէ զինչ իցէ մտածական աղօթն : 261

Գլ. 46. Յաղագս աղօթից ըստ կերպի խոկման : 265

Գլ. 47. Յաղագս միոյ այլոյ կերպի աղօթելոյ ըստ կերպի խոկման : 268

Գլ. 48. Յաղագս միոյ կերպի աղօթելոյ միջոցաւ Մարիամայ կուսին : 269

Գլ. 49. Յաղագս ոմանց վերանկատեցմանց , զի հաւատով , և յուսադրութբ լինիցի վերընթացումն առ Մարիամ Կոյսն : 273

Գլ. 50. Յաղագս միոյ կերպի խոկալոյ , և աղօթելոյ միջոցաւ հրեշտա_

տակաց, և ամենից երանեցելոց ։ 276

Գլ. 51. Յաղագս խոկման չարչարանաց Քի առ 'ի յարտահանել զզանազանս խղճս ։ 280

Գլ. 52. Յաղագս շահաւէտութեանց, որք կարեն արտահանել 'ի խոկմանէ խաչեցելոյն. և յաղագս համահետեւման առաքինութեանց նորա ։ 290

Գլ. 53. Յաղագս սրբազնագունեղի խորհրդոյ հաղորդութեան ։ 299

Գլ. 54. Յաղագս կերպի վերընդունելոյ զսրբազնագունեղ խորհուրդն հաղորդութեան ։ 301

Գլ. 55. Որպէս նախապատրաստել պարտիմք զմեզ առ հաղորդութիւն, վաղձանաւ զարթուցանելոյ 'ի մեզ զսէր ։ 308

Գլ. 56. Յաղագս հոգևորականի հաղորդութեան ։ 321

Գլ. 57. Յաղագս շնորհակալութեան ։ 325

Գլ. 58. Յաղագս ընծայման ։ 327

Գլ. 59. Յաղագս զգալւոյ ջերմեռանդութեան, և յաղագս ցամաքութեան ։ 335

Գլ.

Գլ. 60. Յաղագս քննութեան խղճի մտաց : 342
Գլ. 61. Թէ որպէս 'ի յայսմիկ պատերազմի պիտոյ է յարատեւել, պատերազմելով միշտ մինչեւ 'ի մահ : 344
Գլ. 62. Յաղագս կերպի պատրաստելոյ զմեզ ընդդէմ թշնամեաց, որք յառնեն 'ի վերայ մեր 'ի ժամանակի մահուան : 347
Գլ. 63. Յաղագս չորից վերարձակմանց թշնամեաց մերոց 'ի ժամանակի մահուան, եւ նախ յաղագս վերարձակման ընդդէմ հաւատոյ, եւ յաղագս կերպի պաշտպանելոյ զմեզ : 350
Գլ. 64. Յաղագս վերարձակման յուսահատութեան, եւ յաղագս դեղոյ նորա : 353
Գլ. 65. Յաղագս վերարձակման ունափառութեան : 355
Գլ. 66. Յաղագս վերարձակման պատրանաց, եւ սուտ երեւմանց 'ի կէտի մահուան : 357

Վախճան ցուցականին

...ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ—Арм. ССР